

საქართველო

I სურათი

საქართველო

გარეგანი, ზღაპრული და სხვადასხვა

საქართველო

№ 7

საქართველო

1901



საქართველო

Типография Груз. Издат. Т—ва. | Сахаровъ Аркадъ Захаръ. Свѣдѣнія.

1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՄԱՍԻՍԸ (աւանդութիւն), պատմութեամբ Ա. Անարանեանի 6
2. ՄՈՒՅՈՒ Լ: ՀՈԳԻՍ... րանաստեղծ. Բայրճի, Թարգ. 31
Յ. Մասեհեանի
3. ՄԵՆԱԿ ՄԱՐԻԻԿ, գրամա Գ. Հառապանի, Թարգ. Ե.-Ա. 32
4. ՆՐԳ ՎԵՐՁԱԼՈՒՄԻ... րանաստեղծ. Նիկիտինի, Թարգ. 51
Ալ. Մասուրեանի
5. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՍՈՒԼԸ, Նր. Ֆրանգեանի 52
6. ԺԱՅՈՒ ՆԻ ԱԼԱՔՆԵՐ, րանաստեղծ. Մ. Միսսեանի. 59
7. ԹԻՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ, Յ. Քոչա- 60
րեանի
8. ԶԵՅՈՒՆԻ ԱՆՅԵԱԼԻՅ, Հ 65
9. ՀՈԳ ԶԷ, ԲՆԿԵՐՆԵՐ... րանաստեղծ. Ալ. Մասուրեանի 72
10. ԱՆԱՌԱԿԸ, պատկեր Ս. Նիսեանցի 73
11. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՈՍՏԸ, րանաստեղծ. Լեւոնտովի, Թարգ. 88
Ալ. Մասուրեանի.
12. ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ, գեղ. Ա. Ֆ. Դոգլի, Թարգմ. Տ. Յ. 90
13. ԲԱՂՁԵՍԱՐԱՅԸ, րանաստեղծ. Աղամ Միլլիկի, 109
Թարգ. Ո. Անուիեանի
14. ՕՒԻ ՓՈՆԻՆ, բժ. Գ. Սարգսեանի 110
15. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII-րդ դարում, Լեօի 119
16. ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—31) Բ. Տէր-Ղալարեանց, ճարտար 161
մահ, Է. Ս. 32) ճարտարի քարտէսեր, Թարգմ. Ս. Մ.
Լ.
17. ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Գիւղանտեսութիւնը Ախալ- 166
քաղաքի գաւառում, Սալիւսեանի
18. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏԵՐ, Ս. Տիւսուր, Լ. 188
19. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՅ ՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ, Տ. Փի- 199
րաւեանցի
20. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրթական հարցը.—Լատուրի Կրթութիւն.—Դժգոհութիւն միջին կրթութիւնից եւրո-
պայում և Ռուսաստանում.—Միջնակարգ դպրոցների
փերալիզմութիւնը.—Վաննիփսիու կազմած մասնաժո-
ղովի հիմնական որոշումները միջնակարգ դպրոցների
փերալիզմումը.—Ռուսաստանի նախապատրաստու-
թեան հարցը.—Սկզբնական, քաղաքային և միջին
դպրոցները բաժանող անջրպետների փերալիզմը.—
Տեղական լեզուների նշանակութիւնը ծայրերում.—

Նոր շրջան I տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 7

ՅՈՒՂԻՍ

1901



ԹԻՖԼԻՍ

Типографія Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերության.
1901

Дозволено цензурою Тифлисъ, 18-го іюля 1901 г.

№ 7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՄԱՍԻՍԸ (աւանդութիւն), պատմութեամբ Ա. Ահարոնեանի 6
2. ՄՈՒՅԼ Է ՀՈԳԻՍ..., բանաստեղծ. Բայրօնի, թարգ.
Յ. Մասեհեանի 31
3. ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ, զրամա Գ. Հաուպտմանի, թարգ. Ե.-Ա. 32
4. ԵՐԳ ՎԵՐՋԱԼՈՒՍԻ..., բանաստեղծ. Նիկիտինի, թարգ.
Ալ. Մասուրեանի 51
5. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ, ԵՐ. Ֆրանգեանի . . . 52
6. ԺԱՅՈՒ ԵՒ ԱԼԱՔՆԵՐ, բանաստեղծ. Մ. Մխաֆեանի. 59
7. ԹԻԻՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ, Յ. Քոչա-
րեանի 60
8. ԶԵԹԹՈՒՆԻ ԱՆՅԵԱԼԻՑ, Հ 65
9. ՀՈԳ ԶԷ, ԸՆԿԵՐՆԵՐ... բանաստեղծ. Ալ. Մասուրեանի 72
10. ԱՆԱՌԱԿԸ, պատկեր Ս. Շխեանցի 73
11. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՈՍՏԸ, բանաստեղծ. Լեւոնտովի, թարգ.
Ալ. Մասուրեանի. 88
12. ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ, վէպ. Ալֆ. Դոդէի, թարգմ. Տ. Յ. 90
13. ԲԱՂՉԵՍԱՐԱՅԸ, բանաստեղծ. Աղամ Միցկեվիչի,
թարգ. Ո. Անդրեանի 109
14. ՕԴԻ ՓՈՇԻՆ, բժ. Գ. Սարգսեանի 110
15. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII-րդ դարում, Լեօի 119
16. ՄԱՏԵՆԱԵՍՍՈՒԹԻՒՆ.—31) Բ. Տէր-Ղազարեանց. «Ճարտամ
մահ», Լ. Ա.: 32) «Ճարտարի քարոզներ», թարգմ. Ս. Մ.
Լ. 161
17. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. Գիւղատնտեսութիւնը Ախալ-
քալաքի գաւառում, Սալիւմեանի 166
18. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ, Ս. Տիւսուբ, Լ. 188
19. ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Տ. Փի-
րումեանցի 199
20. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրթութեան հարցը.—Լաւագոյն
կրթութիւն.—Դժգոհութիւն միջին կրթութիւնից եւրո-
պայում և Ռուսաստանում.—Միջնակարգ դպրոցների
վերակազմութիւնը.—Վաննօվսկու կազմած մասնաժո-
ղովի հիմնական որոշումները միջնակարգ դպրոցների
վերաբերմամբ.—Դասատուների նախապատրաստու-
թեան հարցը.—Սկզբնական, քաղաքային և միջին
դպրոցները բաժանող անջրպետների վերացումը.—
Ցեղական լեզուների նշանակութիւնը ծայրերում.—

ծողովրդի կրթութեան այլ գործօններ.—ծողովրդական ընթերցանութիւնների վերաբերեալ նոր կարգադրութիւն.—Ռուսահայերիս մտաւոր առաջադիմութեան մի չափը.—Պարբերական հրատարակութիւնների նախազգուշութեան վերջնական ժամանակամիջոցը.—«Жизнь» ամսագրի դադարեցումը.—«Прав. Вѣстн.» հաղորդագրութիւնը միջնակ. դպր. բարեփոխութեան մասին։

211

21. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵՍՆՔ, Տարուայ բերքը.—Վարկուտի վնասները.—Ղաղախի, Ախալքալաքի գաւառներ. Ախալցխա.—Մենք անգոր ենք մեր գիւղատնտեսութեան թշնամիների դէմ. դաշտային միջներ.—Դաւառական քաղաքներ. Նուշու գործերը. թեմական զպրոցը.—Դերասանական ճանապարհորդութիւններ. Վարա-Մուրզայի կօնցէրտները.—Աստղակութիւններ. Սանահին և Վարնակ գիւղերը.—Ժանտախտ. Ա. — Բամբակագործութիւնը Երևանեան նահանգում։ Ա.

227

22. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բիսմարկի արձանի բացումը Բերլինում.—Անձնատրութեան դերը պատմութեան մէջ.—Դերմանիայի միութիւնը.—«Երկաթի և արեան» քաղաքականութիւն.—Բիսմարկի ներքին քաղաքականութիւնը.—Բանկային կրթականներ.—Հիմնարկամուծիւն կամ գրիւնդերութիւն Լ. Ս.

240

23. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, նամակ Լօնդօնից Ն.

243

24. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ, .

249

25. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

255

26. ԵՐԿՈՒ ԽՕՍՔ, Լ.

260

27. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ,

264

28. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ,

265

29. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ» վէպ. Լ. Տօլստօի, թարգ.

Տ. Յովհաննիսեանի. 161—208

Մ Ա Ս Ի Ս Ը

(Աւանդութիւն)

I

Մռայլ ու անհամբոյր է Մասիս սարը: Կատարը յաւերժական ձիւնի հաստ շերտով ծածկուած, դարերից ի վեր ծաղրում է արևի անգօր ջերմութիւնը: Յաւիտենական ձմեռն է իշխում այնտեղ, որ իր սառցէ զրահով անդադար յետ է մղում արևի շողերը և այդ ժամանակ ասես ժպտում է վեհութեամբ երկնքի լուսատուի անմիտ յամառութեան վրայ, որ անհուն ժամանակներից ի վեր իր փորձերի անգօրութիւնը տեսնելով հանդերձ տակաւին շարունակում է իր շիկացած նետերը ուղղել դէպի մռայլ ծերունու ալեղարդ գլուխը: Նա փորձում է խորտակել ալեւոր հսկայի կատարին իշխող ձմրան թագաւորութիւնը, ձիւներից կազմել ջրի հեղեղներ և վայր գլորել նրա ժայռոտ այլանդակ կողերից դէպի ներքեւ, ուր ձգուած են ջրի կարօտ դաշտավայրերը:

Ի զհր. Մասիսն ասես ուխտել է իր խրոխտ կատարն անմատչելի պահել: Ամարային կիզիչ շոքերին անգամ արևի ամենաբուռն ջանքերը հազիւ են կարողանում ձեան հաստ շերտի ստորին փէշերը փոքր ինչ քամել, կարկաչուն, աննշան վտակներ կազմել դէպի վայր գլորելու համար: Բայց ագահ, յամառ ծերունին անմիջապէս այն էլ է խափանում. նա ներս է ծծում այդ ջրե-

բըն իր անյատակ անդունդների մէջ և կրկին ժպտում արևի երեսին, կրկին ծաղրում նրա թուլութիւնը:

Սակայն կռիւը վերջ չէ առնում այդքանով. որքան հզօր է ալեգարդ Մասիսը, նոյնքան էլ յամառ է արեգակը: Սա առժամանակ կուլ է տալիս իր անարգանքը, շարժւում է դէպի առաջ և միջօրէին իր բոլոր կատաղութիւնը թափում է Մասսի մերկ կրծքի, կողերի, ոտների վրայ և այրում, խանձում է ամեն ինչ: Ժայռերը ճարճատում են սարսափելի տաքից, գետինը մրկւում, թրձւում է և ճաքճաքում: Ժլած խոտերն ու ծաղիկները խանձւում են ու փշրւում: Կենդանութիւնը մեռնում է կամ խոյս տալիս սարսափով, ուշացած բղէզները կոտորւում են. լսւում է նրանց միակերպ տաղտկալի բըզզոցը: Քաշւում են նաև վայրի գազանները, մնում են միայն ահագին, թռնաւոր օձերը, որոնք շտապով ծածկւում են ժայռերի տակ, որքան կարելի է խոր. ողջ ցերեկը հեռւում են այնտեղ, գալարւում են տօթից ու ծարաւից, իսկ գիշերները դուրս են թափւում խմբերով, տափակ, զգուելի գլուխները վեր ցցում: Կարծես նզովում են արևն ու իր ջերմութիւնը և լիզում են գիշերային ցողով խոնաւած չոր խոտերի ցօղունները: Թիթեռնիկը չէ համարձակւում Մասսի կրծքին ծաղկի հիւթ փնտրել, թռչունը չէ շինում այնտեղ իր բոյնը, հովիւը չէ բշտում այնտեղ իր հօտը, արօրն ու գութանը չեն գալիս պատառելու նրա տոչորուած կուրծքը: Ժայռեր լուռ ու մռայլ, ինչպէս խոհերով պաշարուած գլուխներ, և օձեր մեծ, կատաղի օձեր. թոյն և ամայնութիւն, ահա թէ ինչ է բաժին մնում Մասսին:

Դարեր են գլորւում դարերի ետևից և երկու հալառակորդների կռիւը շարունակւում է անընդհատ: Մասիսը վաղուց է որ պատմութիւն չունի, տիեզերական օրէնքները նրա ճակատին սառել, մնացել են անշարժ, ժամանակից դուրս:

Այսպէս չէ սակայն Մասսի ներսը: Կատարից վայր հոսող վտակները կորչում են նրա հսկայական փորի մէջ:

Դրսի աշխարհի բանքերն են լինեն կարծես, որոնք գնում են անդունդներում բաղմած հսկաներին իրանց տեսած ու լսածները պատմելու: Եւ այդ ժամին անդունդները աղմկում, որոտում են խուլ, հսկայական դրնդիւնով, երկիրը դողում է ինչպէս ուռի տերեւ. լեռան այրերը ձայնակցում են ներսից հնչուող այդ սրտամունքին, նրանք էլ են թնդում հազար ու մի ձայներով, կարծես դեւերի երկու ահագին բանակներ զարկում են իրար: Ի՞նչ է կատարում այդ լեռան ներսում, այդ ի՞նչ անհասկանալի կեանք է, որով ապրում է դարաւոր հսկան. հին աստուածներն են արդեօք հաւաքուած այնտեղ և իրանց անդօր զայլոյթը յայտնում այն բոլորի համար, ինչ որ կատարում է աշխարհում, որտեղից իրանք հալածուած են ընդմիջտ, թէ՛ դժոխքն է այնտեղ, ուր դեւերը իրանց պետերի հետ խորհրդի նստած, ցնծում են: Միայն ուրախ կարկաչով դէպի անդունդները վազող վտակներն իրար գրկած դուրս են ժայթքում Մասսի ստորոտից, բայց սեւացած, մուայլ, դանդաղ ու ծեծուած, առանց աղմուկի, լուռ ինչպէս սգաւոր, կամ ինչպէս գերեզմանից հրաշքով դուրս եկած մեռել: Ալիքները էլ քնքշութեամբ չեն փարում իրար, նրանք էլ սիրով չեն շոյում իրանց ափերը, չեն կարկաչում, այլ մեղմիւ փսփսում են ինչպէս դաւադիրներ, կամ ինչպէս զարհուրելի գաղտնիքի գիտակ անձեր: Նրանք շտապում են խոյս տալ արևի լոյսից, շտապում են ձգել իրանց Մայր Արաքսի գիրկը: Ի՞նչ են տեսել այդ վտակները սև անդունդներում, ինչո՞ւ են սեւանում լոյս աշխարհ գալով, այդ դժուար է իմանալ: Բայց հին դարերից մարդիկ սովորել են Սև-Ջուր կոչել Մասսի փոքրից դուրս ժայթող այդ տարօրինակ գետակը:

Երբ և իցէ Սև-Ջուրը հոսել է վճիտ ալիքներով. Մասսի կուրծքն արդեօք մի ժամանակ ծածկուած եղել է թաւ կանաչներով ու բուրաւէտ ծաղիկներով. օձերից դուրս ուրիշ կենդանիներ երբ և իցէ բնակուած թիւն վնտրել են այնտեղ: Լուռ ու անխօս են հսկայ

Ժայռերը, չար օձերը աւանդութիւն չունեն, Սեւ-Ջուրը հազիւ փսփսում է՝ իր սեւ ալիքները եղէգներին քսելով. այրերում հնչուող յարատե աղմուկը անհասկանալի է մահկանացուներին: Բայց մի հին, շատ հին աւանդութիւն ծեր գլուխների մէջ ապրելով կտակուել է սերունդից սերունդ, խուսափել է ժամանակի՝ այդ լուռ հընձուորի աւերիչ ոյժից և եկել հասել է մինչև մեր օրերը:

II

Այլևոր հսկան միշտ այդպէս մռայլ ու ամայի չէ եղել, ասում է այդ աւանդութիւնը: Շատ հին ժամանակում, որի պատմութիւնը անցեալի խաւար ծոցի մէջ կորել, անյայտացել է, խիտ անտաւները ծածկում էին Մասսի կուրծքն ու փէշերը, որսի կենդանիները վխտում էին այնտեղ: Հազարաւոր վտակներ վերից վայր էին գլորում իրանց ականակիտ ջրերը, ոռոգելով լայնածաւալ, հարուստ դարատափերը, կենդանութիւնը չէր փախչում այնտեղից, ամեն կողմ ձայն, ամեն կողմ աղմուկ, կեանք, թռչունների երգ, ջրերի խոխոջիւն, հօտերի բառաչ, հովուի սրնգի քաղցր ելեէջեր, հնձուորի երգ, հօտաղների պար անպակաս էին այնտեղ: Սեւ-Ջուրը չէր հոսում այդպէս մռայլ ու պղտոր. նա թաւալում էր ականակիտ ջրեր և կարկաչում էր կանաչազարդ ափերի մէջ. այդ ժամանակ նա Սեւ կոչուելու տեղ Սպիտակ-Ջուր էր կոչւում:

Այդ մոռացուած ժամանակում մի ծեր նահապետ էր իշխում այնտեղ իր բազմամարդ ընտանիքով, որ անբաւ հարստութիւն ունէր, անհամար հօտեր, ընդարձակածաւալ արտեր, այգիներ, աշխարհի ամենատեսակ բարիքներ: Ութ որդիները և բազմաթիւ թոռները անդադար աշխատում էին և նրանց ազնիւ ճիգերի արդիւնք էր այդ ահագին հարստութիւնը, որ վայելում էր նահապետի ընտանիքը: Այրիի արտասուքի, որբերի հա-

ռաչանքի, խեղճերի անէծքի գինը երբէք չէր խառնուել նրանց արդար վաստակին: Երջանկութեան և արդարութեան այդ յարկի տակ ամենքն ապրում էին առաքինի կեանքով և երկինքը օրհնում էր այդ օջախը: Առաքինութիւնն այդ ընտանիքի կրօնն էր ու նրա գերագոյն մարմնացումը՝ համայն տիեզերքը: Տիեզերական օրէնքների սքանչելի ներդաշնակութեան մէջ փնտրում էին նրանք անսահման և անսկիզբ նիւթի հրաշագործ, ամենագոր Ոգին: Սպիտակութիւնն էր ծառայում իբրեւ առաքինութեան էմբլեմա երկրի վրայ. դանշան էր մաքրութեան, սրբութեան: Առաքինութիւնն ու սրբութիւնը այդ ընտանիքի համար մարմնանում էին այն ձիւնի պէս սպիտակ թռչունների մէջ, որոնցով լիքն էին Մասսի անտառներն ու ձորերը: Կոյսերի բարքն այնքան մաքուր, ճերմակ պիտի լինէր, որպէս այդ թռչունների ձիւնափայլ թևերը, երիտասարդների հոգին նոյնքան տներիժ, նոյնքան պարզ, պայծառ պիտի լինէր, որպէս այդ թռչունների անմեղութիւնը:

Տարիներ էին սահում տարիների ետեւից և ծեր նահապետի ընտանիքն ապրում էր առաքինի կեանքով, բարօրութեան և երջանկութեան մէջ: Ճերմակ թռչուններն իրանց յարատեւ ուրախ ճոռողիւնով քաջալերում էին մարդկանց այդ ընթացքը և ասես ուրախ էին, որ բախտաւորութիւնը իշխում է իրանց շուրջը: Սուրբ էին համարում այդ թռչունները. ոչ ոք նրանց չէր դիպչում, ոչ մի մանուկի ձեռքից անգամ փոքրիկ խիճ չէր ուղղում՝ դէպի առաքինութեան այդ մարմնացումները, նրանց խնայում, նրանց սիրում էին. կարծես ընտանի թռչուններ լինէին, մարդկանցից այլ ևս չէին փախչում:

Բայց ի՞նչ կայ երկնքի տակ կայուն և անփոփոխ: Հին իմաստասէրն իրաւամբ է նկատել, թէ աստուածներն սկզբում կամեցան չարն ու բարին, բախտն ու երջանկութիւնը իրար խառնել, միացնել և մի հատիկ երկնոյթ դարձնել, բայց այդ անկարելի եղաւ. այն ժամանակ նրանք կապեցին իրար այդ երկու հակադիր երե-

ւոյթները այնպէս, որ մէկը միշտ հետեւի միւսին անխափան և իրար ոչնչով չը նմանող այդ ճակատագիրներ տնօրինող քոյրերին անուանեցին բախտ: Այն ժամանակից աշխարհում չարն ու բարին յաջորդում են իրար և մարդկային կարողութիւնից վեր է նրանց ընթացքին ուղղութիւն տալ կամ արգելք լինել մէկն ու մէկին:

Այսպէս նահապետական ընտանիքի երջանկութեան կողքին յանկարծ անսպասելի կերպով անկուեց Չարիքը: Մասսի այրերում բուն դրեց մի աւաղակային ցեղ և իր սարսափը սփռեց ամեն կողմ: Ձէների, ոյժի և արեան ծարաւի մի բանակ էր այդ: Իրաւունքն ու արդարութիւնը նրանց անհասկանալի էր, թուլութիւնը՝ ամօթ, խեղճութիւնը՝ արատ, ազաչանքը՝ գթութեան փոխարէն վայրենի քրքիչ էր բարձրացնում: Տիեզերական Մեծ Ոգու ոյժը նրանք համարում էին խեղճերին ու թոյլերին մխիթարող հէքիաթներ: Ռճիրը քաղաքացիական պարտքերի չարքն էր անցել և փառաբանւում էր:

Դաշտավայրի վրայ, Մասսի ստորոտներում իրաւունք չը մնաց, որ ոտնակոխ չը լինէր, սրբութիւն չը մնաց, որ չանարգուէր, մարդիկ խմբերով գաղթում էին անհիւրընկալ դարձած այդ երկրից: Չարը յաղթանակում էր, չարը իշխում էր:

Ծերունի նահապետն օր օրի վրայ լսում էր, թէ ինչ ահաւոր անցքեր են կատարւում իր շուրջը և մնացել էր զարմացած, որ աշխարհում կան մարդիկ, որոնք գաղաններից ոչնչով չեն զանազանւում: Իր անմեղութեան մէջ նա մինչև այժմ կարծում էր, թէ աշխարհում ամենքն առաքինի են իր ընտանիքի պէս, թէ ամենքի հոգին և գործերը այն չքնաղ թուշունների ճերմակ ձիւնանման թևերի մաքրութիւնն ունեն: Առաքինութիւնը նրան թւում էր այնքան հեշտ, այնքան հասկանալի մի պարտականութիւն, որ զարմանում էր մարդկանց չարութեան վրայ, զարմանում էր որ մարդիկ բարի չեն: Չարիքի բացատրութիւնը նա բնութեան մէջ գտնել չէր կարողանում: Բնութեան երևոյթների միայն ներդաշ-

նակութիւնն էր տեսնում և այդ ներդաշնակութիւնից քաղում սէր դէպի ամենքը. ում է զրկում բնութիւնը, ո՞ր արարածը կարող է դանդատուել նրանից: Ո՞ւր է կռիւը, ո՞ւր է չարը. ինչո՞ւ ուրեմն միայն մարդը չար պիտի լինի,—մտածում էր ծերունին և այդ ծանրակշիռ հարցերին ոչ մի պատասխան գտնել չէր կարողանում: Եւ չարիքը շարունակուում էր:

Մի երեկոյ խաշնարած որդիները հօտերը տուն բերին տխուր ու արտում, համարեա՝ արտասուելով: Աւաղակները բշել տարել էին հօտի մի մեծ բաժինը: Հայրն առանց հարցնելու հասկացաւ բոլորը և լուռ կացաւ. բիչ յետոյ գլուխը բարձրացրեց և ասաց որդիներին.

—Տարա՛ն, փոյթ չէ, որդիք, միր վհատուիլ, թող տանեն. այնուամենայնիւ ձեր ընթացքը թող չը փոխուի. միք մոռանալ առաքինութիւնը և նրա շաւղով ընթացէք: Եթէ նորից պահանջեն, տուէք առանց կռուի:

—Հայր, ասաց որդիներից մէկը, բայց այդպէս չէ մտածում մեր մեծ եղբայրը: Երբ չարերը մօտեցան, նա մեզ հրաւիրում էր կռուել, դիմադրել, և թոյլ չը տալ որ ոչխարները տանեն: Երբ մենք ականջ չարինք, նա ուղտում էր մենակ կռուի բռնուել և մենք հազիւ հազ կարողացանք նրա զայրոյթն ու կատաղութիւնը զսպել այսօր:

Հայրը յանդիմանական հայեացք ուղղեց դէպի մեծ որդին: Նա մի գեղեցիկ տղամարդ էր, հուժկու, ջլտ մարմնակազմով, կորովի դէմքով, կենդանի աչքերով, որոնք այդ ժամին պատած էին տխրութեան մըռայլ քօղով:

—Մի՛թէ ճշմարիտ է, որդի. երբ և ո՞վ սովորեցրեց բեզ չարին հակառակ կենալ:

Որդին հեզութեամբ լսեց հօր ասածը, բայց ճակատի կնճիռները չը բացուեցին, դէմքի թախիժը չը հեռացաւ:

—Հայր, ասաց նա,—քո ցոյց տուած առաքինու-

Թեան ճանապարհից ես երբէք չեմ դուրս եկել. քո իւրաքանչիւր խօսքը սուրբ է ինձ համար, միայն թէ ես առաքինութիւնը մինչև այսօր այլ կերպ եմ հասակացել, բնութեան դրքում ուրիշ մտքեր եմ կարգացել: Հայր, էլ դժուար է ինձ այսքան տարուց յետոյ հակառակը սովորել: Որ ուրիշի ունեցածը, սեփականութիւնը մենք չը պիտի յիշատակենք, որ թշուառութիւնը դուր չը պիտի թակի մեր դուռը, այս առաքինութիւն է: Բայց երբ անօրէն մարդիկ գալիս են մեր արդար վաստակի արդիւնքը մեղանից խլելու, մեր օջախն անարգելու, և մենք նայում ենք անտարբեր, ես այս առաքինութիւն չեմ համարում:

—Ուրեմն կուին ու արիւնահեղութիւնն է առաքինութիւն:

—Մինչև այսօր, երբ մենք միայն բարիք ենք արել, մենք առաքինի ենք եղել, բայց եթէ այսօր մենք թոյլ տանք որ չարերն անպատիժ տանեն մեր հօտերը, մեր առաքինութիւնը կիսատ, անկատար կը լինի:

—Այդ առաքինութիւնն ինձ հարկաւոր չէ:

—Դժբախտ է այն որդին, որ ստիպուած է իր հօր կամքին հակառակ ընթանալ, բայց թող երկինքը դատէ:

—Երկինքը միշտ խօսել է հայրերի բերանով. վայ նրանց, որ չեն լսի ծեր շրթունքներից լսուող խորհրդին: Եթէ քո առաքինութիւնն այդքան տարբեր է քո հօր և քո ընտանիքի, քո պապերի առաքինութիւնից, այս արդարութեան յարկի տակ դու այլ ևս տեղ չունես: Լաւ է քեզ չունենամ, քան թէ այս բոլորին: Գնա՛յ այդ նոր առաքինութեան դասերը բարոզիր ուրիշներին, իսկ ես իմ վիշտը կը յանձնեմ Մեծ-Ոգուն:

Լաց ու կոծը բարձրացաւ տանը, առաջին անգամն էր որ այս յարկի տակ այսչափ ծանր խօսքեր էին լսուում, առաջին անգամն էր որ այս ընտանիքի մի անգամը լմբոստանում էր իր նահապետի դէմ:

Եւ որդին գնաց, տանելով իր հետ իր կինն ու զաւակը:

III

Օրեր և ամիսներ անցան: Եւ ամեն մի օր բերում էր իր հետ նոր և աւելի ծանր փորձութիւններ: Մեր նահապետի խաչներն առաջուայ պէս դաշտ էին գնում որդիների հսկողութեամբ, բայց իւրաքանչիւր երեկոյ նուազած էին վերադառնում: Արտերը ցանուում, խնամուում էին, բայց մեծամասնութիւնը հունձի չը հասած ձիերի ոտների տակ կոխան էր լինում: Աւաղակներն օր աւուր աւելի անպատկառ էին դառնում: սակայն ծեր նահապետը շարունակում էր խրատել իր որդիներին, որ խաղաղ և առաքինի մնան: «Մեր աշխատանքի, մեր ստացուածքի մի մասից զրկուելով՝ մենք չենք մահանայ, կրկնում էր նա յաճախ, բայց առանց առաքինութեան կեանքը մահ է. Մեծ-Ոգին կ'օգնի մեզ»:

Դարձեալ անցան ամիսներ ու տարիներ: Նիւթական զրկանքին յաջորդեց բարոյականը. կամաց-կամաց ծերունու որդիները դարձան մի տեսակ սարուկներ, աւաղակների համար ձրի աշխատողներ: Այդ բաւական չէ, օրհնուած ընտանիքի դռանը յայտնուեց աղքատութիւնը: Վերջապէս երկինքն էլ կարծես զնուեց ծերունու դէմ: Մինչև այդ ժամանակ անյայտ, անծանօթ միջատներ յանկարծ լոյս ընկան անհամար բազմութեամբ: Նրանք ծածկեցին ողջ շրջակայքը և սկսեցին ագահութեամբ ոչնչացնել ցորենի արտերը: Մի արտ ոչնչացնելուց յետոյ նրանք խմբերով թռչում էին դէպի յաջորդը և իսկոյն առաջինի վիճակին վերածում նրան: Մահը և այն սովի մահը անխուսափելի էր երևում ծերի ընտանիքի համար: Առաքինութիւնն անզօր էր փրկելու նրան: Եւ ծերունին մնացել էր ապշած. նա նայում էր հընձուելու մօտ արտերի մէկիկ-մէկիկ ոչնչանալուն, նայում էր այդ զարմանալի միջատներին, և չը գիտէր ո՛ր փրկարի օգնութիւն: Իրանից վեր անտառների ծառերի վրայ թառած սպիտակ թռչունները նոյնպէս դիտում

էին այդ տխուր տեսարանը և չէին ճշտողում: Նրանք էլ ասես տխուր էին, առաքինութիւնը սգում էր կարծես: Եւ ծերունին նայում էր մերթ միջատներին, մերթ արտերին և մերթ այս թռչուններին:

Անցան ժամեր: Յանկարծ թռչունները միաժամանակ և միաձայն մի տարօրինակ ճիչ արձակեցին և բոլորը միասին թռան դէպի ցած, դէպի հարթավայրը, ուր ձգուած էին արտերը:

Ծերունին դիտում էր: Եւ նրա աչքերին ներկայացաւ մի զարմանալի տեսարան: Առաքինութեան թռչունները հասան միջատներին և սկսեցին կատաղի կերպով կոտորել նրանց: Անողորմ ջարդը երկար տևեց, թռչունների նորանոր խմբեր հասան կռուի տեղը և կոտորածը կրկին և կրկին նորոգուեց. դաշտերը ողջ ծածկուեցին միջատների դիակներով և երեկոյեան մօտ արտերի մնացորդը փրկուած էր՝ միջատների իսպառ ոչնչանալովը:

Յագնած, ուժասպառ թռչունները յետ եկան դէպի Մասսի անտառներն ու ժայռերը, կտուցները քսեցին ծառերի ճիւղերին և ուրախ ճռողովնով լցրին շրջակայքը. կարծես նրանք էլ տխուր չէին:

Ծերունին տեսաւ այս բոլորը և խոր մտածմունքների մէջ ընկղմուեց: Սա ինչ տարօրինակ երևոյթ էր. անբան թռչունները կռոււմ էին, առաքինութեան նշան համարուող այդ անմեղ թռչունները կոտորած արին, ասել է թէ հէնց ինքը առաքինութիւնը կռուեց և փրկեց նրա ընտանիքը: Սա նոր բան էր: Ծերունին նստեց մի քարի վրայ և երկնք, երկնք մտածում էր: Նա յիշեց իր օրդու խօսքերը: Միթէ նա իրաւունք ունէր և ինքը անարդար տեղը տուն ու տեղից հալածական արեց իր հարազատ զաւակին: Այս միտքը ծերունու սիրտը պատեց անհնարին ցաւով: Քանի՜ քանի դարուն էր բոլորել նրա գլխով, բայց նա մինչև այժմ այսպիսի ծանր հոգեկան վիճակի մէջ չէր եղել:

Երկար մտածեց ծերը, բայց անկարող լինելով լու-

ծել այդ հանելուկը, նա դառնագին արտասուեց անզօրութեան, յուսահատութեան յուզիչ արտասուքներով, վշտացած ծերի արտասուքներով, որոնք այնքան դառնութիւն ունեն իրանց մէջ:

Առաջից անցնում էր մի ճանապարհորդ օտարական: Քայլուածքից երևում էր, որ նա շատ երկար է բայելէ: Գաւաղանը, որ նա բռնած ունէր իր ձեռքին, հին էր ու մաշուած ծայրով: Նա երիտասարդ էր, բայց երևում էր որ շատ է ապրել, շատ չար ու բարի է տեսել աշխարհում, շատ է տանջուել, շատ ցաւեր կրել: Նա մութագիւն չէր և ոչ էլ երգիչ, որովհետև ոչ մտադախ ունէր և ոչ էլ սաղ: Թաւ ու գեղեցիկ մագերը իջնում էին մինչև ուսերը հարուստ խաղաղներով, անխնամ բայց փարթամ միրուքը ոլոր-մոլոր փռուած էր նրա լայն կրծքի վրայ, աչքերը խեղացի էին և արտայայտիչ: Արդեօք նրա դէմքի խորին տխրութիւնն էր պատճառ, թէ մի ուրիշ բան, միայն նրա ամբողջ գէմքը առնացի կորովի հետ միասին մի ինչ-որ գրաւիչ, ինչ-որ վեհ արտայայտութիւն ունէր:

Օտարականը տեսնելով արտասուող ծերունուն, կանգ առաւ և հառաչելով ասաց.

—Դարձեալ արցունք. ախ, երբ վերջ կ'առնի արտասուքն աշխարհից, երբ հանգիստ կ'առնի իմ տանջուած մարմինը, և երբ քո ստուերը կը դադարի թափառելուց, հայր, և դու խաղաղ կը քնես քո յաւիտեանական բնակարանում:

Ջարմացած ծերունին բարձրացրեց գլուխը և ուշադրութեամբ նայեց անցորդին:

—Ո՞վ ես դու, ասաց, ո՞վ օտարական, և ինչո՞ւ ես հառաչում իմ արցունքի համար:

—Ես հառաչում եմ, որովհետև աշխարհում չը կայ մի կաթիլ արցունք, որ իմը չը լինի:

—Եւ ո՞վ է քեզ տուել այդքան արտասուք, ո՞վ է, որ հզօր ձեռքով կապել է քո բախտը աշխարհի արցունքի հետ:

— Իմ հօր անէծքը, որ օր ու գիշեր ինձ հալածում է, մղում է ինձ երկրից երկիր և ամեն տեղ բաժին հանում ինձ միայն արտասուք: Լսիր, ծերունի, դադարիր լալուց, պատմիր ինձ քո գլխի անցքը. ո՞վ գիտէ, գուցէ կարողանամ օգնել քեզ: Նս մի թշուառ մարդ եմ, թափառական և անտուն, չունեմ նոյն իսկ գլուխ դնելու տեղ, բայց իմ անվերջ ճանապարհի վրայ ես տեղ տեղ բախտաւորութիւն եմ թողել ինձանից յետոյ:

Ծերը դադարեց լալուց, պատմեց անցորդին իր թշուառութիւնը, պատմեց աւազակների մասին, պատմեց այդ օրն իր տեսած տարօրինակ կռուի մասին: Օտարականը լսեց ուշադրութեամբ և վերջում ասաց.

— Հիւր ընդունիր ինձ մի առ ժամանակ քո յարկի տակ:

Ծերունին նրան սիրով առաջնորդեց դէպի տուն:

Դարձեալ օրեր և շաբաթներ անցան: Ծեր նահապետի տան տեսքը վերափոխուեց շնորհիւ օտարականի իմաստուն խորհուրդների: Նա սովորեցրեց խաշնարածներին դէմ դնել աւազակների յարձակմանը, չը տալ սեփական բարիքը, գլուխ չը ծռել չարիքի առաջ: Ծերունին այլ ևս դէմ չէր այդ միջոցներին, թռչունների օրինակը և օտարականի պատմութիւնները նրան համոզել էին:

Ամեն առաւօտ օտարականը ծերի որդիների հետ միասին դուրս էր տանում հօտն արածացնելու և երեկոյեան բերում անփնաս: Օր չէր անցնում, որ դաշտում կռիւ տեղի չունենար, բայց հովիւները ամեն անգամ հալածում էին աւազակներին:

Հասաւ նաև հնձի ժամանակը: Արտերը լեռան փէշերի վրայ էին փռուած: Գիշերները ամեն մէկը մի արտի պահպանութիւնն էր յանձն առնում, մինչև որ կարողանան բոլոր դէղերը տուն բերել: Ամեն մի պահապան մի մեծ խարոյկ էր պատրաստում իր արտի կողքին և վտանգի ընկնելի կրակ էր տալիս: Միւսները չորս կողմից օգնութեան էին հասնում և հալածում աւազակ-

ներին: Յուսահատուած էին աւազակները, նրանք այդ տարին ապրելու միջոցներ չունէին:

Նահապետի յարկի տակ այժմ երջանկութիւն էր թագաւորում: Հին, լաւ օրերը կրկին վրայ հասան, խաշները նորից բազմացան, շտեմարանները վերստին լցուցին, երկիւղն ու յուսահատութիւնը հալածուեց, վրայ հասաւ գործի, աշխատանքի և վայելքի շրջանը, մարդիկ աշխատում էին, կուռում էին և վայելում:

IV

Վերջապէս մի առաւօտ օտարականը ձեռք առաւ իր պանդխտութեան գաւազանը, և ասաց ծերունուն.

— Ես գնում եմ այսօր: Շնորհակալ եմ քո հիւրասիրութեան համար. դու արտասուում էիր, երբ մենք պատահեցինք, այժմ ուրախ են ամենքը քո յարկի տակ: Քո որդիքն այսուհետեւ առանց ինձ կարող են ապրել. ես նրանց ուսուցի աշխարհի իմաստութիւնը: Այժմ դընում եմ շարունակելու իմ գործը, գնում եմ սրբելու ուրիշ նոր արցունքներ, ամօքելու ուրիշ ցաւեր: Մնաց բարով:

— Ո՛հ, ո՛չ, զաւակս պատասխանեց ծերունին, մի անիր այդ, վնր դիր այդ պանդխտութեան գաւազանը և հանգիստ առ վերջապէս այս յարկի տակ: Մեր թըշուառութեան, մեր ցաւերի օրերի մէջ ընկեր եղար, մնա՛ վայելելու քո ջանքերի արդիւնքը. մնա՛ և եղիր իմ որդիներից մէկը:

Ժպտաց օտարականը. ուրախութեան մի փայլ անցաւ նրա գեղեցիկ դէմքի վրայով. քանի՜ տարի էր, որ նա չէր ժպտացել:

— Այս ի՞նչ եմ լսում, ողորմած երկինք, բացականչեց նա. միթէ յիրաւի իմ տառապանքները վերջանում են այստեղ: Այս բանի տարի է որ թափառում եմ այսպէս արար-աշխարհում և այս ականջներս դեռ չէին լսել

այսպիսի սիրոյ և գթութեան խօսքեր: Ոչ որ չէ իմացել իմ գլխի անցքը, տաք սիրտ չեմ գտել երբեք՝ թափելու նրա առաջ իմ ծով ցաւերը. դու առաջինն ես, որ բաց արիր իմ լեզուն, և բո առաջ կը բանամ հոգւոյս վշտերը:

— Պատմիր, զաւակս. իմացիր, ո՞վ և լինիս, դու իմ զաւակն ես:

— «Ինձ հալածում է իմ հօր անէծքը, այսպէս սկըսեց օտարականը: Օ՛, հօր անէծք. մի անիծիր ծերունի, երբեք մի անիծիր: Արիւնարբու չարագործն անգամ արժանի չէ հօր անէծքի: Չը կայ աւելի մեծ ոճիր, քան թէ առաքինութեան հակառակ ընթանալը, բայց և չը կայ աւելի ահաւոր պատիժ, քան հօր չրթունքներից դուրս թռած անէծքը:

«Միակ որդին էի ես իմ հարուստ հօր. բարի էր նա և արդարասէր, առաքինի բայց և խստասիրտ: Անճարի արցունքն իր ձեռքով էր սրբում, վիրաւորի վերքն իր ձեռքով կապում, հիւանդի չրթունքին իր ձեռքով մօտեցնում դարմանը: Բայց նոյն այդ հեզ, բարի մարդը զարհուրելի էր չարագործների համար:

«Արդար զայրոյթի ժամերին բարի աչքերից շանթեր էր արձակում. ձայնը դառնում էր ամպերի որոտ: Անարդարութիւնը հալածուած էր մեր գիւղում և միայն հօրս անունը բաւական էր, որ չարագործութիւնը հեռու փախչէր մեր սահմաններից: Մարդիկ ապրում էին խաղաղ, երջանիկ, օրհնելով հօրս կեանքն ու յիշատակը, որի առաքինութեան պտուղները վայելում էին: Նա խրատում էր ինձ նոյն շաւղով ընթանալ, բարիք դործել և կռուել չարի դէմ: Որպէս զի լաւ տպաւորուէին իմ սրտում խրատները, քաջալերում էր իր օրինակներով, տանում էր իր հետ ամեն տեղ, ուր հարկաւոր էր կռիւ մղել մի չար ոյժի դէմ:

«Մի տարի բուք ձմեռ էր: Ձիւնը թափւում էր հիւսերով. կատաղած քամին իր անճոռնի ոռնոցով սարսափ

էր ազգում: նոյն իսկ վայրի գազանները սիրտ չէին ա-
նիլ դուրսը մնալ: Եւ այդ սարսափելի ժամին հայրս ինձ
ասաց.

— Վեր կաց, որդի, վեր կաց դուրս գնանք դէպի
մեր լեռների նեղ շաւիղները, անցնենք, նայենք մեր
վտանգաւոր ձորերը: Գիտե՞ս, չարիքն ընտրում է հեռա-
ւոր վայրեր և այսպիսի չար, անհամբոյր եղանակ: Ու-
շացած ճամբորդը կարող է զոհ գնալ կատաղած բքին,
օտարականը ձիւնի ձեռքից կարող է մոլորուել, կորչել,
իր սև օրուայ համար դուրսը մնացող մէկը կարող է
գազանների ճանկն ընկել: Ժամը չար է, սրան են սպա-
սում աւազակները ճանապարհների վրայ, գայլերը խըմ-
բով այսպիսի ժամին դուրս են թափւում իրանց սրճե-
րից, բնութեան արհաւիրքի հետ ամեն բան շրջակայ-
քում ահաւոր է դառնում: Մեր պարտքն է այսպիսի
ժամերին զգոյշ ու արթուն կենալ: Պէտք է գնալ, չըր-
ջել այնտեղ, ուր հոսում է արտասուքը, ուր հնչում է
օգնութեան աղաղակը:

«Ես սոսկացի. այս ձիւն ու ձմրանը, այս բուք ու
բորանին ինչպէս սիրտ անել, գիւղից դուրս գնալ: Բայց
գիտէի, որ հօրս ասածը՝ օրէնք է:

«Եւ մենք գնացինք:

«Թափւում էր ձիւնը, փչում էր քամին. հայրս շա-
րունակ առաջ էր գնում և ես հետևում էի նրան մին-
չև ծնգներս ձիւնի մէջ թաղուած: Ո՛չ մի ձայն չէր լըս-
ւում, բացի քամու կատաղի ոռնոցից: Ես դողում էի
ցրտից, դողում էի նաև երկիւղից. ես դեռ փոքր էի,
ես վախենում էի գայլերից, արջերից և աւազակներից,
բայց սիրտ չէի անում հօրս խնդրել վերադառնալ: Մի
քանի ձորեր թափառելուց յետոյ, նա յետ դարձաւ վեր-
ջապէս և սկսեց դէպի տուն քայլել: Հազիւ մի քանի
քայլ արած, յանկարծ մեր ախանջին մի մարդկային ա-
ղաղակ հասաւ, աղեխարշ, ցաւոտ աղաղակ, որ մերթ
հասնում էր մեզ քամու թափով և մերթ ընդհատւում,

Հայրս կանգ առաւ, նա պատրաստ էր յետ դառնալ և վաղել գէպի այդ ձայնը, իսկ ես ոյժ չունէի այլևս քայլելու, պէտք էր մի ճար անել և տուն գնալ:

— Լսիր, որդի, ասաց նա ինձ. արդեօք դու էլ լըսում ես այդ սարսափելի ձայնը. դու լաւ կը լսես ինձանից:

— Հայր, պատասխանեցի, դա քամին է այդպէս հառաչում լեռներում, ուրիշ ձայն չը կայ:

«Նա հանգստացած միջանի քայլ արեց, բայց յանկարծ նորից քամու մունչիւնի հետ լսուեց նոյն զարհուրելի ձայնը, այս անգամ աւելի բարձր, աւելի աղետաբեր:

— Դարձեալ. օ, այնտեղ, այն միւս ձորակում մի սարսափելի բան է կատարւում. որդի, ականջ դիր, մարդու ձայն չէ՞ այդ:

— Ձէ, հայր, չէ, բաղցած մի գայլի ունոց է այդ, որ դուրս է եկել, որս է փնտրում: Հայր, շարժուե՛նք շուտով, դուցէ շատ են գայլերը, և մենք կը վտանգուենք:

«Երևի իմ կեանքի համար վախեցաւ. սա առաջին անգամն էր, որ այսպիսի վտանգի էր ենթարկւում նա ինձ, ուրիշ շատ դէպքերում ես ընկերացել էի նրան, բայց երբէք այսպիսի սարսափելի ժամին նա ինձ դուրս չէր տարել: Իմ խօսքերի վրայ նա արագացրեց քայլերը գէպի տուն. Յանկարծ մէկ էլ նա կանգ առաւ սարսափած: Սպանիչ ձայնը դարձեալ լսուեց, բայց այս անգամ այն աստիճան յուզիչ, այն աստիճան աղիողորմ, որ իմ երակների մէջ արիւնը կանգ առաւ, երկիւղը պաշարեց ինձ:

— Որդի, մի՛թէ այս անգամ էլ դու ուրիշ չես լսում, չէ՞ որ դու լաւ լսողութիւն ունես:

— Հայր, լսում եմ, բայց մարդու չէ այդ ձայնը. ո՞վ դիտէ որ այրում աղուէսն է սրտացաւ կպել, կաղկանձում է ցաւից, չէ՞ որ աղուէսները յաճախ են սրտացաւ

լինում: Շտապենք, հայր, քամին է ոռնում, գուցէ դայ-
լերն են մոռնում, աղուէսն է կաղկանձում: Ի՞նչ մի
մարդկային շունչ չը կայ այս կողմերում: շտապենք
տուն հասնենք, բութը գառնում է ահաւոր մեզ
համար:

«Եւ ես խաբեցի իմ հարազատ ծնողին և մենք յետ
դարձանք տուն: Միւս օրը յայտնի եղաւ, որ այնտեղ
ձորակում գայլերի կատաղութեանը զոհ է գնացել մի
ուշացած ճանապարհորդ:

«Սարսափելի լուրը շանթահարեց իմ հօրը և նա
զայրոյթից ու վշտից անկողին մտաւ: Երկար տեւեց այդ
հիւանդութիւնը, երբ մահը մօտենում էր, այն ժամա-
նակ նա կանչեց ինձ և ասաց.

— Ես մեռնում եմ, լսիր. այսքան գարուն էր բո-
լորել իմ գլխով, դեռ երբէք իմ ականջին հասած թշուա-
ռի ձայնն անօգուտ չէր անցել. և որովհետեւ իմ կեան-
քի վերջալուսին դու ինձ գործել տուիր այս մեծ ոճիրը,
որովհետեւ ակամայ մեղսակից դարձրիր ինձ չարին, որ-
պէսզի մի անմեղ զոհ գնայ, ուստի ես նզովում եմ
քեզ: Ապրիր դարեր, եթէ հնար է, բայց թափառական
և անհանգիստ չըլիւ աշխարհի վրայ՝ ոչ մի տեղ կայան,
հանգիստ չը գտնելով: Չար է աշխարհը և արցունքն
առատ, թափառիւ անվերջ այդ արցունքների ու թշուա-
ռութեան մէջ և երբ գտնես մի դժբախտ, արտասուող,
մնա նրա մօտ, սրբիւ արցունքը և առանձ անցիր, փըն-
տրիւ նորանոր թշուառներ, ուրիշ արտասուողներ և
դարձեալ սրբիւ: Այսպէս շարունակիւ քո ընթացքն ան-
վերջ, մինչև որ աշխարհը խղճայ քեզ, մինչև որ մի
գթասիրտ քեզ իր յարկի տակ ապաստան չնորհի: Իսկ
մինչև այդ իմ ստուերն էլ թափառական և անհանգիստ
կը մնայ երկրի վրայ և իմ սակորներն էլ կը դողան գե-
րեզմանում: Ես կը հանգստանում, երբ որ կը կատար-
ուի իմ բոլոր ասածը:

«Քիչ օրից յետոյ հայրս վախճանուեց և ես իմ մեծ

յանցանքը քաւելու համար այն օրից մինչև այսօր թափառում եմ երկրից երկիր:

«Մ, չար է աշխարհը, ծերունի: Շատ սրտեր տեսայ վէրքերով պատած, սպեղանի դրի այդ վէրքերի վըրայ: Արտասուք տեսայ, դառն արտասուքներ հեղեղի պէս, մնացի, իմ ձեռքով սրբեցի այդ արտասուքները: Թշուառներ տեսայ, խեղճ անգործներ տեսայ հալածուած հզօրներից, իմ բազուկը տուի նրանց: Այրիներ տեսայ անտէր մնացած իրանց որբերի հետ, նրանց համար աշխատեցի և սովից փրկեցի: Եւ ի՜նչ, ամեն տեղ մարդիկ երբ այլևս ինձ կարօտ չէին, երբ աղատուում էին ծանր վիճակից, դարձնում էին ինձանից երեսները և ես հալածում էի անվերջ, ապաստան չը գտնելով և ոչ մի յարկի տակ: Հօրս անէծքն ինձ ուղեկցում էր, ոչ ոք չէր ասում կիսենք այս թշուառի բեռի ծանրութիւնը, մասնակից լինենք նրա ցաւերին, հարցնենք, թէ ինչո՞ւ է այս տխրութեան թանձր քօղը նրա երեսին, ինչո՞ւ ժպիտն ու ցնծութիւնը նրան երբէք բաժին չեն դառնում: Դ՞ի է սա, հրտեղից է գալիս և ինչո՞ւ է յանձն առել այս ահաւոր պարտքը՝ սրբելու օտարի արցունքը, ամբքելու ուրիշի ցաւերը:

«Ո՛հ, ո՛չ ոք, ո՛չ ոք. ընդհակառակն ամեն տեղ ես գտնում էի օգնութեան կարօտ խեղճեր և կամ մոռացկոտ աներախտագէտ երջանիկներ: Քանի՜քանի տեղ իրանց համար կրած տանջանքներից յետոյ մարդիկ գըտնում էին, որ ես աւելորդ հաց եմ ուտում: Այսքան տարիներից յետոյ առաջին անգամն է, որ մի մարդ խղճում է ինձ, առաջին անգամն է, որ ինձ վերջապէս մի ապաստան է առաջարկում: Ուրեմն ես կարող եմ մնալ: Այսպէս է եղել հօրս վերջին կամքը, այսօր նրա ստուերն ու ոսկորներն էլ հանգիստ կը ստանան: Ես մնում եմ»:

V

Ծեր նահապետը սաստիկ ուրախացաւ: Կանչեց իր բոլոր որդիներին և ասաց նրանց.

— Լսեցէք, որդիք, ես ծեր եմ և իմ օրերը համարուած են արդէն, կ'ուզէի մահիցս առաջ յայտնել ձեզ իմ վերջին կամքը: Այս օտարականն այսուհետեւ ձեր եղբայրն է և այն ձեր աւագ եղբայրը. փոխանակ իր այնքան ծառայութիւնների կը տաք նրան ձեզ հաւասար բաժին իմ մահից յետոյ: Նրան լսեցէք, նրան հրնազանդուեցէք, ինչպէս ձեր մեծ եղբօրը, որ զնաց կորաւ:

Որդիները լսեցին լուութեամբ, բայց նրանց սրտերում խուլ դժգոհութիւն բարձրացաւ: Նրանք սիրում էին օտարականին, քանի համոզուած էին, որ նա վերջի վերջոյ պէտք է հեռանայ, գնայ, բայց երբ հայրը նրան որդեգրեց, երբ իրանց բաժինին նոր ընկեր յայտնուեց, ամեն մէկը բուռն ատելութեամբ լցուեց դէպի օտարականը. ոչ ոք չէր կամենում նրան հաւասար ընկեր ճանաչել: Նեղ օրերից ազատուած էին, և այդ օրերը մոռացութեան էին տրուած:

Եւ նոյն գիշերը շահախնդրութեամբ կուրացած, նրանք խեղդեցին իրանց մէջ առաքինութեան ձայնը և սև ապերախութեան գարշելի գործ կատարեցին:

Կէս գիշեր էր. իւրաքանչիւրն իր սլահպանութեան յանձնուած արտի մօտ նստած, հսկում էր դէզերին: Յանկարծ օտարականը վառեց իր խարոյկը՝ իբր վտանգի նշան: Աւազակների մի ստուար խումբ յատկապէս նրա վրայ էր գալիս: Բոցերը բարձրացան, շրջակայքը լուսաւորուեց, բայց այս անգամ ոչ ոք տեղից չը շարժուեց: Մենակ մնաց նա, ով այնքան ժամանակ իր կեանքի գնով պաշտպանել էր նրանց: Թշնամիները մօտենում էին, բայց օգնութեան եկող չը կար: Օտարականը ձգեց խարոյկի մէջ ցորենի խրձեր, դարձեալ

մարդ չեկաւ. աւազակներն այժմ արդէն խիստ մօտ էին: Նա այն ժամանակ յուսահատուած կրակ տուեց մի ամբողջ դէզ և ահագին հրդեհը լուսաւորեց ողջ շրջակայքը: Նրա ճառագայթները հասաւ մինչև տուն և ծերունին ապշած դուրս եկաւ նայելու ահաւոր հրդեհին, որ այնքան չարագուշակ էր: Սակայն դէզի ահագին հրդեհն էլ չօգնեց. եղբայրներից ոչ ոք տեղից չը շարժուեց:

Աւազակներին էլ հէնց այդ էր հարկաւոր. նրանք վաղուց էին աշխատում մէջտեղից վերցնել այս վտանգաւոր հակառակորդին, յուսալով՝ այնուհետև կրկին տէր լինել երկրին: Նրանք խմբով վրայ հասան ու բռնեցին նրան, կապոտեցին ու տարան: Զարմանալի բան, անմիջապէս դէպքից յետոյ եղբայրները զգացին, թէ ինչ ծանր սխալ գործեցին, նրանք զգացին իրանց միայնութիւնն ու անզօրութիւնը, զգացին որ այսուհետև էլ չեն կարող առաջուայ պէս դէմ դնել թշնամիներին, այս բոլորն զգացին, բայց արդէն ուշ էր: Ճարները կտրած, նրանք որոշեցին անմիջապէս գաղթել, հեռանալ վտանգաւոր վայրերից, քանի ուշ չէ, քանի չեն կողոպտուել: Առաւօտեան նրանք հաղորդեցին իրանց հօրը, աւելացնելով՝ թէ ինչպէս իրանց պաշտպան օտարականը զոհ գնաց թշնամիներին շնորհիւ իր անհողութեան, որովհետև կրակը չէր վառել: Բայց ծերունին տեսել էր կրակը. նա զգաց, սր որդիները խաբում են և որ մի ծանր ոճիր են գործել, ուստի կոչեց զայրացած.

— Էլ որդի չունեմ. սեահողի դաւաճաններ, դուք էք մատնել նրան աւազակների ձեռքը, որովհետև դժգոհ էիք, որ նա ձեր բաժնին ընկեր դարձաւ: Հեռու ինձանից: Ուզում էք գաղթել, գաղթեցէք. ես, միայն ես կը մնամ այստեղ, մինչև երկինք ճչալով ձեր ոճիրի մասին և թող ժայռերը ձեր փոխարէն ամօթից ճաքեն: Ես կը մնամ այստեղ, ուր ապրել են իմ նախնիքը, ուր նրանց գերեզմաններն է, եթէ մինչև իսկ այս լեռը

գլխիս փուլ դայ: Իսկ հիմա ես կ'երթամ փնտրելու ձեր զոհին, մեռած կամ կենդանի. գայլերի, գազանների մէջ կը փնտրեմ, գուցէ նրանք ձեզանից ողորմած լինեն: Ես կ'երթամ աւազակների ոտները կ'ընկնեմ, կ'ազերսեմ, որ յետ տան ինձ իմ իսկական զաւակին, որ խղճան իմ ծերութեանը, ինայեն այս ճերմակ մազերին, որոնց դուք չը խնայեցիր: Անիծուիք դուք, հազար անգամ անիծուիք: Փոփաւրի, տուն, վար իջիր, յարկ, դու պղծուեցիր, դու չարութեան, դաւաճանութեան բուն դարձար, էլ դժուար է ապրել քո տակ:

Եւ նա թողեց տուն ու ընտանիքը և գողգոթուն բայլերով դուրս գնաց դէպի Մասսի ժայռերն ու ձորերը: Սպիտակ-Ջրի ափին հասնելով, նա կանգնեց ու կանչեց:

— Գետ, ասա, ուր է իմ որդին, ո՞ր այրի մէջ է, չէ՞ դու նրանց տակից ես հոսում: Շատ տարի առաջ քո այս ափերով գնաց մէկը, դու տեսար և լուռ կացար, այն օրը հոսում էիր հանգարտ ու խորհրդաւոր. այն թող քեզ լինի, ասա՛ ուր է իմ այս երկրորդ որդին: Ժայռեր, ձորեր, դո՛ւք խօսեցէք, պատմեցէք, պատմեցէք ինձ, ուր է իմ կտրիճը, դաւաճանութեան, ապերախութեան այդ անմեղ զոհը:

Լուռ էր լեռը, լուռ էին ժայռերն ու ձորերը, լուռ հոսում էր գիտակը հանդարտ ճգփացնելով իր վճիտ ջրերը: Քամին փչում էր լեռան կատարից, հողմահարում ծերի ճերմակ մազերն ու միրուքը, բայց նա չարունակում էր դնալ անընդհատ, փնտրել անդադար: Վրայ հասաւ գիշերը, սև, սրտաճաք գիշեր. ամեն մի ժայռը, ամեն մի ծառը մի-մի հրէչի կերպարանք առան, բայց ծերը չարունակում էր իր ընթացքը, անդադար կոչելով՝ «որդի՛ս, որդի՛ս» և արձագանքը հազար ձայներով կըրկնում էր այդ ձայնը:

Նա բարձրացաւ դէպի սարը. վերելքը ծանր էր, բայց այնտեղ վերևում նա այրեր գիտէր, այնտեղ էր գնում: Մերթ չանդուտում էր, մերթ սողում, մերթ գլոր-

ւում ընկնում էր, կրկին բարձրանում, դարձեալ շարունակում և անդադար կոչում՝ «որդիս, որդիս»։ Յանկարծ իրանից ոչ հեռու մի ձայն պատասխանեց.

— Այստեղ եմ, հայր։

Ծերը գտաւ իր փնտրածը. մի ծայռի եզրին յենուած կանգնած էր օտարականը։

— Էհ, որդիս, եկ, իմ միակ հարազատը. ուրեմն դու կենդանի ես, ուրեմն աւազակներն աւելի գթոտ են եղել, քան իմ որդիները, որոնց դու այնքան ժամանակ եղբայր եղար։

Սակայն տեսնելով որ նա չէ շարժւում տեղից, ինքը ծերը առաջացաւ և վարեց նրա պարանոցով։

— Գնանք, որդի, գնանք հեռանալք այստեղից շուտով։

— Ձեմ կարող, հայր, ճիշտ էլ չեմ կարող. իմը վերջացաւ, ես այլ ևս ոչինչ չունեմ աշխարհի հետ, ես էլ այս աշխարհից չեմ։

Ծերունին զարմացած լսում էր, բայց չէր հասկանում։

— Դու զայրացած ես, ես այդ հասկանում եմ, թող այդ, իսկ այժմ բռնիր ինձ և իջնենք շուտով։

— Խեղճ հայր, գիշեր է և դու երեւի չես տեսնում, թէ աւազակները ինչ գնով են խնայել իմ կեանքը։ Ես կոյր եմ, հայր, յաւիտենական խաւարն է պատել աչքերս։

— Երկիւնք, ճշաց ծերունին, կուրացրել են իմ զաւակին և Մեծ-Ոգին այդ թոյլ է տուել, նա նայել է վերից, ինչպէս կուրանում է առաքինութիւնը։

— Էլ մի վրդովուիր, հայր, իզուր է այդ բոլորը։ Աւազակները մեղաւոր չեն, շատ տարիներ է, ինչ ես հալածում էի նրանց, աշխարհը կռիւ է, ամեն կենդանի իր ապրուստի, իր գլխի ճարն է տեսնում, աւազակներն էլ իրանց հոգսը հոգացին։ Ես նրանց ձեռն ընկայ շնորհիւ քո որդիների, որոնք ինձ մենակ թողին, չարը

յաղթանակեց: Նրանք տարան ինձ, դատ ու դատաստան արին, գիտես, չարերն էլ իրանց դատաստանն ունեն, և որոշեցին ինձ կուրացնել: Երկու փայտերի խանձուած ծայրերը բաւական էին երկու լոյս յաւիտեան մարելու համար: Ձէ, հայր, ես այժմ զգում եմ, հզօր է չարը, բանի նա իր աջակիցներն ունէ նոյն իսկ իր զօհերի մէջ:

—Անէ՛ծք, անէ՛ծք իմ որդիներին: Մերութեանս օրերում երբ մէկը պիտի ինձ առաջնորդէր, ես եմ ստիպուած առաջնորդ լինել այդ մէկին: Բռնիր իմ ձեռքից և ես այսուհետև կը լինեմ քեզ առաջնորդ: Եթէ քո վրայ ծանրանում էր հօրդ անէ՛ծքը, դու այն քաւեցիր զարհուրելի զոհով, բայց ինձ վրայ տակաւին ծանրանում է որդուս դէմ գործած յանցանքի ծանրութիւնը, այն իմ ազնիւ, կտրիճ որդու, իմ արժանաւոր զաւակի, որի կորստեան ես պատճառ եղայ շատ տարիներ առաջ. երևի այդ մեղքն է, որ այժմ քաւում եմ: Ո՛հ, ես հաւածեցի նրան իմ տնից իր երեխայի և կնոջ յետ, որովհետև նա առաջինն էր, որ ինձանից գործի, կռուի առաքինութիւն պահանջեց:

—Խեղճ ծերունի, պինդ գրկիր այժմ քո թոռանը, այդ թշուառ որդիդ իմ հայրն է եղել, նրա անէ՛ծքն էր ծանրանում վրաս: Ո՛հ, նա ինձ պատմել էր քանի՛քանի անգամ, որ ինքը հայրենի տնից աքսորուած, հօրից հալածուած մէկն է Մեծ Լոռան ստորոտից շատ տարիներ առաջ: Առաջին օրից իմ սիրտը վկայում էր, որ ես իմ հայրենի տանն եմ, բայց լուռ էի:

—Ա՛հ, խլացէք ականջներ, այս ինչ եմ լսում. եմ թողը, իմ զաւակը կոյր. կոյր դարձած իմ իսկ որդիների ձեռքով. ո՛հ, սրբան սև եղաւ իմ ճակատագիրը: Էլ որդի չունեմ, այս մի հատիկն է, այն էլ կոյր: Դէհ, բռնիր, որդի, այս թուլացած ձեռքս դեռ այնքան ոյժ ունէ, և հետևիր ինձ: Մենք կը շրջենք երկրից երկիր և կը պատմենք, եթէ կարող ենք, մեր անպատմելի

ցաւը: Թող խեղճութիւնն ու սե ապերախտութիւնը մեզ հետ միասին աշխարհին ի տես գնան և թող նրանց զարհուրելի պատկերից չար աշխարհը դողայ, սարսըռի: Առաքինութիւնը կուրացած՝ ոճրագործ և ապերախտ ձեռներով, ծեր ալիքներն անարգուած զաւակներից, թող այս մեծ ոճիրի պատմութիւնն աշխարհի սեփականութիւն դառնայ: Գնանք, հեռանանք այս տխուր վայրերից, և թող չոր անապատ դառնայ այս լեռը, օձերի և գազանների բնակարան լինի, բանի որ այստեղ այսքան ծանր ոճիրներ դործուցին:

— Չէ, հայր, ներիր ինձ, ես էլ չեմ կարող աշխարհում շրջել, արդէն ես անպէտք եմ նրա համար: Ել չեմ կարող աշխարհի ոչ մի ցաւին դարման տանել. չար է աշխարհը, բայց և թշուառ է, ապերախտ է, բայց կարօտ զթութեան: Սէր ու գութ է հարկաւոր անգութ աշխարհին, զոհեր են հարկաւոր նրան փրկելու. մնաս բարով:

Եւ նա ձգեց իրան լեռան բարձրութիւնից դէպի վայր, դէպի անդունդը: Թշուառ ծերունին մեկնեց ձեռները, առաջ ձգուեց նրան բռնելու, բայց սարսափից քար կտրուեց, մնաց երկու ձեռները տարածած, բերանը լայն բացած, դէմքին սարսափի արտայայտութիւնը պաղած, մնացած յաւիտեան: Իսկ թուր անդունդի վրայ մի պտոյտ դործեց, բայց չընկաւ վայր, այլ մի կտոր սպիտակ ամպ դարձաւ և բարձրացաւ նստեց Մասսի կատարին՝ ճերմակ, քնքոյշ, թափանցիկ:

Լուսանում էր: Թռչունները տեսան այդ բոլորը: Նոյն ժամին նրանք իրանց ճերմակ թևերը թափ տուին, ձգուեցին դէպի վեր, ասես ուզում էին ճերմակ ամպի հետ գնալ դէպի լեռան կատարը և այնտեղից էլ դէպի անհունութիւն: Սակայն կարճ ժամանակից յետոյ նրանք ցած եկան այնտեղ, որտեղից բարձրացել էին. բայց էլ

սպիտակ չէին, նրանց թևերն այժմ սեւ էր, ինչպէս մռայլ գիշեր, մէջքերն ու կուրծքը բացարնագոյն և իրանք տխուր, մռայլ: Նրանք սեւ հագան այն օրուանից յետոյ:

Ծերի որդիները, որոնք հետեւել էին իրանց հօրը հեռուից, տեսան այդ բոլորը և սարսափով բռնուած յետ փախան և տուն ու տեղ թողնելով իրանց ընտանիքներով գաղթեցին և ցրիւ եկան զանազան երկիրներ:

Մասին էլ մէկէն անապատ կտրուեց, ասես, դիւթական գաւազանի շարժումով. կեանքն ու բուսականութիւնը յանկարծ դադարեց այնտեղ: Լռեց ջրերի կարկաչունը, վտակները կորան լեռան անդունդներում, խուլ գլղղիւն բարձրացնելով, ժայռերը մնացին մերկ ու խանձուած, կէսօրուայ աթիւ միջանի օրում չորացրեց խոտերն ու ծաղիկները, և վարից հոսող Սպիտակ-Ջուրը սեւացաւ, մռայլուեց և այն օրուանից նրան Սև-Ջուր կոչեցին:

Այդ չարաբաստիկ օրից սկսած դարեր են գլորւում դարերի ետեւից և ահաւոր, ամայի ու մռայլ է մնում Մասիս սարը:

Երբ չարը խիստ է զօրանում աշխարհում, երաշտը խանձում, ոչնչացնում է ցանքսերը՝ սով սպառնալով, երբ հազարաւոր չորացած բազուկներ երկինք են ուղղւում՝ ցօղի կաթիլներ ալերսելով, մարած աչքերը Մասի կատարին են նայում՝ ամպի մի պատառ փլնտրելով, այն ժամանակ նոյն ճերմակ ամպիկը յանկարծ լոյս է ընկնում կապոյտ եթերից և հովի թևերի վրայով մեղմիկ սահում է և քնքշաբար նստում լեռան կատարին, գթօտ հայեացք է ձգում տառապող, պապակուած երկրի վրայ և նրանից յետոյ միայն գալիս են խոշոր ամպերը, թափւում է անձրևը, ոռոգում դաշտերը: Ճերմակ ամպիկը երկնքի ողորմութեան բանբերն է:

Բայց երբ մորեխն է իջնում երկրի վրայ, ոչնչացնում է ցորենի արտերը, այն ժամանակ սգաւոր թըռչուններն են ցած դալիս սարից և ոչնչացնում, կոտորում մորեխներին և երկիրն ազատում սովից: Նրանց թևերը տակաւին սև են, նրանց կուրծքն ու թիկունքը դեռ բոսորային է. նրանք տակաւին սգաւոր են:

Նւ քանի իջնում է չարիքն աշխարհում, ասում են, նրանք սգաւոր կը քնան և Մասիս սարը մռայլ, անհամբոյր ու չոր, իսկ Սև-Ջուր կը հոսի սև ու պղտոր:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԵՐՐԱՅԱԿԱՆ ՄԵԼՈՂԻԱՆԵՐ

(Բայրօնից)

ՄԸՌԱՅԼ Է ՀՈԳԻՍ...

Մըռայլ է հոգիս:—Օհ, փութա՛ լարել
Տափողը, որ դեռ կարող եմ լըսել.
Թո՛ղ հնչեցնեն քո մատեր քննոյս
Ականջիս՝ նրա միմունջներն անոյս.
Եթէ քաղցր է դեռ մի յոյս այս սրտում
Այդ ձայնը դիւրի՛չ կը զարթեցընէ.
Եթէ մի արցունք կայ այս աչքերում,
Կը հոսի, սիրքս կը զովացընէ:

Բայց երգըդ լինի վայրենի, դժխեմ.
Հեռո՛ւ քեզանից հնչին քերկրալից.
Ասեմ քեզ, մի՛նսրէ՛լ, պէ՛տք է արժանանալ.
Եթէ ոչ սիրքս կը պայթի վե՛տից:
Քանզի սրտութեան կաթով է սրնուած,
Անխնայ եւ անձայն հեծծել է ցաւով.
Այժմ վաճառն է նրան վիճակուած,
Կամ պայթել իսպառ, կամ նիրհել երգով:

ՅՈՀԱՆՆԷՍ-ԽԱՆ ՄԱՍԷՀԵԱՆ

Մ Ե Ն Ա Կ Մ Ա Ր Դ Ի Կ^{*)}

Գ Ր Ա Մ Ա

Գերհարս Հառուպսմանի

Զ Ո Ր Ր Ո Ր Դ Գ Ո Ր Խ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ժամանակը՝ ճաշից յետոյ, չորսից մինչև հինգը: Սեղանի առաջ նստած են
Կէթէն և տիկին Ֆօկերատ: Կէթէն զբաղուած է երեսօյի շապիկ կարելով,
տիկին Ֆօկերատը՝ ձեռագործով: Կէթէն սաստիկ նիհարել է: Անցնում է
մի քանի վայրկեան, Յոհաննէսը ներս է մտնում իր պարապմունքի սե-
նեակից: Նա գլխարկը դեռ լիովին չի ծածկել, ամառուայ վերարկուն կի-
սահագած, մտադիր է դուրս գնալու:

ՅՈՀ. Աննան գնաց:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Բարձր հառաչելով): Հէնց նոր գնաց:

ՅՈՀ. (Մօտենալով Կեթիին համբուրում է նրա ճակատը):

Դու կանոնաւոր կերպով ընդունում ես քո զեղը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ախ, այդ յիմար գեղերը, չատ կ'օգնեն ինչ-
պէս չէ: Ես գիտեմ ինչ բան աւելի լաւ կ'օգնէր:

ՅՈՀ. Ախ մայր, մայր:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես լսում եմ:

Տ. Կէթէ. Այո, այո, ես ընդունում եմ: Առհասարակ հիմա

ոչինչ...

ՅՈՀ. Իսկապէս այսօր դու աւելի լաւ տեսք ունես:

Տ. Կէթէ. Այո, աւելի լաւ եմ:

ՅՈՀ. Քեզ լաւ պահպանիր: Աղիւն: Մենք շուտով կը վե-
րադառնանք:

Տ. Կէթէ. Հեռու էք գնում:

ՅՈՀ. Ո՛չ. գնում ենք անտառ: Յաեսութիւն: (Դուրս է
գալիս պաշեկամբը):

Փոքր դադար: Լսում է երկաթուղու գնացքի աղմուկն ու սու-
լոցը: Ապա հեռում հնչում է կախարանի զանգը:

*) Տե՛ս «Մուրճ» № № 3, 4, 5, 6.

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Լսում է կայարանի զանգը:

Տ. ԿԷԹԷ. Քամին է բերում ձայնը, մայրիկ, (Թողնում է գործը եւ մտածում մեջ ընկնում):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Թռուցիկ հայեացք ձգելով): Էլ ինչի մասին սկսեցիր մտածել, Կէթէ-բալիկ:

Տ. ԿԷԹԷ. (Շարունակելով իր կարը): Ա՛խ, ամեն բանի մասին:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Օրինակ ի՞նչ բանի:

Տ. ԿԷԹԷ. Օրինակի համար կան արդեօք մարդիկ, որոնք զղջալու բան չունեն:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի հարկէ ոչ, Կէթխէն:

Տ. ԿԷԹԷ. (Սկստուրին ցոյց տալով կարուածքը): Կարել ահա այսպէս, շուրջը, մայրիկ: (Վերցնում է ռապի վերելի եւ ներ-
քելի ծայրերից եւ քաշում): Ես կարծում եմ երկայնութիւնը բաւական է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Այո, շատ կարճ պէտք չէ: Աւելի լաւ է մի քիչ երկայն: Երեխաները շատ են մեծանում:

Երկուսն էլ եռանդով աշխատում են: Փոքր դադար:

Տ. ԿԷԹԷ. (Կարելով): Ես երբեմն իմ վատ տրամադրու-
թեամբ Հաննէսին շատ վշտացրել եմ: Նա էլ յաճախ ինձ բաւական
վիշտ է պատճառել: Բայց մարդ ինչ կարող է անել իր ընաւո-
րութեան դէմ. ահա դժբախտութիւնը ինչու է: (Կարճ եւ դառն
նեղնութեամբ): Չափից աւելի վստահ էինք: Ոչ մի բանի վրայ
ուշք չէինք դարձնում (Հաւաչում է):—Այս չապիկը գիտես ինձ
ինչ է յիշեցնում. անկեղանոցում ապրում էր մի պառաւ աղա-
խին... նա ինքը իր համար կարել էր շատ առաջուց պատան
և պահում էր իր արկղում: Մի անգամ նա ինձ ցոյց տուեց այդ
պատանը: Այն ժամանակ ես բոլորովին մեղամաղձոտ դառայ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Խելացնոր պառաւ:

Փոքր դադար:

Տ. ԿԷԹԷ. (Կարճ շարունակելով): Փոքրիկ յիշէրը լա-
տդայ է: Երէկ ես նրան կանչեցի այստեղ և ցոյց էի տալիս նը-
րան պատկերներ: Իսկ նա յանկարծ ինձ հարցնում է. ճիշտ չէ,
մօրաբոյր Կէթէ, թիթեռը մարդ է, իսկ շերեփկութիւնը (միջատ)
նրա կիներ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Բարեսրտութեամբ ժպտալով):

Տ. ԿԷԹԷ. Շատ օյինբազն է: Ապա չօչափում էր կոպերս
և հարցնում. դրանց տակ աչքերը քնում են:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Երեխաները երբեմն շատ զուարճալի են լինում:

Տ. Կէթէ. (Ինչ որ մեղմ, վշտալի զուարճութեամբ): Եւ յետոյ նա միշտ ասում է կայծեւ փոխանակ կայծեր: Դրանով ես միշտ նրան բարկացնում եմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ծիծաղելի է. կայծեր: (Ծիծաղում է):

Տ. Կէթէ. (Կարգ գցում է ծնկերի վրայ): Էլ ի՞նչ դառնութիւններ ասես մարդ չի ստեղծում իր համար երեխայ ժամանակ: Ես դեռ յիշում եմ, երբ ես փոքր էի, մի քանի տարի շարունակ, հէնց որ կարտոֆիլի դաշտ էի տեսնում, ջերմագին խնդրում էի Աստուծուց. «Ախ, Տէր Աստուած, այնպէս արա որ գէթ մի անգամ գտնեմ մեռելի-գլուխ կոշուած թիթեռը»:—Բայց ես ոչ մէկն էլ չը գտայ:—(Խոնջած բարձրանում է տեղից եւ հառաչելով): Յետոյ մարդ ունենում է ուրիշ դառնութիւններ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛ւր ես գնում: Մի քիչ էլ դեռ կաց այստեղ:

Տ. Կէթէ. Պէտք է տեսնել արդեօք չի գարթել Ֆիլիպպիկը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Կէթէ, այդպէս անհանգիստ մի եղբիւր Ամեն բան կը հոգացուի:

Տ. Կէթէ. (Մնում է կանգնած արողի մօտ, ձեռքը դնելով հակասին): Թող մայրիկ. ես պէտք է մտածեմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Քնքով քննելով համոզելով): Դու չը պէտք է բնաւ մտածես: Եկ, մի բան էլ պատմիր ինձ: (Նա նստեցնում է կամագուրկ Կիթին արողի վրայ): Եկ, նստիր:—Յոհաննէսն էլ երբ փոքր էր այդպիսի զուարճալի դաղափարներ ունէր:

Տ. Կէթէ. (Նայում է բարացածի պէս, լայն բացած աչքերը ուղղած դաշնամուրի վերելից կախուած պասկերի վրայ): Ախ, որքան փառաւոր է հայրիկը՝ վերարկու հագած: Նրա մաքրովն էլ չի անցնում, որ նրա աղջիկը... (Նրա ձայնը խեղդում է արտասուքից):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Նկատելով այդ): Բայց Կէթէ-բալիկ:

Տ. Կէթէ. (Դժուարութեամբ խօսելով): Խնդրում եմ, թող ինձ:

Երկուսն էլ կարճ ժամանակ շարունակում են աշխատել:

Տ. Կէթէ. (Շարունակելով կարել): Դու ուրախացա՞ր, երբ Հաննէսը ծնուեց:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Սրտանց, Կէթիսէն: Իսկ դու չուրախացա՞ր Ֆիլիպպիկով:

Տ. Կէթէ. Իսկապէս չը գիտեմ. (Նորից վեր է կենում): Ախ, աւելի լաւ է գնամ մի քիչ պառկեմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Նոյնպէս վեր է կենում. շոյում է Կեքիի ձեռքը): Այո, գնա, եթէ դու քեզ լաւ չես զգում:

Տ. ԿԷԹԷ. Բռնիր ձեռքս տես, մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Կասարում է): Հա, բայիկս, սառուցի նըման են:

Տ. ԿԷԹԷ. Վերցրու ասեղը. (Մեկնում է նրան ասեղը):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Զի ուզում վերցնել): Ի՞նչիս է հարկաւոր ասեղը:

Տ. ԿԷԹԷ. Ահա նայիր: (Արագ մի քանի անգամ ծակոտում է իր ափի մեջ):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Յեռ է փաշում նրա ձեռքը): Վահ, այդ ի՞նչ է, ի՞նչ ես անում դու:

Տ. ԿԷԹԷ. (Ժպտալով): Բոլորովին յաւ չի պատճառում: Բոլորովին: Եւ ես ոչինչ չեմ զգում:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Այդ էլ ի՞նչ մտաւ դու խո: Գնանք, այո՛ գնանք՝ մի քիչ պառկիր: Մի քիչ պառկիր: (Օգնելով տանում է Կեքիին ննջարան):

Մի փոքր դադարից յետոյ մտնում է Բրաունը: Վերցնում է գլխարկը, վերարկուն և կախում զգեստակալից:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Հանելով գլուխը ննջարանից): Ա՛խ, այդ դուք էք, պ. Բրաուն:

ԲՐԱՍՈՒՆ. Բարի երեկոյ, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Իսկոյն զալիս եմ: (Նա յեռ է փաշում գլուխը, մի քանի վայրկեանից յետոյ ներս է մտնում, շտապով մօտենում է Բրաունին եւ հապնեալով նրա ձեռքին է կոխում մի հեռագիր): Հիմա խորհուրդ տուէք ինձ, ի՞նչ անել: (Մինչեւ որ Բրաունը կարդում է՝ նա երկչոտ խորաւծութեամբ հետեւում է նրա դեմքի արտայայտութեանը):

ԲՐԱՍՈՒՆ. (Կարդալուց յետոյ): Դուք յայտնել էք պարոն Ֆօկերատին թէ քանը ինչու՞մն է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ոչ մի ակնարկով: Ոչ, ոչ, ոչ: Ես նոյն իսկ սիրտ չէի անիլ: Ես նրան միայն գրեցի որ վատ չէր լինի եթէ գար, որովհետեւ... որովհետեւ ես դեռ չուտ չեմ կարող այստեղից հեռանալ և որովհետեւ Կէթէն դեռ եւ կազդուրուել է ոչ բոլորովին: Էլ ուրիշ ոչինչ չեմ գրել: Մինչև անգամ չեմ գրել որ օրիորդ Աննան դեռ այստեղ է, պարոն Բրաուն:

ԲՐԱՍՈՒՆ. (Մի փոքր մտածելուց յետոյ վեր է փաշում ուսերը): Այո՛, Բայց ես ոչինչ չեմ կարող ասել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Աւելի վախեցած): Դուք գտնում էք որ ես լաւ չեմ արել: Վերջապէս աւելի լաւ էր որ ես չը գրէի: Բայց

ախր Կէթէն հալւում մաշւում է: Իսկ եթէ պառկի, այն ժամանակ... այն ժամանակ ես չը գիտեմ, էլ ինչ կը լինի: Հիմա էլ նա ստիպուած է շարունակ պառկել շորերով անկողնում: Հէնց այժմ կրկին նա պառկել է: Ես այլ ես չեմ կարող, չեմ կարող, պարոն Բրաուն, ինձ վրայ վերցնել պատասխանատուութիւն: (Ստիպուած է խնչել):

ԲՐԱՈՒՆ. (Նայելով հեռագրին): Պարոն Ֆոկերատը ժամի վեցի գնացքով է գալիս: Հիմա ժամի քանիսն է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դեռ հնգի կէսը չը կայ:

ԲՐԱՈՒՆ. (Մի քանի վայրկեան էլ մտածելուց յետոյ): Այս եօթ օրուայ ընթացքում ոչինչ չը փոխուեց:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Անմխիթար շարժում է գլուխը): Ոչինչ:

ԲՐԱՈՒՆ. Եւ Աննան հետանալու մտադրութիւն անգամ չի ցոյց տալիս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ոչ—ոչ մի անգամ: Եւ Յոհանէսը, կարծես ուղղակի կախարդուած լինի: Առաջ էլ նա անտանելի էր, բայց վերջի վերջոյ նա անում էր այն, ինչ նրան ասում էին: Իսկ հիմա ոչ նայում է, ոչ էլ լսում: Միայն այդ անձնաւորութիւնն է որ կայ: Միշտ միայն այդ անձնաւորութիւնը, ոչ մայր, ոչ կին, պարոն Բրաուն: Ախ, Աստուած: Ի՞նչ անել: Ամբողջ գիշերներ քունս չի տանում: Այսպէս էլ եմ քնում, այնպէս էլ՝ Ուղղակի չը գիտեմ ինչ անել:

Դադար:

ԲՐԱՈՒՆ. Իսկապէս ես էլ չը գիտեմ արդեօք լաւ է որ պարոն Ֆոկերատը գալիս է: Համնէսը դրանից աւելի ես կը գրգռուի... Եւ յետոյ... յետոյ նա ուղում է օրիորդի առաջ ցոյց տալ... այնուամենայնիւ երբեմն ինձ թւում է որ Համնէսը մի կերպ ինքը կ'ազատուի կրկին:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ինձ էլ էր այդպէս թւում: Հէնց այդ է պատճառը որ այն ժամանակ երբ նա նրան յետ բերեց, ես կրկին թողի ինձ համոզել: Այդ էր պատճառը որ ես այստեղ մնացի: Բայց քանի գնում է՝ բանը վատ կերպարանք է ստանում: Հիմա չի կարելի դրա մասին ձայն ծալուել անգամ հանել: Կէթէին էլ ոչինչ չեմ համարձակում ասել: Էլ ո՞ւմ պիտի դիմեմ:

ԲՐԱՈՒՆ. Տիկին Կէթէն այդ մասին Հանսի հետ ոչինչ չի խօսել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Խօսել է, մի անգամ—ամբողջ գիշեր զարթուն մնացին: Աստուած գիտէ ինչէր ասացին իրար: Բայց Կէթէն չափազանց համբերող է: Նա դեռ բռնում է Հանսի

կողմը, երբ ես մի բան եմ ասում: Նոյն իսկ այդ... այդ կնոջ... այդ արարածին ինչպէս հարկն է չի հասկանում: Նրան երբեմն դեռ պաշտպանում է:

Փոքր դադար:

ԲՐԱՌԻՆ. Արդէն ես ինքս ինձ հարց եմ տալիս—արդեօք լաւ չէ՞ր լինի որ ես խօսեմ օրիորդ Աննայի հետ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Արագութեամբ): Այո, գուցէ այդ լաւ լինի:

ԲՐԱՌԻՆ. Ես մինչև անգամ ուզում էի նրան գրել... Բայց ամենից կարևորը այն է, տիկին Ֆօկերատ, որ եթէ պ. Ֆօկերատը իր կողմից խառնուի—այդ կարող է իմ կարծիքով չափազանց փչացնել գործը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի հարկէ, ի հարկէ: Բայց աւել ի՞նչ է մնում ինձ անել իմ սրտնեղութեան մէջ: Ախ, եթէ դուք... եթէ դուք իսկապէս յանձն առնէիք օրիորդի հետ խօսել: (Լսում եմ Աննայի եւ Յոնանեայի ձայները): Ախ, Տէր Աստուած: Ես այժմ չեմ կարող նրան տեսնել: (Հեռանում է դրսի դռնով):

ԲՐԱՌԻՆ. (Յայաղում է: Յետոյ մինչեւ ցրանց մտնելը, նոյնպէս հեռանում է դրսի դռնով):

Օրիորդ Աննան մտնում է պատշկամբից:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վայր է դնում գլխարկը: Խօսում է բաց դռան միջով Յոնանեայի հետ, որ դեռ շարունակում է մնալ դրսում պատշկամբի վրայ): Հետաքրքիր բան կայ, պարոն դօկտօր:

ՅՈՂ. Երևի մի բան է պատահել: Մի պօլիդիական նաւակը նստեց: (Ներս է մտնում): Երևի կրկին մի զժրախտութիւն պատահեց:

ՕՐ. ԱՆՆԱ. Մեկամաղձային նախազգացում միայն:

ՅՈՂ. Այստեղ յաճախ են պատահում այդպիսի դէպքեր: Այդ մի շատ վտանգաւոր ջուր է:—Այդ ի՞նչ է ձեր ձեռքին, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. «Կատուի թաթեր», պարոն դօկտօր: Այդ բոյսից ես կը վերցնեմ ինձ հետ իբրի յիշատակ:

ՅՈՂ. Այսինքն երբ որ ճանապարհ ընկնէք այստեղից: Բայց այդ այնքան էլ չուտ չի լինի:

ՕՐ. ԱՆՆԱ. Կարծում էք:

Փոքր դադար, որի ընթացքում երկուսն էլ սննեակում, դանդաղ լետ ու առաջ են անում, ամեն մէկն առանձին:

ՕՐ. ԱՆՆԱ. Սկսել է արդէն շուտ մթնել:

Յուլիս, 1901.

ՅՈՂ. Եւ ցուրտ է, հէնց որ արեւ մայր է մտնում: Ճրագը վառեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչպէս կամիք:—Կամ մի քիչ հանդստանանք մթնշողում: (Նստում է):

ՅՈՂ. (Նմանապէս նստում է, Աննայից հեռու, առաջին պատահած արթուի վրայ: Մի քիչ լուսիւնից յետոյ): Մթնշող:—Այդ ժամանակ գալիս են հին յիշողութիւններ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հեքիաթներ, այնպէս չէ:

ՅՈՂ. Այո, հեքիաթներ էլ:—Ախ, հրաշալի հեքիաթներ են լինում:

ՕՐ. ԱՆՆԱ. Օ, ի հարկէ:—Եւ գիտէք, սովորաբար ինչպէս են վերջանում լաւագոյնները:—Յետոյ ես հագայ բիւրեղեայ ոտնաման—և յետոյ խփեցի մի քարի—և յետոյ նա «ծննդաց»—և յետոյ նա երկու կտոր եղաւ:

ՅՈՂ. (Կարճ լուսիւնից յետոյ): Իսկ այդ միթէ մեղամաղձային նախազգացում չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ես չեմ կարծում: (Վեր է կենում, դանդաղ մօտենում է դաշնամուրի առաջ դրած արթուին, նստում է եւ շնչում ձեռների վրայ):

ՅՈՂ. (Նմանապէս վեր է կենում, դանդաղ մի քանի քայլ անում եւ կանգնում Աննայի յետեւից): Միայն մի երկու ամանակ խփէք: Պատճառէք ինձ հաճոյք: Եթէ ես միայն մի քանի բոլորովին պարզ հնչիւններ լսեմ, այդ արդէն ինձ կը գոհացնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չը գիտեմ նուազել:

ՅՈՂ. (Մեղմ յանդիմանութեամբ): Ախ, օրիորդ Աննա,—ինչո՞ւ էք դուք այդ ասում: Միայն թէ դուք չէք ուզում, այդ ես գիտեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց ես ամբողջ վեց տարի է ձեռք չեմ տուել դաշնազարկերին: Առաջին անգամ կրկին այս գարնանից սկսեցի մի քիչ ածել: Եւ բացի այդ՝ ես այնպէս, անգտնապնում եմ միայն:—Այնպիսի տխուր, անմխիթար երգեր, որոնք լսել եմ մի ժամանակ մօրիցս:

ՅՈՂ. Գուցէ դուք մի այդպիսին կ'երգէիք: Մի այդպիսի տխուր, անմխիթար երգ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Ծիծաղում է): Ահա տեսնում էք, դուք արդէն ինձ ծաղրում էք:

ՅՈՂ. Ինչպէս տեսնում եմ, օրիորդ, դուք չէք ուզում ինձ հաճոյք պատճառել:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Այո, ճիշտ է, պ. դոկտոր, ես մի անպիտան, քմահաճ արարած եմ:

ՅՈՂ. Ես այդ չեմ ասում, օրիորդ Աննա:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բարձրացնում է դաշնամուրի գլուխը: Դնում է մասները դաշնագարի վրայ: Խորհում է): Եթէ ես մի ուրախ բան խմանայի...

ՅՈՂ. (Նստում է մի հեռու անկիւնում, գլուխը առաջ ուղղած, ոտները իրար վրայ գցած, յենուել է ծնկերի վրայ արմունկով եւ ձեռքը դրել ականջին):

ՕՐ. ԱՆՆԱ. (Ձեռները գրկում, խօսում է դանդաղ եւ ընդհատումներով): Իսկապէս մի նշանաւոր ժամանակ ենք մենք ապրում: Ինձ թւում է որ կարծես ինչ որ հեղձուկ, ճնշող մի բան աստիճանաբար մեզնից հեռանում է:—Դուք եւ նոյնը չէք զգում, պարոն դոկտոր:

ՅՈՂ. (Հագելով):—Այսինքն ի՞նչ...

ՕՐ. ԱՆՆԱ. Մի կողմից մեզ ստրկացնում էր խեղդուկ երկիւղը, միւս կողմից՝ խաւար մոլեռանդութիւնը: Այժմ այդ չափազանց լարուածութիւնը կարծես հարթւում է: Կարծես օդի մի թարմ հոսանք, ասենք քսաներորդ դարից, ներս է թափւում:—Դուք եւ նոյնը չէք զգում, պարոն դոկտոր:—Օրինակի համար, Բրաունի նման մարդիկ մեզ վրայ այնպիսի տպաւորութիւն են թողնում, ինչպէս բուերը լոյս ցերեկով:

ՅՈՂ. Ձը գիտեմ, օրիորդ: Բրաունի վերաբերմամբ այդ բոլորովին ճիշտ է: Բայց ես դեռ չեմ կարողանում համակուել կենսուրախութեամբ: Ես չը գիտեմ...

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չեմ խօսում մեր անհատական ճակատագրի մասին: Մեր անձնական փոքրիկ ճակատագիրը բոլորովին մի կողմը թողնենք, պարոն դոկտոր:

Դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վերցնում է դաշնամուրի վրայ մի ակկօրս եւ օտուկնակում է նրան):

ՅՈՂ. (Երբ հնչիւնները մարում են): Յետոյ:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն դոկտոր:

ՅՈՂ. Ձէք կամենում նուագել: Խնդրում եմ, խնդրում եմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես կամենում էի ձեզ մի բան ասել—բայց դուք չը պէտք է զայրանաք. դուք պէտք է բոլորովին հանգիստ եւ խոհեմ ձեզ պահէք:

ՅՈՂ. Ինչո՞ւմ եւ բանը:

ՕՐ. ԱՆՆԱ. Գիտէ՞ք, իմ ժամանակը լրացել է: Ես պէտք է ճանապարհուեմ:

ՅՈՀ. (Խոր հառաչում է, վեր է կենում տեղից եւ դանդաղ ֆայլում է յետ ու առաջ):

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն Յոհաննէս. մենք սկսում ենք ընկնել թոյլ բնաւորութիւններին յատուկ սխալների մէջ: Մենք պէտք է ուշք դարձնենք աւելի ընդհանուր վշտերի վրայ: Մենք պէտք է սովորենք աւելի հեշտութեամբ տանել մեր անձնականը:

Փոքր դադար:

ՅՈՀ. Ուրեմն դուք վճռել էք գնալ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Մեղմ, բայց վնոդաբար): Այո, պարոն Յոհաննէս:

ՅՈՀ. Այսուհետեւ ես տասնապատիկ մենակ եմ ինձ ղգալու:

Դադար:

ՅՈՀ. Այս, գոնեա այժմ չը խօսենք այդ մասին:

ՕՐ. ԱՆՆԱ. Պէտք է ձեզ մի բան էլ ասեմ: Ես արդէն իմաց եմ տուել որ չարաթ կամ կիւրակի օրը տանը կը լինեմ:

ՅՈՀ. Արդէն իմաց էք տուել... Բայց, օրիորդ, ինչո՞ւ էք այդքան շտապում:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ պատճառներով:

Դադար:

ՅՈՀ. (Աւելի արագ եւ յուզուած ֆայլելով): Միթէ պիտի խկապէս ամենը, ամենը ինչ որ ձեռք է բերուած, զոհել այդ անիծուած պայմանականութիւններին: Միթէ մարդիկ պարզ չեն կարողանում հասկանալ, որ ոչ մի յանցանք չը կայ այն յարաբերութիւնների մէջ, որոնցից երկու կողմն էլ միայն չահուում են, երկու կողմն էլ աւելի ու աւելի աղնիւ են դառնում: Միթէ կորուստ է ծնողների համար, երբ նրանց որդին աւելի խոր է դառնում: Միթէ կորուստ է մի կնկայ համար, երբ նրա մարդը հոգեպէս աճում է և զարգանում:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բարուքեամբ սաստելով): Պարոն դօկտօր, պարոն դօկտօր. չար աֆֆէկտ:

ՅՈՀ. (Հանդարտ): Լաւ, միթէ ես իրաւացի չեմ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այո, և ոչ—Դուք դատում էք այլ կերպ, քան ձեր ծնողներն են դատում: Ձեր ծնողները այլ կերպ են դատում, քան տիկին Կէթէն է դատում: Եւ իմ կարծիքով դրա դէմ ընաւ ոչինչ չի կարելի ասել:

ՅՈՂ. Բայց այդ հօ անոեղի է—անոեղի է մեզ համար... ոչ պակաս միւսների համար:

Դադար:

ՅՈՂ. Այո, բայց դուք ինքներդ էիք միշտ ասում, որ չը պէտք է թոյլ տալ որ ակնածութիւնը դէպի ուրիշները մեզ վրայ տիրանայ, չը պէտք է մարդ իրան կապուած դարձնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց երբ մարդ արդէն կապուած է:

ՅՈՂ. Լսւ. ես կապուած եմ: Աւանդ, բայց դուք... Ինչու պէտք է դուք, ուրիշների կողմը բռնէք:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես սիրեցի նրանց:

Դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք յաճախ ինձ ասել էք որ նախազգում էք տղամարդու և կնոջ մէջ մի նոր, աւելի բարձր յարաբերութեան ձևեր:

ՅՈՂ. (Ձեռմուքեամբ եւ յափճակութեամբ): Այո, այդ ես նախազգում եմ, այդ կը լինի, աւելի ուշ, մի օր: Այն ժամանակ ոչ անասնականը կը բռնի առաջին տեղը, այլ մարդկայինը: Այլ ես անասունը չի ամուսնանալ անասունի հետ, այլ մարդը մարդու: Բարեկամութիւն, ահա հիմքը, որի վրայ բարձրացրած կը լինի այդ տեսակ սէրը: Անլուծանելի, հրաշալի, ուղղակի մի հրաշակերտ: Բայց ես գուշակում եմ նոյն իսկ աւելին. աւելի ես բարձր, ճոխ, ազատ բան... (Ընդհատում է իրան եւ դիմում Աննային):—Եթէ ես կարողանայի պարզ տեսնել ձեր դէմքը, այժմ,—եւ ձեզ ժպտալիս կը տեսնէի: Այդպէս չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն դօկտօր... Ոչ, այս անգամ չը ծիծաղեցի: Բայց ուղիղ ասած—այդպիսի խօսքեր —որոնցից մարդ հեշտութեամբ հարբում է... սովորաբար իմ մէջ յարուցանում են ինչ—որ երգիծանք:—Բայց հէնց ընդունենք որ իսկապէս ինչ—որ նոր, բարձր բան կար—մեր յարաբերութիւնների մէջ:

ՅՈՂ. (Վճացած): Դուք երկրայում էք: Պէտք է եւ ձեզ թուեմ տարբերութիւնը: Օրինակի համար գտնում էք դուք որ և է այլ բան Կէթէի նկատմամբ, քան սրտագին մի սէր: Միթէ իմ զգայմունքը դէպի Կէթէն աւելի թուլացել է: Ընդհակառակը, նա աւելի խոր ու աւելի լիքն է դառել:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց, ուր է բացի ինձնից մի այլ մարդ, որ ձեզ կարողանար հաւատալ:—Եւ միթէ դրանից տիկին Կէթէն պակաս է տանջուելու:—Եւ չէի ուզենալ խօսել մեր մասին:—Դիցուք—բոլորովին ընդհանուր առմամբ—մէկը գտաւ յարաբերութիւնների մի նոր աւելի կատարեալ ձև: Չէ որ այդ յարաբե-

րութիւնները առժամանակ դեռ միայն զգացւում են—դա չափազանց քնքայլ, մատաղ մի բոյս է, որ պէտք է փայփայել ու փայփայել —համաձայն չէ՞ր ինձ հետ, պարոն դօկտօր:—Թէ այդ փոքրիկ բոյսը կ'աճի մեր օրով, այդ մենք չը պէտք է յուսանք: Մենք երբէք չենք կարող նրան տեսնել մեծացած, նրա պտուղները ուրիշներին համար են սահմանուած: Պահպանել ապագայ սերունդներին համար ծիլը—այդ գույշ մենք կարողանանք: Ես մինչև անգամ կարող էի մտածել, որ մէկն ու մէկը իր պարտականութիւնը կը համարի այդ անել:

ՅՈՂ. Եւ դրանից դուք ուզում էք հետեցնել, որ մենք պէտք է բաժանուենք:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չէի ուզում մեր երկուսիս մասին խօսել: Բայց, քանի որ դուք արդէն խօսք բացիք... այո, մենք պէտք է բաժանուենք:—Գնալ մի ճանապարհով, որ ինձ երբեմն պատկերանում էր... վայրկեաններով... այդ այժմ այլ ես չեմ ուզում: Ես ես մի ինչ որ նախազգացում ունեցայ:—Եւ այնուհետև ինձ ես, ճիշտն ասած, հին նպատակը թուաց շատ անշուն, չնչին մեղ համար—շատ սովորական:—Այդ ուղղակի այնպէս է, որ կարծես մարդ լայն ընդարձակ տեսարան ունեցող բարձր սարից իջնում է և յետոյ ձորում ամեն ինչ այնքան նեղ ու մօտ է գտնում:

Դադար:

ՅՈՂ. Իսկ եթէ ոչ մի գոյութիւն դրանից չի վստահւում:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ անկարելի է:

ՅՈՂ. Բայց եթէ Կէթէն այդ ոյժը ունենար: Եթէ նա կարողանար բարձրանալ այդ գաղափարների բարձունքը:

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ Կէթէն կարողանար—ապրել իմ կողքին—այն ժամանակ... այն ժամանակ ես չէի կարող ինքս ինձ ես հաւատ ընծայել: Իմ մէջ... մեր մէջ կայ մի բան, որ թշնամի է այդ ազնուացրած, երազական յարաբերութիւններին և որ վերջի վերջոյ, պարոն դօկտօր, մեզ գերազանցում է: Հիմա չէ՞ր կամենում վստել ճրագը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Մտնում է նախասենեակից, նրազը ձեռքին, հօսում է ուղղելով խօսքերը դեպի յես, նախասենեակը): Այստեղ դեռ մութ է: Նախ և առաջ ես կը վառեմ լամպը: Մի քիչ էլ դեռ մնացէ՞ր դրսում, պարոն Բրաուն: Ես ուզում եմ այնպէս անել, որ...

ՅՈՂ. (Հագում է):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վախեցած): Այդ ո՞վ է այստեղ:

ՅՈՂ. Մենք, մայր:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դո՛ւ, Յոհաննէս:

ՅՈՀ. Մենք, օրիորդ Աննան և ես—Այդ ով է գրառում:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Բաւական դժգոհ). Է՛է, Հաննէս, Միթէ չէիր կարող ճրագ վառել: Այնքան էլ լաւ չէ... Այդպէս միթու՞թեան մէջ... (Վառում է լամպը: Օրիորդ Աննան և Յոհաննէսը իրանց տեղից չեն շարժւում):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հաննէս:

ՅՈՀ. Ի՞նչ, մայր իմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ձեռ կարող դալ ինձ հետ: Ես բան ունեմ քեզ ասելու:

ՅՈՀ. Մայր, միթէ չի կարելի այստեղ ես:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Եթէ դու աւելորդ ժամանակ չունիս ինձ համար, ասա ուղղակի:

ՅՈՀ. Ախ, մայր... Ի հարկէ ես պատրաստ եմ, գնանք: Ներեցէք, օրիորդ, (Դնում է Տիկին Ֆօկերասի հետ պարապելու սեղանակը):

ՕՐ. ԱՆՆԱ. (Վերցնում է մի փանի մեղմ ակօրդներ: Յետոյ երգում է զսպուած ձայնով). «Բանտարկութեան մէջ մինչև մահ տանջուած, մեռար դու երիտասարդ: Կռուի մէջ քո ազգի համար վայր դրեցիր քո գլուխը» (Լռում է: Պարոն Բրաունը ներս է մտնում):

ՕՐ. ԱՆՆԱ. (Շրջում է պսոզ աքոռի վրայ). Բարի երեկոյ, պարոն Բրաուն:

ԲՐԱՈՒՆ. Ես չէի ուզում ձեզ խանդարել: Բարի երեկոյ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք այժմ շատ սակաւ էք երևում:

ԲՐԱՈՒՆ. Ախ, միթէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Յաճախ է հարց լինում ձեր մասին:

ԲՐԱՈՒՆ. Այդ ով է հարցնում իմ մասին: Անկասկած ոչ Հանսը:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն Յոհաննէսը, Ո՛չ—Տիկին Կէթէն:

ԲՐԱՈՒՆ. Տեսնում եք—Իսկն ասած, ես... Ախ, այժմ այդ բոլորը երկրորդական բան է:

Դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ թւում է, որ մենք այսօր գտնւում ենք մի այնպիսի տրամադրութեան տակ որ մենք իրար պէտք է պատմէինք մի որ և է ուրախ բան: Այդպիսի մի բան չը գիտէք: Երբեմն պէտք է մարդ ստիպի իրան ծիծաղել: Մի որ և է անեկդօտ կամ մի...

ԲՐԱՈՒՆ. Ո՛չ, իսկ եմ ասում, ո՛չ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես հաւատացած եմ, որ դուք չէք էլ հասկանում թէ ինչ է ծիծաղը:

Պաղար:

ԲՐԱՌԻՆ. Ես իսկապէս եկել եմ, օրիորդ, մի լուրջ հարցի մասին ձեզ հետ խօսելու:

ՕՐ. ԱՆՆԱ. Դձուք:—Ի՞նչ հետ:

ԲՐԱՌԻՆ. Այո, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեր է կենում): Դէ խնդրեմ: Ես լսում եմ (Մօսեմում սեղանին, բայց է անում իմօրսէլ (զառնալմակ) ծաղիկների փուկը եւ սկսում ջոկջոկել ու նորից կապել):

ԲՐԱՌԻՆ. Այն ժամանակ ես գտնուում էի ծանր հոգեկան յուզման մէջ: Ես ակնարկում եմ այն ժամանակը, երբ մենք միմեանց հետ ծանօթացանք Պարիզում: Իսկապէս այդ դատարկ բաներ էին: Վերջ ի վերջոյ մի թէ նոյնը չէ. մարդ նկարում է ունենալով թէ չունենալով գաղափար: Արուեստը չռայլութիւն է—իսկ ներկայումս ծառայել չռայլութեան՝ ամօթալի է թէկուզ ինչ հանդամանքներում էլ վերջնէք: Այն ժամանակ յամենայն դէպս ձեր ծանօթութիւնը ինձ օգնեց դուրս գալ այդ խառնաչփոթ դրութիւնից: Եւ—հէնց այդ էի ուղում գլխաւորապէս ասել որ ես այն ժամանակ սովորեցի ձեզ յարգել և դնահատել:

ՕՐ. ԱՆՆԱ. (Շարունակելով կարգի բերել ծաղիկները, քեթեւակի): Այն ինչ ասում էք այնքան էլ սիրալիր չէ—բայց չարունակէք:

ԲՐԱՌԻՆ. Եթէ այդպիսի խօսքեր ձեզ վիրաւորում են, օրիորդ,—ափսոսում եմ... չը գիտեմ ինչ անեմ, մտքերս չփոխում եմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ ցաւում եմ, պ. Բրաուն:

ԲՐԱՌԻՆ. Ինձ համար տաժանելի է և անախորժ: Պէտք էր թողնել որ հանգամանքները ընթանային իրանց կարգով: Եթէ միայն այդ հանգամանքները սարսափելի ծանր հետեանքներ չունենային: Բայց չի կարելի հօ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Կամացուկ երգում է ինքն իր համար. «մանիւր, մանիւր, աղջիկս»): Կատուի թաթեր:—Ես լսում եմ, պարոն Բրաուն:

ԲՐԱՌԻՆ. Երբ նայում եմ ձեզ վրայ, օրիորդ, իսկապէս ես չեմ կարողանում զսպել զգացմունքներս... կարծես դուք բնաւ ձեզ հաշիւ չէք տալիս... կարծես դուք չէք նկատում հանգամանքների ամբողջ երկիւղալի լրջութիւնը:

ՕՐ. ԱՆՆԱ. (Երգում է. «Տեսաւ տղան մի վարդ կանգնած»):

ԲՐԱՌԻՆ. Վերջապէս մարդիկ խիղճ ունենա՛ւո՛ւնչ արած, օրիորդ. ես ստիպուած եմ դիմել ձեր խղճի դատաստանին:

ՕՐ. ԱՆՆԱ. (Փոքր լուսիւնից յետոյ, սառն եւ քեթեւակի): Գիտէ՞ք ինչ ասաց Լիոն Տասերորդ պապը խղճի մասին:

ԲՐԱՌԻՆ. Այդ ես չը գիտեմ, և իսկն ասած այս վայկե-նում այդ ինձ քիչ է հետաքրքրում, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Նա ասաց որ խիղճը մի չար դազան է, որ զինում է մարդուն իրան՝ իր դէմ:—Բայց խնդրեմ շարունակէ՛ք, խնդրեմ: Ես ամբողջապէս ականջ եմ դառնում:

ԲՐԱՌԻՆ. Ես չը գիտեմ, սակայն իսկապէս շատ պարզ բան է: Այդ դուք էլ պէտք է տեսնէք—որ հարցը մի ամբողջ ըն-տանիքի կիսանքի և մահուան մասին է: Ինձ թւում է որ բաւա-կան է մի հայեացք երիտասարդ տիկին Ֆօկերատի վրայ, միայն մի հայեացք որ այլ ևս ոչ մի կասկած չը մնայ: Ինձ թւում է որ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Այծով լրջօրէն): Ա՛խ ահա ինչ, Յետոյ, շարու-նակէ՛ք, շարունակէ՛ք:

ԲՐԱՌԻՆ. Այո՛, և... այո՛ ...և ձեր յարաբերութիւնները դէպի Յոհաննէսը...

ՕՐ. ԱՆՆԱ. (Բողոքելով): Պարոն Բրաուն.—Մինչև այժմ ձեզ լսում էի, կարծելով որ իմ պարտքս է լսել բարեկամիս բա-րեկամին: Ինչ որ այսուհետև էք դուք խօսելու, խօսելու էք քամու մէջ:

ԲՐԱՌԻՆ. (Կարճ շուրջադարձ լուսիւն: Ապա Երջում է, վեր-ցնում գլխարկն ու վերադառնում եւ հեռանում ժեսով արայայտե-լով որ արաւ ինչ կարելի էր):

ՕՐ. ԱՆՆԱ. (Հէնց որ Բրաունը դուրս է գալիս, փունջը դէմ է Եպրսում, եւ յուզուած մի քանի անգամ յետ ու առաջ է փայ-լում: Աւելի հանդարտում է եւ խմում է ջուր):

Տիկին Ֆօկերատը մտնում է դրսի դռնից:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վախժիւնով նայում է շուրջը եւ հաւաս-տիանալով որ նրանք մեկնել են՝ շտապով մօտենում է Աննային): Ես այնպէս վախենում եմ Հաննէսի համար. դուք ի հարկէ գիտէ՛ք թէ ինչ սարսափելի ցատկոտն է Հաննէսը: Իսկ այժմ իմ սրտիս վրայ մի բան է ճնշում: Ես այլ ևս չեմ կարող ծածկել, Երիւրդ Ա՛ննա: (Նայում է Աննայի վրայ արագաբաժ, պաղատող կերպա-րանով):

ՕՐ. ԱՆՆԱ. Ես գիտեմ թէ ինչ էք դուք ուզում:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Պարոն Բրաունը խօսել է ձեզ հետ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Ուզում ե ասել այո, ձայնը չի հնազանդուում նա ուժով զսպում ե սկսուող լացն ու հեկեկանքը):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Հոգաւար ձեւով պստելով նրա շուրջը): Օրիորդ Աննա, սիրելի օրիորդ. չը պէտք է վհատուել: Օ, Յիսուս Քրիստոս, միայն թէ Հաննէսը չը մահէր: Ես չը գիտեմ թէ ինչ եմ սնում: Օրիորդ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ոչինչ, ոչինչ... արդէն անցաւ: Մի անհանգստացէք իմ մասին, տիկին Ֆօկերաս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դուք էլ էք իմ մեղքս գալիս: Այլապէս ես պէտք է տմարդ լինէի: Կեանքի մէջ դուք շատ վատութիւններ էք կրել: Այդ բոլորը խոր կերպով ցաւեցնում է սիրտս: Բայց Յոհաննէսը այնուամենայնիւ աւելի մօտ է ինձ համար: Այդ հօ ես չեմ կարող փոխել: Եւ դուք, օրիորդ, դեռ այնքան ջանել էք, այնքան ջանել: Ձեր հասակում ամեն բան շատ հեշտ է տանւում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ շատ ցաւեցնում է որ բանը այդքան հեռու գնաց:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Երբէք ես այսպիսի բան չեմ արած: Ես չեմ կարող յիշել որ ես մէկին հիւրամեծարութիւն ցոյց տուած չը լինեմ: Բայց ես ուրիշ ճանապարհ չը գիտեմ: Այդ ելքը վերջինն է մեզ բոլորիս համար—Այս վայրկեանում ես չեմ ուզում դատել: Ես ուզում եմ ձեզ հետ խօսել ինչպէս մի կին՝ կնոջ հետ—ե ինչպէս մայր ուզում եմ ես ձեզ հետ խօսել: (Արժանութից խեղդուող ձայնով): Իբրեւ իմ Յոհաննէսի մայրը ես դիմում եմ ձեզ (Բռնում ե Աննայի ձեռքը): Տուէք ինձ իմ Յոհաննէսին: Վերադարձրէք տանջուած մօրը իր զաւակին: (Ընկնում ե արթուի վրայ եւ Աննայի ձեռքը արժանութիւն քրջում):

ՕՐ. ԱՆՆԱ. Սիրելի, սիրելի տիկին Ֆօկերաս: Այդ... խորապէս ինձ ցնցում է:—Բայց միթէ մի բան կարող եմ ձեզ վերադարձնել: Միթէ մի բան ես ձեզնից խլել եմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Աւելի լաւ է այդ մի կողմ թողնենք: Ես չեմ ուզում քննել, օրիորդ: Ես չեմ ուզում քննել, թէ ով է մեղաւորը: Ես միայն այսքանս գիտեմ. իմ սրդիս իր կեանքում երբէք վատ հակումներ չէ ունեցել: Ես այնքան վատահ էի նրա նկատմամբ—որ նոյն իսկ այսօր չեմ կարողանում հասկանալ... (Լաց ե լինում): Այդ չափից անց ինքնազստահ բան էր, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչ էլ ե ասէք, տիկին Ֆօկերաս, ես չեմ կարող պաշտպանուել ձեր դէմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես չէի ուզենալ ձեզ վշտացնել: Երկինք վկայ, ես չէի ուզում ձեզ դառնացնել: Ես ձեր ձեռքում եմ:

Ես միայն կարող եմ ձեզ աղաչել և աղաչել իմ սրտիս սոսկալի յաւի մէջ: Թողէք Յռհաննէսին ազատ—մինչև դեռ ամեն բան կորած չէ—մինչև որ Կէթէի սիրտը չէ խորտակուած իսպառ: Խղճայէք նրան:

ՕՐ. ԱՆՆԱ. Տիկին Ֆօկերատո Դուք չափազանց ինձ ստորացնում էք... Ես ինձ այնպէս եմ զգում որ կարծես ես ծեծուած լինիմ, և... Բայց ոչ—ես ուզում եմ ձեզ միայն պարզ ասել. վճռուած բան է որ ես զնում եմ: Եւ եթէ հարցը այն է որ...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հիմա ի՞նչ պէտք է ասէք, օրիորդ: Ախ, լեզուս չի շարժում: Բայց որոշ հանգամանքներից ստիպուած... հարկաւոր է որ այդ կատարուի շուտով... Նթէ կարելի է հէնց այժմ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Հաւաքում է իրերը, որ ինքը դրել էր):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ուրիշ ընտրութիւն չունեմ, օրիորդ:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Իրերը ձեռքին, դանդաղ փայլումով դիմում է դէպի դրսի դուռը: Տիկին Ֆօկերատի առաջ կանգ է առնում): Դուք դեռ կարող էիք մտածել, որ ես կը յետաձգեմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Տէր ընդ ձեզ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Մնաք բարով, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հաննէսին կ'ասէք ինչ որ մենք խօսեցինք:

ՕՐ. ԱՆՆԱ. Անհանգիստ մի եղէք, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Աստուած ձեզ պահպանի, օրիորդ Աննա:

Աննան հեռանում է դրսի դռնով: Տիկին Ֆօկերատը ազատ շունչ է քաշում և շտապով դիմում է ննջարանը: Պատշկամբի վրայ երևում է լապտեր: Ներս է մտնում ծեր Ֆօկերատը շինելը հազին, թաւեայ գլխարկով. նրա լետից՝ երկաթուղու կայարանի բեռնակիրը կապոցներով:

ՖՕԿԵՐԱՏ. (Չափազանց գոհ): Այսպէս—Օ՛չ դք չը կայ: Դրէք իրերը ահա այստեղ: Սպասէք, (Որոնում է դրամակալի (պօրսմօնե) մեջ): Ահա քո ջանքերի համար:

ԿԱՊՈՅՏ ԿՐԿՆՈՑԱԻՈՐԸ *) Շատ չնորհակալ եմ:

ՖՕԿԵՐԱՏ. Այ մարդ, մի քիչ սպասէք: (Որոնում է վերադառնալի գրպաններում): Յիշում եմ ինձ մօտ դեռ կար երկու օրինակ «Արմաւենու ճիւղեր» գրքից... Ահա՛ (Տալիս է նրան մի փանի գրքիցներ): Մի բարեպաշտ մարդ է այդ գրել և ճշգրիտ պատահարներ են: Թող երջանակութիւն բերի ձեզ: (Սեղմում է

*) Բեռնակիրը:

եփոքուած բեռնակիրի ձեռքը: Սա չը գիտէ ինչ ասել եւ հեռանում է լուռ:

ՖՕԿԵՐԱՏ. (Հանում է վերարկուն եւ գլխարկը, նայում է շուրջը, ուրախութիւնից եփում է ձեռները, մօտենում է ննջարանի դռան եւ լսում: Երբ դռան յետեւից լսում է աղմուկ, վազե-վազ հեռանում է եւ քազ կենում վառարանի յետեւ):

Տ. Կէթէ. (Մտնում է ննջարանից, տեսնում է կապոցները, վերարկուն եւ գլխարկը): Վահ, Տէր Աստուած, այդ... այդ... հայրիկի իրերն են:

ՖՕԿԵՐԱՏ. (Պտտուող քամու նման դուրս է պրծնում վառարանի յետեւից, միաժամանակ ծիծաղելով եւ լալով, ամեն ինչ արտակարգ ցայտուն ձեւով: Նա գրկում է եւ մի քանի անգամ համբուրում Կեթէին): Դստրիկս, Կէթէ բալիկս (Համբուրում է): Ի՞նչպէս էք: Ի՞նչ էք անում: Բոլորդ էլ առողջ ու զուարթ էք: (Համբոյր): Ո՛չ, դուք չէք կարող երեակայել... (Բաց քողելով Կեթէին): Դուք չէք կարող ձեզ կրեակայել, թէ ինչպէս բախտաւոր էի ես այն օր: (Ծիծաղով): Ի՞նչ է անում արքայազնը, հա-հա-հա: Ի՞նչպէս է նորին բարձրութեան քէֆը, հա-հա: Նորին բարձրութիւն արքայազն Շնուտի, հա-հա-հա-հա: Ա՛հ, փառք Աստուծոյ, որ ես վերջապէս ալստեղ եմ: (Մի քիչ յոգնած): Գիտե՞ս—(Հանում է ակնոցները եւ սրբում ապակիները): Երկար մենակութիւնը այնքան էլ ախորժելի չէ:—Հա-հա: Մարդ մենակ իրան լաւ չէ զգում, պէտք է միշտ երկուսով լինել, հա-հա-հա-հա:—Հապա, հապա—ես յետոյ գիտես որքան գործ, նեղութիւն մանաւանդ աղբի հետ: Աղբ, հա-հա-հա, այդ ոսկի է գիւղատնտեսի համար: Այս նորերուս եկել էր մեզ մօտ պատուր Պֆայֆէսը, որ վրդովում էր, թէ ինչու մեր տան առաջ աղբահորեր ենք պահում: (Ծիծաղում է): Բայց ես նրան ասացի. սիրելի պատուր, ասացի նրան, այդ էլ մեր ոսկէ հորերն են, հա-հա-հա-հա: Հապա ուր է իմ պառաւ, իմ թանկագին տանտիկինս—ե իմ Հաննէսը: (Ուշադրութեամբ զննելով Կեթէին): Չը գիտեմ, գուցէ լամպն է այդպէս անում: Դու կարծես դեռ ես բոլորովին այնպէս չես, ինչպէս առաջ, Կէթիւն:

Տ. Կէթէ. (Դժուարութեամբ ծածկելով իր յուզմունքը): Ա՛խ, —հայրիկ, ես ինձ բոլորովին... (Փաթաթուելով նրա վզով): Ես այնքան ուրախ եմ որ դու եկար...

ՖՕԿԵՐԱՏ. Ես երեւի քեզ մի քիչ վախացրի, Կէթէ:

Տիկին Ֆոկերատ երևում է զրոյի դռան մէջ:

ՖՕԿԵՐԱՏ. (Կրկին ուրախութիւնից իրան կորցնելով): Կու-

կու, հա-հա-հա-հա: Ահա և նա (Լուեայն Ըա եւ իր կինը բնկ-նում են միմեանց գիրկը. լալիս են եւ ծիծաղում):

Տ. Կէթէ. (Զը կարողանալով իրան պահել յուզումից—հե-ռանում է):

ՖՕԿԵՐԱՏ. (Գրկախառնութիւնից յետոյ խփելով կնկայ մեջ-քին): Այ դու իմ պառաւ, հաւատարիմ սիրտս—Այս մեր ամե-նաերկար բաժանումն էր:—Դէ հիմա միայն Յոհաննէսն է պա-կաս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Կարճ յայադումից յետոյ): Այցելուն էլ դեռ այստեղ է:

ՖՕԿԵՐԱՏ. Այցելուն:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Այո, օրիորդը:

ՖՕԿԵՐԱՏ. Հա.—ո՞ր օրիորդը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դու հօ ճանաչում ես. օրիորդ Մառը:

ՖՕԿԵՐԱՏ. Ես կարծում էի, որ նա գնացել է: Հա, ահա այստեղ և ուտելեղէններ: (Ջոկչոկելով կապոցները): Սրա մէջ իւր է: Ջուաներ չեմ բերել այս անգամ. դեռ զարհուրանքով եմ յիշում վերջին անգամ պատահածը: Այստեղ—Հաննէսի համար—սեփական պատրաստած պանիր: Այդ բոլորը պէտք է չուտով տանել մառանը: Ահա և խոզի ապխտած բուդ: Գիտես, Մարթա, ինչ քնքոյշ բան է, կարծես կարմրախայտ լինի—Բայց դու ոչ-ինչ չես ասում: Առողջ ես դու:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Այո, հայրիկ—Բայց—ես չը գիտեմ—սրտիս վրայ մի բան է ծանրացած: Իսկուպէս ես չէի ուզում քեզ ասել—բայց—ես... դու իմ ամենահաւատարիմ կենակիցն ես: Ես մենակ այլ ես չեմ կարող բոլորը տանել—Մեր որդին... մեր Յոհաննէսը: Քիչ մնաց որ...

ՖՕԿԵՐԱՏ. (Թռչելով տեղից եւ վախեցած): Ի՞նչ, Հաննէս, ինչ է պատահել մեր Հաննէսին: Ի՞նչ: Ի՞նչ, ասա:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց դու մի անհանգստացիր: Առտուծոյ օգնութեամբ այժմ ամեն բան բարի վախճան ունեցաւ: Օրիոր-դը վերջապէս այժմ հեռանում է այս տնից:

ՖՕԿԵՐԱՏ. (Խոր ցնցուած): Մարթա: Այդ չի կարող ու-ղիղ լինել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես էլ չը գիտեմ թէ որքան հեռու է գնացել նրանց մէջ—միայն... Այդ մի սարսափելի ժամանակ էր ինձ համար:

ՖՕԿԵՐԱՏ. Ջեռքս կտրել կը տամ, Մարթա, առանց տա-տանուկելու:—Իմ որդին—Մարթա, իմ որդին—մոռացած պար-տականութիւն և պատիւ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ախ, այ մարդ, դու պէտք է այդ ինքդ տես-

նես, դու պէտք է նախ ինքդ քննես: Ես հօ չը գիտեմ...

ՖՕԿԵՐԱՏ. (Անց ու դարձ է անում, գունատ, մրմնջալով):
Եղիցի կամք Քո, եղիցի կամք Քո...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Կամացուկ լացում է):

ՖՕԿԵՐԱՏ. (Կանգնում է նրա առաջ եւ խուլ ձայնով):
Մարթա, պէտք է մի տեղ մեղք լինի ծածկուած:—Պէտք է խորհել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Մենք այդ լռելեայն թոյլ տուինք: Մեր զաւակները աւելի և աւելի հեռացան Աստուծուց և ուղիղ ճանապարհից:

ՖՕԿԵՐԱՏ. Այո, դու իրաւացի ես: Հէնց այդ է պատճառը: Հէնց դրա համար ենք մենք այժմ պատժւում: (Բռնում է կնոջ երկու ձեռքը): Բայց եկ աղօթենք Աստուծուն խոր հնազանդութեամբ—ցերեկ և գիշեր: Եկ աղօթենք Աստուծուն, Մարթա:

Ե.—Ա.

(Վերջը յաջորդ համարում):

ԵՐԳ ՎԵՐՋԱԼՈՒՍԻ...

(Ն Ի Կ Ի Օ Ի Ն)

Երբ վերջալուսի շողուն հանանչներ
Ոսկեգոծում են խաղուն ջրերի
Փայլուն հայելին—եւ արձակ դաւսեր
Պատում են ստուերներ խորին գիւերի.
Եւ զուարն գիւղն է լըռում՝ փուն մըսած,
Եւ ծաղկանց վըրայ, հոսոս դալարում
Ցողն է փայլփրլում՝ երկնփից իջած.
Եւ արծաթ շողով շըղարե է փրոռում
Մըշուեն անսառի մութ-գանգուր գըլխին,—

Ո՛հ, ես այդ ժամին

Աւսծոյ աշխարհին

Նայում եմ մի խոր, անյայտ հրնուանով.
Եւ անգըրկելի, անհուն բընութեան
Անդորր գըրկի մէջ ես մըսով, հոգով
Գտնում եմ մի փաղք, հանգիստ օթեան.
Եւ ինձ օտա՛ր են յոյզեր երկրային,
Եւ իմ հոգին է ա՛յնպէս լուսավառ,
Որ, կարծես, այդ սուրբ, մենաւոր ժամին
Ինձ հետ խօսում է արարած-աշխարհ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ

Հոգևորականութիւնն և տգիտութիւնն, ահա այն երկու զօրեղ գործօնները, որ սերտ կապերով շղթայուած իրար, կառավարում են ամբողջ Պարսկաստանը: Ահա դրանք են, որ շատ անողոք կերպով հալածում են ամեն մի լուսաւոր միտք, ամեն մի գաղափար, որ կարող է որ և է կերպով պարսիկ ժողովրդի աչքերը բանալ: Ահա դրանով պէտք է բացատրել, որ պարսիկ լրագիրները, մեծ մասով կամ հէնց իրանց սաղմային վիճակի մէջ են մեռնում, կամ լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ, և կամ շատ կարճ կեանք են ունենում: Եւ այդ կարճ ժամանակամիջոցումն էլ անկարող են յեղափոխել կեանքը, նոր հոսանք մտցնել նրա մէջ:

Պարսկաստանում լրագիր, պարբերական հրատարակութիւններ ունենալու փորձեր, ինչպէս անցեալներում, նոյնպէս և ներկայում, արուել և արւում են, բայց միշտ էլ մօլլաների և տգէտ ամբոխի կողմից անաջողութեան է հանդիպել, միշտ էլ հալածուել և այժմ էլ հալածւում է:

Դա ֆակտ է, որ պարսից մէջ պարբերական հրատարակութիւններ և կանոնաւոր դպրոցների ձեռնարկութիւններ եղել են և այժմ էլ կան, և միշտ էլ նախաձեռնողը, սկսողը և զել է ազատամիտ երիտասարդութիւնը, բայց ամիսոս, որ այդ երիտասարդները այնքան աննշան թիւ են կազմում թանձր խաւարի մէջ խարխալող պարսիկ ամբոխի և մօլլաների հետ համեմատած: Մամուլը իր իսկական դերի մէջ մտնելու համար անհրաժեշտ է գիտակցող և հասկացող տարր, իսկ այդ դրութեան հասնելու և մտաւոր զարգացում ձեռք բերելու միակ միջոցը կրթական հիմնարկութիւններն են և դպրոցները: Բայց կան արդեօք Պարսկաստանում այդպիսի դպրոցներ:—Ոչ: Նոյն հին խալիֆայական դպրոցներն են այժմ, ինչպէս և շատ առաջ. բոլոր դպրոցներն էլ գտնւում են հոգևորականների ձեռքում, աշակերտներին աւանդւում են միմիայն կրօնական առարկաներ: Գիտութիւնների, օտար լեզուների և այլ կարևոր առարկանե-

րի հոտն անգամ չը կայ: Բոլոր դպրոցներումն էլ տիրում են հին, խալիֆայական կարգերը, մեծ, մութ ու նեղ սենեակ, ուր բազմաթիւ աշակերտներ, մեծ և փոքր, խռնուած միասին և չոգած գետնին:

Ճիշտ է, Թահրանում կան մէկ երկու դպրոցներ, որ իրանց տեսակով տարբերում են վերն նկարագրուած խալիֆայական դպրոցներից, ուր կրթութիւնը տարւում է աւելի լուրջ և բաղմակողմանի ու մեծ ուշադրութիւն են դարձնում զարգացման վրայ, բայց այդ մի քանի դպրոցները ինչ կարող են անել: Նոյն տեսակի դպրոց այս տարի բացուեց և Թաւրիզում, չնորհիւ թագաժառանգի լոզմանի (բժիշկ), որ սովորել է Եւրոպայում, և մի քանի կրթուած պարսիկ երիտասարդների: Այդ դպրոցում աւանդում էին ռուսերէն, ֆրանսերէն, պարսկերէն և արաբերէն լեզուները, թուարանութիւն, ֆիզիկա և աշխարհագրութիւն: Լոզմանեան դպրոցը ունէր և իր դրադարան-ընթերցարանը և հիւանդանոցը: Նա միայն 8 ամիս կանոնաւոր շարունակուեց, բայց այդքան կարճ ժամանակամիջոցում զգալի առաջադիմութիւն նկատուեց. ահա այդ առաջադիմութեան թոյլ ճառագայթները դեռ չորս պատերի միջից դուրս չեկած, հանգան, չնորհիւ տգէտ և մոլեռանդ մօլլաների, որոնք ունեն իրանց հետ և ժողովուրդը: Նրանք յայտարարութիւններ կպցնելով պատերին յորդորում են ժողովրդին, որ իրանց տղաներին չուղարկեն «լոզմանեան» դպրոցը, առարկելով, որ այնտեղ սովորեցնում են մոլորեցնող բաներ: Դպրոցը կաղեց, կաղեց, և այժմ հոգեվարքի մէջ է:

Ահա Պարսկաստանի կրթական դորժը և ժողովրդի ու հոգևորականութեան բռնած դիրքը դէպի այդ: Այդպիսի դպրոցական կարգեր ունեցող երկրի մամուլը ինչ պէտք է լինի:

Պարսից առաջին լրագիրը, որքան ինձ յայտնի է հաւաքած տեղեկութիւններից, լոյս է տեսել Սպահանում 70-ական թուականներին դօկ. Միրզա Թաղիխանի (Քաշանցի) եռանդուն ջանքերով:

Եւրոպայում կրթութիւն առած Միրզա Թաղիխանը վերադառնում է Սպահան, ուղում է իր գաղափարները տարածել, լուսաւոր մտքեր արծարծել ժողովրդի մէջ, ժողովրդին ծանօթացնել գիտական աշխարհի հետ և չեչտել Պարսկաստանի յետաւնացութեան վրայ: Բայց ինչպէս, ինչ միջոցներով: Զը կային կանոնաւոր դպրոցներ, չը կային և ուրիշ հասարակական հիմնարկութիւններ: Նա մտածեց լրագիր հրատարակել և անմիջապէս ձեռնարկեց «Փարհանգ» գիտական-հասարակական

թերթը: «Ֆարհանգը» միայն մի քանի տարի հրատարակուեց, բայց էլի այդքան կարճ ժամանակամիջոցում որոշ արդիւնքներ ցոյց տուեց, զգալի հետքեր թողեց իր ետեւից, շատերի թմբած մտքերը շարժեց, որոնք ընդունակ դառան նոր խնդիրների մասին խորհել: Իսկ թէ ուրքան խոչընդոտների պատահած կը լինի «Ֆարհանգը», շատ պարզ է. կարգացող մասը շատ աննշան թիւ էր կազմում: Եւ ահա երբ մեռաւ այդ թերթը իր ջանքերով տանող դօկ. Միրզա Թաղիխանը, մեռաւ նրա հետ և իր «Ֆարհանգը»:

«Ֆարհանգը» ճանապարհ հարթեց, նախագուռն եղաւ մի շարք լրագրերի, աւելի լուրջ ու կարևոր թերթերի, որ հետըզհետէ, իրար ետեւից երևում են պարսից ողորմելի կեանքի մէջ և կազմում են պարսից գրականութեան մէջ մի-մի երևոյթներ:

«Ֆարհանգից» յետոյ, Նասր-էզզին Շահի ժամանակ, 1880—81 թուականներին, էյթմադ Սալթանէի ջանքերով Թէհրանում լոյս տեսաւ «Իրան» պաշտօնական թերթը, որ մինչև այժմ էլ հրատարակում է: «Իրանի» հրատարակութեան գործում պակաս դեր չէ խաղացել և Նասր-էզզին Շահը: «Իրանը» գրական-հասարակական խնդիրներով այնքան էլ չէ զբաղւում, այլ մեծ մասամբ ուշադրութիւն է դարձնում քաղաքական խնդիրների վրայ:

Համարեա նոյն դերն է կատարում և «Իթթիխան» (տեղեկութիւն) չաբաթաթերթը, որ այժմ էլ կայ և հրատարակւում է էլի էյթմադ Սալթանէի խմբագրութեամբ:

Թաւրիզում, դեռ 1889—90 թուականներին, Նասր-էզզին Շահը հիմնեց կառավարութեան դպրոց և իր անունով կոչուեց «Նասրի»: Այդ հիմնարկութեան մէջ գործում էին թէ ազատամիտ երիտասարդներ և թէ եւրոպայիներ:

«Նասրի» դպրոցում գործող մարդիկ կարիք են զգում և մի լրագրի: Նրանք առանց ձգձգելու, մանաւանդ որ Շահից վայելում էին և ապահովութիւն և ստանում խրախուսանք, ձեռք են զարկում թերթի հրատարակութեան գործին: Այդ աշողւում է նրանց: Թերթը կոչւում են «Նասրիէ», ի պատիւ Շահի: Լրագիր և դպրոց միացրած, նրանք եռանդուն և արիաջան կերպով առաջ են տանում: Կրթութեան աջողութիւնը դպրոցում, լրագրի տարածուելը աւելի լայն շրջաններում, աւելի բազմաթիւ համարներով, խրախուսում և քաջալերում են նրանց իրանց սիրելի գործում: Նրանք շատ լաւ հասկանում էին, որ հոգեւորականութիւնն է միակ պատճառը, որ այժմ Պարսկաստանը այս ողորմելի դրութեան մէջ է, որ Պարսկաստանը տնտեսական տագնապի մէջ է գտնուում և ժողովուրդը խաւարի մէջ է խառ-

խափում: Պէտք է նրա ոյժը և ազդեցութիւնը թուլացնել, նրան այգքան նշանաւոր դեր չը տալ: Այդ բոլորի մէջ նրանք հաւատացած էին, բայց միևնոյն ժամանակ վախենում էին ազատ կերպով քարոզել այդ, մերկացնել իրականութիւնը, քանի որ իրանց դէմ կանգնած էր հոգևորականութիւնը, զրա հետ միացան և տգէտ ամբոխը:

Ահա հէնց նոյն ժամանակներում և նման պայմաններին մէջ մի խումբ երիտասարդներ թեհրանում հրատարակեցին «Րուզնամէյի Թաբիաթ» (կրթական լրագիր) հասարակական-կրթական շաբաթաթերթը, որ աշխատում է կրթութիւն և զարգացում տարածել ժողովրդի մէջ, ցոյց տալ, պարզել այն խոշոր յետաձուլութիւնը, որ ներկայացնում է Պարսկաստանը միւս տէրութիւնների հետ համեմատած: Նա շեշտում է, որ միայն կրթութիւնը կարող է Պարսկաստանին փրկել, հանել այս թանձր խռատի միջից և դնել առաջագիմութեան և զարգացման ճանապարհի վրայ: Բայց թէ որքան, ինչ չափով է հասնում իր նպատակներին, արդե՞ք արդիւնքներ ունենում է, ահա կարևոր հարցեր: Ճիշտ է, նկատում է զրանց հետքը և արդիւնքը, բայց այնքան աննշան, այնքան ազօտ, որ ուշադրութիւն նոյն իսկ չէ գրաւում:

Բայց ինչ.—անցաւ էլի մի երկու տարի. հոգևորականութիւնը կատարեց իր սովորական գերը, խափանուեց «Նասրի» զըպրոցը, դադարեց զրա հետ և «Նասրիէ» թերթը, միայն 8 տարի գոյութիւն ունենալով, իսկ «Րուզնամէյի Թաբիաթը» դեռ չարունակում է հրատարակուել չնորհիւ, մեծ մասամբ, Շահի աւելի մօտիկից հսկողութեան:

«Էհտիաջ» (ալիսկալութիւն) շաբաթաթերթը աւելի հեռուն գնաց: Նա աւելի պահանջկոտ էր: Նա հարուածում էր ամեն մի տղեղ երևոյթ և արարք, կուում էր տիրող հին և վնասակար կարգերի դէմ, սրան նրան, այս պաշտօնակցին, այն կառավարչապետին խիստ քննադատում: Բայց «Էհտիաջը» գծրախտարար միայն 3—4 ամիս հրատարակուեց, նա խափանուեց դեռ ոչինչ չարած, թէև այդքան կարճ ժամանակում որոշ չրջաններում համակրութիւն էր ձեռք բերել և շատ հետաքրքրութեամբ էր կարդացւում: Բայց ո՞վ եղաւ պատճառը այդ թերթի դադարացման: Թաւրիզի նախկին կառավարչապետ Ամիր-Նիզամը, որ յայտնի է եղել որպէս կեղեքող և հարստահարող, ուշադրութիւն չէ դարձրել ժողովրդի կարիքների վրայ, անհոգ է եղել դէպի իր պաշտօնը: Ահա այդ պակաս կողմերը խիստ կերպով քննադատել է «Էհտիաջ» շաբաթաթերթը: «Էհտիաջի» բռնած այդ դիրքը բնականաբար կատաղեցնում է կառավարչապետին, որ

ոչ թէ միայն դադարեցնում է թերթը, այլ և խիստ թափել ու ծեծել է տալիս խմբագրին: Բայց ում բողոքի պարսիկ խմբագիրը, ով է նրա ասածին լսողը, միթէ կառավարչապետին կը թողնեն և կ'անցնեն աղքատ ու իր գիրքով ոչնչութիւն ներկայացնող մի որ և է խմբագրի կողմը...

Թաւրիզում էլ մի-մի խումբ երիտասարդների ջանքերով 1897 թուին լոյս տեսաւ «Հաղիղ» շաբաթաթերթը, բայց մի-միայն 4—5 համար. նա խափանուեց, ինչպէս իր նախորդները:

Բացի վերև առաջ բերուած լրագրերից, որ ընդհանրապէս հասարակական-քաղաքական բնաւորութիւն էին կրում, կան թերթեր թէ Թաւրիզում և թէ Թեհրանում, որոնք մի տեսակ ընտանեկան բնաւորութիւն են կրում, օրինակ, «Ըդաբ» (քաղաքավարութիւն), «Քեամալ» (հասկացողութիւն) և այլն:

«Ըդաբը», ինչպէս անունն էլ բնորոշում է, միայն քաղաքավարական ձևեր է սովորեցնում, թէ ինչպէս պիտի ընդունել մեծին, ինչպէս վերաբերուել օտարին և այլն: Իսկ «Քեամալը» զուտ բանաստեղծական թերթ է, բայց շատ ողորմելի և խղճալի բան է ներկայացնում իր ոտանաւորներով և գրողներով: Իրանի ոտանաւորների մէջ սրան նրան, իր հօրը, պապին ևն գովում, շատ շատ միայն սէր են երգում: «Քեամալի» մէջ բոլոր գրողներն էլ միրզաներ են (գրագիր):

Չափազանցութիւն չէ, եթէ ասենք, որ չէք գտնի մի գրագէտ պարսիկ, որ գտնէ մի ոտանաւոր գրած չը լինի: Հեղինակաւոր բանաստեղծները չեն մասնակցում այդպիսի ամսագրերի, սրանց գրուածքները առանձին գրքերով են հրատարակւում:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, վերև յիշուած լրագրերը մեծ մասամբ շաբաթաթերթեր են եղել. և դա շատ հասկանալի է: Միթէ այդ պայմանների մէջ հնարաւոր է օրագիր ունենալ և պահպանել նրա գոյութիւնը. մամուլ չկայ, աշխատակցող քիչ և այլն: Միակ օրագիրը «Խուրասաթլ-հաւատես» (պատահած դէպքերի համառօտութիւն), որ հրատարակւում է Թեհրանում և այժմ էլ գոյութիւն ունի: Դրա թէ հրատարակութիւնը կանոնաւոր չի տարւում և թէ մի առանձին աչքի ընկնող դեր չի խաղում, նա միայն արձանագրում է պատահած դէպքերը:

Բացի այդ Թեհրանում հրատարակւում են նաև երկու պատկերազարդ ամսագրեր, — «Րուզնամիի շարաֆ», «Րուզնամիի շարաֆ ֆաթ», որոնք նշանաւոր և հեղինակաւոր մարդկանց, — թէ գրագէտ և թէ քաղաքագէտ, մեծ մասամբ վերջիններից, — նկարներ են տալիս համառօտ կենսագրականներով: Այդ ամսագրերը մեծ համակրութիւն են ձեռք բերել և բաւականին

տարածուած են թէ հատարակ ժողովրդի մէջ և թէ նոյն իսկ հոգևորականների մէջ: Այս տարի երկու ամսագրերի էլ երեք տարին լրացաւ:

Մի ուրիշ լրագիր, որ ուշագրութեան արժանի երևոյթ է ներկայացնում Պարսկաստանում, դա «Ֆալահաբլ-Մուզա: Ֆարիյ» թերթն է, որ այս տարուանից է հրատարակւում: «Ֆալահաբլ-Մուզաֆարիյ» թերթը երկրպագործական լրագիր է, որ հրատարակում են մի խումբ մասնագէտ ֆրանսիացիներ, ռուսներ և պարսիկներ:

Մեր այս թռուցիկ տեսութիւնից պարզ երևում է որ պարսիկ երկրասարգների մէջ էլ կայ եռանդ, գործելու ցանկութիւն, նա էլ ընդունակ է մտաւոր կեանքով զբաղուելու, նրա մէջ էլ կան առաջադիմելու նշաններ: Բայց դրա դէմ կանգնած է հոգևորականութիւնը, իր հետ և մոլեռանդ, տգէտ ժողովուրդը: Ահա թէ ինչու մամուլը, լրագրական խօսքը չի կարողանում իր իսկական դերի մէջ մտնել և շատ շուտով խափանւում է. երբեմն էլ դադարում է, որովհետև կարգացող շուներ:

Մի քանի խօսք էլ արտասահմանեան պարսից մամուլի մասին և ապա անցնենք զանազան հրատարակութիւնների հարցին:

Արտասահմանեան մամուլը աւելի խիստ լեզու է բանեցնում և վերանորոգչական բնաւորութիւն է կրում: Գտնուեցին մի քանի պարսիկ երկրասարգներ, որոնք ազատ չը կարողանալով իրանց միտքը յայտնել Պարսկաստանում, ձեռնարկեցին Եգիպտոսում և Հնդկաստանում մի քանի թերթերի հրատարակութեան, ինչպէս «Բուզնամիի Փարուարիչի», «Սուրէյիա» (Եգիպտոս), «Համբուլ-Մութի» (Հնդկաստանում): Դրանք միշտ հարուածում են հին կարգերը, հարուածում մեծ պաշտօնական մարդկանց, նոյն իսկ յարձակւում են կառավարութեան վրայ նրա համար, որ միանգամայն աչքաթող է արած կրթական անհրաժեշտ գործը: Նա քարոզում է նոր հոսանք մտցնել, ինտելիգենտ դաս կազմել, որ մաքսուի անպէտք կարգերի և օրէնքների դէմ, բարենորոգումների ձեռք զարկել և այլն: Այդ լրագրերի ազատ մուտքը Պարսկաստանում երբեմն արգելւում, երբեմն էլ թոյլատրւում է: Այժմ դրանց մուտքը արգելւած է:

Դպրոցից և մամուլից զատ զարգացման գործում որոշ դեր են խաղում և զանազան հրատարակութիւնները, ինքնուրոյն և թարգմանական գրական աշխատութիւնները: Ինքնուրոյն գրուածքներից ամենից շատ կարդացւում և տարածուած են Սադիի և Հաֆիսի բանաստեղծութիւնները: Այդ երկուսից

պահաս տեղ չէ բռնում և համակրութիւն վայելում նաև Օմարա-Խայամ, որի բանաստեղծութիւնները միայն վերջին տարիներս հրատարակեցին մի քանի եւրոպացիներ: Արան ոմանք մի քանի կողմերով աւելի բարձր են դասում, քան առաջին հրկուսին: Ինքնուրոյն գրականութեան մէջ կան և վէպեր, անեկդոտներ, իսկ ամենից չափ կրօնական գրուածքներ: Թարգմանական գրուածքներից ամենից տարածուածը Ռօբինզօնն է, որ ձեռքէ ձեռք խլում, կարգում է նոյնիսկ հասարակ ժողովուրդը: Տարածուած են նաև Սենեֆար Թուսնդի (երեք զինակիր) և Մօնտեքրիստօի գրուածքների թարգմանութիւնները, և այլ վիպական, փոքր մասով և գիտնական գրուածքներ, մանաւանդ անեկդոտներ:

ԵՐ. ՖՐԱՆԳԵԱՆՑ

ԺԱՅՌ ԵՒ ԱԼԻՔՆԵՐ

Հսպարս ու մենակ, դարերի առաջ
Կուրծք դէմ արած ահեղ փոթորկին,
Միշտ խոժոռ, մռայլ, անձայն, անհառաչ
Կանգնած է ժայռը խրոխտ, անմեկին։
Իսկ ալիքները ուրախ րֆիջով
Գնում են գալիս, նըչում ու խաղում
Եւ խփում ժայռին ուրախ ժրպիտով։
Նայում է ժայռը եւ լուռ մըմնջում.
— «Ա՛խ, երջանիկներ, ե՛րբ ես էլ ձեզ պէս
Ազատ կը լինեմ. ծփուն ու արձակ.
Ես էլ նըչալով ու հեռու այնպէս
Ծովը չափչփեմ ուրախ, համարձակ»...
Իսկ ալիքները գնում են, գալիս,
Շառաչում, նչում, պատասխան տալիս.
— «Հանգստութիւնդ տո՛ւր, թո՛ղ լինի այդ մեզ,
Մեր ազատութիւնն ա՛ն, տալիս ենք մենք քեզ...»

Մ. ՄԻՍԱԳԵԱՆՑ

ԹԻԻՐԲԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ

Ձը նայած այն հանգամանքին, որ Հեռաւոր Արեւելքը վերջին ժամանակները համարեա ամրոզջովին կրանել է քաղաքագէտների և կառավարութիւնների ուշադրութիւնը՝ Անգլիայում Թիւրքիայի վերաբերեալ հարցերը զարձեալ շարունակուած են ժամանակ առժամանակ մոռացութեան մշուշից բարձրանալ և գրաւել հասարակութեան ուշադրութիւնը: «Odysseus» կեղծանունն տակ մի հեղինակ այս տարուայ սկզբին հրատարակել է Լոնդոնում մի ընդարձակ հատոր «Turkes in Europe» վերնագրով: Այդ գրքի մասին մանրամասն մատենախօսութիւն է տպուած «Literature» շաբաթաթերթի մարտի 16-ի համարում, որի հիման վրայ և մենք կը ծանօթայնենք ընթերցողներին այդ հեղինակի հայեացքների հետ: Ինչպէս կարելի է եզրակացնել բովանդակութիւնից, հեղինակը պէտք է երկար ժամանակ ապրած լինի Թիւրքիայում: Նա, երևում է, լաւ ծանօթ է թէ՛ տեղական լեզուներին և թէ՛ բնակիչների տեղական և հասարակական կազմի հետ: Նա իր գրքում փորձում է նոյն խակ լուծել Թիւրքիայի թէ՛ անցեալի և թէ՛ ապագայի հիմնական հարցերը: Այժմեան գրութեան ծագումը պարզելու համար՝ նա առանձին գլուխներ է նուիրում երկրի ցեղերին, նրանց պատմութեանը և կրօնին, յատկապէս կանգ առնելով մահմեդական և քրիստոնէական կրօնի համեմատական առաւելութիւնների վրայ: Շատ քիչ հաւատ ընծայելով Թիւրքիայի վերածնութեան հնարաւորութեանը, «Odysseus» գտնում է, որ այնտեղ ազգաբնակչութեան նշանաւոր մասը, այն է՝ զլխաւորապէս թիւրք տարրը, դէմ է արեւմտեան քաղաքականութեան և նրա թելադրած բեֆօրմներին:

Ինչպիսի բեֆօրմներ էլ որ մտնեն, հեղինակի ասելով, Թիւրքիան ոչ մի փոփոխութիւն չի կրի: Յայտնի «Հատտի Շերիֆ Գիւլխանէի», «Հատտի Հումայուն» պարունակում էին իրանց մէջ շատ խելացի և աղատամիտ կարգադրութիւններ:

բայց նրանք մնացին միայն մեռած տառեր... Օսմանեան պետութեան մէջ ոչինչ չի փոփոխուում ժամանակակից Թիւրքիան, չը նայած ենիւներէն ոչնչացնելուն, չը նայած զանազան Հատտիներին և բեֆօրմներին, երկաթուղիներին և հեռագրաթելներին, արշաւանքներին ու կոտորածներին, հազիւ թէ որ և է կողմից տարբերուում է այն Թիւրքիայից, որ Նապօլէօնը առաջարկում էր բաժանել, երբ Տիլզիտի մօտ նա ունեցաւ իր նշանաւոր տեսակցութիւնը ռուսաց կայսրի հետ: Թիւրքերը իրանք չեն ցանկանում, որ նա փոխուի. մինչև անգամ Երիտասարդ Թիւրքիան չի ուզում նրա փոփոխութիւնը այն ուղղութեամբ, որ առաջարկում են արեւմտեան բարենորոգիչները: Բանը այն է, որ բեֆօրմ նրանց աչքում նշանակում է քրիստոնեաների գերիշխանութիւն: «Երբ դուք կարողանաք գտնել մի Թիւրք, որ պատրաստ լինի հպատակուել բայիային, ասում է «Odysseus», այն ժամանակ դուք կարող էք խօսք բանալ Թիւրքաց պետութիւնը բարենորոգելու մասին»: Փանի որ տիրապետում է ոյժը, շարունակում է նա, Թիւրքերը բարձր կը լինեն քրիստոնեաներից: Նրանք աւելի սովոր են, աւելի քաջ են և աւելի համերաշխ: Բայց երբ ոյժը չէ տիրապետում, երբ առաջադիմութիւնը, առևտուրը, նիւթական գրութիւնը հնարաւորութիւն կը տայ պետութեան խառն ազգաբնակչութեանը՝ իրանց տաղանդներին համապատասխան տեղեր բռնել,—այդ դէպքում քրիստոնեան բարձր կը լինի Թիւրքից: Նա ձեռք է բերում թէ փողը և թէ հողը Թիւրքի ձեռքերից և դատաստանում ապացուցանում է, որ նա իրաւունք ունի այդպէս վարուելու, և այդպիսով տաճիկը շատ քիչ օգուտ կ'ունենայ քաղաքակրթութեան այն բարեկեցիկից, որ կը մանէ այդ երկրի մէջ: Քրիստոնեաների գերիշխանութեան վախը շատ ուժեղ է Թիւրքերի մէջ, և նրանով են բացատրում և՛ հայկական կոտորածները և շատ ուրիշ նման դէպքեր: Սովորական Թիւրքը նայում է դրանց վրայ, իբրեւ ինքնապաշտպանութեան. միջոցների վրայ: «Դէպի ամրոց՝ քրիստոնեայ աշխարհը նա տածում է մի տեսակ վայրենի, անբացատրելի արհամարհանք—սրի արհամարհանք դէպի այն ամենը, ինչ որ կարելի է կոտորել,—իսկ այժմ բթացած սրի անմիտ արհամարհանք»:

Չը նայած այդ բոլորին՝ հեղինակի համակրութիւնը, ինչպէս 'սկստում է անգլիական քննադատը, աւելի այդ նոյն, «բթացած սրի» կողմն է, քան յոյնի փոքր սուր գաշոյնի, քան բողոքացու դադանակի, կամ հայի թիակի: Այս բոլոր ազգութիւնների մասին խօսելիս նա ցոյց է տալիս իր ընդարձակ ծանօթութեան հետ միասին շատ քիչ համակրութիւն դէպի նրանց. իսկ Թիւր-

քերի վրայ հեղինակը նայում է, իբրև անուղղելի թափառականների, որոնց համար բնակութեան տեղը փոխելը աւելի շուտով բաւականութիւն է, քան անհանգստութիւն:

Այժմ անցնենք մի ուրիշ՝ դարձեալ նոր լոյս տեսած գրքի, որ նոյնպէս ի նկատի ունի Թիւրքիան, թէև աւելի քաղաքական, զիպլումատիական տեսակէտից. մեր խօսքը «Nighlands of Asiatic Turkey». (Ասիական Թիւրքիայի լեռնային մասերը) վերնագրով գրքի մասին է, հեղինակութիւն լօրդ Պերսիի, որ 1899 թուին ճանապարհորդել է Հայաստանում և Փոքր-Ասիայի լեռնային երկիրներում: Այս գրութեամբը ներկայացնում է ոչ այլ ինչ, եթէ ոչ քաղուածքներ նրա այդ ճանապարհորդութեան օրագրութիւնից: Գրքի գլխաւոր կարծիքութիւնը նրա մէջ արծարծած քաղաքական խնդիրներն են: Աշխարհագրական և ցեղարանական գիտութիւնը կարող է քաղել դրանից շատ հետաքրքրական տեղեկութիւններ, ինչպէս օրինակ, Ասորա-Բաբելոնեան հին կուլտուրայի մասին, յունաց և հիտտիտների քանդակագործութեան մասին: Պատահում են մի քանի արձանագրութիւնների ընդօրինակութիւններ. բայց դրանք բոլորը անյողակի ձևով, և պարզ երևում է, որ դրանք հին, որ դեղնում են հեղինակի ուշադրութիւնը: Նա կենդանի կերպով նկարագրում է այդ երկիրներում տիրող անիշխանութիւնը և հալածանքը, պաշտօնական դասակարգի կաշառակերութիւնն ու ագիտութիւնը և ցոյց է տալիս այն վտանգը, որին ենթարկւում է ամեն մի փորձ պահպանել իրերի գրութիւնը այնպէս, ինչպէս նրանք կան: Այս բոլորը, ասում է «Literature» թերթը, մենք գիտէինք առաջ էլ, թէև անկասկած դա անհրաժեշտ է Անգլիայի ժողովրդին համոզելու համար:

Մի կողմ թողնելով հեղինակի մի քանի թիւր կարծիքները սուլթանի բարեմիտ տրամադրութեան մասին, ընդհանրապէս նրա քաղաքական հայեացքները արժանի են լուրջ ուշադրութեան: Խորին համոզմունքով հակառակ լինելով Թիւրքիայի բաժանմանը, նա ամենայն ոյժով աշխատում է ապացուցանել, որ Անգլիան իր բոլոր ջանքը պէտք է գործ դնի Թիւրքիայի մէջ վարչական բեֆօրմներ մտցնելու համար: Դրանք, հեղինակի կարծիքով, կայանալու են հետեւեալ երեք կէտերում. նախ և առաջ՝ իբրև անհրաժեշտ նախաբան, պէտք է բարեփոխել ֆինանսական կողմը, սննդացնելով անմիտ և ձրիակեր պաշտօնները (sinecures) և կարգի բերելով կայսերական և գաւառական ելևմուտքը. երկրորդ՝ բուն վարչական բեֆօրմ, մտցնելով բոլոր պաշտօնների համար որոշ և կանոնաւոր սոճիկ, և պաշտօնէութեան մէջ առաջանալը ըստ արժանաւորութեան և երրորդ՝

դատաստանական բեֆօրմ, ընդունելով աւելի համապատասխան օրէնսդիրք և կանոնաւոր դատարաններ: Լօրդ Պերսին իր գերքում շօշափում է և շատ կողմնակի խնդիրներ, որոնք մանաւանդ նշանակութիւն ունեն Անգլիայի քաղաքականութեան համար, ինչպէս միսիօնարների հարցը, ազատ առեարի նշանակութիւնը Եւրոպայում, Ասիայում և Աֆրիկայում, Անգլիայի վարկը պահպանելու միջոցները և այլն: Հեղինակի ընդհանուր եզրակացութիւնն է, որ անգլիական կառավարութիւնը մի կողմ թողնելով կուսակցական հաշիւները, պէտք է ամենալուրջ ուշադրութեամբ հետևի Թիւրքիայում կատարուող քաղաքական դէպքերին և երբեք թոյլ չը տայ, որ ուրիշ պետութիւններ, ինչպէս Գերմանիան, զօրեղացնեն իրանց ազդեցութիւնը աշխարհի վրայ: Անգլիայի շահերին, այդ նպատակի համար, պէտք է հաստատել միջանկի չոր հիւսիսատական պաշտօններ ստիպան Թիւրքիայում և կանոնաւոր կերպով զեկույցումներ պահանջել երկրի բոլոր կարևոր կենտրոններից քաղաքական դրութեան վերաբերեալ...

Թիւրքիային է վերաբերում որոշ չափով և մի ուրիշ նոր լոյս տեսած հետաքրքրական գրութեան, որ կազմում է «Mediaeval Towns» (Միջնադարեան քաղաքներ) վերնագրով հրատարակուող սերիայի վերջին հատորը, այն է. «Constantinople the story of the old capital of the Empire» («Կ. Պօլիսը. կայսրութեան հին մայրաքաղաքի պատմութիւնը»): Գրութեանը տալիս է մեզ թիւրքաց տիրապետութեան ժամանակ այդ քաղաքի ընդարձակ պատմութեան հետ և միջին դարերում, ներկայացնելով քաղաքի զարգացման երեք շրջանները, այսինքն՝ իրրն Բիւզանդիոն, Կ. Պօլիս և Ստամբուլ, և այդ պատմական մասին նուիրուած է զբքի համարեա երկու երրորդականը: Դրանից յետոյ հեղինակը Mr. Hutton անցնում է քաղաքի եկեղեցիների, պարիսպների, մզկիթների, պալատների, կրկէսի և այլ տեղերի նկարագրութեանը, որտեղ կցուած են և շատ յաջողուած նկարներ: Պատմական բաժնի համար նա օգտուել է բազմաթիւ ժամանակակից աղբիւրներից և նորագոյն հեղինակներից: Կ. Պօլիսը, ասում է այդ գրքի աւթիւ. «Literature» չաբաթաթերթը, աշխարհային հրաշքներից մէկն էր. զրա վրայով սնուել են թողնելով յայտնի հեղեթեր՝ յոյները, հռոմայեցիք, պարսիկները, սարայիկները, խաչակիրները, վենետիկցիք, թիւրքերը: Կրկէսի կուսակցութիւնները ժամանակի ընթացքում տեղի են տուել քաղաքական փոփոխարաններին, և մեր օրերում յունական «Հետերիային».

Հայկական յեղափոխականների և Երիտասարդ Թիւրքիայի կուսակցութիւններին, բայց Կ. Պօլիսը միշտ միեւնոյնն է մնացել: Կարգալով Թիւրքիայ պատմութիւնը, շարունակում է թերթը, մարդ մնում է ապշած որ այդպիսի մի պետութիւն կարող էր պահպանել իր գոյութիւնը նոյնիսկ մի սերունդի ընթացքում: Սուլթանը այդտեղ մերթ եղել է մի թուլամիտ, մերթ մի ծայրայեղ չարագործ. երբեմն մի խղճալի էակ, որ տարիների ընթացքում փակուած ապրում է իբրեւ մի կալանաւոր իր պալատում, սպասելով ժառանգութեան հերթին: Բայց երբեմն այդ շփոթը դուրս է բերում մի հոյակապ Սուլէյմանի կամ մի անյողդողդ Մահմուդի...

Յ. ՔՈՉԱՐԵԱՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻԾ *)

Տասն և հինգերորդ դարի ընթացքում Կիլիկիայի մէջ անհետանում էին հայոց քաղաքական և զինուորական ոյժի վերջին հետքերը: Դաշտային գաւառները քանդուած էին, քաղաքները հրդեհուած և կրկինը ներկայացնում էր մի ընդարձակ աւերակ, բայցի լեռնոտ Զէյթունը: Նրա դիրքը լինելով լեռնային, անմատչելի՝ թշնամին անկարող էր լինում գրաւել կամ կոտորել ընակիչներին և ամեն անգամ յարձակումները մնում էին անօգուտ: Զէյթունցիները կտրել էին Զիհանի, Արեգնու և Ֆռնուզի չորս գլխաւոր կամուրջները. առանձին խմբերով պաշտպանւում էին հիւսիսային Ղսուխը, Արեգնի բերդի ու Ալա-Գայայի օձապտոյտ կիրճը և Ֆռնուզի ու Թէքիրի անցքերը: Եւ այսպէս, կղզիացած բարձրաւանդակի ծերպերում, մշտական սարսափի ու վտանգի մէջ, նրանք շարունակում էին մաքառել:

Մինչև 1440—50 թուականները Զիհանի գետահովտում, Զէյթունի շուրջը տեսնւում են մի քանի անկախ ամրոցներ հայ բերդատէրերի կամ իշխանների ձեռքում: Մեզ հասնում է Հեթումի ազգականներից Կիրակոս անունով մի վարդապետի 1473 թ. գրած մի յիշատակարանը **), որ բաւական լոյս է սփռում հիւսիսային գաւառների այդ ժամանակուայ գրութեան վրայ: Այդ յիշատակարանը հաղորդում է, թէ վերջին Լևոնի գերութիւնից յետոյ հայոց սպարապետ Հեթում՝ իր Զարմանուհի կնոջ հետ միասին ունեցաւ մի քանի յաղթական կռիւներ եգիպտացիների դէմ և գրաւելով Կանչի բերդն ու չրջակաները, հաստատուեց այդտեղ: Մի պատերազմում Սսի առաջ նա սպանեց եգիպտացիների զօրապետ Ալին, և մէկ ուրիշ կռուում՝ նրան աջողուեց հալածել զօրապետ Էօմէլի բանակը: Բայց կարճ ժամանակից Հեթում սպանուեց Գրիգոր անունով մասնիկի ձեռքով, իսկ նրա

*) „Մուրճ“ № 5.

**) Սոյն յիշատակարանը գրնւած է Զէյթունի վանքում և 1870 թուին տպագրուած է Գ. Պօլսի հայ թերթերից մէկում:

կինը՝ Զարմանուհին՝ Հեթումի մահից հինգ տարի յետոյ մի քանի հարիւր լեռնականներով, Գէորգ որդու հետ միասին, յարձակուեց և գրաւեց Կօկիսոնը, Ուլնիան, Կապանը և համանուն բերդը: Շուրջ 65 տարի նա կառավարեց այդ շրջականներն ու պահպանեց աղբյւրնակութեանը թշնամու յարձակումներէն: Յիշատակարանում գրուած է նաև, թէ Զարմանուհու և Հեթումի զորքերն ու յաղթանակները արձանագրուած են Ֆոնուզի և Կանչիի վանքներում: Այդ գույէ ձիւտ եղած լինէր, սակայն վերջին գէպրէրի միջոցում Ֆոնուզի վանքի բոլոր ժաղաղաթեայ գրքերը, ձեռագրերն ու այլ և այլ իրեղէնները, Ռուբինեան ժամանակներից մնացած, այրուեցին թիւրքերի կողմից: Տեղական աւանդութիւնը, առանց յիշելու Զարմանուհու կամ մէկ ուրիշի անունը, սնորոշ կերպով պատմում է մի կնոջ մասին, որ գրաւել է այդ վայրերը և պաշտպանել ժողովրդին: Անկասկած է որ XV-րդ դարում, ոչ միայն Կանչիի և Կապանի շուրջը, այլ և Գեաւուր-Դաղի, Պայասի և Հաջնի լեռներում տեղի ունեցած են սյգպիսի բազմաթիւ գէպքեր, որոնք սակայն իր ժամանակին արձանագրուած չը լինելով պատմութեան մէջ, այժմ մեղանծանօթ են և ընդամիշտ մոռացութեան մատնուած: Հաւանական է, որ հայկական իշխանութեան մնացորդ այլ և այլ իշխաններ ապաստանեցին այդ ամուր վայրերը և փախստական հազարաւոր ընտանիքների հետ միասին պաշտպանուեցին երկար ժամանակ:

Այդ դարի մէջ հայոց զօրաւոր և աղէտալի թշնամի դարձան Զիւլ-Գահրեբը *), որոնք սատիկ զօրացան մանաւանդ 1450 թուականից յետոյ: Նրանք ընտրեցին Մարաշը՝ իբրև իշխանանիստ քաղաք և իրանց ոյժերը կենտրոնացրին այդ գաւառում: Հասան-Բէէկի և Շահ-Սուարի ժամանակ այդ ցեղը յաղթող հանդիսացաւ միւս բոլոր իսլամ ցեղերի վրայ, գրաւեց ամբողջ Կիլիկիան և ընդարձակեց իշխանութիւնը հեռաւոր երկիրներ: 1465 թուին Հասան-Բէէկը արշաւեց մինչև Վրաստան և այդ թուականից յետոյ Զիւլ-Գահրի ցեղի պետերը անուանուեցին թագաւոր: Շահ-Սուարի օրով գրեթէ ամբողջապէս նուաճուեցին և ոչնչացան առանձին ամրութիւնները կամ բերդերը, ուր ապաստանել էին հայոց թագաւորական ցեղերն ու զինուորական ոյժի բեկորները: Շահ-Սուարի բանակները առաջացան մինչև Կեսարիա, Դամասկոս և Միջերկրականի ափերը. նրան աջողուեց գրաւել ամբողջ գաշտային Կիլիկիան, Սիսը, Ադանան, Տարսոնը և լեռնագաւառների բերդերը, ինչպէս նաև Կապան, Կանչի և այլն: Ուր նա կարողացաւ արշաւել, անխնայ կոտորեց հայ

*) Կոչւում են նաև Յիւլ-Գուլի կամ Գուլ-Գատիր:

ընակիչներին և Դամասկոսից բերած հաղարաւոր թիւքըմէն զաղթականներին ընակեցրեց Մարաշ, Սիւս և մասնաւորապէս Ջիհանի միջնահովտը, որտեղ և հիմնեց մի գիւղաքաղաք և դաւառն անուանեց, իր ցեղի անունով, Գարս-Ջիւլգասրիէ:

Շահ-Սուլարի ժամանակ կերպարանափոխ եղաւ Կիլիկիան: Մինչև սրա արշաւանքներն ու աւերումը հայերը, թէև կորցրած քաղաքական իշխանութիւնը, սակայն անտեսապէս համեմատաբար շատ աւելի լաւ վիճակ ունէին, մինչդեռ նրա ժամանակ և յետոյ թշուառութիւնն ընդհանուր եղաւ երկրի մէջ և բացուեց անիշխանութեան և ստրկութեան տխուր դարագլուխը:

Շահ-Սուլարը և յաջորդները նուաճելու համար Ձէյթունը յաճախակի յարձակումներ գործեցին, բայց ամեն անգամ ընակիչների կողմից հանդիպեցին զօրեղ դիմադրութեան և մերժուեցին: Ձէյթունցիների և Ջիւլ-Գատիրների մէջ գոյութիւն ունի անհաշտ ատելութիւն մինչև մեր օրերը, իսկ XIX-րդ դարու սկզբները այդ ստացաւ սուր կերպարանք և առիթ տուեց արիւնալի պատերազմներին:

Մինչև XVI-րդ դարու սկիզբները, ինչ ժամանակ Օսմանեան բանակները հետզհետէ առաջանում էին և հաստատուում Կիլիկիա, Ձէյթունը անվերջ կռիւներով էր զբաղուած Ջիւլ-Գատիր, Գարաման ցեղերի և եգիպտական բանակների հետ: Երբեմն կենտրոնանում և պաշտպանում էր նա իր լեռներում, իսկ երբեմն էլ, նեղուած կեանքի անհրաժեշտ կարիքներից, դուրս էր գալիս իր բոյնից և ասպատակում իսլամ գաւառները:

XVI-րդ դարում Գարաման, Ջիւլ-Գատիր և Բամազան ցեղերը, միաժամանակ զարկուելով հայերի, յետոյ միմեանց հետ, տկարացել էին, ուստի չը կարողացան ընդդիմութիւն ցոյց տալ օսմանցիներին:—Գարամանները պարտուեցին օսմանցիներից և նրանց իշխանութիւնը վերջ գտաւ 1486 թուին, իսկ Ջիւլ-Գատիրները նուաճուեցին 1515 թուին եգիպտացիների ձեռքով, սակայն կարճ ժամանակից յետոյ վերջիններս էլ տեղի տուին և Մարաշում հաստատուեց օսմանցիների գերիշխանութեան ներքոյ կուսակալութիւն, որ կառավարում էր ամբողջ նահանգը նոյն ցեղից նշանակուած փաշաներով մինչև 19-րդ դարու երկրորդ կէսի սկիզբները: 1575 թուին օսմանցիները նուաճեցին նմանապէս Բամազանների սոհմը, Ադանան դարձնելով մի փաշայութիւն:

XVII-րդ դարու սկիզբները օսմանցիները տիրել էին Կիլիկիային ամբողջապէս: Սակայն, ինչպէս նրանց աշխարհակալութեան ամբողջ ընթացքում, ամեն տեղ, նոյնպէս և Կիլիկիայում,

նրանց բանակները, առանց որ և է տեղ կանգ առնելու, մի աւերիչ հոսանքի նման, կործանում էին բոլոր նահանգները, կոտորում կամ թալանում բնակիչներին՝ առանց խնայելու սեռ, հասակ կամ ազգութիւն:

Իսկ Ձէյթունը իր աշխարհագրական ստանձնացած դիրքի և անառիկ լեռների շնորհիւ ազատ մնաց օսմանցիների առաջին արշաւանքներից:

Ձէյթունն սկսեց զօրեղանալ և նրա քաղաքական ազդեցութիւնը հետզհետէ հեղինակաւոր դարձաւ թիւրք ցեղերի վրայ և միաժամանակ զարգացան տեղական արհեստները, առետրական յարաբերութիւնները և իր ժամանակի վանական կրթութիւնը: Այս ամենի ապացոյց են բացի բազմաթիւ ձեռագիր յիշատակագրերից, նաև այն վկայութիւնը, որ թողեց բնիկ զէյթունցի Կարապետ եպիսկոպոսը, որ 1794 թուին էջմիածնի կաթողիկոս դարձաւ: Այդ ժամանակամիջոցում մշակուեցին լեռնահովտի հողերը, տնկուեցին մրգատու ծառեր և ընդարձակուեց այգիների թիւը: Խաղողագործութիւնը տեղական արդիւնաբերութեան մէջ զրաւեց առաջին տեղը: Ընդհանրացաւ նաև շերամի մշակութիւնը, որի յիշատակներից այժմ երևում են միայն բազմաթիւ վայրի թթենիներ: Բնակիչներից իւրաքանչիւրը ունէր ձի կամ ջորի, և ջորեպանութիւնը եղաւ գլխաւոր զբաղումներից մէկը: Նրանց հոշակուած կարաւանները համարձակ գնում էին ամենահեռաւոր նահանգներ, — Կեսարիա, Սեբաստիա, Դամասկոս և յամաքային ճանապարհով մինչև Երուսաղէմ: Կիլիկիայից և Բարձր-Հայքից ուխտաւորները դիմում էին զէյթունցի կարաւանապետներին՝ Երուսաղէմ ապահով ուխտագնացութեան համար: Նրանք շահագործում էին նաև մեծաքանակ երկաթ և կւելով այլ և այլ գործիքներ՝ իրանց կարաւանների հետ տարածում երկրի ամեն կողմերը:

Պատմութեան այս շրջանում հռչակուեցին Ձէյթունի վանքն ու միաբանութիւնը: Բարձրացաւ վանական կրթութեան մակերևոյթը, որի ազդեցութիւնը խիստ զգալի էր Ձէյթունում և Կիլիկիայի զանազան քաղաքներում:

Ձէյթունն ունի երկու վանք: Առաջինը Ասուածաձիկ վ. գտնւում է քաղաքի հիւս. արևելեան կողմը, մի քառորդ ժամ հեռու, հաստատուած Բերգինկա լեռան ստորոտը, ձորատափում: Երկրորդը՝ Բ. Փրիլի վ.՝ Ձէյթունի արևելեան կողմ, մէկ և կէս ժամ հեռու, ջերմուկի դաշտի վերելք: Վերջինն անցեալ դարի ընթացքում մի քանի անգամ թալանուած և հրդեհուած է թիւրքերի կողմից: չէնքը քարուկիր է, ոչ այնքան մեծ: Սա նշանակելի դեր չէ ունեցել Ձէյթունի պատմութեան մէջ:

Աստուածածնի վանքը, ընդհակառակը, նշանաւոր է իր ամբողջեամբ և բոլոր պատերազմների մէջ նա ունեցել է մեծ դեր: Շէնքը քարուկիր, երկյարկանի և գրեթէ քառակուսի է: Նրա շինուածքն ու դիրքը ռազմական կարևորութիւն ունեն և շատ նման է զօրանոցի կամ ամրոցի: Թիւրք կառավարութիւնը, իր հաստատութիւնից ի վեր Զէյթունում, ամեն հնարք գործադրեց այդ գրաւելու համար, սակայն զէյթունցիները ամեն անգամ ընդդիմացան գէնքի ոյժով: Վանքի հիմնարկութեան թուականը յայտնի չէ: Ինչքան նկատելի է, վանքի մեծանալն ու հռչակուելը անմիջապէս հետևում է և սերտ յարաբերութիւն ունի պատմութեան մէջ քաղաքի բնակչութեան ու նրա տնտեսական կամ քաղաքական կացութեան զարգացման ու բարձրանալու հետ: Նախ քան Ռուբինեան իշխանութիւնը, շատ հաւանական է, նա յունական մի փոքր մատուռ եղած լինէր: Այդ վանքի հայերէն ամենահին մագաղաթէ գրքերի կողքերը կազմուած են յունարէն գրուած և նկարուած մագաղաթէ թերթերով, որոնք IX—X-րդ դարերի գործ են: Ռուբինեան իշխանութեան ընթացքում այդ յունական մատուռը, ինչպէս ուրիշ շատեր, անցան հայոց ձեռքը և մինչև գիւղաքաղաքի կազմութիւնը նա մնացել էր նոյն աննշան դիրքի մէջ: Գաղաքական իշխանութեան ջնջուելուց յետոյ այդ վայրերը ապաստանող զաւթականութեան հետ միասին հեռաւոր վանքերն ու միաբանութիւնները, հետզհետէ, երկար ժամանակի ընթացքում, փոխադրուեցին այդտեղ: Ահա այդ ժամանակ մատուռը ընդարձակուեց և գոյութիւն ունեցաւ մի նոր հայկական վանք: 17 և 18-րդ դարերում, Զէյթունի թէ՛ ժողովուրդը և թէ՛ վանականները կանոնաւոր հաղորդակցութիւն ունէին Գաղատիայի նահանգի հետ: Նախնական կրթութիւնը Զէյթունում ստանալուց յետոյ՝ վանականները կատարելագործւում էին Գաղատիայի վանքում: Այս ամենը բացատրում են ձեռագիր յիշատակարանները, որպէս և տեղական դեռ թարմ պատմութեանն ու աւանդութիւնները: Այդ երկու դարերը Զէյթունի վանքի ամենածաղկած շրջանն է համարւում և միաբանութեան թիւը հասնում էր մինչև 25—30-ի: Այնտեղ կան նշանակութեան արժանի մատուորապէս մագաղաթէ 100 ձեռագիր մեծ ու փոքր գրքեր, գրուած Զէյթունում կամ փոխադրուած հեռաւոր վանքերից, որոնց թւում մեծամասնութիւն են կազմում աւետարանները: Գրքերի կողքերին արձանագրուած են այլ և այլ ժամանակ պատահած դէպքեր, յարձակումներ, կռիւներ, սով և այլն, որպէս յիշատակուած կան ի միջի այլոց գիւղի անուններ, որոնք ներկայումս գոյութիւն չունեն: Զեռա-

գրերի ամենահինները, հազիւ մի քանի հատ, գրուած են 13-րդ դարու վերջերը, որոնց կողքերը կազմուած են յունական ձեռագիր թերթերից: Սրանց գրուածքը, նկարներն ու ծաղիկները, ընդհանրապէս, տգեղ, անարուեստ են և մեծ զանազանութիւն կարելի է գտնել սրանց գրերի ձևի և հետազանների մէջ: 14 և 15-րդ դարերի գրութիւնները համեմատաբար աւելի խնամքով են պատրաստուած: Ամենամեծ մասը կազմում են 16 և 17-րդ դարերի գրուածները, որոնց մագաղաթի մաքուր, նուրբ յատկութիւնը, կամ գոյների, նկարների ու ծաղիկների ճաշակաւոր ընտրութիւնն ու պատրաստելը անհամեմատ աւելի գնահատելի են և ուշադրութեան արժանի: Մասնաւորապէս ս. Բարսեղի արծաթապատ աւետարանը Բող-Բայիրի եկեղեցում և մէկ ուրիշը, փոքր դիրքով և շատ մանր գրերով, ս. Աստուածածնի վանքում հազուագիւտ իրեր են հնութեան և նոյն ժամանակի հայոց գեղարուեստի տեսակէտից: Վերջինները խնամքով պահուած են որպէս սրբազան նշխարներ:

Պատմութիւնն ու յիշատակարանները չեն հաղորդում որոշ տեղեկութիւններ Զէյթունում տիրող հասարակական կարգերի մասին, թէ ինչպիսի ձևերով ու կարգերով էր կառավարւում Զէյթունը Ռուբինեաններից յետ և թէ արդեօք գոյութիւն ունէին այնպիսի չորս իշխան, չորս թաղ և կառավարական այն դրութիւնը, ինչ ունէր 18 և 19-րդ դարերի ընթացքում: Ինչպէս երևում 17-րդ դարի սկզբում քաղաքը բաղկանում էր չորս թաղերից և կային չորս իշխաններ, սակայն ուշադրութեան արժանիով նրանց, այդ իշխանական տները, տոհմային լայն ճիւղաւորութիւնը, շատ աւելի առաջները Զէյթունում գոյութիւն ունէին նոյն այդ իշխանական գերդաստանները, աղնուապետական հիմունքներով, հետևաբար միաժամանակ գոյութիւն ունէին և այդ կարգերը, և վարչական նոյն կազմութիւնն ու սիստէմը: Հնումը թաղերը կրում էին իւրաքանչիւրը իր իշխանական գերդաստանի անունը, բայց թիւրքական տիրապետութիւնից յետոյ նրանք ստացան թիւրքական անուններ:

Երկար ժամանակի ընթացքում տարօրինակ երևոյթ է այն, որ այդ չորս իշխանները կարողացել են պահպանել իրանց գոյութիւնը և բնական կերպով նրանցից տկարը ուժեղի առաջ տեղի չէ տուել, չը նայած, որ յաճախ, արտաքին թշնամիների մեքենայութիւնների կամ ներքին դժոժութիւնների ջնորհիւ, բանք անհաշտ և սոսկալի կռիւներ են մղել միմեանց դէմ և անդուծ կերպով կոտորել իրար: Այս հանգամանքի բացատրութիւնը կարելի է գտնել միայն Զէյթուն քաղաքի դիրքի և ինքնապաշտպանութեան միջոցների յարաբերութիւնների մէջ:

Պաշտպանուել կարենալու համար քաղաքացիները պարտաւորուած են կռուել միաժամանակ չորս տարբեր վայրերում և իրանց ոյժերը կենտրոնացնել չորս գլխաւոր կէտերի վրայ: Թշնամին թէկուզ ունենայ անհամեմատ աւելի ոյժ, Ձէյթուն մտնելու, գրաւելու համար ստիպուած է յարձակում գործել և կռիւ մղել այդ չորս գլխաւոր ճանապարհներով, այլապէս անհնարին է: Պատմութիւնը այդ հաստատում է շատ անգամ: Ահա այսպէս, Ձէյթունի աշխարհագրական դիրքը և կեանքի անհրաժեշտ պայմանները հարկադրել են զէյթունցիներին բաժանուել չորս մասի, ունենալ կառավարող չորս իշխան և իրանց ոյժերն ամփոփել, կենտրոնացնել չորս կէտերի վրայ, և այս բոլորը, ինքն ըստ ինքեան, պատճառ են դարձել աւանդական այդ կարգերի պահպանութեան, նրանց աւելի ու աւելի հաստատման և օրինաւոր ու շարունակական կայութեան մէջ դրուելուն:

Հ.

ՀՈՒԳ ԶԷ, ԸՆԿԵՐՆԵՐ...

Հո՛գ չէ, թէ դարձեալ բախսը չարաչար
Խաբեց մեզ կեանքում... Եւ այսօր մեր շուրջ
Տիրել է սպանիչ մի տրիստա խաւար,
Ձեռն շողում էլ մեզ ո՛չ յոյս, ո՛չ անուրջ...

Հո՛գ չէ, ընկերներ, թէ աչից ընկած՝
Ապրում ենք անմասն կեանքի խրնջոյքում,
Մեր գարունն—անգարդ, մեր նրագը—մարած,
Թոյն է ծովացել մեր տանջուած կրծքում...

Մենք օրօրոցից ուսանք մահառել,
Կրօնի մէջ անցաւ բովանդակ մեր կեանք.
Կռուե՛նք աննահանջ, քանի չենք մեռել,
Կրօնումն է կեանքը, կրօնումն է փրկանք...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Ա Ն Ա Ռ Ա Կ Ը

(Պ ա ս կ ե ր)

—Մի բաժակ վիսկի,—հրամայեց մի երիտասարդ, ոտք դնելով Նիւ-Եօրքի 27-դ փողոցի վրայ գտնուող մի փոքրիկ գինետուն:

Սպասաւորները անմիջապէս կատարեցին անձանօթ յաճախորդի հրամանը:

—Մի բաժակ ևս,—ասաց նա՝ դիմելով իրան ծառայող տղային:

—Մէկն էլ,—հրամայեց երիտասարդը, խփելով դատարկած բաժակը իր առջևը դրած մարմարեայ կլոր սեղանին: Եւ այդպէս մէկ մէկի յետևից նա սպարպեց ութը բաժակ: Գինետան ծառայողներն անդամ մնացել էին զարմացած:

«Ո՞վ է այս երիտասարդը,—հարցնում էին նրանք միմեանց: Սեւաչեայ, սեւ մազերով, թուխ դէմքով: Անշուշտ, իտալացի է կամ սպանացի: Մինչ սպասաւորները զբաղուած էին ենթադրութիւններով,—երիտասարդը լուռ, անխօս դատարկում էր օղիի բաժակները:

Կռթնած, գլուխը յենած աջ ձեռքին, յօնքերը կիտած, տխուր, մտախոհ՝ նայում էր նա վիսկիի բաժակին: Ո՞րքան դառն էր նա՝ այդ բաժակը, կատարեալ թոյն: Եւ այդ թոյնի մէջ նա որոնում էր իր սիրտը կորզող ցաւերի դարմանը. նրանից էր սպասում, նրանից հայցում և՛ սփոփանք, և՛ մխիթարանք:

Խելակորոյս, ուշքով-մտքով թռած, վերացած հե-

ռոճ, հեռոճ, երիտասարդը չէր էլ նկատում այն հայ-
եացքները, որ իրան էին յառած:

—Ո՞վ է սա, ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել,—հարց-
նում էր սպասաւորներից կասսայի հետև նստած գան-
ձապահ տիկինը:

—Ասացէ՛ք, խնդրեմ, դուք ճրտեղացի էք, ճր քա-
ղաքից, ճր երկրից, — հարցրեց վերջապէս մի բանուոր՝
ձեռքերը կողքին դրած մօտենալով օտարականին:

—Հայ եմ,—պատասխանեց երիտասարդը և լռեց:
Այդ բառը սթափեցրեց շատերին: Ո՞վ չէր լսել, ո՞ւմ
չէր յայտնի այդ չարաբաստիկ անունը, որ ամիսներ,
տարիներ շարունակ չէր իջնում լրագիրների էջերից:
Այդ մի հատիկ բառը պատմեց տարօրինակ երիտասար-
դի վիշտն ու ցաւը:

—Armenian?—գոչեցին միաձայն բոլորեքեան՝ մի
ցաւակցական համակրանք արտայայտելով այդ բացա-
կան շութեամբ:

—Անշուշտ, ձեզ էլ է փնաս հասել,—սիրտ առնե-
լով հարցրեց գանձապահ տիկինը, որ միւսներից աւելի
էր հետաքրքրուած օտարականով:

Երիտասարդը ժպտաց, տխուր, դառն ժպիտով:
Տիկինը զղջաց իր անտեղի հարցի համար:

—Ի՞նչ էլ է բաժին ընկել,—հարցնում էր դուք:
Ես երկու անձ ունէի աշխարհիս երեսին. մինուճար
մայրս և իմ ընտրած, իմ մօր հաւանած հարսնացուս:
Մայրս սպանուեց՝ նրան պաշտպանելիս, իսկ միւսը...
իսկ նշանածս...

Պանդուխտը չը վերջացրեց իր խօսքը: Նորից գը-
լուխը խոնարհեցրեց սեղանի վրայ՝ աչքը գցելով օդիով
լի բաժակին: Բոպէական լուսթիւն տիրեց գինետանը.
ոչ ոք չէր խօսում, չէր վիճում:

—Հայի կենացը,—գոչեց գինովցած մի բանուոր:
Բոլորն էլ բարկացած նայեցին դէպի այն կողմը, որ-
տեղից դուրս ելաւ այդ առաջարկութիւնը:

Ուշ գիշեր էր արդէն: Գինետունը կամաց-կամաց

դատարկւում էր: Թիւրքահայը միւսնոյն տեղը նստած, չէր հեռանում օղիի բաժակից:

—Ամօթ չէ, բաւական չէ... Ո՞ւր ես, հրտեղեր ես ման գալիս,—ասաց տաճկահայ բարբառով մի բանուոր՝ ներս մտնելով գինետուն:

Երիտասարդը բարձրացրեց իր գինովցած գլուխը, բարկացած նայեց իրան յանդիմանողին, բայց ոչինչ չը պատասխանեց:

—Այժմ էլ այս տեղն ընտրեցիր,—շարունակեց նորեկը: Երիտասարդը դարձեալ ոչինչ չասաց: Մեքենայաբար տեղից վեր կենալով՝ մօտեցաւ նա բանուորին, բռնեց նրա ձեռքը և այդպէս թե թուի տուած դուրս եկան փողոց:

—Ահա քանի ժամ է, որ ես քեզ փնտրում եմ: Է՛լ գինետուն չը մնաց, որ ես մտած չը լինեմ:

Կրպօն—այդպէս էր երիտասարդի անունը—դարձեալ չը խօսեց: Նա սաստիկ դժգոհ էր, որ իրան այդպէս հսկում: Այդպէս հետամուտ էին լինում: Միթէ ինքը աղատ չէ՝ իր ցանկացածն անելու: Հայրենակիցների, մանաւանդ այս Մելքոյի անշափ հոգացողութիւնը իր համար մի բեռ էր դարձել, մի ծանր բեռ:

Երեք շաբաթ է անցել այն սև օրից, երբ Կրպօյին յայտնի եղաւ իր կորուստը: Անփոխարինելի՝ կորուստ:

Որպէս քշում, տանում են տաւարի մի ամբողջ նախիր, գիւղի մի իւումբ աղջկերանց հետ միասին բռնել տարել էին և իր նշանածին: Իսկ իր խեղճ մայրը, որ համարձակուել է ընդդիմանալ, տեղն ու տեղը սպանուել է նոյն յափշտակիչների ձեռքով:

—Տուն ու տեղս տարաք՝ ձեզ հալալ: Սա չեմ տայ. սրան չը պիտի տանէք: Սա իմն է, սա իմ որդու, իմ Կրպօյի կինն է...

Դաշոյնի մի երկու հարուած գցում, թողնում են ապաբախտ մօրը արեան մէջ չաղախուած:

Երեք շաբաթ է, որ Կրպօն թողել, հեռացել էր

գործարանից և՛ դժուած, խելագարուած, թափառում էր Նիւեօրքի փողոցներում և այգիներում: Ման էր գալիս նա, պտըտում, բայց ոչ մի տեղ հանգստութիւն, դադար չէր գտնում: Ի՞նչ անէր, ո՞ր ջուրն ընկնէր, որ վերջ գնէր իր ներսը այրող, իրան լափող ցաւերին: Նա պարզ աչքով լուսացնում էր ամբողջ գիշերներ: Անկողինը կարծես փշից լինէր հիւսուած: Կրպօն վեր էր ցատկում, փախչում, դուրս գալիս փողոց և որպէս մի լուսնոտ դեգերում մայթերի վրայ:

— Նանէ ջան, նանէ. այս ի՞նչ զուլում է, որ մեզ հասաւ, այս ի՞նչ կրակ է, որ մեր գլխին մաղուեց, — փնթփնթում էր նա գիշերային խաւարի մէջ՝ մազերը փետտելով:

Ութ օր էր ահա, որ երիտասարդը գտել էր այն ճարը, որ նա որոնում էր այնպէս անդադար:

Կրպօն սկսել էր խմել:

Բայց քանի խմում, այնքան աւելի էր այրում նրա սիրտը: Նա դարձեալ խմում էր: Խմում էր, մինչև որ թմրում, ընկնում էր գետնի վրայ: Միայն այդ ժամերին էր նա մոռանում և՛ հայրական օջախ, և՛ մայր, և՛ նշանած, և՛ իրան: Այդպիսի գիշերներ նա անցրել էր միքանի անգամ: Երեք օր էր, որ Կրպօն կորած էր: Ո՞ւր էր, ո՞րտեղ էր նա: Ոչ ոք չը գիտէր: Նրա հայրենակիցները ընկել էին ամբողջ քաղաքը և տակն ու վրայ էին անում: Չը կտէր: Միայն չորրորդ օրուայ լուսաբացին Մելքօն, որ իր բանը-գործը թողած՝ թշուառ ընկերով հետևիցն էր ընկած, նրան գտնում է մի դինետան առաջ՝ մայթի վրայ պառկած քնած. գրեթէ կիսամերկ. ոչ հագուստ, ոչ գլխարկ, ոչ ժամացոյց: Հանել, դողացել էին արդեօք, թէ՛ Կրպօն ինքն էր ծախել...

Կրպօյին տուն են բերում: Խրատ, կշտամբանք, կոշտ խօսքեր: Բայց այդ ամենը անօգուտ է անցնում: Նա դարձեալ խմում էր, դարձեալ օրերով անհետանում:

Մի անգամ Կրպօն երկու օր տանը մնաց: Հայրենակիցների կշտամբանքն էր ազդել արդեօք, թէ՛ Մելքոյի աղաչանք-պաղատանքը... Մտքերի մէջ խորասուզուած, քաշուել էր սենեակի մի անկիւն, ամբողջ ժամերով լճու, անխօս նստած էր նա:

Երրորդ օրուայ առաւօտեան նա դուրս եկաւ տանից և քայլերն ուղղեց տեղային մի բանկ, ուր գտնուում էր նրա վեց տարուայ աշխատած խնայողութիւնը:

Այդ գումարով Կրպօն երկիր պիտի վերադառնար. պսակուէր, նոր տուն, նոր օջախ հիմնէր... Ի՞նչ յոյսերով, ի՞նչ սրտով էր նա կեղտ ու մուրի մէջ տնքալով փող աշխատել, իր բերանից-շորից կտրելով, չաբթէ չաբթ մի քանի դօլլար ժողովել, ամսի գլխին տարել, այն բանկին յանձնել: Ինչէ՛ր չէր նա երազել, ռապիսի ամբողջներ չէր նա կառուցել իւրաքանչիւր անգամ փողը գրպանում բանկ գնալիս... Եւ այժմ նա՝ Կրպօն գնում է նոյն բանկը... փողը յետ վերցնելու... Ինչո՞ւ, ո՞ւմ համար... Նրա գլուխը այրւում էր, սիրտը կծկւում, սեղմւում, ահա, կարծես, պատառ-պատառ պիտի լինէր: Կրպօն՝ հաանելով բանկի գեղեցիկ մեծ շինութեանը, թուլացած, ուժասպառ ընկաւ նրա մարմարեայ սանդուխների վրայ: Մի քանի րոպէ նա մնաց այնտեղ անշարժ: Նա չէր կարողանում, նա չէր ուզում բարձրանալ:

«Ինչո՞ւ պահեմ, ո՞ր օրուայ և ո՞ւմ համար»,—մտածեց պանդուխտը: Ոյժ գործ դնելով՝ վճռողաբար ցատկեց նա տեղից և շտապ-շտապ սանդուխները բարձրանալով, մտաւ բանկը:

Կէս ժամ չանցած Կրպօն գանձը ձեռքին տուն էր շտապում: Տանը ոչ ոք չը կար: Պանդուխտները բոլորն էլ գործարանումն էին: Նա մտաւ իր սենեակը, վերցրեց իր անկողինը, սնդուկը և կառք նստելով՝ տեղափոխուեց հայերի բնակատեղից հեռու, քաղաքի մի այլ մասը:

Այս բոլոր գործողութիւնները այնպէս տրագ, այնպէս հապճեպ էին, որ նա կարծես գողութիւն էր անում:

Այժմ Կրպօն ազատ էր: Նրան այլևս չեն հսկիլ, չեն պարտաւիլ և չեն նախատիլ:

Եւ երիտասարդը շարունակեց իր սկսածը:

Նրա ընկերը, միակ անսիրտ հաւատարիմ և մշտերիմ ընկերը այժմ օղին էր: Միայն երբեմն-երբեմն մի ձայն նրա ականջին ինչ-որ կշտամբանք, մեղադրանք էր մրմնջում, աղերսում, խնդրում... Մեքթօնի ձայնն էր այն: Կրպօն ճանաչում էր այդ ձայնը. ականջ էր դնում նրան. մտածում, խորհում էր և վճռում ձեռք վերցնել այդ անառակ կեանքից, ոտքի կանգնել, փոխուել, ուղղուել...

— Բայց ում համար, — ցցւում էր յանկարծ անողոր հարցը նրա առաջին: Եւ Կրպօն քայլերը նորից ուղղում էր դէպի գինեւոճ:

Այդպէս անցան շաբաթներ, ամիսներ:

Կրպօն գինեւոճերը յաճախելիս իրան միշտ հեռու էր պահում մարդկանցից, մանաւանդ կանանցից: Նա քաշւում էր ընդհանուր դահլիճի մի անկիւն, այնտեղ ընտրում մի փոքրիկ սեղան, մօտը նստում: Սպասաւորը բերում էր վիսկիի շիշը, բաժակը և հեռանում: Կրպօն խմում էր լուռ ու համր և անընդհատ ծխում: Ոչ ոքի հետ չէր խօսում. իրան ուղղած հարցին նա պատասխանում էր հակիրճ և կտրուկ՝ այդպիսով վերջ դնելով սկսուող խօսակցութեան և ծանօթութեան: Մարդկանց հետ շփուում էր, մարդկանց մէջ շրջում, բայց միշտ առանձնացած, միշտ կղզիացած, միշտ միայնակ: Յաճախ նա ներկայ էր լինում կուրի, վէճի, քստմնելի, երբեմն և՛ վեհ, և՛ սրտառուչ տեսարանների. բայց նա, կարծես, խուլ էր, կոյր և համր... Նա ոչինչ չէր տեսնում. նա ոչինչ չէր լսում: Անտարբեր, անզգայ, անուշադիր՝ միմիայն իր, իր խոհերի, իր ցաւերի մէջ ընկղմուած, վերացած, հեռացած էր այս աշխարհից: Ոչ ոքին չէր

աջողութեամբ նրան մօտենալ, մտերմանալ: Իսկ ցանկացողներ շատ: Բայց Կրպօն միշտ խոյս էր տալիս:

Միայն մի կին՝ ահա քանի օր է նրանից ձեռք չէր քաշում: Հագնուած, զուգուած՝ գալիս էր նա գինետուն, դնում նրա դիմացի նստարանի վրայ նստում, մի բաժակ գարեջուր սկսեցնում: ապա աչքը յառած պանդխտին, ամբողջ ժամերով չէր հեռանում այնտեղից: Կրպօն գլուխը քարշ արած՝ սկզբի օրերում չէր էլ նկատում: Երբ կանադացի այս կինը առանց քաշուելու սկսեց մէկ մէկի վրայ հարցեր տալ նրան, խօսել, երբեմն ժպտալ... Տղան մնացել էր շուարած: Մի, երկու... «Բաւական չէ. ի՞նչ է ուղում այս կինը ինձնից»—մտածեց նա և թթուած երեսը ծռեց նրանից:

Մի երեկոյ, շաբաթ օր էր, գինետունը սովորականից աւելի աղմկալի էր: Մարդ, կին խառնուած՝ ճիւղ հարբած, ճիւղ սեղանի վրայ կանգնած, ճիւղ քնած, ճիւղ էլ երգելիս: Մի այլ տեղ վէճ, փոխադարձ սուր յիշոցներ, ապտակ... Ծխախոտի ծխով լցուած դահլիճը մի կատարեալ քաօս էր ներկայացնում: Դիշերուայ ժամի մօտ 12-ն էր: Կանադուհին աննկատելի կերպով եկաւ, մօտեցաւ Կրպօնին, քնքոյշ, փաղաքշական ձայնով խնդրեց նրանից նախ մի ծխախոտ, ապա երկու բոպէ չանցած և մի բաժակ օղի: Կրպօն կատարեց նրա խնդիրքը: Առիթից օգտուելով՝ կանադուհին բոլորովին մօտեցաւ, կտրաւ պանդխտին և բաժակ բաժակի խփելով՝ խմեց նրա կենացը: Կրպօն մեքենայաբար հետեւեց նրա օրինակին: Նա արդէն հարբած էր. խորամանկ կինը կրկին խմեցրեց...

Ինչպէս և երբ դուրս եկան նրանք գինետանից՝ Կրպօն ոչինչ չէր յիշում: Միայն հետեւեալ օրը, ժամը 2-ին զարթնելիս տեսաւ նա, որ իր սենեակումը չէր, այլ մի անծանօթ տեղ: Անկողնում պառկած ապուշ-ապուշ նայում էր նա իր շուրջը՝ մի յստակ, մաքուր, կոկիկ զարդարած գեղեցիկ սենեակ և չէր կարողանում իրան հաշիւ տալ՝ թէ ո՞րտեղ էր ինքը, ո՞ր էր ընկել: Դարձաւ

Նա դէպ ձախ և տեսաւ այնտեղ՝ իր կողքին, միեւնոյն մահճակալի վրայ մի կին, գրեթէ մերկ պառկած քնած՝ ձեռքը դրած մերկ, գեղեցիկ կրծքին, որի վրայ թափ-թփուած էին ոսկեգոյն երկար մազերը: Ճանաչեց Կրպօն այդ դէմքը և յիշեց ամեն բան...

Նա բարձրացաւ տեղից և սկսեց շտապով հագնուել: Կինը զարթեց և զարմացած հարցրեց.

— Ի՞նչ ես անում... Ո՞ւր ես գնում:

Կրպօն ոչինչ չը պատասխանեց: Կանադուհին վեր կացաւ. անկողնուց, մօտեցաւ Կրպօյին և երկու ձեռքով կախուելով նրա շինքից, ցանկացաւ փայփայել, գգուել, համբուրել նրան: Բայց երիտասարդը զգուսնքով դէն հրեց նրան, կինը յետ ու յետ դնալով՝ ընկաւ մահճա-կալի վրայ: Գործաւորի օտարոտի, կատաղի հայեացքը գամեց, մեխեց նրան իր տեղում: Նա անկարող եղաւ մի բառ անդամ ասելու: Կրպօն հագնուեց թէ չէ՝ դուրս թռաւ սենեակից՝ դուռը յետևեց աղմկով փա-կելով: Կինը մնացել էր ապշած-սառած:

Բայց մի շաբաթ չանցած կանադուհին կրկին նրան գտել, ճանկել էր... Իւ այնուհետև նրանք անբաժան էին:

Մեքօն և մի այլ պանդուխտ, որ ամիսներ շարու-նակ որոնում էին Կրպօյին, մի գիշեր նրան գտան գի-նետան մէջ հարբած, ձեռքը դցած մի կնոջ վզով՝ նրան համբուրելիս և ինչ-որ անկապ բառեր բարբանջելիս...

Տեսնելով Կրպօյին այդ դուրսթեան մէջ՝ պանդուխ-տը ամբողջ ոյժով դուրս հրելով Մեքօյին, զգուսնքով հեռացաւ գինետանից՝ առանց մի խօսք անդամ ուղղե-լու իրանց հայրենակցին:

— Կորսււ տղան, — մրմնջաց Մեքօն երկար լռութիւ-նից յետոյ:

— Թող կորչի: Այսուհետև այլևս ոչ ոք չը համար-ձակուի նրա անունը արտասանել, — պատասխանեց միւս պանդուխտը: «Ո՞ւր մնաց Կրպօն. ի՞նչ եղաւ խեղճը. ի՞նչ պատահեց նրան»... Տեսնը այժմ: Դէհ, բաւական է:

—Ախր, քեռի, միթէնա առաջ այդպէս էր,—Մելքօն փորձեց արդարացնել իր ընկերոջը։

—Ինչ համար այդ միւսնոյն է. ի՞նչ է նա այժմ... Նրա անունը այլ ևս իմ ականջը չը լսէ, հասկանում ես,—հրամայեց վրդովուած ձայնով հին բանուորը և լուռ շարունակեց իր ճամբան։ Մելքօն ևս լուռ էր, մտախոհ և տխուր։

Այդ դէպքից երկու ամիս չանցած Կրպօն մի օր յայտնուեց իր հայրենակիցների շրջանում։ Նա ծախսել էր իր վերջին սենթը։ Կանադուհին այլևս նրա հետ չէր։ Դրամների անհետանալով՝ նա ձգել թողել էր պանդխտին։ Կրպօն ծախել էր իր ժամացոյցը, իր կիրակնօրեայ հագուստը, նոյն իսկ իր վրայի շորերի մի մասը։ Երբ արդէն այլևս ոչինչ, ոչինչ չունէր շուրջը լու, նա, կարծես, քիչ զգաստացաւ։ Այդ միջոցներին տանտէրը՝ վերցնելով Կրպօյի անկողինը, սնդուկը, վրձնդեց նրան բնակարանից, որի երեք ամսուայ վարձը չէր վճարուած։

Կրպօն մնաց դուրսը և այժմ անտուն, անփող թափառում էր Նիւ-Նօրքի փողոցներում, գիշերում մայթերի վրայ կամ այգիներում՝ ծառերի տակ...

Յոգնած, ընկճուած, ձեռքը ծոցին նստած էր նա Մադիզօն սկուէռի մի անկիւնում։ Մարդիկ շտապ-շտապ անցնում գնում էին։ Յանկարծ մի պարոն՝ խղճահարուած մօտեցաւ, ձեռքը տարաւ գրպանը և մի դրամ հանելով՝ մեկնեց պանդխտին։

Կարծես, մի հարուած էր, որ ստացաւ Կրպօն և ոչ փող։ Որպէս շանթահար եղած, ցատկեց նա տեղից և ամբողջ ոյժով շարտեց դրամը քնքոյշ ջենտլմէնի յետևից։ Գնաց դրամը զնգզնգալով և ընկաւ փողոցի մի փոքրիկ խողոյ։

Պանդուխտը տենդային անհանգստութեան մէջ սկսեց արագ-արագ քայլել սկուէռի ալլէյում։ Ման էր գալիս նա և ինքն իրան խօսում։

—Մուրա՛ր, ձեռք կարկառել... ողորմութիւն հայցել... Երբէք, հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից մութացկանութիւն:

«Այն փողով ես հաց կարող էի գնել»,—մտածեց նա:—Մուրա՛ր... կրկնեց Կրպօն և մի սարսուռ անցաւ նրա մարմնով: Այժմ միայն նա նկատեց այն վիհը, որի ափին էր նա դառնում: Տեսաւ Կրպօն այդ անդունդը և սոսկաց:

—Ինչպէ՛ս եղեմ, ինչպէ՛ս բարձրանամ:—հարց տուաւ նա ինքն իրան: Գործարան գնա՛ր: Բայց ի՞նչ երեսով, ի՞նչ սրտով և... ո՛ւմ համար, ո՛ւմ... Ո՛հ, այս ի՞նչ տանջանք է, որ ես եմ քաշում: այս ի՞նչ կեանք է. այս ի՞նչ դրութիւն է:

—Էլ ինչո՛ւ կը խնայես, եամո՞ն Աստուած. զարկ, զարկ ինձ ալ, ո՛րի համար կը պահես...

—Պայծի՛ր, պատառու՛իր, սիրտ իմ: Ըմնի այրես, փոթոթես ինձ: Ո՛ւր գնամ քո ձեռից. ի՞նչ անեմ...

—Ի՞նչ անեմ,—կրկնեց Կրպօն՝ ճակատը շփելով: Նա քաշուեց այդու խորքը, նստեց մի նստարանի վրայ և գլուխն առնելով ձեռքերի մէջ մնաց խորհելիս:

Մութն ընկել էր արդէն: Փողոցների շարժումը խտացել, սաստկացել էր: Տրամուէյների, օդային երկաթուղու բազմաթիւ գնացքների սուրոց-դղրդիւնը, լրագրավաճառների, կառապանների կոչ ու աղաղակը օդը լցրել էին խլացուցիչ աղմկով և մի խուլ, մի վեհ դղրուդիւն-որոտմունքով:

Կրպօն՝ անտարբեր ու անուշադիր իր շուրջը անյողդողդ հոսող, վխտող կեանքին, նոյն տեղը, նոյն դիրքի մէջ նստած, կարծես, ներհում էր:

Քշուած, մոլորուած բարձրացաւ նա և՛ յամր, դանդաղ քայլերով դուրս գալով սկուէռից, ուղղուեց դէպի իր նախկին բնակարանը, հայրենակիցների մօտ:

Շաբաթ օր էր, գործաւորները ընթրիքից յետոյ նստած՝ հրը ծխում էր, հրը մտքերին անձնատուր եղած

ներհում, որը լրագիր կարդում, մի երկուն էլ նրան լսում։ մի երկտասարդ էլ անդլիերէնի ձեռնարկը առջևը դրած՝ կիրակնօրեայ դպրոցի դասն էր պատրաստում։

Մտնում է Կրպօն։

Նրա այդպէս անակնկալ երևան գալը, նրա պատուաւած շորերը, չը սանրած, գզգզուած մազերը, այլայլուած, փոխուած, կեղտոտ դէմքը չփոթ, իրարանցում գցեց պանդուխտների խղճուկ սենեակում։ Դա նախկին Կրպօն չէր, այլ նրա ահռելի ուրուականը։ Բանուորները տեղներից վերկացան և աթոռները առնելով՝ բնագգմամբ յետ ու յետ քաշուեցան։ Կրպօն մնաց սենեակի մէջ կանգնած։ Նա ոչ ոքի չը բարևեց. մի վայրկեական հայեացք գցելով չփոթուած հայրենակիցների շարքին՝ բացականչեց.

—Մհ, դուք ինձնից խորշում էք, նոյն իսկ վախեւում... փողոցում պատահելիս զգուանքով ինձնից երես ծռում։ Ժաղր ու ծանակ չինած՝ ինձ ատում, ինձ արհամարում էք՝ ասելով որ ես անբարոյական, ես անառակ եմ։ գինեմոլ, ծոյլ, թափառաշրջիկ, անդարտ, անամթ... Հոգ չէ... Եւ իրաւունք ունիք։

Նա մտածմունքի մէջ ընկաւ։

—Բայց միթէ առաջ ես այդպէս էի,—շարունակեց նա թախծալի ձայնով, որի ամեն մի հնչիւնից անկեղծութիւն էր շնչում։—Օհ, չը կարծէք՝ թէ այժմ ևս ես գինովցած՝ օղիի ազդեցութեան տակ եմ այսպէս խօսում։ Երկու օր է, որ ես մի կտոր հաց չեմ դրել բերանս, ուր մնաց օղին։—Միթէ աղէտից առաջ ես երբ և իցէ անցել եմ գինեւան շէմքից։ Միթէ ես աննպատակ չըրջել եմ փողոցից փողոց, հրապարակ, հասարակական այգիներ... Միթէ մօտեցել եմ ես երբ և իցէ օտարուհիներին։ Թէ երկրում և թէ այստեղ՝ վեց տարի պանդրխտութեան մատնուած, ես անարատ, ես կոյս էի մնացել, կոյս. հասկանում էք՝ կոյս, որպէս մեր մայրերն

են եղել, կոյս՝ որպէս մեր ազգիներն էին, որ այժմ տաճկի և քրդի՝ բաժին են դարձել...

Կրպօն լռեց: Կիսամերկ, գզգզուած, ցնցոտիների մէջ փաթաթուած կանգնած էր նա սենեակի միջին: Շուրջը պանդուխտները աչքները յառած նայում էին այդ թշուառին, որ ինչպէս մի մարմնացած բողոք ցցուած էր իրանց առաջին:

— Կարծում էք թէ ես չեմ տեսնում, ես չեմ զգում իմ անկումը... բայց ի՞նչ անէի ես, երբ միտս էին ընկնում, երբ աչքից-մտքիցս չեն հեռանում մօրս ուրուականը, նշանածս, իմ սիրածը... Ո՛ւր է նա այժմ, ո՛ւր. ձեզ եմ հարցնում,—բացականչեց Կրպօն խուպոտ ձայնով և թուլացած ընկաւ մի աթոռի վրայ: Տիրեց մի ծանր և ճնշող լռութիւն:

— Բայց մի՞թէ մենք քեզանից պակաս ենք վնասուել, — ընդհատեց այդ լռութիւնը մի բանուոր: Սակայն մենք մորմոքուելով հանգերձ՝ մի կերպ մթնացնում ենք մեր սև օրերը:

— Ճիշտ ես նկատում դու, եղբայր. քեզ հասած հարուածը սոսկալի էր և անդուծ: Բայց դու գոնէ երկու փոքրիկ որբիկներ ունես. գոնէ նրանց համար աշխատելով՝ նրանց յուսով կ'ապրես: Իսկ ես... ես... Ա՛խ, եթէ դուք կարողանայիք գէթ երեւակայել՝ թէ ինչ է կատարւում այստեղ՝ այս կրծքի տակ, դուք ինձ չէիք մեղադրիլ, ինձ չէիք ատիլ: Ի՞նչ անէի ես, որ քաւը թայի գլխիս, որ ջուրն ընկնէի:

Նա ծխախոտ խնդրեց և ծնկների վրայ կռթնելով սկսեց ագահաբար ծխել: Ոչ ոք տեղից չէր շարժւում. լուռ էին բոլորեքեան: Միայն քամին դուրսը շառաչում, ոռնում էր կատաղաբար:

— Դէհ, ես գնում եմ,—ասաց Կրպօն երկար լռութիւնից յետոյ տեղից բարձրանալով:

— Ո՛ւր, որտեղ գիշերուայ այս պահուն,—մօտ գալով հարցրեց Մեքթօն, որ հեռուից լուռ, երկար դիտում

էր իր նախկին ընկերոջ՝ Մնն այստեղ, մեզ մօտ, վաղը կը գնաս:

—Ո՛հ, վաղը լուսադէմին ես պիտի մեկնեմ Բօստօն: Այս քաղաքում մնալ ես այլևս անկարող եմ: Ես եկել էի միայն ձեզ տեսնելու և հրաժեշտի վերջին ողջոյն տալու... Է՛հ, աշխարհ... ո՛վ սաղ, ո՛վ մեռած... մէկ էլ միմեանց պատահենք... Մնաք բարով, բոլորեքեանդ: Տո՛ւր ձեռքդ ինձ, Մեկքօ: Ես գիտեմ, որ դու ինձ չես ատում: Ձե՛ որ մի ժամանակ մենք մտերիմ ընկեր, եղբայր էինք,—ասաց նա՝ ձեռքը պարզելով Մեկքօյին, որին գրկեց և յուզուած, արցունքները հազիւ զսպելով, միքանի անգամ համբուրեց:

Մեկքօն ընկերոջ ձեռքը բռնած նոյնպէս զգացուած, արտասուախառն ձայնով խնդրում էր նրան իրանց մօտ գիշերել: Խորը յուզուած էին և բոլոր պանդուխտները:

Կրպօն՝ տեսնելով որ Մեկքօյից հեշտ չէր ազատուելու, դիմեց նրան:

—Գիտես, ես ճանապարհածախս չունեմ: Թո՛ւր ինձ չորս դօլլար պարտք. Բօստօնից կ'ուղարկեմ: Մեկքօյի լուսակալան կասկածները, կարծես, փարատուեցան: Նա հանեց գրպանից 5 դօլլարանոց թղթադրամ և մեկնեց ընկերոջը, որ փողը վերցնելով, կրկին սեղմեց Մեկքօյի ձեռքը: Ապա մօտեցաւ և մէկ-մէկ բարեկեց բոլոր պանդուխտներին:

—Մնաք բարով,—կրկնեց նա՝ շտապով դուրս գալով սենեակից:

—Վաղը լուսադէմին ես ևս կայարան կը գամ,—ասաց Մեկքօն նրա յետևից:

—Բա՛րի ճանապարհ,—դռնեցին բոլորեքեան:

Ուշ գիշեր էր արդէն: Քաղաքի անցուդարձը դարբել էր. հազիւ միքանի մարդ էին այստեղ այնտեղ երևում: Յուրտ էր: Քամին դեռ փչում էր մոլեգնաբար:

Կրպօն արագ-արագ քայլելով շտապում էր Բրօդ-

վէյ փողոցով դէպի վար։ Նա ուշ չէր դարձնում բնութեան խժդժութիւններին։ Միայն նրա ցնցոտիներն էին. որ քամու հետ մարտնչելով՝ կուռում, դիմադրում էին. վերջին ճիգն էին թափում, ամուր սեղմում, կաշում իրանց տիրոջ նիհար, վտիտ մարմնին, նրան պահում, պահպանում։

«Բճրի ճանապարհ», — յիշեց Կրպօն հայրենակիցների վերջին բառերը և մի դառն հեգնական ժպիտ նկարուեց նրա դալկացած, ալկօհօլից արդէն կնճռուած դէմքի վրայ։ «Բճրի ճանապարհ», — մրմնջում էր նրա ականջին և քամին։

Շտապում էր Կրպօն դատարկ, ամայի փողոցներով։ Մինչ նա՝ հրաբորբոք տենչով բռնկուած, շտապում, վազում էր միքանի ընկած շուտ հասնել օրհասական այն սուրբ վայրը, նրա խռովայոյզ, անհանգիստ միտքը՝ ովկիանոսը կտրելով թռչում, գնում է հեռու, հեռու՝ հայրենի երկիրը։ Յիշողութիւնների մի ամբողջ ծով է բացւում նրա առջև, որի մեղմ, հանդարտ ալիքները ոլորուն ելեէջներով գալով, զարնուելով ափերին, շոյում, գգւում էին պանդխտին։ Նա պարզ տեսնում է իրանց տունը, իրանց այգին, ահա և տաւարը, երեկոյեան դէմ, բառաչելով տուն է շտապում։ ահա և իր մայրը՝ թեքերը ծալած, կովկիթը ձեռքին մօտենում է. ինքը՝ փոքրիկ, կայտառ Կրպօն վազում, հորթի կապն է բանում... Մանկութիւնը, քաղցր հրապոյրներով լի իր ամբողջ մանկութիւնը անցնում է նրա առջևից։ Ահա և մեծ տղայ դարձած, գրեթէ երիտասարդ-տղամարդ... խնամախօս, նշանդրէք...

Պատկերը չբանում է։ Տխուր իրականութիւնը ցցուած էր նրա առաջ։ Կրպօն հասել էր Բրուկլինի կամուրջին։ Մի սառը, մի անսովոր ցնցում անցաւ նրա ամբողջ մարմնով։ Նայեց նա ներքև՝ հանդարտ, դանդաղահոս Իստ-Րիվէրին, որի ափերին բազմած երկու վիթխարի քաղաքները՝ գեղեցիկ լուսաւորուած, մի

հրաշալի, մի չքնաղ տեսարան էին ներկայացնում գիշերուայ այդ խորհրդաւոր ժամին:

Կրպօն լուռ, անխօս, ձեռքի շարժումով կարծես գլխից մի միտք վանելով, վճռողաբար, առանց տատանուելու, մագլցեց կամուրջի երկաթեայ ցանկապատը և այնտեղից, այն ահռելի բարձրութիւնից մի սուր ճիչ հանելով՝ նետուեց գետը:

Կորաւ այդ ձայնը գիշերային խաւարի մէջ և նորից տիրեց խորին լռութիւն, որ երբեմն խանգարւում էր Խտ-Րիվէրի մեղմ, ներդաշնակ ծփանքով:

Դետը մի փոքրիկ յորձանք տուաւ միայն և խաղաղ, անխռով՝ ալիքների մէջ գուրգուրալով տարաւ պանդըխտին դէպի ծով, դէպի անհուն ովկիանոս:

Ս. ՇԽԵԱՆՑ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՈՍՏԸ

(Լեւոնակից)

Ասա՛ ինձ, ո՛ւս Պաղեստինի,
Ո՛ւր ես բուսել, ո՛ւր — ծաղկել.
Ո՛ր բլրուրի կամ ո՛ր հովսի
Զարդարանք ես դու եղել:

Արեւելքն է արդեօք շոյել
Քեզ իր շողով ոսկեվառ,
Եւ Յորդանան բունըդ ցօղել
Իր ջրերով զովարար:

Թէ՛ քամին է աղմբկելով
Խոր գիշերուայ խաւարում
Քեզ օրօրել լի ցասումով
Լիբանանու լեռներում:

Աղօ՛թք էին արդեօք ասում,
Թէ՛ երգ երգում վաղեմի,
Երբ քո սաղարթն էին հիւսում
Խեղճ որդիքը Սաղեմի:

Եւ կա՛յ դեռ այն արմաւենին
Լայնասերեւ գանգուրով.
Անցորդներին նա տալ օրին
Պարգեւո՛ւմ է հով ու գով:

Թէ՛, քեզ նըման, նա՛ էլ թօշնել
Անջասման մէջ հէգ, սրտում,
Եւ սաղարթն է նըրա դեղնել
Հովսի փռուց անկրօսում...

Ասա՛, ո՛ւմ ձեռքն աստուածավախ
Քեզ բերել է այս աշխարհ.
Տըխրե՛լ է նա արդեօք յանախ,
Եւ ջերմ լացել քեզ համար:

Թէ՛ նա Տիրոջ զինուոր էր փաջ,
Ճակսին կընիք մաքրութեան.
Մարդկանց միջում, Ասծոյ առաջ
Քեզ պէս—նա՛ էլ երկնարժան:

Խնամքով պահած՝ դու կանգնած ես
Հանդէպ այս սուրբ պատկերի,
Հաւատարիմ պահնորդի պէս,
Ո՛ւս սրբազան աշխարհի:

Կիսախաւա՛ր, կանթեղի լո՛յս,
Խա՛չ, սապանա՛կ—սո՛ւրբ նըշան...
Ո՛ղջ շընչում եմ խինդ, սէր ու յոյս
Քո չորս բոլո՛ւր, քո վըրա՛ն:

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ

ԵՒ

ՌԻՍԼԵՐ ԱԻԱԳ

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

II

Բացառութիւն:

Իսկապէս ժամանակն էր, որ դար դատաւորը:

Սիդօնին, գլուխը կորցրած, պտոյտ էր գալիս պարիզեան յորձանքի մէջ: Հէնց իր թեթեւութեան շնորհիւ նա դեռ եւ կարողանում էր մնալ ջրի երեսին. բայց նրա անչափ ծախսերը, ցուցամով շռայլութիւնը, հետզհետէ աւելի ու աւելի մեծ չափով արհամարհանքով վերաբերուելը վայելչութեան ամենատարրական պահանջներին, — այդ բոլորը ցոյց էր տալիս, որ նա շուտով գնալու էր ջրի տակը, քաշ տալով իր հետ իր ամուսնու պատիւը և գուցէ նաեւ՝ իր խենթութիւններէից քայքայուած խոշոր առետրական տան հարստութիւնն ու սնունդը:

Այն միջավայրը, որի մէջ ապրում էր նա այժմ, աւելի ևս շտապեցնում էր նրա կորուստը: Պարիզում, մանր վաճառականների թաղերում, որոնք բոլորովին նման են չարական ու բամբասաւէր գաւառներին, նա ստիպուած էր մի քիչ զգոյշ պահել իրան, բայց Անիէրում, իր ամարանոցում, որ չրջապատուած էր դերասանների շալէներով, կասկածելի ընտանիքներով և արձակուրդ վայելող դորձակատարներով, նա այլ ևս չէր քաշուած ոչնչից: Նրա շուրջը այդտեղ տիրում էր անառակութեան մթնոլորտ, որ նա չնչում էր առանց տհաճութեան, որովհետեւ իսկ և իսկ նրա ճաշակովի էր այդ, երեկոները, նստած իր փոքրիկ պարտէզում, նա զուարճանում էր պարահանդիսային երաժշտութիւն լսելով:

Ատրճանակի մի հարուած, որ թնդաց մի գիշեր զրալի տան մէջ ու սկսեց ամբողջ շրջակայքը զբաղեցնել մի տախիակ ու յիմար սիրահարական դէպքով, առիթ դարձաւ նրա համար երազելու:

նոյնպիսի արկածների մասին: Նա ինք էլ կ'ուզէր ունենալ այդպիսի «պատմութիւններ»: Բոլորովին կորցնելով չափը թէ խօսակցութեան և թէ վարմունքի մէջ, նա կամ, Տրուվիլի ու Հուլգէտի*) գողարիկ տիկիներին նմանելով, կարճ ներքնազգեստ հագած ու երկար փայտը ձեռքին գնում էր զբօսնելու Անիէրի գետափում, կամ թէ մնում էր տանը, առաւօտեան զգեստով, իր հարեանուհիների նման բոլորովին անգործ ու հաղիւհազ ուշք դարձնելով տան վրայ, ուր ծառաները աննկատելի կերպով կողոպտում էին նրան, ինչպէս մի կօկօտի: Եւ այդ կինը, որին ամեն առաւօտ տեսնում էին ձի հեծած զբօսնելիս, սմբողջ ժամերով նստած զրոյց էր անում իր աղախնի հետ իրանց շրջապատող տարօրինակ ընտանիքների մասին:

Փոքր առ փոքր նա հասաւ իր առաջուան դիրքին և նոյն իսկ աւելի ստոր աստիճանի: Հարստութեան ու դիրքի տէր բուրժուազիայից, որի կարգն էր անցել իր ամուսնութեան շնորհիւ, նա արագ-արագ դահավիժւում էր դէպի պահովի կնոջ աստիճանը: Շարունակ ճանապարհորդելով նոյն վաղօններում՝ օտարոտի զգեստներ հագած և մազերը շան պէս աչքներին քաշած կամ Բրաբանտեան Ժէնէյվիէվայի**) նման մէջքներին շող տուած՝ անվայել կանանց հետ, նա վերջ ի վերջոյ սկսեց նմանել նրանց: Երկու ամիս նա մազերը շէկ ներկած էր ման գալիս, ի մեծ զարմանս Ռիսլէրի, որ ապշած էր մնացել, թէ ինչո՞ւ ևն յանկարծ փոխել իր տիկնիկը: Ինչ վերաբերում է Ժօրժին, բոլոր այդ արտառոց վարմունքները նրան հաճոյք էին պատճառում և նրանց շնորհիւ Սիդօնին տասը կնոջ համ էր տալիս նրան: Ժօրժն էր նրա իսկական ամուսինը, տան իսկական տէրը:

Սիդօնիին զուարճացնելու համար, նա հասարակութեան նման մի տեսակ բան էր ստեղծել նրա շուրջը, որ բաղկացած էր իր ամուրի ընկերներից, մի քանի քէֆ սիրող առևտրականներից և որի մէջ գրեթէ երբեք չէր լինում ոչ մի կին: Կանայք լինչ պէտք էին. նրանք շատ սուր աչքեր են ունենում: Տիկին Դօբսօնը նրանց միակ բարեկամուհին էր:

Նրանք կազմակերպում էին մեծ ճաշկերոյթներ, զբօսանքներ գետի վրայ, հրապառութիւն: Օրէցօր խեղճ Ռիսլէրի գրութիւնը աւելի ու աւելի ծիծաղելի և անվայել էր դառնում: Ե-

*) Երվային լողարաններ: Ե. Թ.

**) Հին առասպելի հերոսուհի, որ, կասկածուելով ամուսնական անհատարմութեան մէջ, մահուան էր դատապարտուել և, ծառայի ձեռքով փրկուելով, մի քանի տարի ապրել էր քարայրում, ուտելու համար ունենալով միայն վարի արմատներ, իսկ մարմինը ծածկելու համար՝ սեփական մազերը: Ե. Թ.

րեկոնները յոգնած ու վատ հաղնուած տուն վերադառնալիս՝ նա պէտք է իսկոյն գնար իր սենեակը հագուստը փոխելու:

— Ճաշին հիւրեր ունենը, — ասում էր նրան կինը, — շտապեցէք:

Եւ նա վերջինն էր նստում ճաշի, շուրջանակի ձեռք տալով բոլոր հիւրերին, Ծրօմօն կրտսերի բարեկամներին, որոնց անունները հազիւ գիտէր ինքը: Տարօրինակ բան. դործարանի գործերի մասին էլ յաճախ խօսակցութիւն էր լինում այդ ճաշերի ժամանակ, ուր ժօրժը բերում էր իր ժողովարանի ծանօթներին, վստահ լինելով այն բանի վրայ, որ ինքն էր ծախսերը անողը:

«Գործի նախաճաշեր ու ճաշեր»: Ռիսլէրի համար այդ խօսքերը ամեն ինչ բացատրում էին, — և՛ իր առևտրակցի մըշտական ներկայութիւնը, և՛ հիւրերի ընտրութիւնը, և՛ հրաշալի զգեստները Սիդօնիի, որ զուգուած էր ու կօքէտութիւններ անում առևտրական տան շահերի համար: Ծրօմօն կրտսերին յուսահատեցնում էր իր սիրունու այդ կօքէտութիւնը: Օրուայ ամեն ժամերին, անհանգիստ ու կասկածոտ, գալիս էր նա, ուղևորով յանկարծակի բռնել և վախենալով երկար մենակ թողնել այդ ծածկամիտ ու փչացած արարածին:

— Ո՞րտեղ է լինում մարդը... հեղինական ձևով հարցնում էր Գարդինուս պատը իր թոռից... Ինչու այսքան ուշուշ է գալիս այստեղ:

Կլէրը արդարացնում էր ամուսնուն, բայց այդ յարատե բացակայութիւնը սկսում էր անհանգստացնել նրան: Այժմ նա լալիս էր՝ ամեն օր հացի ժամանակ ստանալով փոքրիկ տոմսեր ու հեռագիրներ, թէ՛ «Այս երեկոյ ինձ չը սպասես, սիրելիս: Ես կարող եմ գալ Սալինի միայն վաղը կամ միւս օրը գիշերուայ գնացքով»:

Տխուր-տխուր ճաշում էր խեղճը ամուսնու դստարկ տեղի առաջը նստած և զգում էր, որ մարդը սառում է իրանից, թէև չը գիտէր, որ նա դաւաճանում է իրան: Ո՞րքան մտքամոլոր էր լինում ամուսինը, երբ մի օր և է ընտանեկան տօնի կամ մի ուրիշ պատճառով ակամայից մնում էր տանը, ինչպէս լըռութիւն էր պահում նա՝ իրան զբաղեցնող հարցերի մասին: Սիդօնիի հետ միայն հեռուից հեռու յարաբերութիւն ունենալով, Կլէրը ամենևին չէր իմանում, թէ ինչեր են տեղի ունենում Անիէրում, բայց երբ ժօրժը շտապ-շտապ և ժպտերես հեռանում էր Սալինիից, նա, միայնակ մնալով, տանջւում էր խուլ կասկածներից և, ինչպէս առհասարակ այն մարդիկ, որոնք մի մեծ զօրախտութիւն են սպասում, յանկարծ անհուն

դատարկութիւն էր զգում սրտումը, որի մէջ կարծես տեղ էր պատրաստուում մի մեծ աղէտի համար:

Կլէրի ամուսինն էլ նոյնքան անբախտ էր, որքան և ինքը, Կլէրը: Անսիրտ Սիդօնին կարծէք զուարճութիւն էր զգում ներքան տանջելով: Նա ամենքին թոյլ էր տալիս, որ սիրաշահէն իրան: Վերջերքս ամեն օր գալիս էր նրա մօտ, հետը յուզիչ դուէտներ կրգելու, ինչ-որ մի խտրական տենօր Տուլուզիյ *), պ. Կաղաբօն, Կաղաբօնի մականուանուած, որ ծանօթացել էր նրա հետ տիկին Դօբսօնի միջոցով: Ժօրժը, նախանձից տանջուելով, կէսօրից յետոյ թռչում էր Անիէր, երեսի վրայ էր թողնում ամեն ինչ և արդէն սկսում էր գտնել, թէ Ռիսլէրը լաւ չի հսկում իր կնոջ վրայ: Նա ուզում էր, որ Ռիսլէրը կոյր լինի միմիայն իր վերաբերմամբ:

Օ՛, և թէ ինքը լինէր նրա ամուսինը, ի՞նչպէս պինդ հուպ տուած կը պահէր նրան: Բայց նա ոչ մի իրաւունք չուէր Սիդօնիի վրայ և Սիդօնին առանց այլիայլութեան ասում էր այդ բանը նրա կրեմին: Բացի այդ, շնորհիւ տրամաբանութեան անդիմադրելի ոյժին, որ կրեան է գալիս յաճախ նոյն իսկ ամենայնմար պլուխներում, նա կրեմին-կրեմին ինքն իրան ասում էր, որ ինքը, իբրև ուրիշին խաբող, թերևս արժանի է նոյնպէս խաբուած լինելու: Այսպէս թէ այնպէս՝ տխուր կեանք էր նրա կեանքը: Ամբողջ ժամանակը նա զբաղուած էր գոհարների կամ թանկագին կտորների մի խանութից միւսը վաղելով և գլուխ ջարդելով, թէ ինչ ընծայ տայ նրան, ինչ սիրալիր գտնի նրա համար: Օ՛, շատ լաւ էր ճանաչում նա Սիդօնիին: Նա զիտէր, որ այդ կնոջը կարելի է զուարճացնել գոհարներով, բայց չի կարելի երկար ժամանակով գրաւած պահել, և որ այն օրը, երբ նա սկսի ձանձրանալ...

Բայց Սիդօնին դեռ չէր ձանձրանում: Նրա վարած կեանքը բոլորովին իր սրտի ուղածովն էր և նա վայելում էր այն ամբողջ բախտաւորութիւնը, որին կարող էր երբևիցէ հասնել: Այն սիրոյ մէջ, որ նա տածում էր դէպի Ժօրժը, չը կար ոչինչ ոչ հրաբորբոք, ոչ ուսմանտիկական: Ժօրժը նրա համար ոչ այլ ինչ էր, և թէ ոչ մի երկրորդ ամուսին, աւելի երիտասարդ և մանաւանդ աւելի հարուստ, քան առաջինը: Իրանց չնութիւնը լիովին բուրժուականացնելու համար՝ նա իր ծնողներին էլ բերել էր տուել Անիէր և, բնակեցնելով նրանց քաղաքի ծայրում, մնալիս ու կամաւորապէս կոյր հօրից և գորովալից ու դեռ չլացած մօրից ստեղծել էր իր համար մի պատուա-

*) Գաղաք Ֆրանսիայում:

ւոր չըջաւայր, որին նա այնքան աւելի կարճը էր զգում, որքան աւելի խրուում էր անառակութեան մէջ:

Ամեն ինչ չափուած ու ձեռուած էր այդ փչացած գլխում, որ կշռադատում էր անառակութիւնը ամենասառը կերպով, և թւում էր, թէ նրա կեանքը շարունակուելու է միշտ այդպէս անդորր, երբ յանկարծ լոյս ընկաւ Ֆրանց Ռիսէրը:

Նրան տեսնելուն պէս Սիգօնին հասկացաւ, որ իր անդորրութիւնը վտանգուած է և որ իր ու նրա մէջ տեղի է ունենալու մի շատ կարևոր բան:

Նոյն րոպէին և եթ նա կազմեց իր ծրագիրը: Այժմ պէտք էր միայն իրագործել այդ ծրագիրը:

Նրանց մտած տաղաւարը մի կլոր ու ընդարձակ սենեակ էր չորս պատուհանով, որոնցից տարբեր-տարբեր տեսարաններ էին երևում, և կահաւորուած էր ամարային միջօրէական հանգըստեան համար, օրուայ չոր ժամերի համար, երբ մարդ ապաստան է փնտռում արևից և պարտէզի միջատների բզզոցից: Ամբողջ պատի երկայնութեամբ ձգուած էր մի լայն ու շատ ցածիկ բազմոց: Սենեակի մէջտեղում դրուած էր մի փոքրիկ ու նոյնպէս շատ ցածիկ չինական սեղան, ծանրաբեռնուած աշխարհիկ զրական հանգէսների ջոկջոկատուած համարներով:

Պատասանները թարմ էին և չթեղէնի նաշխերը—կապտագոյն եղէգների մէջ թռչկոտող թռչուններ—յիբաւի նմանում էին ամարային երազի, մի թեթև պատկերի, որ սաւառնում է փակուող աչքերի առաջ: Ծածկած վարագոյրները, յատակին փռած խտրը և Վերգինիայի յասմիկը, որ դրսեից հիւսւում էր ամբողջ վանդակապատին, շատ զով էին պահում տաղաւարը, որ զովութիւն էր ստանում նաև կողքովը հոսող գետից, որ ծփում էր անդադար և իր մանր ալիքներով զարկւում ասիերին:

Ներս մտնելուն պէս Սիգօնին նստեց, ոտով մի կողմ հրելով սպիտակ չըջագետի երկար տուսը, որ ձեռն չերտի նման փոռեց բազմոցի ներքեւում, և այդպէս նստած սպասում էր, աչքերը՝ պայծառ, բերանը՝ ժպտուն և փոքրիկ գլուխը, որին աւելի ևս քմահաճոյ ու չարահաճի տեսք էր տալիս կողքի հանգոյցը, մի փոքր խոնարհած:

Ֆրանցը, սաստիկ գունատուած, մնացել էր կանգնած ու նայում էր չուրջը: Յետոյ, մի քիչ անցած, նա սկսեց խօսել.

—Կեցցէք, տիկին, ասաց նա, արեւի ու ձեռքի դիտէք:

Ու իսկոյն և եթ, կարծես վախենալով, թէ այդպէս հեռուից սկսուած խօսակցութիւնը շուտով չի հասնի այն կէտին, որ իրան պէտք էր, նա շարունակեց բիրտ կերպով.

—Ո՞ւրն էք պարտական այս ամբողջ ճոխութեան համար...
Ձեր ամուսնուն, թէ՛ ձեր սիրականին...

Սիդօնին, առանց տեղիցը շարժուելու և նոյն իսկ առանց աչքերը վեր բարձրացնելու, պատասխանեց.

—Երկուսին էլ:

Փրանցը մի քիչ շփոթուեց այդ համարձակութիւնից:

—Ուրեմն դուք խոստովանում էք, որ այդ պարոնը ձեր սիրականն է:

—Հապա ի՞նչ զտհրումար պէտք է անեմ:

Փրանցը մի րոպէ լուռ նայեց նրան: Նա էլ էր դունատուել, չը նայելով իր հանգստութեանը, և մշտական թեթեւ ժպիտը չէր խաղում այլ ևս բերանի անկիւնում:

Փրանցը ընդհատեց լուռութիւնը:

—Լաւ լսէք, Սիդօնի: Եղբօրս անունը, այն անունը, որ նա տուել է իր կնոջը, իմ անունն էլ է: Քանի որ Ռիսլէրը այնքան անմիտ է, այնքան կուրացած, որ թոյլ է տալիս ձեզ խայտառակել այդ անունը, ինձ է մնում պաշտպանել մեր անունն պատիւը ձեր պատճառած խայտառակութիւնից... Ուստի խընդրում եմ ձեզ յայտնել պ. Ֆրօմօնին, որ իսկոյն և եթ մի ուրիշ սիրուհի գտնի ու այսուհետեւ նրա վրայ վատնի իր փողերը... Ապա թէ ոչ...

—Ապա թէ ոչ, հարցրեց Սիդօնին, որ նրա խօսած միջոցին շարունակ խաղում էր իր մատանիների հետ:

—Ապա թէ ոչ ես կը յայտնեմ եղբօրս, թէ ինչ բաներ են տեղի ունենում իր տանը, և դուք կ'ապշէք այն ժամանակ, տեսնելով Ռիսլէրին նոյնքան վայրագ և նոյնքան ահռելի, որքան հեզ է նա սովորաբար: Իմ ասածները զույգէ նրան սպանեն, բայց կարող էք վստահ լինել, որ նա չի մեռնի մինչև որ ձեզ չը սպանի:

Սիդօնին ուսերը վեր քաշեց:

—Էհ, սպանում է, թող սպանի... Ի՞նչս պէտք է պակսի:

Այնպիսի դառն ու աշխարհից կտրուած ձայնով ասաց նա այդ բանը, որ Փրանցը յակամայից փոքր ինչ կարեկցութիւն զգաց դէպի այդ գեղեցիկ, ջահէլ ու երջանիկ էակը, որ մեռնելու մասին խօսում էր այդպիսի անտարբերութեամբ:

—Ուրեմն չ'ատ չ'ատ էք սիրում նրան, ասաց նա արդէն փոքր ինչ մեղմացած ձայնով... Ուրեմն չ'ատ չ'ատ էք սիրում այդ Ֆրօմօնին, որ գերադասում էք մեռնել, քան հրաժարուել նրանից:

Սիդօնին ուղղուեց տեղումը արագ շարժումով:

—Ո՞ւր, Ես, Ես եմ սիրում այդ ցանցառին, այդ փալասի կտորին, այդ տղամարդու շոր հագած ողորմելի կնամարդին...

ինչէր էք ասում... Դա եղած թէ ուրիշը՝ ինձ համար միևնոյնն է. դա պատահեց, դրա հետ կապուեցի...

— Բայց ինչո՞ւ:

— Որովհետեւ պէտք էր այդպէս անել, որովհետեւ ես ցնոր-ուածի պէս էի, որովհետեւ սրտումս բուն էր զրել և գեռ մնում է այնտեղ մի յանցաւոր սէր, որ ուզում եմ դուրս կտրել, ինչ գնով էլ լինի այդ:

Նա վեր էր կացել տեղիցը և խօսում էր փրանցի հետ աչքերը գցած նրա աչքերին, բերանը մօտեցրած բերանին և սարսուղով իր ամբողջ էութեամբ:

Յանցաւոր սէր... Ո՞վ պէտք է լինէր նրա սիրածը:

Փրանցը վախենում էր հարց տալ նրան:

Առանց դեռ ոչինչ կասկածելու, նա հասկանում էր սակայն, որ իր վրայ խոնարհուած այդ հայեացքը, այդ շունչը՝ ինչ որ զարհուրելի գաղտնիք էին բանալու իր առաջ:

Բայց նա եկել էր դատաւորի պաշտօն կատարելու և պարտական էր ամեն ինչ իմանալ:

— Ո՞վ է այդ մարդը... հարցրեց նա:

Սիդօնին պատասխանեց խուլ ձայնով.

— Ինքներդ շատ լաւ գիտէք, որ գուք էք այդ:

Եւ այդ ասողը նրա եղբօր կինն էր:

Երկու տարուց ի վեր նա իր քրոջ տեղն էր համարում նրան և երբէք ուրիշ կերպ չէր մտածում նրա մասին: Նրա աչքում, իր եղբօր կինը այլ ևս ոչ մի բանով չէր նմանում իր նախկին հարսնացուին, և իր կողմից մի ծանր յանցանք կը լի-նէր մի ամենաչնչին դիմադրով անդամ նմանեցնել այդ կնոջը այն օրիորդին, որին մի ժամանակ ինքը այնքան յաճախ կրկնել էր՝ «Ես ձեզ սիրում եմ» խօսքերը:

Իսկ այժմ այդ կինը իր բերնով խոստովանում էր, որ ինքը սիրում է նրան:

Խեղճ դատաւորը մնացել էր ապշած, չլմած ու ոչ մի խօսք չէր գտնում նրան պատասխանելու համար...

Իսկ նա, կանգնած նրա դիմացը, սպասում էր...

Այն տենդոտ ու արեալից զարնանային օրերից մէկն էր, որոնց մի առանձին մեղկութիւն ու մեղամաղձութիւն է հաղորդում անցած անձրևների գոլորշին: Օդը գաղջ էր և լի նորափթիթ ծաղիկների անուշահոտութեամբ, որոնք այդ առաջին տար օրը այնպիսի սաստիկ բուրմունք էին արձակում, ինչպէս ձեռնա-մուշտակի մէջ զրած մանիշակները: Այն սենեակը, ուր նրանք գտնուում էին, իր բարձր ու բաց պատուհաններով ներս էր չըն-չում այդ արբեցուցիչ բուրմունքները: Դրսից լսում էին կի-

բախնորեայ երգեհոնների նուագները, դեռի վրայ հնչող հեռաւոր ձայները և աւելի մօտ՝ տիկին Դօրասոնի սիրահալ ձայնը, որ հեծեծում էր.

On dit que tu te maries,

Tu sais que j'en puis mourir i i i ir!...

—Այո, Ֆրանց, դուք էք եղել միշտ իմ սրտի սիրածը, ասում էր Սիդօնին: Ոչ մի բան չը կարողացաւ ջնջել իմ սրտում կամ թուլացնել այդ սէրը, որից ես հրաժարուեցի այն ժամանակ, որովհետև ջահել աղջիկ էի, լակ ջահել աղջիկները չեն հասկանում, թէ ինչ են անում: Երբ որ իմացայ, որ ձեզ վրայ սիրահարուած է բնութիւնից զրկուած ու անբախտ Դէզիրէն, սիրտս լցուեց մեծահոգութեամբ և ես վճռեցի երջանիկ դարձնել նրան՝ զոհելով իմ երջանկութիւնը ու իսկոյն և եթ յետ մղեցի ձեզ, որպէս զի գնայիք նրա մօտ: Ա՛խ, սակայն երբ դուք արդէն հեռացաք, ես հասկացայ, որ այդ զոհաբերութիւնը իմ ոյժերից վեր էր: Խեղճ Դէզիրէ: Ո՛րքան անիծել եմ նրան սրտիս խորքում: Կարող էք հաւատալ, այն ժամանակից ես խուսափում էի նրան հանդիպելուց: Զաւիազանց ծանր էր ինձ համար նրան տեսնել:

—Բայց եթէ դուք ինձ սիրում էիք, հարցրեց Ֆրանցը սաստիկ ցած ձայնով, —եթէ դուք ինձ սիրում էիք, ինչո՞ւ պսակուեցիք իմ եղբորս հետ:

Սիդօնին չը չիօթուեց:

—Ռիսլէրի հետ պսակուելով ես մօտենում էի ձեզ: Ես ասում էի ինքս ինձ. «Ես չը կարողացայ նրա կիներ լինել: Ի՛նչ արած, նրա քոյրը կը դառնամ: Գոնէ, այդպիսով ինձ թոյլ կը տրուի այսուհետեւ էլ սիրել նրան, և մենք չենք անցնիլ մեր ամբողջ կեանքը օտար մնալով միմեանցից»: Աւա՛ղ, քսան տարեկան օրիորդի միամիտ երազներ էին այդ, որոնց ունայնութիւնը շատ շուտով ապացուցեց ինձ կեանքը... Ես չը կարողացայ, Ֆրանց, սիրել ձեզ իբրև քոյր. ես չը կարողացայ նոյնպէս և մոռանալ ձեզ. ամուսնութիւնս արգելք եղաւ այդ բանին: Եթէ մի ուրիշը լինէր իմ ամուսինը, դուցէ յաջողէր ինձ այդ, բայց Ռիսլէրի կիներ էի ես և սարսափելի դրութիւն էր իմ դրութիւնը: Նա չարունակ խօսում էր ձեր մասին, ձեր յաջողութիւնների մասին, ձեր ապագայի մասին... Ֆրանցը այս էր ասում, Ֆրանցը այսպէս էր անում... Խեղճը անչափ սիրում է ձեզ: Եւ բացի այդ, որ ամենազարհուրելին էր ինձ համար, ձեր եղբայրը նման է ձեզ: Զեր քայլուածքի, զիմապծերի, մանաւանդ ձեր ձայնի մէջ մի տեսակ տոհմական ընդհանուր բան կայ, այնպէս որ նրա զգուանքների ժամանակ

ևս յաճախ փակում էի աչքերս, ասելով ինքս ինձ. «Նա է ինձ գգուողը... Ֆրանցը...» Երբ նկատեցի, որ այդ յանցաւոր միտքը տանջում է ինձ ու ոչ մի բոպէ հանգիստ չի տալիս, այն ժամանակ աշխատեցի մոռացութիւն գտնել: Համաձայնեցի ականջ կախել ժօրժին, որ վաղուց ի վեր հետամուտ էր լինում ինձ, համաձայնեցի փոխել ապրելուս ձեւը ու աղմկայոյզ կեանք վարել: Բայց երգում եմ ձեզ, Ֆրանց, զուարճութիւնների այդ յորձանքի մէջ, որ քշում էր ինձ իր թափով, դուք ոչ մի բոպէ դուրս չէք եկել մտքիցս, և եթէ կայ մէկը, որ իրաւունք ունի գալու այստեղ ու ինձնից հաշիւ պահանջելու, անշուշտ այդ դուք չէք, դուք, որ ականայ պատճառ էք եղել իմ այս դրութեան հասնելուն...

Նա լռեց....

Ֆրանցը չէր համարձակում աչքերը վեր բարձրացնել ու նրան նայել: Արդէն նա սկսել էր չափազանց դեղեցիկ, չափազանց բաղձալի գտնել այդ կնոջը:

Եւ սակայն իր եղբօր ամուսինն էր այդ:

Խօսել էլ չէր համարձակում նա: Խեղճը զգում էր, որ նախկին մոլեգին սէրը բռնակալ կերպով վերահաստատում էր իր սրտում, զգում էր, որ այսուհետեւ իր ամեն մի հայեացքը, ամեն մի խօսքը, ամեն մի արածը լինելու է միայն սիրոյ արտայայտութիւն:

Եւ սակայն իր եղբօր կինն էր այդ...

—Ա՛խ, թշուան, թշուառ մարդիկ ենք մենք, ասաց խեղճ դատաւորը, վայր ընկնելով նրա կողքին բազմոցի վրայ:

Այդ խօսքերը արդէն թուլամորթութիւն էին, դիվան սկզբնաւորութիւն, և կարծես ուզում էին ասել, թէ ճակատագիրը, այդքան անգութ լինելով, զրկել էր նրան պաշտպանուելու ոյժից:

Սիդօնին ձեռքը դրեց նրա ձեռքի վրայ ու շնչաց՝ «Ֆրանց... Ֆրանց», և նրանք մնացին այդպէս իրար կողքի, լուռ ու բոցավառ, օրօրուելով տիկին Դօբսօնի ոսմանսի հնչիւններից, որոնք թաւուտների միջով կցկտուր կերպով հասնում էին նրանց ականջին:

Ton amour c'est ma folie.

Hélas! je n'en puis guéri i i i ir!...

(Բո սէրը գգուացրել է ինձ:

Աւանդ, դարման չը կայ այդ ցաւիիիիս...)

Յանկարծ Ռիսլէրի բարձր հասակը ցցուեց դռան առաջ:

—Այստեղ եկէք, Շէք, այստեղ: Տաղաւարունն են:

Եւ իսկոյն և եթ նա ներս մտաւ իր աներոջ ու զոքանչի հետ, որոնց գնացել էր բերելու:

Սկսուեցին հարց ու բարեններ և անվերջ գրկախառնութիւններ: Պէտք էր տեսնել, թէ ինչ հովանաւորական ձևով էր պ. Շէքը հարցութիւնը անում այդ ահագին տղամարդին, որի թևի տակիցն էր ինքը իր հասակով:

—Հը, մեր տղայ, ինչպէս է առաջ գնում ձեր Սուէցի ջրանցքը. գոհ էք:

Տիկին Շէքը, որի աչքում Ֆրանցը ընդմիշտ մի փոքր մնացել էր իբր իր փեսայուն, փաթաթուած էր նրանից, մինչդեռ Ռիսէրը, որ, ըստ իր սովորութեան, անշնորհք կերպով էր արտայայտում իր ուրախութիւնն ու հրճուանքը, պատշգամբում կանգնած, ձեռքերը սաստիկ շարժելով, ասում էր, թէ մի քանի պարարտ հերթեր պէտք է մորթել տայ անառակ որդու վերադարձի պատճառով, և աղմկալի ձայնով, որի թնդոցը անշուշտ լսւում էր բոլոր շրջակայ պարտէզներում, գոռում էր երգեցողութեան վարժուհուն.

—Տիկին Դօբսօն, տիկին Դօբսօն... ներեցէք ասածիս, բայց շատ տխուր բան էք ասում... Ջհաննամը ուղարկէք այսօր ձեր արտայայտիկ մեթօղը... Մի ուրախ բան ասէք, մի պար, որ կարողանամ մի քիչ պտոյտ դալ տիկին Շէքի հետ...

—Ռիսէր, Ռիսէր, գժուել էք, ինչ է, որդիս...

—Ձէ, չի կարելի, մայրիկ... Այսօր անպատճառ պէտք է պարել... Դէ, հօպ...

Եւ նա սկսեց ծառուղիներում պարել մի վերին աստիճանի աստօմատիկական վալս, քաշ տալով իր հետ շնչակտուր զոքանչին, որ ամեն քայլափոխում կանգ էր առնում կարգի բերելու համար իր զլխարկի բացուած ժապուէնները և իր շալի, Սիդօնի հարսանիքին զգած հրաշալի շալի ժանեակները:

Խեղճ Ռիսէր, ուրախութիւնիցը կարծես հարբած լինէր:

Ֆրանցի համար մի անվերջանալի ու անմոռանալի օր էր այդ, լի սրտի թախիծով: Զօսանք կառքով, զօսանք նաւակով, թէյ Ռափաէօրի կղզու կանաչներում,—մի խօսքով նրան վայելել տուեցին Անիէրի բոլոր հմայքները, և այդ ամբողջ ժամանակը, թէ արեառ ճանապարհին, թէ ցոլցուին ալիքների վրայ, նա պէտք է ծիծաղէր, գրուցէր, պատմէր իր ճանապարհորդութիւնը, խօսէր Սուէցի պարանոցի մասին, ձեռնարկուած աշխատանքների մասին ու լսէր իր զաւակների դէմ միշտ զայրացած պ. Շէքի գաղտնի գանգատները և իր եղբոր մանրամասն բացատրութիւնները իր հնարած սպագրիչի մասին: «Պատուող, սիրելի Ֆրանց, պատուող ու տառներ-

կու անկիւնանի»։ Սիդօնին թողնում էր, որ այդ պարոնները խօսակցեն, իսկ ինքը խորասուզուած էր թւում խոր մտածմունքների մէջ։ Ժամանակ առժամանակ նա մի խօսք, մի տխրագին ժպիտ էր ուղղում տիկին Դօքսօնին, իսկ Ֆրանցը, չը համարձակելով նայել նրան, աչքով հետևում էր նրա կապուտաստառ հովանոցի շարժումներին և սպիտակ չըջազգեստի փողփողումներին։

Ո՛րքան փոխուել էր Սիդօնին երկու տարուայ ընթացքում։ Ո՛րքան գեղեցկացել էր նա...

Մէկ էլ յանկարծ սարսափելի բաներ էին անցնում նրա մտքով։ Այդ օրը ձիարշաւ կար Լօնչանում։ Նրանց կառքի կողքով, համարեա քսուելով նրան, անցնում էին բազմաթիւ կառքեր, որ վարում էին նեղ քօղքերի մէջ սղմուած ու ներկած երեսներով կանայք։ Տիկնիկի դիրքով անշարժ նստած իրանց տեղերում և մտրակները չիփ-չիտակ բռնած ձեռներին, նրանք կենդանութեան նշոյլ էին կրում միմիայն իրանց սև դրած և ձիերի գլուխներին ուղղուած աչքերում։ Նրանց անցած ժամանակը, ամենքը շուռ էին դալիս նրանց կողմը։ Բոլոր հայեացքները հետևում էին նրանց, կարծես տարուկով նրանց արագ ընթացքի քամուց։

Սիդօնին նմանում էր այդ արարածներին։ Նա էլ կարող էր վարել այդպէս ժօրժի կառքը. չէ՞ որ Ֆրանցը ժօրժի կառքումն էր։ Նրա խմածն էլ ժօրժի գինին էր։ Նրանց ընտանիքի վայելած ամբողջ ճոխութեան աղբիւրը ժօրժն էր։

Ամօթալի, վրդովեցուցիչ բան։ Նա ուզում էր ազազակել այդ իր եղբօրը։ Նոյն իսկ նա պարտական էր այդ անել, քանի որ յատկապէս դրա համար էր եկել։ Բայց այլ ևս նա այդքան քաջութիւն չէր զգում իր մէջ։

Խեղճ դատաւոր...

Երեկոյեան, երբ ճաշելուց յետոյ նստել էին դահլիճում, որի բաց պատուհաններով զովութիւն էր դալիս գետից, Ռիսլէրը ինդրեց Սիդօնին երգել։ Նա ուզում էր, որ իր կինը ցոյց տար Ֆրանցին իր բոլոր նոր շնորհները։

Դաշնամուրին յենուած, Սիդօնին չեմ ու չում էր անում տիուր դէմքով, մինչդեռ տիկին Դօքսօնը ճնգճնգացնում էր դաշնամուրը, թափահարելով իր երկար ճալվերը։

— Բայց ես ոչինչ չը դիտեմ։ Ի՞նչ կարող եմ երգել։

Սակայն վերջ ի վերջոյ նա տեղի տուեց։ Մոմերի դողդոջուն ցոլքում, որոնք կարծես անուշահոտութիւններ էին ծխում, որովհետև օդը լիքն էր պարտէզի եղրեանիների ու սմբուլների բուրմունքով, նա, գունատ, հիասթափ ու այս աշխարհից վե-

բացած, երգել սկսեց մի կրէօլական երգ, որ շատ տարածուած էր Լուիզիանում *) և որ տիկին Դօրսօնը ինքն էր փոխադրել երգեցողութեան և դաշնամուրի համար:

Pauv'pitiit mam'zelle Zizi,

C'est l'amou, l'amou qui tourne la tête à li.

(Խեղճ փոքրիկ օրիորդ Զիզի,

Սէրն է, սէրն է նրան գժուացնողը):

Եւ այդպէս երգելով սիրահարութիւնից գժուած թշուառ փոքրիկ Զիզիի պատմութիւնը, Սիդօնին այնպիսի կերպարանք ունէր, կարծես ինքն էլ հիւանդ լինէր սիրահարութիւնից: Ի՞նչ աղետուր արտայայտութեամբ, ի՞նչ վիրաւոր աղանու ձայնով էր կրկնում նա այդ յանկերգը, որ այնքան մեղամաղձիկ է և քաղցրալուր՝ մանկական թոթափանք յիշեցնող գաղութային բարբառով:

C'est l'amou, l'amou qui tourne la tête à li.

Խեղճ դատաւորն էլ կարող էր այդպէս գժուել:

Բայց ոչ: Սիդօնին շատ անյաջող էր ընտրել իր ուսմանսը: Օրիորդ Զիզիի անուէնը լսելուն պէս Ֆրանսը մտքով տեղափոխուեց յանկարծ Մառէ Թաղի տխուր սենեակներից մէկը, հեռու, շատ հեռու Սիդօնիի դահլիճից, և նրա սրտի գորովը զարթեցրեց նրա երևակայութեան մէջ խեղճ Դէզիրէ Դըլօրէլի պատկերը, որ սիրում էր նրան այնքան յամանակից ի վեր: Մինչև տասն հինգ տարեկանը նրան ուրիշ կերպ չէին անուանում, քան Զիրէ կամ Զիզի, և հէնց նա էր այդ կրէօլական երգի փոքրիկ խեղճ Զիզին, միշտ լքուած և միշտ հաւատարիմ սիրահարը: Էլ այժմ Սիդօնին թող երգի ինչքան ուզում է. Ֆրանսը այլ ևս չի լսում նրան, չի տեսնում նրան: Նա հեռու է այժմ, այնտեղ, այն մեծ բազկաթոռի մօտ, այն ցածիկ աթոռի վրայ, ուր նա այնքան անգամ գիշերները սպասում էր Դէզիրէի հօրը: Այո, այնտեղ էր նրա փրկութիւնը, միմիայն այնտեղ: Պէտք էր ապաստանուել այդ մանկական սրտի սիրոյ մէջ, պէտք էր անձնատուր լինել նրան ու ասել. «Առ ինձ... փրկիր ինձ»... Եւ ո՞վ դիտէ: Շատ շատ էր սիրում նրան Դէզիրէն: Գուցէ նա կարողանար նրան փրկել, բժշկել այդ յանցաւոր կրքից:

—Ո՞ւր... հարցրեց Ռիսլէրը, տեսնելով, որ եղբայրը շտապով վեր կացաւ, հէնց որ պրծաւ վերջին բիտուրնէլը:

*) Հիւսիսային Մեքսիկայի Միացեալ-Նահանգներից մէկը: Մեքսիկայի աչդ մասում գաղութներ հաստատեցին Ֆրանսիացիք XVII դարում և, ի պատիւ Լուի XIV Թագաւորի, անուանեցին Լուիզիան: Գրէօլ կոչւում են գաղութներում ծնուած եւրոպացիները:

—Գնում եմ... Ուշ է:

—Ի՞նչպէս թէ գնում ես. այստեղ չես քնելու միթէ: Սենեակդ պատրաստ է:

—Բոլորովին պատրաստ,—աւելացրեց Սիդօնին մի առանձին տեսակ հայեացքով:

Փրանցը սաստիկ հակառակեց: Նրա ներկայութիւնը անհրաժեշտ էր Պարիզում, որովհետեւ Ընկերութիւնը շատ կարեւոր յանձնարարութիւններ էր տուել նրան: Դեռ փորձում էին նրան համոզել չը թողնել, որ գնայ, երբ նա արդէն նախասենեակումն էր, անցնում էր լիալուսնի շողերով ողողւած պարտէզով և աղմկայոյզ Անիէրով վազէվազ դիմում դէպի երկաթուղու կայարանը:

Երբ նա հեռացաւ ու Ռիսէրը գնաց իր սենեակը, Սիդօնին ու տիկին Դօբսօնը մի քիչ մնացին կանգնած դահլիճի պատուհանների մօտ: Հարեան կազինօյի երաժշտութիւնը հասնում էր նրանց ականջին մակոյկավարների «օհէ»-ների և պարերի աղմուկի հետ, նման թմբուկի չափածոյ ու խլաճայն շարժումներին:

—Այ քեզ քէֆ խանգարող... ասում էր տիկին Դօբսօնը:

—Օ՛հ, ես նրա եղջիւրը կտրեցի. բայց պէտք է զգոյշ լինեմ... Այժմ թունդ հակողութեան տակ կը լինեմ: Սաստիկ նախանձոտն է... Դրելու եմ կազարօնին, որ մի փոքր ժամանակ չը դայ այստեղ. իսկ դու վաղը առաւօտ ասա Ժօրժին, թող գնայ մի երկու շաբաթ անց կ'ացնի Սալինիում:

III

Եւեղն փոքրիկ օրիորդ Զիզի

Օ՛հ, ճրքան երջանիկ էր Դէզիրէն:

Փրանցը, ինչպէս այն հին երանելի ժամանակներում, ամեն երեկոյ դալիս էր նստում նրա ոտների մօտ ցածիկ աթոռի վրայ, բայց այժմ այլ ևս չէր խօսում Սիդօնի մասին:

Առաւօտեան, հէնց որ նա նստում էր աշխատելու, դուռը կամայ բացւում էր. «Բարի լոյս, օրիորդ Զիզի»: Փրանցը այժմ միշտ այդպէս նրա փոքրացուցիչ անունով էր կանչում նրան և պէտք է տեսնէիք, թէ ինչպէս քաղցր էր ասում նա. «Բարի լոյս, օրիորդ Զիզի»:

Երեկոյեան նրանք միասին սպասում էին «հայրիկին» և մինչ Դէզիրէն աշխատում էր, Փրանցը դող էր ազդում նրան իր ճանապարհորդական պատմութիւններով:

—Ի՞նչ է պատահել քեզ, աղջիկ: Բոլորովին փոխուել ես,

ասում էր նրան տիկին Դըլօբէլը, որ զարմանում էր, տեսնելով նրան այդպէս ուրախ և մանաւանդ այդպէս աշխոյժ:

Եւ յիրաւի, փոխանակ առաջուան պէս շարունակ թաղուած մնալու իր բազկաթոռում ջահէլ տատկիկ ինքնուրացութեամբ, փոքրիկ կաղիկը ամեն բոլոր վեր էր կենում տեղից, մօտենում էր պատուհանին այնպիսի թափով, կարծես թեւեր բուսած լինէին մէջքին, վարժուած էր շիտակ, շիփ-շիտակ կանգնել, կամ մայ ձայնով հարցնելով մօրիցը.

—Ման որ չեմ գալիս, հօ չի երևում:

Նրա կօքէտութիւնը, որ մինչև այդ ժամանակ կենտրոնացնում էր միմիայն մագերի յարգարման մէջ, տարածւում էր այժմ նրա ամբողջ անձի վրայ, ինչպէս նրա գանգուր և նուրբ երկար մագերը՝ արձակուած ժամանակ: Օ՛, սաստիկ, սաստիկ կօքէտ էր դարձել նա այժմ, և ամենքը շատ լաւ նկատում էին այդ: Նոյն իսկ մօղային թռչնիկներն ու ճանճերը մի առանձին տեպք էին ստացել այժմ:

Օ՛, անշուշտ երջանիկ էր այժմ Դէզիրէ Դըլօբէլը: Մի քանի օրից ի վեր պ. Ֆրանցը խօսում էր բոլորով միասին քաղաքից դուրս դրօսանք կատարելու մասին, և որովհետև հայրիկը, որ միշտ այնքան բարի էր ու մեծահոգի, համաձայն էր, որ մայր ու աղջիկ մի օր արձակուրդ վայելեն, նրանք չորսով դրօսանքի գնացին մի կիրակի առաւօտ:

Չէք կարող երևակայել, թէ ինչ հրաշալի եղանակ էր ասում այդ օրը: Երբ առաւօտը վաղ, ժամի վեցին, Դէզիրէն, պատուհանը բանալով, վաղորդեան մշուշի միջով տեսաւ արդէն տաքայած ու լուսաշող արեգակը ու մտածեց ծառերի, դաշտերի ու ճանապարհների և առհասարակ ամբողջ հրաշալի բնութեան մասին, որ նա չէր տեսել այնքան ժամանակից ի վեր և որ այժմ տեսնելու էր Ֆրանցի հետ թեանցուկ արած, աչքերը լցուեցին արտասուքով: Եւ այդպէս երկար ժամանակ կանգնած նա զմայլում էր, լսելով զանգակների ձայնը ու փողոցների սալայատակից բարձրացող աղմուկը և դիտելով կիրակնօրեայ կենդանութիւնը, աղքատների այդ տօնը, որ վայելցնում է նոյն իսկ ամխալմաճառ երեխաների այտերը, և առհասարակ այդ բայառիկ առաւօտուայ ամբողջ արշալոյսը:

Նախընթաց երեկոյեան Ֆրանցը ընծայել էր նրան մի հովանոց, մի փոքրիկ հովանոց փղոսկրէ կոթով. դրանով Դէզիրէն լրացրեց իր վերին աստիճանի խնամքով յարգարուած, բայց և վերին աստիճանի պարզ արդուդարդը, ինչպէս վայել էր մի խեղճ կաղիկի, որ ուզում է չը նկատուել ման գալիս: Բայց այս անգամ խեղճ կաղիկը ուղղակի պանչելի էր:

Ուղիղ ինը ժամին Ֆրանսյը եկաւ ամբողջ օրով վարձուած կառքով ու բարձրացաւ վերև իր հիւրերին կանչելու։ Օրիորդ Զիզին, ճաղաչարին յենուելով, մէն-մենակ իջաւ ներքև, առանց ամենեկին տատանուելու։ Մայրը իջնում էր նրա յետևից, աչքը վրան պահելով, իսկ հռչակաւոր գերասանը, վերարկուն թևին դրած, առաջ վազեց երիտասարդ Ռիսլէրի հետ՝ կառքի դռնակը բանալու։

Օ՛խ, հրաշալի դրօսանք, սքանչելի վայրեր, սքանչելի գետ, սքանչելի ծառեր...

Դէզիրէից մի հարցնէք, թէ ուր էին գնացել. նա երբեք չիմացաւ այդ։ Նա կ'ասի ձեզ միայն այն, որ արևը աւելի փայլուն էր այնտեղ, քան որ և է ուրիշ տեղում, թռչունները աւելի զուարթ, անտառները աւելի ստուերաչափ, և սուտ չի ասի։

Երեխայ ժամանակը նա մի քանի անգամ այդպէս երկար դրօսանքներ էր կատարել քաղաքից դուրս, բաց օդում։ Բայց յետոյ յարատև աշխատանքը, չքաւորութիւնը և հաշմանդամներին այնքան ախորժելի նստական կեանքը նրան, այսպէս ասած, մոխիւ էին Պարիզի այն հինաւուրց թաղում, ուր նա ապրում էր և ուր սովորել էր բաւականա՛նալ այն մշտանման հորիզոնով, որ կազմում էին բարձր տանիքները, երկաթէ վանդակներով պատուհանները և գործարանների ծխնելոյզները, որոնց նոր կարմիր աղիւսները խիստ գծազրուում էին պատմական ապարանքների սև պատերի երեսին։ Վաղուց ի վեր նա չէր տեսնում ուրիշ ծաղիկներ, բացի իր պատուհանի պատառուկներից, և ուրիշ ծառեր, բացի Ֆրոմօնների գործարանի ակացիաներից, որոնք հեռուից ընդնշմարուում էին ծխի մէջ։

Ուստի հեշտ է երեակայել, թէ ինչ հրճուանքով լցուեց նրա սիրտը, երբ նրանք բոլորովին դուրս եկան քաղաքից։ Սրտի բերկրութեամբ և աշխոյժ ստացած երիտասարդութեամբ թեաւորուած, նա հիանում էր ամեն բանի վրայ և ծափ էր տալիս ու ծըւծըւում թռչունների նման, և նրա միամիտ հետաքրքրութեան բուռն մղումները սքողում էին նրա քայլուածքի անհաստատութիւնը։ Կարելի էր հաստատ ասել, որ կաղուծիւնը շատ էլ աչքի չէր ընկնում։ Բացի այդ, Ֆրանսյը կողքին պատրաստ էր նրան նեցուկ լինելու ու ձեռքը բռնելու փոսերը անցնելիս, և միշտ այնպէս կամակատար, այնպիսի քաղցր հայեացքով։ Այդ հրաշալի օրը ամբողջապէս անցաւ ինչպէս մի երազ։ Ծիւղքերի միջով շողիանման նշմարուող կապուտակ երկինքը, ծառերի տակի պատսպարուած ու խորհրդաւոր հորիզոնները, ուր ծաղիկները աւելի ուղիղ ու բարձր են բուսնում և ոսկեգոյն մա-

մուռները արևի շողքեր են թւում կաղնիների բուռի վրայ, բացատների անսպասելի լոյսը, ամեն ինչ, նոյն իսկ ի բաց չառած քացօթեայ երկարատև զբօսանքի յոգնածութիւնը, հրճուեցնում և զմայլեցնում էր Դէզիրէին:

Իրիկնագէմին, երբ անտառի ծայրից մթնշաղի միջով տեսաւ դաշտում դէպի աջ ու ձախ ձգուող սպիտակ ճանապարհները, արծաթէ ժապաւէնի նման գետը և հեռւում, երկու բլուրների արանքին, գորշ տանիքների, սլաքների ու գմբէթների մի մշուշապատ զանգուած, որ, ինչպէս ասում էին, Պարիզն էր, նա մի հայեացքով դրոշմեց իր յիշողութեան անկիւններից մէկում այդ ամբողջ ծաղկափթիթ տեսարանը, այդ բնութիւնը, որ համակուած էր սիրոյ և յուսիսեան սրափշի բուրմունքով, կարծես թէ այլ ևս երբէք, երբէք նա տեսնելու չէր այդ բնութիւնը:

Այդ հիանալի զբօսանքից բերած փունջը ամբողջ մի շաբաթ բուրմունք էր տարածում սիրուն կաղիկի սենեակում: Սմբուլի, մանիշակի և սրափշի հետ խառն այդտեղ կային հազար ու մի փղբրիկ անանուն ծաղիկներ, նուաստների բաժինը կազմող ծաղիկներ, որոնց սերմերը քամին բերում է ամեն տեղ ու քիչ-քիչ ցանում ճանապարհների ափերին:

Քանի-քանի անգամ այդ շաբաթուայ ընթացքում Դէզիրէն երևակայութեամբ կրկնեց այդ զբօսանքը, դիտելով այդ քնքոյշ ծաղկապսակների բաց կապոյտ ու ալ կարմիր գոյները և հազար ու մի նուրբ երանգները, որ ծաղիկները հնարել են գունագէտ նկարիչներից շատ ատաջ: Մանիշակները յիշեցնում էին նրան իրանց քաղելու տեղը, այն մամուլապատ փղբրիկ թումբը, ուր նա ու Ֆրանսը, մատներն իրար խառնելով, տերևների տակ փնտրում էին այդ ծաղիկներից: Այդ մեծ ջրածաղիկները նա քաղել էր մի փոսի ափին՝ որ դեռ բոլորովին թաց էր ձմեռուայ անձրևներից, և նրանց համեմուտ համար նա պինդ յենուել էր Ֆրանսի թեխն: Այդ բոլորը նա յիշում էր աշխատելու ժամանակ, մինչդեռ բաց պատուհանովը ներթափանցող արևը շողշողեցնում էր կօլիբրինների փետուրները: Գարունը, երիտասարդութիւնը, երգերն ու բուրմունքները կերպարանափոխել էին հինգերորդ յարկում գտնուող այդ տխուր արհեստանոցը, և Դէզիրէն, հոտ քաշելով իր մտերմի փունջից, լուրջ կերպով ասում էր մօրը.

—Նկատել ես, մայրիկ, ի՜նչ լաւ հոտ ունեն այս տարի ծաղիկները...

Ֆրանսն էլ սկսում էր ենթարկուել սիրոյ հմայքին: Փոքր առ փոքր օրիորդ Զիզին տիրապետում էր նրա սրտին և դուրս

էր վանում այնտեղից Սիդոնիի յիշատակն անդամ: Ճիշտ է, որ խեղճ դատաւորը ամեն ճիգ գործ էր դնում դրա համար: Սրուայ բոլոր ժամերին նա Դէպիրէի կողքին էր լինում և փարում էր նրան, ինչպէս մի երեխայ: Դեռ ոչ մի անգամ սիրտ չէր արել գնալ Անիէր: Շատ էր վախենում Սիդոնիից:

— Ինչո՞ւ ամենեկին մեր կողմերը չես գալիս... Սիդոնին քեզ հարցնում է, — ասում էր երբեմն-երբեմն Ռիսէրը, երբ եղբայրը մանում էր նրան տեսնելու գործարանում:

Բայց Ֆրանսը վճռին հաստատ էր մնում և միշտ մի որեւէ գործ պատրուակ էր բերում, շարունակ իր այցելութիւնը միւս օրուայ յետաձգելու համար: Այդ դժուար չէր Ռիսէրի հետ, որ աւելի քան երբեք չէր զբաղուած էր իր սպազմիչով, որ արդէն սկսել էին չինել:

Ամեն անգամ, որ Ֆրանսը ներքև էր դալիս եղբօր մօտից, ծերունի Սիդիզմունդը ճանապարհը պահում էր և միասին մի քանի քայլ գնում էր նրա հետ, փայլկտաւէ ահագին թնոյնները հագին և գրչակոթն ու գրչահատը ձեռքին: Նա միշտ տեղեակ էր պահում Ֆրանսիցի գործարանի գործերից: Մի ժամանակից ի վեր գործերը կարծես դէպի լաւն էին գնում: Պ. Ժօրժը կանոնաւոր կերպով դալիս էր իր գրասենեակը և ամեն երեկոյ վերադառնում էր Սավինի քնելու: Այլ ևս նրա անունից հաշիւներ չէին բերում գանձարանը: Տիկինն էլ, հէնց իմանաւ, իրան հանգիստ էր պահում Անիէրում:

Գանձապահը յնձում էր:

— Տեսնո՞ւմ ես, որդիս, որքան լաւ արեցի, որ քեզ զրկեցի... Հէնց միայն դալի բաւական եղաւ ամեն ինչ կարգի կանոնի տակ զցելու համար... Մակայն, այնուամենայնիւ, աւելցնում էր նա ըստ իր սովորութեան, այնուամենայնիւ... վստահութիւն չունեմ (ch'ai bas confiance)...

— Մի վախեցէք, պարոն Սիդիզմունդ, ես այստեղ եմ, ասում էր դատաւորը:

— Հօ չուտով չես գնալու, չէ՞, սիրելի Ֆրանս:

— Չէ, չէ... Դեռ մի մեծ գործ կայ, որ գնալուց առաջ պէտք է վերջացնեմ:

— Որ այդպէս է, աւելի լաւ:

Ֆրանսի մեծ գործը՝ Դէպիրէ Դըլօբէլի հետ պսակուելն էր: Նա ոչ ոքի, նոյն իսկ իրան՝ Դէպիրէին դեռ ոչ մի խօսք չէր ասել այդ բանի մասին, բայց օրիորդ Զիդին անշուշտ մի քիչ զլլել էր ընկնում, որովհետեւ օրէցօր ղուարթմանում ու սիրունանում էր կարծես նախատեսնում էր, որ չուտով դալու է

այնպիսի մի բույժ, երբ ինքը կարիք է ունենալու իր ամբողջ ուրախութեանը և ամբողջ գեղեցկութեանը:

Մի կիրակի, կէսօրից յետոյ, նա ու Պրանցը մենակ էին մնացել արհեստանոցում: Տիկին Դըլօբէլը մի քիչ առաջ տանից դուրս էր եկել, սաստիկ հպարտանալով, որ կարող էր մի անգամ զբոսնում երևալ իր մեծ մարդու հետ թեանցուկ, և թողնելով իրանց բարեկամ Պրանցին՝ իր աղջկանը ընկերութիւն անելու: Պրանցը այդ օրը շատ լաւ էր հագնուած, ոտից մինչև զուլս տօնական տեսք ունէր և դէմքի տարօրինակ արտայայտութիւն, միանգամայն ամաչկոտ և՛ վճռական, խանդաղատ և՛ հանդիսաւոր, ու միմիայն այն ձևը, որով փոքրիկ ցածիկ աթոռը եկաւ տեղաւորուեց մեծ բաղկաթոսի կողքին, բաւական էր, որ մեծ բաղկաթոռը հասկանար, որ ինչ-որ շատ կարևոր գաղտնիք են հաղորդելու իրան, գաղտնիք, որի ինչ լինելը մի քիչ դուշալիւմ էր նա: Խօսակցութիւնը սկսուեց անտարբեր խօսքերով, որոնք ամեն բույժ ընդհատուում էին երկար ու ձիւ լռութիւններով, այնպէս, ինչպէս ճանապարհին ամեն մի կայարանում կանգ են առնում, որպէս զի ոյժ հաւաքեն ճանապարհորդութեան վերջի համար:

— Լաւ եղանակ է անում այսօր:

— Հա, հիանալի եղանակ է:

— Մեր փունջը մինչև այժմ էլ հրաշալի հոտ ունի:

— Հա, շատ հրաշալի...

Եւ նոյն իսկ այդպիսի հասարակ խօսքեր արտասանելիս նրանց ձայները յուզուած էին այն բանից, ինչ որ ասուելու էր իսկոյն:

Վերջապէս, փոքրիկ ցածիկ աթոռը մի քիչ էլ մօտեցաւ մեծ բաղկաթոսին, և աչք աչքի մէջ ու թևերով իրար փաթաթուած՝ այդ երկու մանկանման էակները շփնշային միմեանց անունները:

— Դէզիրէ:

— Պրանց:

Այդ բույժին մէկը դուռը ծեծեց:

Հարուածը շատ թեթեւ էր ու զգոյշ, երևում էր, որ դուռը խփողը մի նրբաձեռնոց ձեռք է, որ վախենում է կեղտոտուել ամենաթեթեւ հպումից:

— Մտէք... ասաց Դէզիրէն փոքր ինչ սրտնեղութեամբ, և իսկոյն ներս մտաւ Սիդօնին՝ սիրուն, կօքէտ ու բարի: Նա եկել էր տեսնելու իր սիրունիկ Զիզիին, մի բույժով մտել էր նրան համբուրելու համար: Ո՛րքան ժամանակ է, որ ուզում էր դալ, բայց չէր յաջողւում:

Հստ երևոյթին, Ֆրանցի ներկայութիւնը նրան սաստիկ զարմացրեց, և բոլորովին անձնատուր եղած իր բարեկամուհու հետ խօսելու հրճուանքին, նա հազիւ թէ մի հայեացք գցեց իր տեգրի վրայ: Հազար ու մի քաղցր խօսքերից, զգուանքներից ու անցեալի յիշողութիւններից յետոյ նա ցանկութիւն յայտնեց տեսնելու սրահի պատուհանը և միսլէրների բնակարանը: Նրան հետաքրքրում էր կենդանացնել այդպէս յիշողութեան մէջ իր ամբողջ ջանքերունը:

— Յիշում էք, Ֆրանց, թէ ինչպէս Կօլիբրի իշխանուհին մտնում էր ձեր սենեակը, գլուխը շիփ-շիտակ բռնած՝ փետուրներից շինած թագի տակ:

Ֆրանցը պատասխան չը տուեց, որովհետև չափազանց յուզուած էր: Նրա սիրտը վկայում էր, որ իր համար, միմիայն իր համար էր եկել այդ կինը, որ նա ուզել էր տեսնել իրան, թոյլ չը տալ, որ ինքը ուրիշին պատկանի, և խեղճը սարսափով նկատում էր, որ նա կարող է այդ անել առանց մեծ ճիգի: Նրա ներս մտնելուն պէս, իր սիրտը արդէն նորից նրանն էր:

Դէզիրէն ոչինչ կասկած չէր տանում: Այնքան անկեղծ ու մտերմական կերպարանք ունէր Սիդօնին: Եւ բացի այդ, չէ որ նա ու Ֆրանցը քոյր ու եղբայր էին այժմ: Ի՞նչ սիրահարութիւն կարող էր լինել այժմ նրանց մէջ:

Եւ սակայն խեղճ կազիկը անորոշ կերպով նախազգաց իր գլխին գալիք դժբախտութիւնը, երբ Սիդօնին, չէմբքին հասնելով ու ոտը գրեթէ դուրս դրած, անհոգաբար շուռ եկաւ ու ասաց իր տեգրին.

— Ի դէպ, Ֆրանց, միսլէրը խնդրեց, որ այսօր քեզ տանեմ մեր մօտ ճաշի... Կառքը ներքեում սպասում է... Գործարան գնալիս նրան էլ հետևերս կ'ստնենք:

Ու յետոյ աւելացրեց ամենաաքանչելի ժպիտով.

— Կը թողնեա որ գայ, չէ, Զիրէ: Հանգիստ եղիր, էլի յետ կը տանք քեզ:

Եւ Ֆրանցը այնքան ապերախտ գտնուեց, որ թողեց ու գնաց:

Նա գնաց առանց տատանուելու, առանց գէթ մի անգամ յետ նայելու, տարուելով իր կրքից, ինչպէս մի ալէկոծ ծովի յորձանքից, և ոչ այդ օրը, ոչ էլ հետեակ օրերը և առհասարակ երբէք այնուհետև օրիորդ Զիրէի մեծ բազկաթոռը չը կարողացաւ իմանալ, թէ ինչ էր այն հետաքրքրական բանը, որ փաքրաթոռը ուղում էր իրան ասել:

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,

(Կը օտուցակուի)

Խ Ր Ի Մ Ի Հ Ն Չ Ե Ա Կ Ն Ե Ր

(Աղամ Մեցկեւիցից)

Բ Ա Ղ Չ Ե Ս Ա Ր Ա Յ Ը

Մեծ է խաների ապարանքը դեռ, բայց թափո՛ւր,
srsn՝ւմ.

Գաւիթ ու սրահներ խոյիս փառաների նակասն է սրբել
Սիրոյ ապաստան, փառքի գահ, թախսեր օձն է փա-
թաթում

Եւ նրանց վրայից մորեխն է ուսնում ազաս, անարգել:

Ճամուկ, գոյնըգոյն լուսամուսներից բաղեղն ան-
խափան

Հի՛ն, խո՛ւլ պատերի, կամարների վրայ սողալով արագ,
Մարդկային ջանքի արդիւնքն է ծածկում յանուն
բընութեան

Եւ Բաղդասարի անարկու խօսքով գրքում՝ «աւերակ»:

Դահլիճի մէջսեղ շրքեղ մարմարից կեռնուած է աման.
Այդ կանանոցի շատրուանն է. նա այժմ էլ է կանգուն
Եւ այս խուլ վայրում, արցունք թափելով մարգար-
սանքման,

Ասում է զխումբ. ո՛ւր էի դուք, ո՛ւ սէր, փառք ու
մեծութիւն.

Դուք կ'ապրիք յաւէս. հեղեղն է վազում խոյիս ու
մոլեգնած,

Ո՛ր, ի՛նչ նախասինք. դուք անցաք վաղուց, հեղեղը
մընաց:

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ

Օ Դ Ի Փ Ո Շ Ի Ն

Մթնոլորտային օդի մէջ, բացի զանազան գազային բաղադրութիւններից, գտնւում են և անթիւ մանր-մուներ մարմիններ, որոնք իրանց անչափ փոքրութեան և թեթեւութեան շնորհիւ միշտ լողում են օդի մէջ:

Մեր նպատակն է մի թեթեւ ծանօթութիւն տալ ընթերցողներին օդի այդ մարմինների ընթացքի մասին, որոնք սովորաբար թող կամ փոշի անուշով են յայտնի: Այդ փոշու մէջ կան անկենդան ու բոլորովին անվտանգ մարմիններ, որոնց մասին մեր ասելքը կարճ կը լինի. և, ընդհակառակը, կան կենդանի մարմիններ, որոնք Պատէօրի ուսումնասիրութիւններից յետոյ ստացել են շատ մեծ նշանակութիւն առողջապահական տեսակէտից:

Այժմ լիովին ապացուցուած է, որ բոյսերի, անասունների և մարդկանց մէջ տարածուած հիւանդութիւնների մեծագոյն մասը առաջ է գալիս զանազան սունկներից, որոնք գտնւում են օդի մէջ և սրա միջոցով էլ տեղափոխւում են երբեմն շատ հեռւոր տեղեր:

Օդի փոշին կամ թողը՝ օդի մէջ լողացող փոքրիկ մասնիկներ են: Այդ մասնիկները որքան փոքր են, այնքան աւելի կամայ են ընկնում գետինը: Ամենամանր մասնիկները երկար ժամանակ մնում են օդի մէջ և չեն նկատւում սովորական պայմաններում: Երբ մութ սենեակում մի ծակից արևի ճառագայթները ընկնում են ներս, այդ լուսաւորուած սիւնի մէջ երևում են օդում լողացող բազմաթիւ մանր-մուներ մասնիկները:

Թողի քանակութիւնը օդի մէջ կախուած է, առաջինը օդի շարժումից (քամիներից), որ վերցնում է գետնից մեծ ու փոքր մասնիկներ և տանում երբեմն շատ հեռւոր տեղեր, երկրորդը՝ հողի մակերևոյթի դրութիւնից:

Ուրիշ հաւասար պայմաններում շատ թող է լինում այնտեղ, ուր կլիման չորային է, բուսականութիւնը՝ բացակայ է,

կամ շատ քիչ է, և հողի վերևի շերտը կազմուած է կաւային զանազան մանր մասնիկներէից: Այդ դրութեան մէջ է օրինակ Բագուն: Օդի չորութեան պատճառով այդ մասնիկները ջրով կապուած չեն իրար և քամին հեշտութեամբ նրանց քշում տանում է ուրիշ տեղեր: Երբ հողը թայ է, ջուրը պահում է հողի մանր մասնիկները և ուրեմն թող էլ չի կարողանում գոյանալ: Բոյսերի շատութիւնը նոյնպէս նպաստաւոր չէ թող գոյանալուն. առաջինը որ նրանք ստուերով պահպանում են հողի խոնաւութիւնը, երկրորդ պաշտպանում են նրան քամուց:

Մթնոլորտային թողը ուսումնասիրելու համար գոյութիւն ունեն զանազան գործիքներ, որոնք աւերակալ անունն են կրում: Նրանք հիմնուած են այն սկզբունքի վրայ, որ օդը անցնելով գործիքի միջով, նրա մասնիկները բռնւում են գործիքի մէջ մի որևէ բանով: Թողի քանակութիւնը որոշելու համար օրինակ գործ է ածուած ի միջի այլոց հետեւեալ ձևը: Օդի մի որոշ ծաւալ անց են կացնում ապակեայ խողովակի մէջ դրած և նախապէս 100⁰ C. տաքութեան մէջ չորացրած բամբակի միջով, բամբակի քաշի տարբերութիւնը փորձից առաջ և յետոյ ցոյց է տալիս թողի քանակութիւնը: Մանրադիտակով քննելու համար օդը անց են կացնում քաշած ջրի (distillé) միջով. այդ ձևով ջրի մէջ պահւում է թողը, այնուհետև քննելով մի կաթիլ ջուրը մանրադիտակով, մենք կը տեսնենք նրա մէջ պարունակուող թողի մասնիկները:

Փողոցի փոշին բաղկացած է գլխաւորապէս այն նիւթից, որոնցով ծածկուած են փողոցները և բաղերը, — աւաղ և կիր, — բացի այդ պատահում են ձիու կղկղանքի մասնիկներ, ածուխի կտորներ, երկաթի մասնիկներ, զանազան դործուածքների լեւեր, զանազան անասունների մազերի կտորներ, օսլայի և ծաղիկների սերմեր և այլն: Ամեն տեղ օդի մէջ գտնւում են և աղի մասնիկներ, որոնք երևի ծովային ջրերի գոլորշիների հետ տարածւում են օդի մէջ:

Մթնոլորտային թողի մանրադիտական բաղադրութիւնը թոյլ է տալիս համարեա միշտ որոշել: Արդեօք փոշին գիւղի է, թէ քաղաքի, սենեակի է, թէ փողոցի — դա կարելի է որոշել այն մասնիկներից, որոնք գտնւում են նրա մէջ: Բնակարանների օդը, պարունակելով իր մէջ մեծ քանակութեամբ դործուածքների թելեր, որոնք պոկւում են շորերից, վարագոյրներից և այլն, հեշտութեամբ զանազանւում է գիւղական օդից, որ ալիստ է զրանցից: Քաղաքի փողոցների օդի մէջ թէև նոյնպէս մասամբ գտնւում են գործուածքների թելեր, բայց նրա մէջ էլ գերակշռում են քարի և հողի մասնիկները, որոնցով

ծածկուած են փողոցները: Գիւղական օդի մէջ աչքի են ընկնում զանազան բուսական և կենդանական մասնիկներ, որոնք պոկւում են բոյսերի և անասունների վրայից. տերևի կամ փայտի կտորներ, ծաղկի սերմեր, անասունների մաշերի և վերնամաշկի կտորներ, և այլն:

Բացի անգործ (inerte) մարմիններից միջնորդաբար օդի մէջ գտնւում են և գործարանաւոր մարմիններ (organisé). ծաղիկների փոշի ու սերմեր, սունկերի սերմեր:

Ծաղկափոշին որոշ տեսակ բոյսերի արական գործարանների արտադրութիւններն են և ծառայում են բոյսերի իգական սերմերի բեղմնաւորութեան համար: Դրանք շատ տարածուած են լինում գարնանը և ամառը, երբ նրանց թիւը մի խորանարդ մետր օդի մէջ հասնում է երբեմն 10,000: Աշնանը և մանաւանդ ձմեռը նրանց թիւը շատ պակասում է: Փակուած օդը պարունակում է աւելի քիչ ծաղկափոշի, քան ազատ օդը:

Շատ բոյսերի սերմեր այնքան մանր են, որ իրանց մեծութեամբ ծաղկափոշուց չեն տարբերւում: Այդ տեսակ բոյսերի սերմերը միաբջիջ են և կոչւում են սպոր: Այդպէս են, օրինակ՝ բորբոս սունկի սպորները, որոնք մանրագիտական բշտիկներ են. ընկնելով թաց տեղ, այդ սպորները սկսում են թելեր արձակել ու երկարել: Այդ թելերը, որոնք հիֆ (hyphes) անունն են կրում, ունեն զարմանալի յատկութիւն՝ ներս մտնել այն մարմինների մէջ, որոնց վրայ սունկերը ապրում են պարազիտի պէս: Նրանք կարող են մտնել ատամների և ոսկորների մէջ էլ: Այդ թելերի մէջ են գոյանում բորբոսի սպորները, որոնք զուրա պրծնելով իրանց մայրական մարմնից յրւում են օդի մէջ և դարձեալ ընկնելով նպաստաւոր պայմանների մէջ, ծլում են ու «բորբոսով» ծածկում, օրինակ հացը, պանիրը, իւղը և այլն:

Կան այնպիսի սունկեր, որոնք յայտնի են իբրեւ զանազան խմորումների գործօններ, բայց մենք ուղղակի կ'անցնենք այն տեսակներին, որոնք ապրում են բոյսերի և անասունների վրայ և առաջացնում են նրանց մէջ զանազան հիւանդութիւններ:

Uredo մի սունկ է, որ աճում է ցորենի վրայ Peronospora infestans, կամ գետնախնձորի հիւանդութեան սունկեր, զարգանում են չափազանց խոնավութիւնից և երևում են գետնախնձորի տերևների և արմատի վրայ: Դրա ուրիշ տեսակներն էլ պատահում են բանջարեղէնների և որթերի վրայ:

Aspergillus niger, սև բորբոսը յաճախ պատահում է մրբեղէնների և հացի վրայ:

Oidium, խաղողի թուղ, կամ չոռ, բաւականին տարած-

ուած խաղողի հիւանդութիւն է, որ շատ արագ փչացնում է այգիները:

Actinomyces bovis (актиномикоз), յաճախ լինում է եզների կամ կովերի վրայ և առաջացնում է ուռույցներ նրանց ծնոտների վրայ: Այդ հիւանդութիւնը երբեմն պատահում է և մարդկանց մօտ և առաջացնում է թարախակոյտեր մարմնի զանազան մասերում:

Saccharomyces oblicans, կամ *oidium lactis*, սպիտակագոյն սուռնկ է, որ յաճախ աճում է երկխաների բերանում, լեզուի վրայ, կամ երկարատև հիւանդութիւնից թուլացած մարդկանց բերանում:

Բնութեան մէջ շատ տարածուած են նաև բազմատեսակ միարջիջ սուռնկեր, որոնք կոչւում են մի կր ու բն եր (մանրուկներ):

Ապրելով կենդանիների մէջ, միկրոօրգանիզմը արտադրում են իրանց ապրած միջնավայրի մէջ զանազան թոյներ, որոնք եկզիւմ ընդհանուր անուան են կրում: Եթէ այդ թոյնը արտադրուած է մեռած մարմնի մէջ, նա կոչւում է պսոմային, իսկ եթէ կենդանի մարմնի մէջ՝ լեյկոմային: Շատ հետաքրքրական է որոշել թէ լինէն է իսկապէս հիւանդութեան պատճառը, ինքը միկրոօրգ, թէ՛ նրա արտադրած թոյնը: Դրանք հարցեր են, որոնց մասին դեռ բժշկական գիտութիւնը իր վերջնական խօսքը չէ ասել, թէն այժմ հէնց շատ գիտնականների կողմից ընդունւում է, որ հիւանդութիւնների պատճառը միկրոօրգանիզմի արտադրած թոյներն են և ոչ իրանք միկրոօրգանիզմը:

Պաստէօրն էր առաջինը, որ ակներև կերպով ապացուցեց թէ միկրոօրգներն էլ իրանք իրանց չեն ծագում, այլ գոյութիւն են ստանում իրանց նմաններից: Այդ նա ապացուցեց մի շատ պարզ փորձով:

Նա վերցնում էր ջուր կամ բուլլիօն մի ապակեայ նեղաբերան ամանի մէջ և եփ տալով մեռցնում էր հեղուկի մէջ եղած բոլոր մանրուկները և սպօրները: Յետոյ կրակի վրայ փափկացնելով ամանի բերանը փակում էր նրան, կամ ծածկում էր մաքուր բամբակով, որ իր մէջ էր պահում օդի փոշին: Այդպիսի հեղուկի մէջ ինչքան երկար էլ պահուէր նա, երբէք ոչ մի օրգանական մարմին չէր գոյանում: Բայց հէնց որ բանանք այդ ամանների բերանները և թողնենք որ չը գտած օդը ազատ ներս մտնի հեղուկի մէջ, մի կարճ ժամանակից յետոյ կը տեսնենք որ այդ հեղուկի մէջ զարգանում են մանրուկներ: Հեղուկը նեխւում է, թթւում և այլն:

Պաստէօրի այս փորձերից պարզուեց որ այնպիսի երկոյթներ, ինչպէս փտելը, խմորումը և նեխումը՝ միկրոօրգանիզմի գոր-

ծունէութեան հետեանք են և առանց նրանց ներկայութեան այդ երևոյթները տեղի չեն ունենում:

Մի քիչ յետոյ անգլիացի ֆիզիկոս Տինդալը ևս ապացուցեց, որ մթնոլորտային օդը, գտնէ նրա ներքեի շերտերը, լիքն են միկրոբներով և սունկերի սպօրներով:

Յայտնի է, որ արևի ճառագայթները, մտնելով փոքրիկ ծակով մութ սենեակի մէջ, մեր աչքերին մատչելի են դառնում փոշու ներկայութեան շնորհիւ: Եթէ մենք ճրագը մօտեցնելով այրենք մի փոքրիկ կտոր այդ լուսաւորուած շերտից, նրա տեղում կը մնայ մութ տարածութիւն: Իսկ փոշու ամեն մի մասնիկը, ինչպէս ապացուցեց Տինդալը, ներկայացնում է միկրոբների ամբողջ մի բնակութիւն, «մի նաւ, որ բեռնաւորուած է միկրոբներով»: Բաւական է փոշու մի այդպիսի մասնիկ գցել նրա աճման համար նպաստաւոր միջնավայրի մէջ, որ այդ վերջինը ծածկուի անթիւ մանրուկներով:

Մանրադիտակի տակ զննելով մթնոլորտային օդի միկրոբները, կարելի է տեսնել որ նրանք շատ նման են ջրի և հողի մէջ գտնուող միկրոբներին:

Այս անթիւ էակները լիքն են բնութեան մէջ և իրանց ձևի կողմից կարող են բաժանուել երեք գլխաւոր դասակարգի:

1. Միկրոկոկկներ, փոքրիկ գնդակաձև բջիջներ են, որոնք բազմանում են կիսուելով: Այդ բաժանման ժամանակ բջիջը մի քիչ երկարում է, յետոյ մէջտեղում նրա շուրջը երևում է մի գօտի, որ հետզհետէ խրուելով բջիջի մարմնի մէջ, բաժանում է նրան երկու մասի: Վերջիններս իրանց կողմից նոյն ձևով բաժանում են կրկին երկուսի և այլն:

Հիւանդութիւնները առաջացնող միկրոկոկկների մէջ կարելի է յիշատակել. ծննդական ջերմի միկրոկոկկներին, կարմիր քամու (րօժա) ստրեպտոկոկը, ոսկեգոյն և սպիտակ ստրեպտոկոկները, որոնք թարախի սովորական գործօններն են:

Խմորում առաջացնող միկրոկոկկների մէջ յիշատակենք. կաթի խմորիչը, միդատարի խմորիչը և քացախի խմորիչը:

Բակտերի կոչւում է մանրուկների մի տեսակը, որ ամեն կողմից միկրոկոկին նմանելով, սակայն տարբերում է վերջինից նրանով, որ մի քիչ երկարաձև է և շարժւում է շատ արագ: Միկրոկոկի շարժուելը աւելի նման է երբեումի (vibration):

2. Բացիլները ցուպիկների նման մանր էակներ են. նրանց երկարութիւնը 3—4 անգամ հաստութիւնից աւել է. նրանց աճումը լինում է երկու տեսակ. կամ բաժանման ձևով, ինչպէս վերև է նկարագրած, կամ սպօրների (սերմերի) ձևով:

Բացիլլների մեծ մասը յատուկ դեր են խաղում բնութեան մէջ: Մի մասը ընդունակ է խմորում կամ փտումն առաջացնել, միւս մասը զանազան հիւանդութիւնների պատճառ է դառնում: Վերջիններիս մէջ յիշատակենք բարակացաւի (туберкулез) բացիլլը, որ դտել է դերմանայի յայտնի գիտնական Կոխը: Այդ բացիլլները մեծ քանակութեամբ գտնւում են բարակացաւով հիւանդների խուխի մէջ: Խուխը բացիլլների հետ չորանալով փոշի է դառնում և խառնուելով թոզի հետ տարածւում է ամեն տեղ և նոր վարակումների պատճառ լինում: Շատ հասկանալի է ուրեմն, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի ընդհանուր առողջապահութեան տեսակէտից բարակացաւով հիւանդների խուխը առանձին հաւաքել և անհետացնել: Մի քանի երկրներում արդէն այդ նպատակով որոշ կարգադրութիւններ են եղել կառավարութիւնների կողմից: Այդ կարգադրութիւնների զօրութեամբ արգելւում է հասարակական տեղերում և փողոցներում գետնի վրայ թփելը:

Bacillus mallei (Салная бацилла) ձիաների և էշերի մի յայտնի հիւանդութեան միկրոբներ են, որոնք շատ վտանգաւոր են և մարդու համար, որովհետեւ այդ կենդանիներից կարող են վարակուել և մարդիկ: Այդ հիւանդութիւնը սկսում է հարբուխի նման:

3. Վիբրիօնները և սպիրիլլները ոլորած թելիկի նմանութիւն ունեն: Մթնոլորտի մէջ չը կան այդ տեսակ միկրոբներ:

Ի վերջոյ նկատենք որ բազմաթիւ հետազօտութիւններ, որ կատարուել են մթնոլորտի օդի վերաբերեալ, բերել են հետեւալ եզրակացութիւններին:

Տարուայ եղանակներից ձմեռը բակտերիաներ օդի մէջ ամենաքիչն է լինում, յետոյ նրանց թիւը աւելանում է գարնանը, ամառը լինում է աւելի շատ, իսկ աշնան վերջերում նրանց թիւը կրկին սկսում է պակասել:

Տաք եղանակը նպաստաւոր է սաղմերի զարգանալու համար: Բայց բացի տաքից կան և ուրիշ օգերևոյթային պատճառներ, որոնք նսեմացնում են կամ, ընդհակառակը՝ աւելացնում են տաքի ազդեցութիւնը: Այսպէս, օրինակ, երկարատեւ անձրեւից յետոյ օդի մէջ մեկրոբները համարեա բոլորովին անհետանում են: Մինչդեռ երկարատեւ չորային եղանակից յետոյ նրանք շատ բազմանում են:

Եթէ քամին գալիս է մաքուր տեղերից, օրինակ ծովից, միկրոբների թիւը պակասում է, և ընդհակառակը քամին անց-

նկով անմաքուր տեղերով, իր հետ կարող է բերել բազմաթիւ մեկրորդներ:

Քաղաքում օդի մէջ գտնուող մեկրորդների մեծ մասը պատկանում է մեկրոկոկիների տեսակին, յետոյ բացիլիների տեսակին, իսկ ամենավերջին տեղը բռնում են վիրբիճները, որոնց թիւը շատ աննշան է օդի մէջ:

Բարձր սարերի օդը համարեա բոլորովին ազատ է մեկրորդներից: Նոյնպէս և ծովի օդը:

Բայց այդպէս չէ քաղաքների օդը, ուր ապրում են այնքան մարդիկ և ներշնչում իրանց մէջ օդի հետ և այդ մանր արարածներին:

Օդը և ջուրը շատ գիտնականների կողմից նկատոււմ են իբրեւ տարափոխիկ և համաճարակ հիւանդութիւնների տարածողներ: Այժմ բոլորովին ապապուցուած է որ խոլերան և տիֆը տարածոււմ են ջրի հոսանքով: Օդը տարածում է կարմիր քամու բարակուցաւի, փտատենդի (septicemia) և այլ սպօրները:

Շատ ցանկալի է, ի հարկէ, որ բազմանան քաղաքներում և գիւղերում առողջապահական միջոցները, որոնցով միայն կարելի է իջեցնել օրէցօր աւելացող մեկրորդների թիւը օդի մէջ և բազմաթիւ հիւանդութիւնների առաջն առնել:

Ստորև բերած վիճակագրական թուերը ցոյց են տալիս թէ ինչպէս Պարիզի կենտրոններում տարէց տարի աւելանում է մեկրորդների թիւը, որ հաւանականաբար կախուած է բնակութեան խտութիւնից: Մինչդեռ միևնոյն ժամանակ Պարիզի Montsouris պարկում նրանց թիւը աստիճանաբար պակասել է: Վերջինիս պատճառն է բուսականութեան շատութիւնը, գործարանների բացակայութիւնը այն տեղում և առհասարակ մաքրութիւնը:

Մի խորանարդ մետր օդի մէջ եղել է.

Թիւ.	Պարկ. Montsouris.	Պարիզի կենտրոնում.
1885	480	3480
1886	450	3910
1887	428	3975
1888	390	3800
1889	365	4290
1890	345	4520
1891	300	4790
1892	290	5100
1893	275	5480
		6040

Այժմ տեսնենք թէ ինչ միջոցներ է գործադրում առողջապահական գիտութիւնը մանրուկների սաղմները՝ թէ օդի մէջ և թէ բնակարանների փոշու մէջ ոչնչացնելու համար:

Փողոցների փոշին պակասացնելու միակ միջոցը՝ փողոցները միշտ ջրել ու սրբելն է: Ինչ վերաբերում է բնակարաններին, պէտք է այնտեղ աւելի փոխարէն գործ ածել թեթիկ կերպով թրջած շոր և դրանով սրբել սենեակների յատակը, պատերը, իսկ առաստաղները լուանալ ջրով, կամ ախտահան հեղուկով: Նա մանաւանդ անհրաժեշտ է այդ անել, երբ տարափոխիկ հիւանդութիւն է երևացել բնակարանում: Այս դէպքում կարեւոր է նաև շորերը (վարագոյրներ, խալիներ, անկողին և այլն) ախտահանել, կամ նրանց ենթարկելով շոգու ազդեցութեան և կամ, որ աւելի հեշտ է՝ մի երկու շաբաթ փռելով դուրսը, թողնել այնտեղ արևի տակ: Ինչպէս յայտնի է, արևի ճառագայթները նոյնպէս սպանիչ ազդեցութիւն ունեն միկրոբների և նրանց սաղմների վրայ:

Բնակարանների ախտահանութիւնը մի վերին աստիճանի մանրակրկիտ գործ է: Ախտահան միջոցներից ամենալաւը սուլեման է՝ ջրի մէջ լուծուած, 1 կամ 2 մասին 100 մաս ջուր: Եթէ այդ խառնուրդին աւելացնուի մի քիչ հասարակ աղ, նրա ազդեցութիւնը աւելի կը զօրեղանայ: Այդ հեղուկով հարկաւոր է լուանալ այն բոլորը, ինչ որ կարելի է լուանալ. պատերը, առաստաղները, կարասիքը, մահճակալները և այլն, իսկ մնացած տեղերը՝ ողողել ցնցուղով (пульверизаторъ):

Սակայն կան դէպքեր, երբ չի կարելի գործ ածել հեղուկ ախտահանները, այլ հարկաւոր է գործադրել գազային միջոցներ: Այդ նպատակի համար գործադրում են դեղեր (ծծումք, խլոր, աւշակ), կամ հոտաւէտ բաղադրութիւններ, ինչպէս սկիպիդար, անուշահոտ ծաղիկների հիւթեր (essence) և այլն: Բայց վերջիններիս գործադրութիւնը շատ սահմանափակ է թանգութեան պատճառով: Խոնկի գործադրութիւնն էլ մեր առօրեայ կեանքում վաղուց ի վեր երևի հիմուած է նրա ախտահան ազդեցութեան վրայ:

Իբրև շատ զօրեղ և նպատակայարմար ախտահան միջոց կարելի է խորհուրդ տալ ամեն դէպքում էլ Փ օ ր մ ա լ ի ն ը: Դա մի հեղուկ է, որ դանադան միջոցներով գոլորշի է դարձնում և այդ կերպով տարածուելով սենեակի ամեն ծակուծուկերը, հեշտութեամբ ոչնչացնում է միկրոբները և նրանց սաղմները: Դրա ամենամեծ առաւելութիւնից մէկն էլ այն է որ շորեր չէ փչացնում և առանձին պատրաստութիւններ չէ պահանջում: Սև-

նեակում ամեն բան կարող է մնալ իր տեղում, միայն հարկաւոր է պինդ կողպել բոլոր լուսամուտները, դռների ձեղքերը և բանալ բոլոր շորերի պահեստները, որ այն տեղերն էլ մուտք գործի ֆորմալինի գոլորշին:

Ֆորմալինը գոլորշի դարձնելու համար առաջարկուած են մի քանի գործիքներ, որոնց նկարագրութիւնը այստեղ մենք աւելորդ ենք համարում:

Վերջին ժամանակներս առաջարկուած են շատ հեշտ միջոց՝ ֆորմալինը գոլորշի դարձնելու համար. ֆորմալինը ածում են մի այնպիսի ամանի մէջ, որտեղից նա կարողանայ հոսել միայն կաթ-կաթ և յարմարացնում են այնպէս, որ այդ կաթիւները ընկնեն անշէջ կրի վրայ: Այդ դէպքում ֆորմալինը իսկոյն գոլորշիանում է և տարածուելով օդի մէջ անտահանող ազդեցութիւն է անում:

ԲԺ. Գ. ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

XVIII ԴԱՐՈՒՄ

VI

Ղարաբաղի հայերի հետ, միաժամանակ, նոյն 1722 անմոռանալի թուականին, ինչպէս տեսանք, ոտքի կանգնեց և Սիւնեաց աշխարհը: Այստեղ ապստամբական շարժումը աւելի ուժեղ էր, իր հետևանքներով աւելի փառաւոր, բայց, դժբախտաբար, և աւելի կարճատե, քան Ղարաբաղում: Մօտ տասը տարուայ ընթացքում սիւնեցի հայը անընդհատ պատերազմներով իրադործեց ստորուկ հայութեան կատարեալ աղատագրութիւնը և երկար դարերի մեր անպատիւ, ողբալի պատմութեան մէջ բայ արեց մի հերոսական պանծալի շրջան, որին պէտք է յատկացնել Ղափանցիների օրջան անունը: Որովհետև Ղափանն էր պատերազմի դաշտը, նա էր կռուողը, յաղթողը. Սիւնիքի շատ գաւառներն էին մասնակցում աղատարար ապստամբութեան. բայց նրանցից ոչ մէկը Ղափան չէր:

Լեոնոտ ու զփուար մատչելի է Սիւնիքը առհասարակ. բայց Ղափանի գաւառը Սիւնեաց լեոնաշխարհում էլ մի առանձին տեղ է գրաւում իր ամուր դիրքով: Մեր հին աշխարհագրութիւնների մէջ չը կայ Ղափան անունը: Միջին դարերում Բաղք և Ձորք գաւառները միանում են և այնտեղ յիշւում է Կապան անունով մայրաքաղաքը: Ահա այդ քաղաքը տալիս է իր անունը ամբողջ գաւառին. Կապանը գառնում է Ղափան: Այդ անուններն էլ—Ձորք, Կապան—բնորոշում են երկրի աշխարհագրական կերպարանքը: Խոր ձորերի, լեռնային կապերի, վիթխարի գագաթների մի անտառոտ աշխարհ է դա:

Տոկուն, քաջ մի ժողովուրդ էր ապրում այդ աշխարհում: Յայտնի է թէ Սիւնիքը սրբան կարևոր, առաջնակարգ մի իշխանութիւն էր մեր պատմութեան մէջ ամենահին ժամանակներից: IX դարի վերջերից, հայերը, օգուտ քաղելով արաբական տիրապետութեան աստիճանաբար թուլացումից, սկսում

են իրանց համար եթէ ոչ մի ընդհանուր, համադրային անկախութիւն, գոնէ փոքրիկ, տեղական ինքնաւարութիւններ ստեղծել, թագաւորական դահեր են հիմնուած Անիում, Վասպուրականում, Կարսում: X դարի վերջին քառորդում մի փոքրիկ, նահանգական թագաւորութիւն էլ Բաղայ աշխարհում է կենդանութիւն ստանում. նրա օրինակին հետեւում է Գուգարքի Տաշիրք գաւառը (Լօռի): Միաժամանակ հինգ թագաւորութիւններ, բայց զրանցից ոչ մէկը երկարատեւ չէ: Ամենից շատ ապրում է Բաղայ թագաւորութիւնը: Այնտեղ էր իր անառիկ դիրքով հին ժամանակներից հռչակուած Բաղաբերդը, մի ամբողջութիւն, որի նմանը չունի Սիւնեաց ամբողջ լեռնաշխարհը: Ժողովուրդը սիրում է իր հարազատ անկախութիւնը. Բաղայ թագաւորութեան Կապան մայրաքաղաքը իր անունն է տալիս ոչ միայն իր գաւառին, այլ և հարեան գաւառներին: Նոյն իսկ Սիւնիք անունը կտրցնում է իր ընդհանուր աշխարհագրական անունը, յաճախ տեղի է տալիս այդ մայրաքաղաքից կազմուած անուան և կոչուում է Ղափան:

Բայց Ղափանի թագաւորութիւնն էլ երկարատեւ չէր. մօտ երկու դար ապրելուց յետոյ նա զուլս է իջեցնում սելջուկեան թուրքերի սրերի տակ: Բաղաբերդն ու Կապանը, անպաշտպան մնալով, քանդուում են. Ղափանի լեռնաստանում հաստատուում են նուաճողները: Եւ այնուհետեւ միանման դարեր են անցնում այդ երկրի վրայով. տեղական մասն թուրք իշխանութիւնների են կազմուում, հայ ժողովուրդը ստորագրուած է դրանց, բայց կառավարւում է մէլիքների ձեռքով:

Միայն XVII դարից սկսած մենք տեսնում ենք որ Ղափանից շատերն են դուրս գալիս՝ աշխարհ տեսնելու և շահ վաստակելու համար: Դրանք վաճառականներ են: Սահմանակից լինելով Արաքսի հովիտի այն մասի հետ, ուր հայ վաճառականութիւնը ծաղկեցրել էր Ջուղայի, Աղուլիսի, Մեղրիի նման գիւղաքաղաքներ, Ղափանն էլ իր սոստրական կարաւաններն է սկսում չրջեցնել աշխարհի զանազան կողմերում. Ղափանցիներին մենք հանգիպում ենք թէ՛ Ջմիւռնիայում, թէ՛ Կ. Պօլսում և թէ՛ Եւրօսպական ուրիշ վաճառանոցներում:

Բայց վաճառականութիւնը Ղափանի համար մի մասնաւոր երևոյթ էր և ի հարկէ, չէր կարող այնքան աստիկ ազդեցութիւն ունենալ լեռնցի ժողովրդի վրայ, ինչպէս ունէր, օրինակ, Ջուղայում և Աղուլիսում: Վաճառականութիւնը ոչ միայն չէ արգելւում որ Ղափանը միանայ հայերի ապստամբական շարժման, այլ, ընդհակառակն, կապւում էլ է այդ ապստամբութեան հետ: Բուն Ղափանի և Մեղրիի սահմանադիւի վրայ

գտնուող վանք դիւղից դուրս եկած մի մարդ, Ռսկան Շահումեան անունով, XVII դարի կէսից բայ է անում վենետիկի մէջ մի առետրական տուն, որ վաճառահանում էր Դամասկոսի կերպաններ, հայելիներ, ապակեայ ճրագարաններ և այլ արեւելեան ապրանքներ: Հարիւր տարի և գուցէ էլ աւել գոյութիւն պահպանեց Շահումեան առետրական տունը և շատ նշանաւոր հանդիսացաւ վենետիկի վաճառականական աշխարհում: Յայտնի է, օրինակ, որ երեք տարուայ միջոցում (1740—1743) Շահումեան տունը վաճառքի հանեց մի միլիօն ֆրանկից աւել արժողութեամբ միայն Դամասկոսի կերպաններ և «ոսկեայ թիթեղներ» *):

Սակայն այդ ընդարձակ առետրական շրջանաւորութիւնը չէ Շահումեան տան հռչակը: Մեր պատմութեան մէջ միշտ կը յիշատակուի այդ տունը ոչ որպէս մի խոշոր առետրական ձեռնարկութիւն, — այդ կողմից Շահումեանները մի անօրինակ երեւոյթ չեն կազմում. գոյութիւն ունէին աւելի նշանաւոր հայ առետրական տներ: Շահումեան տան անջնջելի յիշատակը այն է, որ նա անմահացրեց Ղափանում աղատութեան համար զէնք բարձրացրած քաջերին: Հիմնադիր Ռսկանի եղբայրն էր Վրթանէսը, որ ունէր Ստեփանոս անունով մի որդի: Ահա այդ Ստեփանոսի հնորհիւ է, որ մենք այսօր մեր ձեռքում ունենք սիւնեցի հայ ժողովրդի պատերազմների պատմութիւնը, մօտ ութ տարուայ մի պատմութիւն, որ մեր մատենագրութեան մէջ մի թանկագին գոհար է **):

Ինքը, Ստեփանոսը չէ գրել այդ պատմութիւնը. բայց նա սկանաւոր է եղել պատերազմներին, անձամբ մասնակցել է նրանց և բաւական աչքի ընկնող դեր է կատարել: Պատերազմներից յետոյ ստիպուած լինելով ցած դնել աղատութեան զինուորի սուրը, Ստեփանոս Շահումեանը գնաց վենետիկ՝ իր կեանքի մնացած մասը առետրական գործերին նուիրելու: Բայց այդտեղ չը մոռացաւ իր հերոս ընկերներին, որոնք զլուխ էին դրել հայրենիքի անկախութեան համար: Մօտենալով Միլիթարի միաբանութեան, տեսնելով հայ վարդապետների այդ խումբը, որ գրքեր է քրքրում, գրում է, նա մտածեց անմահացնել Ղափանի հերոսութիւնները և իր տեսածն ու լսածը թելադրեց

*) Հ. Ալիշան — «Սիւնիք», հր. 445.

**) Հ. Ձամէանը համարեա ամբողջովին արտագրել է այդ պատմութիւնը իր «Հայոց Պատմութեան» մէջ (Հատ. Գ., գլ. խը — խթ): Առաջին անգամ այդ գիրքը առանձին տպագրուեց Վաղարշապատում, 1871 թականին, «Դաւիթ-բէկ» վերնագրով:

Մի թիվարի աշակերտներէջ մէկին, Հ. Ղուկաս Ստեփանեան Սեւաստացուն, որ և այդ պատմութեանքներէջ հիւսնց մի սիրուն պատմութիւն *):

Մի շատ կարեւոր գործ—ուրիշ մանրամասն յիշատակարաններ այդ հերոսական շրջանի մասին մենք չունենք: Որքան դժբախտ էր Արեւելեան Հայաստանը մտաւոր զարգացման կողմից: Այնպէս սկսուած է մի այդքան մեծ շարժում, կատարուած են այնքան փառաւոր գործեր, բայց չէ գտնուում մի վարդապետ, մի գրագէտ հայ, որ կազմէ այդ անմոռանալի ժամանակների մանրամասն տարեգրութիւնը: Իսրայէլ Օրին, Ղարաբաղի մէլիքները կորած պիտի մնային անյայտութեան մէջ, եթէ ուսաց և բաւարական պետական արխիւներում պահուած չը մնային նրանց գրագրութիւնները: Ոչինչ յիշատակ չը պիտի մնար Դաւիթ-բէկի և նրա քաջերի մասին, եթէ այդ քաջերէջ մէկը, Շահումեանը, կենդանի մնացած չը լինէր, եթէ նա գնացած չը լինէր Վենետիկ, եթէ Վենետիկում չը լինէին ժրջան հայ վարդապետներ: Սիւնիքի և Արցախի բազմաթիւ վանքերը, հայ զօրքերի կատարած գործերի ակնատեսները, լեզու ու կարողութիւն չունեցան պատմելու իրանց տեսածները, եթէ հաշուի չառնենք Եսայի կաթողիկոսի կիսատ մնացած պատմագրութիւնը:

Ժամանակակիցների այդ մտաւոր աղքատութիւնն է պատճառ, որ հայերի քաղաքական վերածնութեան ժամանակի պատմադիրը լիակատար տեղեկութիւնների պակասութիւն է զգում: Արխիւներէջ հանած գրագրութիւնները, ճիշտ է, առատ են, բայց նրանցից կարելի է կազմել աղատական շարժման արտաքին, դիպլոմատիական պատմութիւնը, որ չէ կարող չոր ու ցամաք չը լինել, քանի որ նրա աղբիւրները պաշտօնական թղթերն են, իսկ այդպիսի թղթերի մէջ իրականութիւնը կամ գունաւորուած է լինում կամ չափազանց նեղ շրջաններում ներկայացրած: Ոչ մի պատմութիւն չէ կարող կատարեալ լինել, եթէ նրա մէջ բացակայում են ներքին հանգամանքները, եթէ պատմութիւն ստեղծող ժողովուրդը չը կայ մէջ տեղ: Ուստի հասկանալի է թէ որքան թանկագին, եզակի մի աղբիւր է Ստեփանոս Շահումեանի գրել տուած պատմութիւնը, որ թէն շատ համառօտ է, բայց պահած ունի իր մէջ այնպիսի մանրամասնութիւններ, որոնց չէինք հանդիպի պաշտօնական գրագրութիւնների մէջ: Դա հայ զինուորների մէկի վկայութիւնն է, մի զինուորի, որ չէ մոռացել հարադատ գոյներով նկարել իրական

*) «Սիւնիք» եր. 301.

նութիւնը, պատմել մեզ հայի առաքինութիւններն ու արատները, հերոսական գործողութիւնների փայլուն և մութ կողմերը:

Սրանք այդ պատմութեան գեղեցիկ զարդերն են: Բայց չէ կարելի չը խոստովանել և այն, որ նա միանգամայն գոհացնել քննողին չէ կարող: Գործի գրական արժանաւորութիւնները անուրանալի են. ոչ ոք հայ վարդապետներից չէր կարող այնպէս գրել այդ պատմութիւնը, ինչպէս գրեց Մխիթարի դպրոցին պատկանող վարդապետը: Բայց նրա գործի մէջ նկատուում է միակողմանիութիւն. դա հեռու աշխարհում, ուրիշի թեւադրութեամբ գրուած մի յիշատակարան է: Թեւադրողը զարգացած, ամեն ինչին լաւ տեղեակ մարդ չէր, իսկ գրողը, ի հարկէ, չէր կարող վերաստուգել նրա ասածները, պիտի մեքենայի դեր կատարէր: Եւ այդ պատճառով Սիւնեաց աշխարհի ապրտամբութիւնը չէ ներկայանում այն դրութեան մէջ, ինչպէս էր իրապէս: Նա երևում է իբրև յանկարծ բռնկուած, արհեստական մի հրդեհ, որ չէ ունեցել իր նախընթաց պատմութիւնը, առաջուց պատրաստուող այրեցիկ նիւթերը: Ստեփանոս Շահումեանը, իբրև մէկը գլխաւոր գործիչներից, կամեցել է չափազանց մեծացնել իր կատարած դերը: Ուստի այսպէս է պատմում գործի սկզբնաւորութիւնը:

Լէզգիների արշաւանքները, ասում է նա, տալիս ու վրայ արեցին Ղարաբաղի և Սիւնեաց երկրի ազգաբնակչութիւնը: Ղափանում տիրեց կատարեալ սարսափ. երթևեկութիւնը դադարեց, մարդիկ կասկածով էին վերաբերում միմեանց, քաղաքը քաղաքի, գիւղը գիւղի չէր հաւատում. մէկը միւսին թշնամի էր համարում: Ահա այդ աղէտալի դրութեան ժամանակ ինքը, Ստեփանոս Շահումեանը, գնում է վրաց իշխան Շահ-Նաւազի մօտ և խնդրում է նրան որ մի զօրապետ տայ հայերին՝ թշնամիներին դէմ կռուելու համար: Այդ միտքը ընդունել տալու համար Շահումեանը, իբր թէ, դիմել էր և կեղծիքի. իր հետ տարել էր Ղափանի յիսուն տանուտէրերի անուններից գրուած մի հանրագիր, որի մէջ նրանք խնդրում էին տալ իրանց մի փորձուած զօրապետ, իսկ իրանք պարտաւորուած էին ղօրը հաւաքել, պատերազմական պատրաստութիւններ տեսնել և իրանց գաւառը պաշտպանել թշնամիներից: Թուղթը յօրինել ու գրել էր Ստեփանոսը, իսկ նրա վրայ դրած կնիքները կնշմ էին. Ստեփանոսն էր շինել տուել այդ կնիքները: Շահ-Նաւազը, իբր թէ, հաւատացել է այդ կեղծած թղթին և Սիւնիք է ուղարկել Դաւիթ-բէկին, որ իր մօտ էր գտնւում:

Այդպէս է բացատրում Շահումեանը Ղափանի պատերազմ-

ների սկզբնապատճառը: Բայց այդպէս է: Մենք, որ քայլ առ քայլ ծանօթացանք ժամանակի դէպքերի հետ, կարող ենք ամենայն վստահութեամբ ասել որ այդպէս չէ: Պատահական հանդամանքի ծնունդ չէր Դաւիթ-բէկի գործունէութիւնը Սիւնիքում: Նրան Վրաստանից Սիւնեաց աշխարհը տանողը Ստեփանոս Շահումեանի կեղծած թուղթը չէր, այլ այն մարդը, որ այդ միջոցին պառկած էր իր գերեզմանի մէջ, Աստրախանի հայոց և կեղեցու բակում—Իսրայէլ Օրին: 1698 թուականից էր պատրաստուում այն դադափարը, որ այժմ աճման վերջին աստիճանին էր հասել, հասունացել էր, դարձել սուր և վառօդ, բոց էր դրել հայոց լուսնիւրում՝ աղատութիւն ձեռք բերելու համար: Նշանաւոր հայ հայրենասէրը դրել էր հիմքը, ամրացրել: Նրան վիճակուած չէր Աստրախանում հայկական գունդ կազմել և անձամբ մասնակցել Պետրոս Մեծի արշաւանքին դէպի Պարսկաստան, մի արշաւանք, որին նա ինքը սպասում էր այնքան անհամբեր կերպով և որին սպասելը սովորեցրել էր և հայերին:

1722 թուականից առաջ չէր կարող երևան գալ Դաւիթ-բէկ, թէկուզ Շահումեանը մի քանի կեղծած հանրագրեր ունենար իր ձեռքում. որովհետեւ միայն այդ թուականին Պետրոսը շարժեց իր զօրքերը դէպի Հայաստանի կողմը, միայն այդ ժամանակ առաջ եկաւ հայ զինուորութիւնը, կայացաւ հայերի և վրացիների զինուորական եղբայրակցութիւնը՝ Վախտանգի պէս մի իդէալիստ թագաւորի հրամանատարութեան տակ: Շահ-Նաւազը, Դաւիթ-բէկին Սիւնիք ուղարկողը, Վախտանգի որդի Բակարն էր, որ այդ ժամանակ կառավարում էր Վրաստանը իր հօր բացակայութեան պատճառով: Մենք տեսնք որ Վախտանգը այդ ժամանակ հայ-վրացական բանակը հաւաքել էր Գանձակի մօտ՝ Պետրոսի առաջը գնալու համար: Նա էր, որ կազմակերպում, ղեկեղում էր հայկական զօրքը, հրահանգներ էր տալիս հայերին, նրա կարգադրութեամբ էր որ Շահ-Նաւազը պատերազմական գործերին տեղեակ հայերին ուղարկեց՝ հայոց բանակը առաջնորդելու: Մեզ ծանօթ Իվան Կարապետը, ղեկավարութեան պաշտօնով Գանձասար հասնելուն պէս, հաղորդում էր ուռապ կառավարութեան, ի միջի այլոց, և այն, թէ Վախտանգի որդին իր մարդկանցից 30 հոգի է ուղարկել հայերի մօտ *): Եթէ սա Դաւիթ-բէկի խումբը չէ, պէտք է, ուրեմն, լինի մի այլ փաստ, որ ցոյց է տալիս թէ Շահ-Նաւազը, Վրաստանի այն տարտամ ու վտանգաւոր ժամանակներում, իր մարդկանցից ուղարկում էր հայերին ոչ թէ իբրեւ սղորմութիւն, ոչ թէ կեղծած թղթե-

*) ЭЗОВЪ, кр. 366:

րի ազդեցութեան տակ, այլ իբրև մի անհրաժեշտութիւն, որ պահանջում էր ընդհանուր գործը: Դա երկու ազգերը միացնող ծրագրի մի մասն էր:

Եւ Ղափանը բոլորովին անպատրաստ ու անտեղեակ չէր, ինչպէս ներկայացնում է Շահումեանը: Նա պատրաստուում էր վաղուց, Ղարաբաղի հետ միասին և Ղարաբաղի նման, այսինքն նախ իւրացնում էր ղէնքի ոյժով ազատութիւն նուաճելու գաղափարը և ապա, երբ հասաւ պայմանաւորուած ժամանակը— Պետրոսի արշաւանքը, երբ այլ ևս կասկած չը կար որ պէտք է վառել ապստամբութեան հրդեհը, նա էլ ղէնք վերցրեց: Ղափանը մի անջատ ու առանձին գործ չէր սկսում, այլ հայ զինուորութեան մի մասն էր, նրա մի թեւ: Մի երկիր, որի տէրերը չէին էլ ուզեցել ստորագրել Շահումեանի կազմած թուղթը, չէր կարող յանկարծ, միանգամից բռնկուել և տարիների ընթացքում նահատակուել մի գաղափարի համար, որ մինչև այդ անյայտ էր: Շահումեանի ասելով, բռնկեցնողը Դաւիթ-բէկն էր իր փոքրիկ խմբի հետ: Բայց անկարելի է ծուխ ստանալ այնտեղ, ուր չը կան այրեցիկ նիւթեր. գաղափարը ոչ մի ազդի մէջ չէ ծնւում ու զարգանում կախարդական գաւազանի մի շարժումով, օրերի, նոյն իսկ մի քանի ամիսների ընթացքում *):

Ո՛չ, պատրաստի նիւթեր կային երկրում, երբ 1722 թուականին այնտեղ գնաց Դաւիթ-բէկը: Եւ բոլորովին հարկաւոր էլ չէ որ այս նշանաւոր մարդը հայերի ազատագրութեան գաղափարի սկզբնապատճառ համարուի: Առանց այդ էլ նրա կատարած գործը շատ բաւական է, որ մեր առջև նկարուի նրա վիթխարի պատկերը:

Ո՞վ էր Դաւիթ-բէկը:—Մէկը մեր պատմութեան ամենանշանաւոր գէնքերից: Մեր ոչ մի նշանաւոր պատմական գործիչ

*) Մեր անմոռանալի վիպագրող Բաքիին էլ իր «Դաւիթ-բէկ» վէպի մէջ Շահումեանի ցուցմունքներին է հետեւում և զարգացնում Սիւնիքի ապստամբութեան պատմութիւնը իրիւս պատահական կերպով սկսած, մի խեղճ թղթից առաջ եկած և զարմանալի հեշտութեամբ զուլա բերած գործ: Սա դեռ վէպ է: «Նաւասայի Մէլիքութիւններ» աշխատութեան մէջ էլ, որ մի պատմական ուսումնասիրութիւն է, ղէպքերը նա պատմել է վայր ի վերջ: Բաքիին իր ձեռքի տակ չունէր այն նոր նիւթերը, որոնք բոլորովին ուրիշ կերպարանքի մէջ են ներկայացնում հայերի ազատական շարժումը: XVІІІ դարի սկզբում, Բայց նրա ժամանակ էլ ռուսաց զբաղանդութեան մէջ կային բաւականաչափ նիւթեր՝ իրերի իսկական զրուծիւնը ըմբռնելու համար: Առհասարակ մեր առաջնակարգ, տաղանդաւոր վիպագրողը բաղմունքով և խոր ուսումնասիրութիւն չէ կատարել Ղարաբաղի և Սիւնիքի այս գործերի վերաբերմամբ, որոնք տեղի ունեցան XVІІІ դարի սկզբում:

չունի իր մանրամասն կենսագրութիւնը. — այսպէս է և Դաւիթ-բէկը: Շահումեանը մեզ միայն մի քանի բառեր է տալիս: Սիւնեաց երկրից էր Դաւիթ-բէկը, «հայկազեան տոհմից», «ազնուական», բարեբապաշտ, արդարակորով, ծանօթ զրոյց, արխասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք և գործովք, վրէժխնդիր թշնամեաց ազգին մերոյ»: Եւ ուրիշ ոչինչ. ոչ ծննդեան տեղ ու թուական, ոչ անցկացրած կեանքի պատկեր: Մենք միայն տեսնում ենք մի պատրաստ անուն, պատրաստ գործող: Այդպէս են և հայկական գինուորութեան բոլոր պարագլուխները: Բայց Դաւիթ-բէկը սովորական գործիչներից չէր. բնութիւնը պարզեւել էր նրան արտասովոր ընդունակութիւններ, այլապէս նա չէր կարող կատարել այնքան գործեր, որոնք մեր հայկական իրականութեան մէջ հրաշքների կերպարանք են ընդունում:

Սիւնիքում նա գտաւ միայն հում նիւթեր, ցիր ու ցան ոյժեր, որոնք մշակուած չէին՝ գործը առաջ տանելու համար. կարելի է ասել որ իսկապէս պատրաստ, առձեռն և միանգամայն հաստատուն մի ոյժ միայն կար — ժողովրդի ապստամբական տրամադրութիւնը: Մնացածը պէտք էր ստեղծել, միայնել, մարմին և արիւն դարձնել, կեանքի հրաւիրել: Եւ Դաւիթ-բէկը այդպէս էլ արաւ մի եռանդով, մի այնպիսի ընդունակութեամբ, որ միանգամայն ապահովում էր ձեռնարկութեան աջողութիւնը:

Յայտնուելով երկրի մէջ իբրեւ յեղափոխական մի առաջնորդ, նա արդէն չափած-կշռած ունէր հանգամանքները, միջոցները: Ամենից պարզը, հիմնականը, նա, որ գործի հողին էր կազմում, պատերազմելու եղանակն էր: Մի լաւ կազմակերպած ժողովրդական, պարտիզանական պատերազմ — ահա ամենագլխաւորը: Պատերազմ մանր խմբերով, Օրիի փայփայած եղանակով, այսինքն յանկարծակի վրայ տալով, քամու պէս յարձակուելով. այս դէպքում յարձակուողը թեթիւ է, դիւրաշարժ և սարսափ է ազդում, — մի հանգամանք, որ ամենամեծ յաղթութիւնների չափ զօրաւոր է:

Իբրեւ սկզբնական փորձ, իբրեւ ամենառաջին քայլ, որ տանում էր Սիւնիքը դէպի ապստամբական ծուխը, Դաւիթ-բէկը անձամբ մի արշաւանք է կատարում: Շտապով գումարելով ձեռքի տակ ընկած առաջին պատրաստ ռազմիկ ոյժերը, թուով մօտ 400 մարդ, նա Իւջ-Թափալարի ընդարձակ դաշտալայրում կայծակի պէս ընկնում է Ղարաչօղլու անունով թուրք զեղի վրայ և ոչնչացնում նրան: Դա ընդհանուր ապստամբութեան ազդանշանն էր, և երկրի զանազան կողմերից սկսում են հաւաքուել հայ մէլիքներ ու տանուտէրեր իրանց փոքրիկ զօրա-

խմբերի հետ: Շարժումը այնքան արդէն հասունացած էր, որ ազգանշանը արձագանք է տալիս ոչ միայն Ղափանի լեռներում, այլ և անցնում է Գողթանի վրայով, հասնում է մինչև իսկ Արաքսի ափին: Հին-Ջուղան էլ, Շահ-Արասի կուտած աւերակների վրայ նորից կեանք սկսած այս փոքրիկ գիւղը, ապստամբութեան հետ է:

Սիւնիքում էլ, ինչպէս և Ղարաբաղի Սղւախներում, հայ զինուորութիւնը իր առջև ունի մի և նոյն անհրաժեշտութիւնը—կոխ տեղական մուսիլման ազգաբնակութեան դէմ: Մի անհրաժեշտութիւն էր դա, որ ունէր իր պատմական և ռազմագիտական խոր պատճառները: Հայերը հպատակ էին երկու իշխանութիւնների, մէկը տեղական խանն էր կամ բէկը, երկրի անմիջական տէրը և կառավարիչը, իսկ միւսը—պարսից կենտրոնական իշխանութիւնն էր, Շահերի կառավարութիւնը: Ապստամբութեան հետ անմիջապէս և ամենից առաջ ընդհարուողը տեղական իշխանութիւնն էր, որի ոյժը տեղական մուսիլման ազգաբնակութիւնն էր: Ուրեմն կռուել ազգաբնակութեան դէմ, նախ և առաջ նշանակում էր մաքրել երկիրը անհաշտ թշնամի մի տարրից, որ իր կրօնական հասկացողութիւններով, դարերի նուիրագործած իրաւունքով տիրապետող էր հանդիսանում, իսկ հայը—նրա ստրուկը, միայն մաքրուած երկրում կարող էր ապստամբութիւնը ազատ դործել, կենտրոնանալ, ոյժեր համախմբել: Տեղական խաներին և բէկերին բոլորովին թուլացնել—սա ամենակարևորն էր դործի աջողութեան համար:

Եւ Դաւիթ-բէկը ամենայն եռանդով այդ իսկ ծրագիրն էր առաջ տանում: Նա լաւ գիտէր որ պարսից կենտրոնական իշխանութիւնը ոչ միայն հեռու է, այլ և թոյլ, քայքայուած, հոգեվարքի մէջ. նրա հետ դործ ունենալու հարկաւորութիւն չի լինի: Ուստի հայ զօրապետը իր բոլոր ոյժերը լարում էր տեղական թշնամի ազգաբնակութեան դէմ. նա մաքրում էր երկիրը մի զարմանալի յամառութեամբ: Եւ սկսուեց ներքին պատերազմը, անխնայ, երկարատև, կատաղի պատերազմ: Դաւիթ-բէկը կարողացաւ արծարծել այդ կրակը, մի ահագին հրդեհ գոյացնել: Նրան շատ լաւ աջողուեց հանել միմեանց դէմ հարևանների, ատամներով կռուելու եռանդով ողորկել նրանց: Երկու ժողովուրդ գոռա էին եկել իրար դէմ. դա ցեղերի, կրօնների ընդհարում էր: Մէկը եկուորն էր, որ երկար ժամանակ տիրել էր թաթարական իսլամի բոլոր անգլթութիւններով, իսկ միւսը լնիկ, քրիստոնէայ ժողովուրդն էր, որի մարտիրոսական համբերութիւնը այժմ սպառուել էր: Դարերը այդ երկու թշնամի-

ների մէջ շատ դառնութիւն, շատ թոյն էին կուտել: Այժմ եկել էր հաշուի, վրէժի ժամը: Եւ միշտ ճնշուած քրիստոնէութիւնը, ազատութեան հովերով արբեցած, զէնքը ձեռքին, կատաղի էր, խնայել չը գիտէր, անգթութեան էր հասցնում իր գործողութիւնները:

Լեւներում բոլորուած պատերազմի ասպարէզը հետզհետէ լայնանում էր, ընդարձակւում: Տեղացի թուրք ազգաբնակչութեան ձեռք են տալիս հարկան խաները, Բարգուշատը, Օրդուբատը, Նախիջևանը, մինչև իսկ Արսլանով բաժանուած Ղարադաղը ջարդուող իսլամի օգնութեան են վազում. ոչնչացնող արշաւանքները կրկնում են յաճախակի՝ ահագին քանակութեամբ զինուած գիշատիչներ թափելով երկրի ներսը: Դաւիթբէկը, զինուած անխռով հրամանատարի սառնասրտութեամբ, կարգադրութիւններ է անում, հարուածներ է ուղղում զէպիայն կողմերը, որտեղից վտանդ է տեսնում: Դրսից նա օգնութիւն չունի. Ղարաբաղի Սոխախները կապուած էին նրա հետ սերտ յարաբերութիւններով, բայց օգնական զօրագնդեր չէին ուղարկում.—այնտեղ էլ հարկաւոր էին զօրքերը, այնտեղ էլ գործ շատ կար: Շատ խիստ պահպանուող մի սիսում ենք նկատում հայկական ամբողջ ապստամբութեան մէջ.—նա տեղական բնակչութիւն ունի, ամրացած յայտնի սեղերում, ճանաչում է գործողութիւնների յայտնի սահմաններ, չէ ոգևորւում զինուորական արկածախնդրութիւններով, մեծ-մեծ նպատակներ չունի: Միայն մի անգամ ենք տեսնում Մէլիք-Աւանին Սիւնիքում. նա իր զօրքով պաշարում է Որոտնայ բերդը, բայց աջողութիւն չէ ունենում:

Եւ Դաւիթբէկը կարօտ էլ չէ զրսի օգնութեան. նա զարգացնում է տեղային պատերազմական միջոցները, և որքան աւելանում է թշնամիների թիւը, այնքան աւելի շատ է նա գործի մէջ մտցնում ռազմիկ ոյժեր: Իբրև կազմակերպող, իբրև ժողովրդից զինուորական բանակներ ստեղծող, նա մի կատարելալ տաղանդ է. գործում է կրակոտ եռանդով, նոյն իսկ անողոք խստութեամբ, պահանջող, պատժող ու վարձատրող է, անաջողութիւններից չէ ընկճւում: Այսպէս, Հալիճորի Մէլիք-Փարսաղանն ու նրա փեսայ Տէր-Աւետիքը սկզբում չը կամեցան միանալ ապստամբութեան և անտես արին Դաւիթբէկի հրաւերը: Եւ ահա առաջին յարմար միջոցին Դաւիթբէկը ձերբակալում է երկուսին, բանտարկում Շահէրի բերդում: Մէլիք-Աւանի կարգադրութեամբ ազատուելով բանտից, մէլիքն ու քահանան այլ ևս անհնազանդ ու անմիաբան չեն. նրանք մշտնում են գործի մէջ և հանդիսանում են, մասնաւանդ քահանան,

հերոսներ բազմաթիւ կռիւների մէջ: Շատ բնորոշ է այս եղելութիւնը և ցոյց է տալիս թէ որքան լաւ էր ըմբռնել Դաւիթ-բէկը իր ազգի հոգեբանութիւնը: Տաղանդաւոր ղորապետը գիտէր ժամանակին և փրկարար երկիւղի միջոցով գործել:

Նոյն տաղանդն է երևում և Սիւնիքում եղած ղորքերի զասաւորութեան մէջ: Դա մի տեղ համախմբուած մի բանակ չէր: Իւրաքանչիւր գաւառ ունէր իր տեղական ղորքը, որ գտնւում էր տեղական մէլիքի կամ տանուտէրի հրամանատարութեան տակ: Այդ ղորաբաժինները, առանձին-առանձին վերցրած, փոքրիկ բաներ էին, յաճախ չէին էլ հասնում հազարի: Ամեն մէկը պիտի պաշտպանէր իր գաւառը, բայց և միշտ պատրաստ պիտի լինէր օգնութեան հասելու հարեան գաւառին, երբ մեծ վտանգ էր սպառնում: Ընդհանուր արշաւանքների ժամանակ տեղային ղորաբաժինները միանում էին: Ինքը, Դաւիթ-բէկը, իբրև գլխաւոր հրամանատար, ապրում էր մի յայտնի տեղ, չրջապատուած իր օգնականներով, եթէ ներելի է այս նմանութիւնը—իր գլխաւոր շտաբով: այդտեղից էլ նա հրամաններ էր արձակում, ղեկավարում էր գործերը: Սկզբում նրա բնակութեան տեղը Շնհէր բերդն էր, Տաթևի ձորում: Բայց երբ այդ կողմերում այլ ևս կռուի գործ չը մնաց, երբ պատերազմի ամբողջ կատաղութիւնը ծանրացաւ Սիւնիքի հարաւային կողմերում, նա տեղափոխուեց Ղափան և այդտեղ իր գործողութիւնների յենարան դարձրեց Հալիձորը, մի ամրացրած բերդ կառուցեց այնտեղ:

Տեղական, անջատ ղորաբաժիններով գործ առաջ տանելու սիստեմը կարող էր կատարուել աջողութիւն ունենալ միայն այն դէպքում, երբ այդ անջատ ոյժերը միացնող, մի ընդհանուր ծրագրի ենթարկող հեղինակաւոր ձեռք կայ: Դաւիթ-բէկը հէնց այդպիսի ձեռք ունէր. նրա հեղինակութիւնը ահագին էր, ուստի և նրա յարած մեքենան անսխալ գործում էր ցոյց տուած ուղղութեամբ: Մեծ շիտթութիւններ, անկարգութիւններ չէին խանգարում գաւառներ կապող միութիւնը: Տեղային ինքնօգնութեան զաղափարը այնքան զարգացած էր, որ երբ թշնամին յարձակւում էր մի թոյլ կէտի վրայ, հարեան ղորախմբերը, տեղեկութիւն ստանալով այդ մասին, իսկոյն միանում էին յարձակողներին դէմ:

Կարգապահութիւնը խիստ էր, և Դաւիթ-բէկը նրան հաստատ պահելու համար երբեմն նոյն իսկ անդթութեան էլ էր դիմում: Մեր պատմութեան մէջ շատ յաճախ չեն այնպիսի դէպքեր, երբ ընդհանուր զաղափարը մոռացնել տար տեղային, գաւառական առանձնութիւնը: Դաւիթ-բէկի երկաթէ ձեռքը, որ

իր ծանրութեամբ խրատել ու խելքի էր բերել Մէլիք-Փարսա-
զանին և Տէր-Աւետիքին, մի ղէպքում էլ ցոյց տուեց որ դո-
ղալ, թուլանալ չը գիտէ, երբ պէտք է կարգապահութեան,
անձնուէր ծառայութեան դասեր տայ: Օրդուքատի կողմից մեծ
քանակութեամբ թուրքեր յարձակուում են Դաշտուն ավանի վրայ:
Նրանց ղէմ իր զօրքով դուրս է գալիս Կալերի Պապ զօրավարը,
բայց վախկոտի մէկն է դառնում և, տեսնելով թշնամու բազ-
մութիւնը, վատարար փախչում է: Դաւիթ-բէկը, լսելով այս
բանը, անձամբ մի զօրաբաժին է տանում թուրքերի ղէմ, որոնք
կարողացել էին, օգտուելով Պապի վախկոտութիւնից, աւերել
չըջակայ հայ գիւղերը: Երբ յարձակողները փախչում են Դաւիթ-
բէկի առաջից, բայց հայ զօրավարը դրանով չէ բաւականանում:
Պապը հարց ու փորձի է կանչում և իր երկչոտութեան համար
գլխատում է Դաւիթ-բէկի հրամանով: Եւ դեռ պէտք է աչքի
առաջ ունենալ, որ Պապը դրանից առաջ զօրքերի մի լաւ ա-
ռաջնորդ էր հանդիսացել:

Այսպիսի եռանդուն, խիստ միջոցներով, խելացի կազմա-
կերպութեամբ, հզօր կամքով ղեկավարուող հայկական ապստ-
տամբութիւնը մի կարճ միջոցում փայլուն հետևանքների է
հասնում: Կարիք չը կայ այստեղ յիշատակելու այն բոլոր պատե-
րազմները, որոնք տեղի էին ունենում Ղափանի և սահմանակից
գաւառներում: Դրանք բազմաթիւ են, կրում են յանկարծակի
յարձակումների, կայծակի արագութեամբ իջնող հարուածների
բնաւորութիւն: Եւ աջողութիւնը միշտ հայերի կողմը չէ, նրանք
էլ ենթարկւում են զառն հարուածների. եղան ղէպքեր, երբ
Դաւիթ-բէկը հարկադրուած էր նահանջել թշնամու առջևից:

Բայց անաջողութիւնները չէին վհատեցնում, այլ, ընդհա-
կառակն, աւելի ևս բորբոքում էին կատաղութիւնը երկու, մի-
մեանց ղէմ վեր կացած, ազգերի մէջ: Դաւիթ-բէկը թշնա-
մու ղէմ գործ է ածում նրա ղէնքը. «ալին ընդ ալկան» սկրզ-
բունքը, որ մահմեդական Արեւելքում շարունակում էր մնալ իբ-
րև ամենից պարզ հասկանալի օրէնք, ղեկավարում էր և Դա-
ւիթ-բէկին: Եւ պէտք է զրա համար մեղադրել սիւնեցի տա-
ղանդաւոր հրամանատարին: Թաղամեր ավանում մնացել էին
60 տուն թուրքեր. չը կամենալով գաղթել, նրանք խնդրել ա-
ղաչել էին հայերին չնորհել իրանց այդտեղ ապրելու իրաւունք
և փոխարէնը խոստացել էին հպատակուել հայերին: Բայց երբ
Օրդուքատի թուրքերը մի արշաւանք են գործում ղէպի խա-
ղաղ հայ գիւղերը, քանդում են նրանցից երկուսը, կոտորում
են սղամարդկանց և գերի տանում կանանց ու երեխաներին,
Դաւիթ-բէկը հրամայում է, իբրև վրէժ, կոտորել Թաղամերի

այդ հպատակ թուրքերին: Հայ զօրքերը կատարում են այդ հրամանը և ապա սկսում են որոնել ուրիշ թուրքերի, որպէս զի հատուցումը լրակատար լինի: Կոտորում էին և այն հայերին, որոնք մահմեդականացած էին: Թաղամերի կոտորածը, անշուշտ, մի անգթութիւն էր, որը չէ կարելի արդարացնել մարդկայնութեան տեսակէտից: Սակայն պէտք է նկատի առնել շատ հանգամանքներ. ապստամբական կռիւ մղելու միջոցները և այդ միջոցների զարգացրած կատաղութիւնը, ժամանակի հասկացողութիւնները, չափից դուրս լարուած այն տենդային դրութիւնը, որ անդուծ ու անխնայ էր դարձնում հայերին ու թուրքերին՝ փոխադարձ թշնամութեան մէջ:

Հերոսական, բուն ժողովրդային կռիւը ծնում է հերոսներ: Եւ Սիւնիքի պատերազմները շատ հարուստ են հերոսներով: Դրանց մէջ առաջնութիւնը, ի հարկէ, պատկանում է Դաւիթ-բէկին: Բայց նրա ձեռքի տակ անուն ու հռչակ հանեցին քաջեր, որոնք նոյնքան անմոռանալի են, որքան ինքը, ազատարար պատերազմը: Պատմութիւնը մեր առջև բաց է անում մի շարք գեղեցիկ անուններ: Ահա Մխիթար սպարապետը, Թորոս իշխանը, ահա Մէլիք-Փարսադանը իր հուժկու փեսայ Տէր-Աւետիքի հետ, ահա Բայինդուրը, Բալին, ահա, վերջապէս, ինքը, պատմիչ Ստեփանոս Շահումեանը: Պէտք է ասել որ այդ անվեհեր զինուորներն էին հայ զօրավարի թեւն ու թիկունքը, լրացնում էին այն նպաստաւոր հանգամանքները, որոնք ազատութեան գործի կատարեալ յաղթանակն էին ապահովում: Դրանց չնորհիւ էր, որ Դաւիթ-բէկը ստիպուած չէր ամեն մի արշաւանք անձամբ վարել, այլ կարողանում էր ընդհանուր կարգադրողի դերը կատարել, կազմել մի կենտրոն, որտեղից արձակւում էին պատերազմի այս կամ այն մասը գլուխ բերելու հրամաններ:

Եւ նրա ստորադրեալները կատարում էին այդ կարգադրութիւնները, բարեխղճութեամբ, եռանդով: Ոչ միայն փոքրիկ արշաւանքների մէջ, այլ և աւելի բարդ ու դժուար գործերում նրանք ցոյց էին տալիս հրամանատարի ընդունակութիւն, հերոսական քաջագործութիւններ: Այսպէս, Մխիթար սպարապետն ու Տէր-Աւետիքը իրանց բազմաթիւ յաղթութիւնները պսակեցին Զելու անունով խիստ ամուր բերդի նուաճումով: Իսկ Բայինդուրը հռչակեց իր անունը այն խոշոր յաղթութեամբ, որ տարաւ Մեղրիի պատերազմի մէջ: Թուրքերը ահագին բազմութեամբ պաշարել էին Մեղրին. պաշարուածները աջողութեամբ դիմադրում էին յարձակումներին, բայց սակաւաթիւ էին: Օգնութեան է հասնում Բայինդուրը, որին աջողւում է իր զօրաբաժնով մտնել պաշարուած գիւղաքաղաքը: Բնակիչները

ուրախութիւնից հիւրասիրութիւն են պատրաստում զօրքի համար. բայց Բայինդուրը արդելում է մի բան ուտելը և երգւում է բերանին պատառ չը զիպցնել, քանի որ թշնամին դեռ չէ վաճակել: Նա տեղեկութիւն էր ստացել որ պաշարողները մեծ օգնութիւն են սպասում Արաքսի միւս ափից. ուստի շտապեց իր հարուածը իջեցնել, քանի դեռ թշնամին չատ չէ ուժեղացել: Նա կազմում է ճակատամարտի ծրագիրը և յարձակւում է թըշնամու վրայ: Յաղթութիւնը փառաւոր էր: Թուրքերը, ահաւոր ջարդ ուտելով, փախուստ դարձան, բաղմաթիւ գերիներ և իրանց ամբողջ բանակը թողնելով հայերի ձեռքին: Ամբողջ Ղափանը տօնեց այդ նշանաւոր յաղթութիւնը:

Իր դարաւոր սարկութեան կեղտերը արիւնով լուացած երկիրը կարող էր պարծենալ Դաւիթ-բէկով և նրա օգնականներով: Բայց նոյն այդ օգնականների համար պակաս պարծանք չէր երկաթէ կամքով զինուած մի հրամանատար ունենալը: Նրա երկաթէ ձեռքն էր կարգ ու կանոն պահպանում: Առանց նրան՝ հերոսների այդ խմբի մէջ չէր լինի միութիւն, կարգապահութիւն: Մենք տեսանք որ գործի համար Դաւիթ-բէկը գլխատել տուեց Պապին: Բայց պատմութիւնը դրանից աւելի մի նշանաւոր փաստ էլ է հաղորդում: Դաւիթ-բէկը մահուան վճիռ արձակեց և իր ամենանշանաւոր օգնականներից մէկի, Մխիթար սպարապետի դէմ: Սպարապետ անունը, որ Շահումեանի գրել տուած պատմութեան մէջ միշտ կոչւած է Մխիթարին, ցոյց է տալիս որ այս մարդը Դաւիթ-բէկից յետոյ երկրորդն էր զօրքերի հրամանատարութեան մէջ: Մենք չը գիտենք, իսկապէս գոյութիւն ունէր այդ հին տիտղոսը Սիւնիքում, թէ նրան ստեղծել է պատմութիւն գրող վարդապետը: Բայց բոլոր հանգամանքները ցոյց են տալիս որ Մխիթարը կարեւոր դիրք ունէր զօրքի մէջ: Եւ ահա Դաւիթ-բէկը ցոյց տուեց որ հարկաւոր դէպքում նա չի խնայի նոյն իսկ այդ քաջ և նշանաւոր մարդուն: Հանգամանքները դարձեալ խիստ բնորոշ են: Մխիթարի և Դաւիթ-բէկի մէջ ինչ-որ խռովութիւն է ընկնում: Մի կռուի ժամանակ Մխիթարը փորձում է վրէժ հանել բէկից. բայց ինչպէս եղել է և լինում է հայերի մէջ, մի աջնալիսի միջոցով, որ վնասում էր ոչ թէ հակառակորդին, այլ ընդհանուր գործին: Կռուի տաք ժամին Մխիթարը յանկարծ յետ է քաշում իր զօրաբաժինը. թուրքերը օգուտ են քաղում այդ չփոթութիւնից, յարձակւում են, ջարդում հայերին, վերցնում են շատ գերիներ: Դաւիթ-բէկը, սռանց այլ և այլութեան, հրամայում է սպանել Մխիթարին: Բայց նրան չըջապատող մեծաւորները աւելի սառնասիրտ են գտնւում: Մխիթարի արածը վատութիւն էր. բայց

եթէ այդ քաջի ցոյց տուած ծառայութիւնները կշռի դնուէին, այս դէպքը ներողամտութեան արժանի մի թեթեւ յանցանք կը լինէր: Եւ նրանք միջնորդում են, մահուան վճիռը ոչնչացնում: Դա մի մեծ խելօքութիւն էր. Մխիթարը հայոց գործին շատ հարկաւոր էր: Բայց և այնպէս, նա ծեծուեց բէկի հրամանով:

Ընտանեկան այս անհամաձայնութիւնները, բարեբախտաբար, շատ չէին և Դաւիթ-բէկը կարողանում էր ժամանակին արմատախիլ անել նրանց: Աւելի ծանր ու դժուար էր ներքին մի ուրիշ կեղտոտութեան դէմ կռուելը: Դաւիթ-բէկի և նրա քաջերի ճանապարհը վարդերով չէր ծածկուած: Երկրի բոլոր տէրերը չէին ուղիորդուած ազատ հայրենիք ունենալու գաղափարով: Կային ճանապարհի վրայ դարան մտած օձեր էլ. կային դաւաճաններ, ուրացողներ: Վրաստանից Սիւնիք հասնելուն պէս Դաւիթ-բէկը ստիպուած եղաւ ամենից առաջ մի դաւաճանի դէմ դարձնել իր սլաութող ձեռքը: Տաթևի Մէլիք-Դաւիթը, մահմեդականութիւն ընդունած մի ստոր մարդ, որ կոչւում էր Բազըր *), զօրք հանեց Դաւիթ-բէկի դէմ: Կռուի մէջ յաղթուելով, ուրացող մէլիքը ընկաւ հայերի ձեռքը: Դաւիթ-բէկը ուղարկեց նրան Շնհէր, ուր նա եկեղեցում ամբողջ տասն երկու օր պիտի կրկնէր բազմութեան առաջ ժողովրդական մի առած. «Այսը Լուսաւորչի հաւատին, վայ ուրացող մարդուն»: Դրանից յետոյ դաւաճանը գլխատուեց և այդպիսով ազգային գործը ազատուեց մի չար թշնամուց:

Աւելի վտանգաւոր և չարագործ հանդիսացաւ Բարգուշատի երիցվանիկ աւանի մէլիքը, Ֆոանգիւլ անունով: Սա, կարծելով թէ Դաւիթ-բէկի ձեռքով պիտի զրկուի իր իշխանութիւնից, հողով և մարմնով նուիրուեց թուրքերին: Նրա սարքած մի թակարդի մէջ ընկաւ հայ նշանաւոր զօրազլուխներից մէկը, Չափլ-դուրի Թորոս իշխանը: Բարգուշատի Ֆաթալի-խանը շատ էր ընդհարուել հայերի հետ, բայց միշտ ջարդ էր կերել. դաւաճան հայ մէլիքը խօսք կապեց նրա հետ, բայց արտաքուստ հաւա-

*) Սա, երևի, այն Մէլիք-Բազըրն է, որի մասին Իվան Վարապետը գրում էր (տ. վերևում, եր. 325) թէ նա 55 նշանատր հայերի զլուխները, դաւաճանութեամբ կարել էր տուել և ուղարկել Շահին Իվան Վարապետը յայտնում էր ռուսներին թէ մէլիքները վճռել են քարութանդ անել Բազըրի բերդը: Դուրեւ Որոտնայ բերդն էր Բազըրի բերդը. դա գտնւում է Տաթևի մօտ և մահմեդականների համար մի կարևոր ամրութիւն էր Դաւիթ-բէկի ժամանակ: Այսպէս ենթադրել է տալիս այն հանգամանքը, որ Մէլիք-Աւանը, ինչպէս պատմում է Շահումեանը, պաշարեց Որոտնայ բերդը, բայց չը կարողացաւ վերցնել: Վերջը Դաւիթ-բէկը քանդեց մահմեդականութեան այդ ուժեղ պատուարը:

տարմութիւն ցոյց տուեց Թորոս իշխանին և սրա հետ պատերազմի դուրս եկաւ Յաթալի-խանի դէմ: Կռիւը աջող էր հայերի համար. ոգեորուելով իրանց յաղթութեամբ, նրանք սկսեցին հալածել թուրքերին. բայց թուրքերի փախուստը մի թակարդ էր. նրանք յանկարծ յետ դարձան և յարձակուեցան հայերի վրայ. այդ ժամանակ Փռանգիւլն էլ ետևից յարձակուեց իր զօրքով: Հայերը ընկան երկու կրակի մէջ, ջարդուեցան, գերիներ տուին: Ինքը, Թորոսը, հերոսաբար ընկաւ պատերազմի մէջ և Չափնդուրի ոյժը ոչնչացաւ: Իսկ Փռանգիւլը, խանին աւելի ևս հաճոյանալու համար, մահմեդականութիւն ընդունեց:

Թորոս իշխանի մահուան չափ ցաւալի էր և միւս աչքի ընկնող զօրապետ Մէլիք-Փարսաղանի մահը: Սա էլ ընկաւ դաւաճան հայի գնդակից: Այդ դաւաճանը Ագուլիսի Մէլիք-Մուսին էր *), որ թշնամական գերք բռնեց հայ զինուորութեան դէմ և դարձաւ նրա հակառակորդների թիկունքը:

Այսքան անողորմ էր ընտանի թշնամին: Դաւիթ-բէկի օգնականների փայլուն խումբը բազմաթիւ յամառ կռիւներ մղեց մահմեդականների դէմ, բայց ոչ ոք չընկաւ այդ պատերազմներին մէջ. անվեհեր քաջութիւնը, լեռնցու յանգգնութիւնը հրաշքներ էին գործում: Միայն հայ զգուելի դաւաճանութիւնն էր, որ երկու նշանաւոր մարտնչողներ իւեց այդ փայլուն խմբից՝ ստոր խաբեբայութիւնների միջոցով: Մէլիք-Մուսին պիտի սպանուէր Դաւիթ-բէկի հրամանով, եթէ չը լինէր Մէլիք-Փարսաղանը: Հայի մէջ նոյն իսկ հասարակ երախտագիտութեան զգացմունք չէ գոյանում՝ դէպի իր ազգակիցը և այն ժամանակ, երբ այսպիսի խռոր բարերարութիւն է ստանում նրանից: Մէլիք-Մուսին իր մարդկանց տանում է թովմա առաքեալի վանքի դէմ, ուր ամրացած էր Դաւիթ-բէկի մի զօրաբաժինը: Բայց վերջինս մեղք է համարում իր ազգակից հայերի դէմ կռուի դուրս գալ և Մէլիք-Փարսաղանը առաջ է գալիս հասկացնելու ագուլեցիներին թէ այսպիսի ժամանակ հայը հայի վրայ դէպք չը պիտի բարձրացնէ: Այդ ժամանակ ահա Մէլիք-Մուսու հրամանով արձակուած հրացանը գետին է գլորում Հալիճորի տիրոջը...

Իզուր չէր Դաւիթ-բէկը այնքան անողորմ խստութեամբ վարւում Մէլիք-Փռանգիւլի և Մէլիք-Մուսու հոգին ունեցող հայերի հետ: Չը նայած այդ խստութիւններին, վատութիւնը գնալով մեծ ծաւալ էր ստանում հայերի մէջ. և հերոս հրամա-

*) Ագուլեցի Մուսաբէկեան ընտանիքը երկար ժամանակ Ագուլիսի և շրջակայ գիւղերի կառավորին էր: Այդ ընտանիքից էր Շամախու Հասան-խանը, որ սպանուեց լէզգիների արշաւանքի ժամանակ:

նատարը ստիպուած էր միաժամանակ երկու տեսակ կռիւ մղել. մէկը դարաւոր թշնամու—մահմեդականութեան դէմ, միւսը—ներքին ապականութեան դէմ, որ աւելի հին, աւելի վտանգաւոր և անգութ թշնամի էր:

Պատմութիւնը, ճիշտ է, ժողովուրդներն են ստեղծում, Սիւնիքի շարժումը, ճիշտ է, տարիներից ի վեր պատրաստուող անհրաժեշտութիւն էր և Դաւիթ-բէկը, ճիշտ է, գտաւ երկրում հասունացած դադափար. բայց չը պէտք է մոռանալ որ ժողովուրդների մէջ առաջնորդ հանդիսացող ուժեղ ու տաղանդաւոր անհատներն են այս կամ այն ընթացքը տալիս պատմութեան, հաղորդում են իրանց ժամանակին մի յայտնի հոգի, գոյն: Դաւիթ-բէկը, անկասկած մի շատ ուժեղ, շատ տաղանդաւոր գործիչ, Հայաստանի բազմաթիւ դժբախտ, գերի նահանգներից մէկում իր անխոնջ աշխատութեամբ, իր անվահերքաջութեամբ և—գլխաւորը—հերոսական հայրենասիրութեամբ, մի այնպիսի մեծագործութիւն կատարեց, որի հետաւոր նմանութիւնն անգամ անյայտ է հայոց պատմութեան այն արիւնյաների էջերին, որոնք գալիս են Ռուբինեան իշխանութեան ոչնչացումից յետոյ: Չորս տարուայ ընթացքում նա մաքրեց Սիւնիքը, զուտ հայկական իշխանութիւն հիմնեց այնտեղ ոյժի իրաւունքով,—մի իրաւունք, որ Արեւելքում միակ հասկանալի, միակ արդար սկզբունքն էր այն խառն ու դժբախտ ժամանակներում: Սա հայերի համար մի այնպիսի հրաշք էր, որ, կարծես, պիտի վառէր, բորբոքէր ամբողջ ազգը, անսահման ոգևորութիւն պիտի հաղորդէր նրան. և այդ թշուառ ժողովուրդը, որին չէր վիճակուած ստրկութեան շղթաները հանդիստ կերպով կրելու բախտն անգամ, ամեն կողմից պիտի դիմէր դէպի այդ լուսնային հայ իշխանութիւնը, ինչպէս խաւարի մէջ երկար խարխալող մարդը դիմում է դէպի հեռուից երևացող փոքրիկ լոյսը, որ զիշերային արհաւիրքներից ազատուելու յոյսն է ներշնչում:

Բայց այդպէս էր հայ ժողովուրդը:—Ո՛չ, դժբախտաբար: Այդ ազգի գերութիւնը անգառնալի էր. ո՛չ մի հրաշք, ըստ երևոյթին, այլ ևս չէր կարող համախմբել նրան հայրենի տգատութեան օջախի շուրջը, տաքացնել նրան, վերանորոգել նրա արիւնը, նոր առաւօտ բաց անել նրա տխուր կեանքի մէջ: Սիւնիքը իր ձեռք բերած ազատութեամբ էլ կղզիացած մնաց: Եւ այդ կղզին էլ հետզհետէ փոքրանում էր, հետզհետէ նուազեցնում էր ազատութեան զինուորների թիւը...

Ի՞նչ է սրա պատճառը: Մենք ներկայ աշխատութեան մէջ, ղեռ այն ժամանակից, երբ սկսում էինք բացատրել արեւելեան քրիստոնեաների ազատագրութեան հանդամանքները, շարունակ

չեչտում էինք հայրենիքի գաղափարի բացակայութիւնը հայերի մէջ, չեչտում էինք այն իրողութիւնը, որ ոչ ժողովրդի բանաստեղծութիւնը, ոչ գրականութիւնը չէին տաքացնում հայերի սրտերը, չէին վառում նրանց մէջ ազատ ապրելու մի տենչանք: Մենք չափազանց կարճ յիշողութեան տէր ժողովուրդ էինք. մեզանում գրագէտ դասը ճգնաւոր էր, վաճառական դասը խոր խորում էր իր հաշիւների մէջ և իր ձգտումներով չէր էլ կարող թոյլ տալ պատերազմական դրութիւն այն տեղերում, ուր պիտի երթնեկէին նրա կարաւանները, իսկ արհեստաւոր և հողագործ դասը ագէտ էր, ստրկութեան մէջ գլուխ ձկած:

Երբ կարգում ենք մանրամասնութիւններ այն անվերջ կրօնական վէճերի մասին, որոնք բորբոքուած էին Կ. Պօլսում և ուրիշ տեղերում՝ լուսաւորչականների և կաթօլիկների մէջ, և ապա հանդիպում ենք Դաւիթ-բէկի պէս մի բացառիկ, լուսատու երեւոյթին, ակամայ մեր մէջ հարց է ծագում. եթէ հայերը այդ կրօնական անպտուղ վէճերի մէջ իրանց վատնած ևռանդի և հարստութիւնների գոնէ մի չնչին մասը դնէին մի Դաւիթ-բէկի տրամադրութեան տակ, — ինչէր չէին կարող պատահել հայոց աշխարհում: Եթէ պատարագի բաժակի մէջ ջուր խառնելու կամ չը խառնելու պատճառով այնպիսի յօժարութեամբ կախազան բարձրացողները, թիւրքաց բանտրում ու թիւրքաններում տանջուողները, մի օրուայ մէջ հարստութեան բարձրութիւնից աղքատութեան անդունդը գլորուողները յօժար վրնէին նոյն զրկանքներն ու չարչարանքները կրել և այն գործի համար, որի ներկայացուցիչը Դաւիթ-բէկն էր, այն ժամանակ, ի հարկէ, մենք ուրիշ բան կը տեսնէինք:

Ահա ինչն էր պակասում — գաղափար, գիտութիւն: Չը կային այդ բաները և ազատութեան համար կռուողները մենակ էին, ոչ ոքին չէին կարողանում ոգևորել: Այն, ինչ որ պիտի պատմէինք այսուհետեւ, աւելի ևս հաստատում է այդ տխուր իրողութիւնը:

Մի ահաւոր անուն բարձրացնելով Սիւննայ լեռներում, Դաւիթ-բէկը դրանով արդէն վերջացրել էր գործի ամենագիծուար մասը: Տեղային մահմեդականութիւնը ընկճուած էր. հարևան թուրք իշխանութիւնների արշաւանքները այլ ևս վտանգաւոր չէին հայերի համար, որոնք սովորել էին կռուել և յաղթել: Մնում էր պարսից կենտրոնական կառավարութիւնը. բայց Շահ-Թահմազից առանձին երկիւղ չը կար. և Դաւիթ-բէկին կը մնար հանդարտ կերպով կարգադրել գործերը իր երկրում, եթէ երևան չը գար մի նոր, աւելի զօրեղ թշնամի:

Դա թիւրքիան էր: Ինչպէս տեսանք, օսմանեան արշա-

ւանքի մի ծայրը արդէն հիւսիսից հասել էր Ղարաբաղին: 1726 թուականին նրա միւս ծայրն էլ հարաւից սկսեց գործել հայ զինուորութեան դէմ, մօտենալով Ղափանին: Մեծ փորձութիւն էր գալիս հայկական զօրքերի համար: Այժմ այլ ևս թոյլ, ան-
չնչացող Պարսկաստանը չէր կանգնած առջևում. օսմանեան բանակը արշաւում էր զանազան ուղղութիւններով, աւերածնեք և սարսափ տարածելով ամեն կողմ: Պարսկական երկիրներից հաւաքած աւարը ահազին էր. բայց աւելի մեծ էր գերիների թիւը. հայերը և թուրքերը մեծ խմբերով քշւում էին դէպի օս-
մանեան երկիրը և այնտեղ վաճառւում էին:

Սարսափը իր ազդեցութիւնը գործեց և Սիւնիքում: Հա-
սաւ մի ժամանակ, երբ Դաւիթ-բէկը իրան համարեա մենակ տեսաւ: Արշաւող թշնամու ահը վերանորոգեց հայերի մէջ հին ստրուկի հոգին: Զօրքը փախաւ այս ու այն կողմը, շատ տե-
ղեր, որոնք մինչև այդ միացած պատերազմում էին մահմեդա-
կանների դէմ, շտապեցին հպատակուել օսմանցիներին: Մի կարճ միջոցում Ղափանը չրջապատուած էր թշնամիներով: Ինքն ըստ ինքեան օսմանեան բանակը շատ մեծ չէր. բայց հայերի դէմ կռուելու համար այդ բանակում հաւաքուեցան տեղացիների մեծամեծ խմբեր. այդտեղ էին Օրդուբատի, Բարգուշատի խա-
ները. այդտեղ էին և շատ հայեր: Գողթան գաւառը ծածուկ միացաւ օսմանցիների հետ: Չամլուգուրը, Թորոս իշխանի երկի-
րը, որ այնքան կարեւոր դեր էր կատարել հայոց պատերազմնե-
րի մէջ, այժմ տատանւում էր և պատրաստ էր առաջին իսկ յարմար դէպքում անցնել օսմանցիների կողմը: Դրսից եկած ա-
հաւոր ոյժը ներքին կատարեալ քայքայման, դարաւոր անբարոյա-
կանութեան յուսահատեցնող պատկերն էր փռել ամեն տեղ: Այդ ընդհանուր կործանման մէջ կանգնած էր Դաւիթ-բէկը իր ամուր Հալիձորում: Ամեն ինչ քանդւում էր նրա չորս կողմը. միայն 17 մարդ էին մնացել նրա հետ...

Բայց նա վայր չը դրեց իր սուրը: Ընտանեկան վատու-
թիւնը, թշնամու ահազին բաղմութիւնը չը վախեցրին հերոսին: Նա դարձեալ գործ դրեց իր կրակոտ եռանդը, նորից սկսեց ստեղծել պատերազմի նիւթեր. կարողացաւ հաւատ ներշնչել իրան չրջապատողներին, հաւաքեց ու կազմակերպեց մի փոք-
րաթիւ զօրք, թուով մի քանի հարիւր հոգի, և այդ մի բուռն մարդկանցով պատերազմ յայտարարեց օսմանեան հզօր բանակ-
ների դէմ: Մի յանդգնութիւն էր դա, որ ծիծաղելի չէր թւում այնպիսի կռուողների աչքում, ինչպէս էին Դաւիթ-բէկը, Մխի-
թար սպարապետը, Տէր-Աւետիքը: Ու նորից բորբոքուեց կա-
տաղի կոիւր, այս անգամ անհաւասար ոյժերով, այս անգամ մի

զօրեղ թշնամու գէմ: Տեանելով այդ պատրաստութիւնները, թիւրքաց զօրքերը 1727-ին ներս խուժեցին Ղաթան:

Կռուածադիւր Հալիձորն էր: Դաւիթ-բէկը դուրս եկաւ իր բերդից, որպէս զի բռնէ գետի անցքերը և թոյլ չը տայ թըշնամուն այս կողմն անցնել: Այդ միջոցին էլ նա տեսնում էր իր թոյլ ոյժերի քայքայումը: Թշնամու բանակի տեսքը բաւական էր որ նրա զինուորների մէջ եղած վախժողութիւնը թողնեն ու փախչեն օսմանցիների մօտ: Բայց ամենքը չէին վախկոտ. մնացին մի բուռն քաջեր և զրանց էլ տարաւ Դաւիթ-բէկը, զրաւեց գետի անցքը: Դա էլ չօգնեց, երկու օրից յետոյ նա տեսաւ որ օսմանեան բանակում գտնուող հայ հրացանաւորները անցան գետի ուրիշ կողմով: Մնում էր յետ դառնալ և փախուել բերդում: Հայերն էին առաջնորդում թշնամուն գէպի այն ամրութիւնը, ուր ամփոփուած էր աղատուած հայութեան վերջին յոյսը: Բայց դա մի անօրինակ գէպը էլ չէր: Նոյն այդ Ղաթանում, վեց դար առաջ, սելջուկեան թուրքերը աշխատում էին ոչնչացնել Բաղաց թագաւորութիւնը, բայց նրա անառիկ բերդերը ապարդիւն էին դարձնում այդ ջանքերը: Կորցնելով ամեն մի յոյս, նրանք առաջ քաշեցին իրանց հետ եղած հայերին. և Շիրակի իշխան Գրիգոր Ապիրատեանը խաբէութեամբ ներս մտաւ Կապան բերդը, յանձնեց նրան թուրքերին, որոնք սպանեցին Սենեքերիմ թագաւորին և տիրեցին երկրին: Եւ քանի՞նք են այսպիսի գէպեր, երբ հայը իր ձեռքով թշնամուն մօտնում էր իր տունը, հաստատում էր այնտեղ ու ինքը նրա ստրուկը դառնում:

Հալիձորի պաշարումը Դաւիթ-բէկի հերոսական գործերի պատկեր է կազմում: Վեց օր շարունակ օսմանցիները յարձակումներ էին գործում այդ բերդի վրայ, բայց յետ էին մղւում այն մի բուռն քաջերից, որոնք կուռւում էին պարիսպների վրայից: Եօթներորդ օրը ամենասաստիկն էր. պաշարողները, երեք մասի բաժանելով իրանց ոյժերը, կատաղի կերպով դրոհ տուին բերդի վրայ: Փոքրիկ, բայց ամուր բերդի վրայ գնացողների ահալին բաղմութիւնը կարող էր շփոթեցնել ամեն մէկին: Հարիւրաւոր և հազարաւոր զրօշակակիրներին հետևում էր մարդկային մի ծով, որ ալիքներ տալով ընդհարւում էր պատերին. այդ ալիքները յետ ու յետ էին դառնում, բայց ետևից եկողները անցնում էին առաջիկաների վրայով, կատաղի յարձակւումներ էին տալիս, սանդուխքներ էին դնում՝ պատերի վրայ բարձրանալու համար: Կռիւր շարունակուեց ամբողջ ութ ժամ: Գնդակների շառաչիւնը, թմբուկների ձայները, զինուորների գոռիւն-գոչիւնները ամբողջ օրը թնդում էին բերդի շուրջը: Հալիձորը օրհա-

սին մատնուած մի նաւի էր նման, որին ամեն կողմից ծեծուած էին գոռ ալիքները:

Օրը վերջանալու վրայ էր և պաշարուածները տեսնուած էին որ զիմադրութեան յոյսը չքանուած է: Երեք և պիտկոտոսներ կային բերդում. նրանք, քահանաները, Շնհէրի կուսանոցից փախած կոյսերը սկսեցին աղաչել, պաղատել երկիրքը, որ օգնէ հայերին. նրանք զանգալներ էին հնչեցնում, սուրբ Մինասի մատուցները հանեցին և կկեցող սեղանի վրայ և իրանք երեսի վրայ ընկած՝ Աստուած էին կանչում: Այդ միջոցին վճռուեց մի վերջին, յուսահատական փորձ կատարել: Միտիթար սպարապետը և Տէր-Աւետիքը հաւաքեցին երեք հարիւր զինուորներ և սկսեցին պատրաստել նրանց մի յարձակում գործելու: Պարխսպների վրայ կռուողները շարունակուած էին իրանց գործը, իսկ Դաւիթ-բէկի երկու հերոս օգնականները սիրտ էին տալիս այդ երեք հարիւրին, հասկացնում էին թէ սրքան լաւ է պատուով և քաջութեամբ մեռնել պարխսպներից դուրս, քան մնալ բերդում և բաց աչքով տեսնել թէ ինչպէս թշնամին պիտի կոտորէ իրանց ընտանիքները և ուրիշ գաղանթութիւններ կատարէ: Պատրաստելով ամենքին, Միտիթարն ու Տէր-Աւետիքը դուրս տարան այդ խումբը բերդի գաղտնի դռնով. ամենքից առաջ իրանք էին դնում:

Տեղի է ունենում մի խիստ, ջղուտ յարձակում. հայերը կայծակի պէս են վրայ ընկնում և սկսում անակնկալ կատարածը: Օսմանեան ահազին բանակը, բազկացած մեծ մասամբ տեղացի կամաւորներից, չփոթութեան մէջ է ընկնում. չարքերը խառնուած են: Շատ խմբեր փորձով դիտէին թէ ինչ ցնցող թափով և կատաղութեամբ են ընդհարում Դաւիթ-բէկի զօրքերը և այժմ էլ, զգալով նոյնը, սկսում են գլուխ կորցնել ու փախչել: Բերդի վրայից կռուողներն էլ միանում են իրանց ընկերներին, խառնիճաղանձի սարսափը աւելի ևս սաստկանում է և ամբողջ բանակը, վրայ հասած մթութեան մէջ, ցրուէ գալիս. հաւաքելով իր մնացորդները, նա շտապով նահանջում է, հեռանում, թողնելով Հալիձորի պատերի տակ իր ծանրոցքի մեծ մասը և ահազին քանակութեամբ սպանուածներ:

Այդ հերոսական գործը դառնում է մի նոր դարադրուի Սիւնիքի պատերազմների մէջ: Օսմանցիներին էլ կարելի է յաղթել, ահա ինչ էր հարկաւոր ցոյց տալ: Դաւիթ-բէկը թողեց պաշտպանողական պատերազմի միտքը. այժմ կարելի է դուրս մղել օսմանցիներին ամբողջ Ղաթլանից: Մօտակայ կէտը, որ ընտրեց նա արշաւանքի համար, Մեղրին էր, ուր բանակ էր դրել մի փաշա: Բայց յարձակողական պատերազմը պահանջում է զգուշութիւն, հիմնաւոր պատրաստութիւն: Եւ Դաւիթ-բէկը նախ շտապում է

օգուտ քաղել այն տպաւորութիւնից, որ գործել էր օսմանցիներին պարտութիւնը Հալիձորի մօտ: Նա որոնում է դաշնակից: Բայց ով կարող էր միանալ նրա հետ օսմանցիների դէմ: Շրջապատող թուրք խանութիւնները արդէն օսմանեան բանակումն էին: Բայց կար պարսից կառավարութիւնը: Նա մեծ շահ ունէր որ օսմանցիները յաղթուեն, դուրս մղուեն երկրից. նա ինքն էլ պատերազմում էր օսմանցիների դէմ: Արաքսի միւս ափում: Օրդուբատի դիմաց, կանգնած էր Շահ-Թահմաղի մի զօրաբաժինը, որ ուղարկուած էր այդտեղ՝ Արտպատականի սահմանագլխը օսմանեան արշաւանքներից պաշտպանելու համար: Դաւիթ-բէկը Մխիթար սպարապետին և Տէր-Աւետիքին 66 ձիաւորների հետ ուղարկեց այդ զօրաբաժնի հրամանատար խանի մօտ և առաջարկեց նրան միասին պատերազմել թշնամու դէմ: Մի քայլ էր դա, որ պատիւ էր բերում հայ զօրավարի քաղաքական հեռատեսութեան: Պարսկաստանի դաշնակից լինելը, ի հարկէ, անհամեմատ ձեռնտու էր հայերի համար, քան Թուրքիայի իշխանութեան տակ մտնելը: Պէտք էր պահպանել հինը, որովհետև նա փտած էր, չէր կարող կանգնեցնել այն, ինչ սկսել էին հայերը. բայց օսմանցիները այդպէս չէին:

Այս առաջին պատուիրակութիւնը միանգամից չը վճռեց գործը: Եւ Դաւիթ-բէկը վճռեց դիմել Շահ-Թահմաղին: Նա մի քանի արշաւանքներում էլ յաղթեց թիւրքերին, իսկ Մխիթար սպարապետը և Տէր-Աւետիքը մի զիւցադնական յանդուգն գործ սարքեցին, որի հետևանքն այն եղաւ, որ օսմանցիները հեռացան Մեղրիից: Դաւիթ-բէկի պատգամաւորութիւնը ուղիորդեց Թաւրիզ. նա տանում էր իր հետ չորս բեռը օսմանեան կտրած գլուխներ իբրև ապացոյց որ հայերը յաղթում են: Շահ-Թահմաղն էլ հասկացաւ թէ սրբան ձեռնատու է մի այդպիսի ժամանակ հայերի դաշնակցութիւնը Պարսկաստանի հետ և հաճութեամբ ընդունեց իրան ուղղած առաջարկութիւնը: Դաւիթ-բէկը Շահի կողմից նշանակուեց ընդհանուր հրամանատար. նրան հպատակում էին և տեղական բոլոր մահմեդական իշխողները — մի բան, որ համարեա անօրինակ էր մի իսլամ պետութեան մէջ: Բայցի դրանից, Դաւիթ-բէկը ճանաչում էր ինքնագլուխ իշխան իր նուաճած երկրում և դրամ կտրելու իրաւունք էլ էր ստանում: Շահը թանկադին ընծաներով և յատուկ հրովարտակով հաստատեց այս բոլորը:

Ահա ինչ հետևանքներ էր բերում Հալիձորի յաղթութիւնը: Սիւնեցի հերոսը կարող էր պարծենալ որ իր սրի բերանով իրականացրեց Իսրայէլ Օրիի տենչանքները: Հայկական անկա-

խութիւնը այլ ևս երազ չէր, զաղափարական հասկացողութիւն չէր. նա կատարուած փաստ էր...

Ստանալով այսպիսի բարձր դիրք, Դաւիթ-բէկը իրան յատուկ եռանդով գործողութիւններ է սկսում օսմանցիների դէմ: Փոխադրելով իր բանակը Մեղրի, նա այդտեղ է հաւաքում տեղական բոլոր հայ թէ թուրք զօրքերը և արչաւում է Օրդուբասի վրայ: Մի յանկարծակի յարձակումով այս քաղաքը գրաւուած է. Դաւիթ-բէկը, ժամանակ չը կորցնելով, հալածում է օսմանցիներին և համարում է Ագուլիս: Ագուլեցիները դուրս եկան Դաւիթ-բէկի առաջ, համարում էին նրա ձեռքը: Դա հնազանդութեան և սիրոյ նշան էր և հայոց զօրքը հանգիստ կերպով տեղաւորուեց Թովմա առաքեալի վանքում: Տասն օրուայ ընթացքում օսմանցիները երեք անգամ յարձակուեցան հայերի վրայ, բայց երեք անգամ էլ յետ մղուեցան: Շահ-Ռահ-մազի հրամանով երեք պարսիկ խաներ էլ միացան Դաւիթ-բէկի բանակին. նորից յարձակում օսմանցիների կողմից և նորից անաջող: Թովմա առաքեալի վանքում բանակ դրած հայերը նայում էին Ագուլիսին և միամտաբար կարծում էին թէ, իբրև մի հայ զիւղաքաղաք, Ագուլիսը իրանց է նուիրուած: Ո՛չ Դաւիթ-բէկը, ո՛չ նրան չըջապատողները չը գիտէին որ ագուլեցիների համրոյրները յուզայական էին, չը գիտէին որ այդ վաճառակահանական խոշոր կենտրոնը ծածուկ կերպով օսմանցիներին էր նուիրուած և հէնց նա է պատճառը, որ այդքան յաճախացել են օսմանեան յարձակումները:

Վերջին յարձակումից երկու օր հազիւ անցած՝ Դաւիթ-բէկը ստիպուած եղաւ ընդունել օսմանցիներից մի բաց ճակատամարտ Մարազի դաշտում: Նա այսպէս դասաւորեց իր զօրքերը. մի կողմում պարսիկ խաները, միւս կողմում հայ զօրքերը, իսկ Տէր-Աւետիքը իր զօրաբաժնով գործում էր Արաքսի կողմից: Երբ սկսուեց պատերազմը, հայերը իմացան թէ նրբանաւելորդ բեռ են իրանց համար պարսից օգնական զօրքերը. խաները առաջինը եղան փախչողները: Բայց հայերը պինդ կանգնեցին, չը թողին պատերազմի դաշտը և յաղթութիւն տարան: Այնուհետև Դաւիթ-բէկը իր վախկոտ դաշնակիցների ետևից ընկաւ և բռնութեամբ վերադարձրեց նրանց Ագուլիս: Բայց խաները փախան. և հայերը, նրանց պատժելու համար, յափշտակեցին նրանց տները, իսկ հարկմները տարան Հալիձոր:

Ագուլեցիների աչքի առջև էին տեղի ունենում այս հերոսական գործողութիւնները. սակայն նրանց արտին ու մտքին ոչինչ չէին ասում այդ տեսածները: Ո՛չ մահմեդականների հրամանատար զարձած հայ ինքնագլուխ իշխանը, ո՛չ հայերի պատե-

րազմական զարմանալի բախտը չը կարողացան խեղդել նրանց մէջ թշնամութիւնը: Հէնց այն միջոցին, երբ հայոց զօրքը թուամա առաքեալի վանքում հանգստանում էր այդքան գործերից յետոյ, երեան եկաւ Մէլիք-Մուսու վերոյիշեալ դաւաճանութիւնը, որին զոհ գնաց Մէլիք-Փարսաղանը: Նոր միայն բացուեցին հայ զօրականների աչքերը: Հեռանալով դաւաճան Ագուլիսից, նրանք աւար առան մօտիկ դիւղում ագուլիցիների ապրանքը: Բայց այդքանով չը բաւականացաւ 'Դաւիթ-բէկը: Նա զօրք ուղարկեց Ագուլիսի դէմ, չըջակաները կողոպտուեցան, հայերը այժմ մեղք էին համարում խնայել իրանց թիւրքամոլ ազգակիցներին: Նրանք աշխատում էին դուրս հանել ագուլիցիներին գիւղաքաղաքից և այդտեղ ջարդել նրանց: Այդ նպատակով էլ երկու կողմից կրակ գցեցին Ագուլիսը: Բայց բնակիչները դուրս չեկան, և բաւական համարելով իրանց տուած պատիժը, հայերը վերադարձան Մեղրի:

Ագուլիսը չար օրինակ հանդիսացաւ և Չափնդուր դաւառի համար: Այստեղի գլխաւորները յայտարարեցին որ չեն ձանաչում Դաւիթ-բէկին. բայց Տէր-Աւետիքը ընկճեց նրանց, հարկադրեց թողութիւն խնդրել Դաւիթ-բէկից. ինքն էլ մի լաւ ջարդ տուեց օսմանեան մի զօրաբաժնի, որ այդ ժամանակ մըտել էր Չափնդուր:

Այսպէս ահա ամեն կողմից աջողութիւն էր ստեղծւում հայկական անկախութեան համար: Ի՞նչ կը լինէր այդ գործը, եթէ անողը ճակատագիրը մի սոսկալի հարուած չը լինէր պատրաստած: Մի հարուած էր դա, որ գալիս էր այն ժամանակ, երբ հայոց գործը գեռ նոր էր ծլել և ամբոնում էր պատերազմական ծխի մէջ: 1728 թուականին Դաւիթ-բէկը վախճանուեց Հալիճսրում, իր տան մէջ: Ահա ինչ հարուած էր իջնում հայերի գլխին: Քաջի մահը մահ էր և ամբողջ գործի համար: Սիւնիքում մի ուրիշ Դաւիթ-բէկ չը կար այլ ևս...

Սկզբում գործը, ըստ երևոյթին, գնում էր իր կարգով: Դաւիթ-բէկի տեղը, զօրքերի գլխաւորների հաւանութեամբ, բռնեց Մխիթար սպարապետը: Մխիթարը մի արժանաւոր յաջորդ էր իւրի քաջ ղինուոր. բայց Սիւնիքում, ինչպէս տեսանք շատ օրինակներից, միայն քաջ ղինուոր չէր հարկաւոր: Պէտք էր երկաթի ձեւք, նուաճող, հպատակեցնող: Այգալիսի ձեւք չունէր Մխիթարը: Եւ բորբոքուեցին ընտանի խռովութիւնները: Այս անգամ քայքայում մտցնողը Տէր-Աւետիքն էր...

Պատմիչը չէ բացատրում, թէ ինչից առաջացաւ Տէր-Աւետիքի թշնամութիւնը Մխիթարի դէմ: Բայց հեշտ կարելի է գուշակել որ մէջ տեղ գործում էր քահանայի փառասիրութիւնն

էլ: Նա, մի անպարտելի հերոս, ոչնչով պակաս չէր Մխիթար սպարապետից և իր հրաշալի քաջագործութիւններով պակաս արժանի չէր Դաւիթ-բէկի ժառանգութիւնը ստանալու, մանաւանդ որ Հալիձորը իր աներոջն էր պատկանում: Մի տարի միայն շարունակուեց Մխիթարի իշխանութիւնը: Այդքան ժամանակն էլ բաւական եղաւ որ Տէր-Աւետիքը թեքուէ օսմանցիների կողմը: Հալիձորը նորից պաշարուեց. բայց այս անգամ նա չէր դիմադրում թշնամուն: Նոյն միջոցին, երբ պաշարողները կրակ էին թափում դրսից, բերդի ներսում տեղի ունէին խռովութիւններ: Տէր-Աւետիքը, վերջնելով իր հետ երկու մարդ, գնաց օսմանան բանակը՝ անձնատուր լինելու պայմանների մասին խօսելու համար: Մխիթար սպարապետը չը կամեցաւ իր պատերազմական ընկերի բախտին ենթարկուել. օսմանցիների ոտը նա չը գնաց, այլ գտնելով յարմար միջոց, գիշերը միակ իջաւ բերդի պարսպից և հեռացաւ այդ անպատուութեան վայրից, թողնելով այնտեղ իր կնոջն ու երեխաներին:

Տէր-Աւետիքը պայմանաւորուել էր որ օսմանցիները, տիրանալով Հալիձորին, ոչ ոքին մնաս չեն տայ: Բայց միւս օրը Հալիձորը հիմն ի վեր քարուքանդ դարձաւ և ինքը, քահանան, ակնատես եղաւ մի սոսկալի կոտորածի, որի ժամանակ չը խնայուեց ոչ հասակ, ոչ սեռ: Որքան անփառունակ վերջ էր տալիս այդ հերոսը իր ամբողջ գործունէութեան: Սոսկալի տեսարանի ազդեցութեան տակ նրա մէջ վառուում է կրօնական կրակը: Նա նոր միայն զգում է որ ինքը քահանայ է, իսկ քահանային վայել չէ այդքան արիւն թափելը: Ու դառնում է ինքն իրան դատապարտող մի ողորմելի յանցաւոր. թողնում է երկիրը, ուր այնքան մեծ գործեր էր կատարել, վերջնում է օսմանցիներից ծանր, սոսկալի գնով առած իր գլուխը ու ճանապարհուում է Երուսաղէմ՝ իր մեղքերի թողութիւնը ստանալու համար:

Ստացաւ արդեօք: Նրա ձեռքով սպանուած հայրենի գործը շատ կասկածելի է դարձնում այդ: Իսկ գործը սպանուած էր, թէ և Սիւնիքում դեռ կենդանի էր Մխիթար սպարապետը:

Փախչելով Հալիձորից, թողնելով իր երեխաներին թիւրքաց սրերի տակ, այս հերոսը ջանքեր էր գործ դնում կորցրածը յետ ստանալու և երկրի պատիւը փրկելու համար: Նա այլ ևս չափանում չը մնաց, անցաւ հիւսիսային Սիւնիք և հաստատուեց Խնձորէսք անունով մեծ բերդում: Մի տարուայ ընթացքում նա կարողանում է ահագին գործ կատարել, հաւաքում է զօրք, սկսում է յանդուգն արշաւանքներ: Յարձակում է Օրդուբատի վրայ, վերջնում է նրան, մեծ կոտորած անում և հարիւր վաթսուս ուղտերի վրայ բեռնած հարուստ աւարը տանում է Խնձորէսք:

Բայց այդ բերդում ուրախութեամբ չեն զիմաւորում քաջին: Խնձորէսքը, ընդհակառակն, սարսափի մէջ է ընկնում. ստրկական հոգին խօսում է բնակիչների մէջ. վախենում են օսմանցիներից, վախենում են թէ կը գան իրանց էլ այնպէս կը կոտորեն, ինչպէս կոտորեցին հալիձորցիներին: Ու պահանջում են Մխիթարից որ հեռանայ այդտեղից: Բայց սպարապետը, ինչպէս երևում է, այդ միջոցին մի մարդ էր, որ գլուխ դնելու տեղ չէր գտնում Սիւնիքի մէջ: Նա չէ հեռանում: Ուստի վախկոտութիւնը զիմում է մի հրէշաւոր եղեռնագործութեան: 1730 թուականի մի օր վեր են կենում խնձորէսքցիները, խփում սպանում են Մխիթարին՝ կամենալով ցոյց տալ օսմանեան իշխանութիւններին թէ Խնձորէսքը նրանց հլու հպատակն է: Սպանողները մի այլ ստորութիւն էլ են կատարում. կտրում են դիակի գլուխը և տանում թիւրք փաշայի մօտ: Բայց պատմիչը ասում է թէ փաշան աւելի ազնիւ գտնուեց, քան այդ դաւաճան հայերը. քաջ և նշանաւոր զօրավարին այդպէս տմարդի կերպով սպանելը այնքան զայրացնում է նրան, որ հրամայում է կոտորել գլուխը բերդիներին: Եւ դա է մնում այդ ողբալի մահուան միակ հատուցումը:

Այնուհետեւ Դաւիթ-բէկի կառուցած չէնքը սկսում է փուլ գալ սոսկալի արագութեամբ: Մխիթարի զօրքի մի մասը ցրու է գալիս, միւսը անցնում է Ղարաբաղ, մէլիքների մօտ: Մենք չը դիտենք թէ ինչ վախճան ունեցան Դաւիթ-բէկի միւս զօրապետները, օրինակ Բայինդուրը: Ստեփանոս Շահումեանը, ինչպէս ասացինք գնաց Վենետիկ և վաճառական դարձաւ: Ս. Ղաղարի վանքում նա իր աղգականների հետ չինել տուեց մի խորան Լուսաւորչի անունով, իսկ այդ սեղանի առաջ պատրաստեցին իրանց տոհմային դամբարանը: Բայց յայտնի չէ թէ երբ և ո՛ւր վախճանուեց Ստեփանոսը. նա ամուսնացել էր Վենետիկում Գարագաշեան հայ-կաթօլիկ ընտանիքի մի աղջկայ հետ: Հարստութիւնն էլ չը մնաց նրան. 1757-ին Շահումեանների առևտրական տունը անանկացաւ և Ստեփանոսի աղջիկը, իբրև կարօտ, նստած էր ստանում մի բարեգործական դումարից*):

Այժմեան Խնձորէսք գիւղի հարաւ-արեւելեան կողմում ժայռերից մի լեզուակ է բաժանւում, որի երեք կողմից հոսում է գիւղի գետակը: Այդ քարային լեզուակի հարթ մասի վրայ երևում է մի փոքրիկ աւերակ եկեղեցի, չրջապատուած պարիսպով: Եկեղեցու հիւսիսային կողմում, մի հասարակ տապանաքարի վրայ, կարելի է կարդալ հետեւեալ անգրագէտ սողերը.

*) „Սիւնիք“, եր. 302.

Այս է տապան ի հանդիսեան
Իջեալ մարմնով ի գերեզման
Սաչ Մխիթար մեծ անուանեալ
Սորա ծնէր իշխանութիւն
Սա բեմուրատ գնաց ջիւան
Որ է երկրէն սաչ Կեանճով էր.
Նահատակեցաւ ՌՃՀԶ *):

Պատմիչը անուանում է Մխիթարին «վերջին մխիթարիչ Հայոց»: Եւ սա ճիշտ է: Հայկական անկախութեան վերջին ներկայացուցիչն է պառկած այդ գերեզմանում՝ զոհ հայրենի անպիտանութեան:

Նրանից յետոյ Սիւնիքը ոչինչ գեր չէ կատարում հայկական շարժման մէջ...

VII

Դաւիթ-բէկի հետ մի և նոյն տարում, 1728-ին, վախճանուեց և Գանձասարի Եսայի կաթողիկոսը: Պակասում էր հայկական գործի ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկն էլ, նա, որ Իսրայէլ Օրիի աջ բազուկը՝ հանդիսացաւ, որ քսան և հինգ տարուայ ընթացքում, չը նայած անաջողութիւններին, պահպանում էր երկրում ազատութեան մի վառ յոյս: Այդ մարդն էր, որ եկեղեցու հովուի պաշտօնի հետ միացրեց զինուորական գործունէութիւնը: Նա էր, որ Ղարաբաղի և Սիւնիքի լեռներում հանդէս բերեց զինուած հայութիւնը: Շատ բան չէր կարող անել Օրին, եթէ նրա հետ միաժամանակ Գանձասարում չը լինէր Եսայի կաթողիկոսը: Պատմութեան ընթացքը շատ պարզ ցոյց է տալիս որ ազատութեան զաղափարը Օրիի հետ վաղաժամ գերեզման կը մտնէր, եթէ Եսային իր վրայ վերցրած չը լինէր սկսած գործի շարունակութիւնը:

Իր կեանքի վերջին երկու տարում Եսայի կաթողիկոսը այլ ևս հանդէս չէ գալիս ուսաց կառավարութեան ուղղած թղթերում. զոնէ մեզ յայտնի գրադրութիւնների մէջ նրա անունը 1726-ից յետոյ չը կայ: Պատճառը, որքան կարելի է զուշակել Մինաս վարդապետի մի երկար բացատրութիւնից *), հրաւիրւում էր: Եսային շարունակ ոգևորել էր հայերին ուսման շնորհիւ, այդ ոգևորութիւնը անչափ լարել էր երկրի ոյժերը, հասցրել էր նրան այն դրութեան, որ նա

*) Ե. Լալայեան—«Ձանդեգորի Գաւառ», Թիֆլիս, 1899, եր. 35: Թուականը սխալ է. պիտի լինի ՌՃՀԹ.

**) ՅՅՈՅԵ, եր. 460:

***) Ibid, եր. 437:

սպիւղուած էր պատերազմներ տալ նոյն իսկ մի այնպիսի ուժեղ թշնամու, որպիսին էր Թիւրքիան: Մենք տեսանք, որ 1725-ին հայերը ոչնչացրին օսմանեան մի զօրաբաժին: Յաջորդ 1726 թուականին սէրապէր Սարը-Մուստաֆա փաշան, որ բնակուում էր Գանձակում, աւելի մեծ ոյժերով մի արշաւանք մտցրեց Ղարաբաղ: Հայերը դուրս եկան նրա դէմ և առանց որ և է օգնութիւն ստանալու, մենակ, ութ օր շարունակ կռուեցին: Այդ ուժեղ դիմադրութեան հետեանքն այն եղաւ, որ Թիւրքերը, մեծամեծ կորուստների պատճառով, յետ դարձան Գանձակ: Ռուսաց զօրքերի հրամանատար իշխան Դոլգորուկի գրում էր իր կառավարութեան թէ միայն Աստուած է պահպանում հայերին, թէ չէ՝ մարդկային խելքից բարձր է հասկանալ թէ զեռ ինչպէս են նրանք պահում այդքան զօրեղ թշնամու առաջ:

Եթէ հեռուից նայող օտարականը այդպէս էր մտածում, իրոնք, հայերը, ի հարկէ, աւելի լաւ էին հասկանում թէ որքան վտանգաւոր գրութեան մէջ են ընկել, իրանց վրայ կենտրոնացնելով օսմանեան բանակի հարուածները, որոնք ուղղուած էին երկու կողմից—Ղափանից և Գանձակից: Այս պատճառով էլ նրանք, վերոյիշեալ յամառ պատերազմից մի ամիս անցած, մի մեծ պատգամաւորութիւն ուղարկեցին նոյն իշխան Դոլգորուկիի մօտ, Սալխան, և խնդրում էին օգնական զօրք տալ: Բայց ուրա հրամանատարը, ի հարկէ, չը կատարեց այդ խնդիրը, քանի որ ոչինչ կարգադրութիւն չունէր Պետերբուրգից:

Իսկ Պետերբուրգում, Պետրոսի մահից յետոյ, փոխուեց շատ բան: Մեծ վերանորոգչին յաջորդեցին ժառանգներ, որոնք ոչ նրա հանձարն ունէին, ոչ հեռատեսութիւնը և ոչ նոյն իսկ եռանդի մի մասը: Գահը Պետրոսից ժառանգողը նրա ամուսին Եկատերինան էր. երկու տարուց յետոյ Եկատերինային յաջորդեց անչափահաս Պետրոս երկրորդը: Երկուսն էլ թոյլ վեհապետներ, երկուսն էլ խաղալիք դարձած ուժեղ պաշտականների ձեռքին:

Եկատերինա I-ի և Պետրոս II-ի ժամանակ համարեա անփոփոխ մնաց ուստաց քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ: Իրական օգնութիւն հասցնել հայերին չէր կարելի, ինչպէս չէր կարողանում հասցնել Պետրոս Մեծը՝ Թիւրքիայի հետ կնքած դաշնագրութեան պատճառով: Դրա փոխարէն ուրա կառավարութիւնը շարունակում էր յուսադրել հայերին, շարունակում էր դրդել նրանց, որ պահուեն, չը հպատակուեն օսմանցիներին, մինչև որ կը գայ յարմար ժամանակը: Եթէ կար այդ քաղաքականութեան մէջ մի նորութիւն, դա այն էր, որ մտադրութիւն կար հայոց զօրքերը ծառայեցնել ուստաց այն բանա-

կում, որ գրաւած ունէր Կասպիական ծովեզրքը: Բայց իշխան Դօլգորուկի ընդդիմացաւ այդ ծրագրին, ասելով թէ հայերը առանց այդ էլ հազիւ են դիմանում օսմանեան զօրքի հարուածներին. իսկ եթէ զրկուեն իրանց սեփական զօրքից, պիտի հպատակուեն Թիւրքիային,—մի բան, որ բոլորովին ցանկալի չէր ուսուց շահերի տեսակէտից:

Ահա այսպիսի դրութիւնը սկսեց ընդհանրապէս առաջացնել հայերի մէջ: Եսայի կաթողիկոսը չը գիտէր ինչ պատասխան տալ մէլիքներին, երբ սրանք պահանջում էին բացատրել թէ ինչ են ուզում անել ռուսները և երբ, վերջապէս, պիտի օգնեն հայերին: Անհամաձայնութիւններ սկսուեցին հայոց բանակի մէջ, և ինչպէս երևում է, շատ լուրջ անհամաձայնութիւններ: Մինաս վարդապետը յիշատակում է ինչ-որ պառակտումներ, կռիւներ և աւելացնում է. «Կաթողիկոսը, տեսնելով նրանց (զօրքերի) մէջ մեծ չփոթութիւն և մատնութիւն, անժամանակ վերջացրեց իր կեանքը»: Կամենում է ասել որ Գանձասարի կաթողիկոսը ցաւից ու կսկիծից վախճանուեց: Եւ այնպիսի մի մարդուց, ինչպիսին էր Եսային, ճիշտ որ կարելի էր սպասել այդ տեսակ մի մահ. տեսնել քառորդ դար փայլալայած զաղափարների խորտակումը և խորապէս չը յնցուել—ամեն մարդ չէ կարող...

Սակայն զաղափարի վերջնական խորտակում չէր դառնա: Ինչպէս երևում է, խռովութիւնները շուտ վերջացան, չը մտցնելով բանակի մէջ ծանր անկարգութիւններ: Մենք տեսնում ենք նոյն դրութիւնը. գործի զուլս է անցած Մէլիք-Աւանը և եռանդով շարունակում է հոգատարութիւնները: Հայերը, այնուամենայնիւ, մի նոր բան գտնել չը կարողացան՝ իրանց դրութիւնից դուրս գալու համար: Նրանք շարունակեցին անել այն, ինչ անում էր Եսայի կաթողիկոսը: Մէլիք-Աւանը, թողնելով Սոխախում Օհան, Աբրահամ, Բաղի և Աւաղ իւզբաշիներին, ինքը իր եղբայր Թարխան-իւզբաշու հետ գնաց Բազու՝ տեղական ռուս հրամանատարի հետ անձամբ խօսելու համար: Ոչինչ չը կարողանալով անել այդտեղ, նա Թարխանին և իր հետ եղած մի քանի հայերին ուղարկեց Պետերբուրգ՝ նորից բանակցութիւններ վարելու, նորից օգնութիւն հայցելու համար: Նամակը, որ տարան այդ պատգամաւորները Պետրոս II կայսրին, գրուած էր 1729 թուի փետրուարին: Այդտեղ Մէլիք-Աւանը, իբրև հայ զօրքի զլխաւոր հրամանատար, ասում էր թէ Թարխանը և նրա հետ Էդուինը իրանից լիազօրութիւն ունեն Պետերբուրգում ամեն ինչ բացատրելու: Միայն մի բանով էր հպարտ լեռնցի հրամանատարը—դինուորի անողարտ պատուով: Նա գնում էր ռուսաց կառավարութեան առաջ այն հանգամանքը, որ սահա եօթ-

ներորդ տարին է, ինչ կազմուել է հայկական զօրքը, նա անդադար կոխներ է անում օսմանցիների դէմ, բայց դեռ գերի չէ տուել թշնամուն, ընդհակառակն, շատ անգամ է ջարդել նրան: «Վասն Աստուծոյ խաթրին մեզ մին օգնութիւն անես,— գրում էր այդ քաջ և համեստ զինուորը.— այսօր շատ նեղ տեղ եմք, լուսահոգի մեծ թագաւորի գերեզմանի խաթրին մեզ քոմակ և օգնութիւն հասուցանես որ անօրէնի ձեռքին էսիր չի լինիմք, վերև Աստուած, ներքև քո հրամանքդ ես» *):

Թարխան-իւզբաշին մանրամասն տեղեկութիւններ հաղորդեց ուսնայ արտաքին գործերի Կօլլեգիային հայերի դրութեան մասին: Նրա ասելով, հայ զօրքի թիւը այդ ժամանակ հասնում էր մօտ 30 հազարի: Զօրքը ամրացած էր պինդ տեղերում, գտնուում էր չորս մարզկանց հրամանատարութեան տակ, շարունակ կոխներ էր մղում օսմանցիների դէմ, երբեք չէր յաղթուել և յոյս ունէր դեռ երկար զիմադրել: Օսմանցիները, չը նայած իրանց դործ դրած ջանքերին, չէին կարողանում հայերին հարկատու դարձնել. միայն Սփնախներից շատ հեռու մի քանի գիւղեր, որոնց հայ զօրքը օգնութիւն հասցնել չէր կարողանում, ստիպուած էին մի թեթև հարկ տալ նրանց: Երկիրը մատակարարում է այն ամենը, ինչ հարկաւոր էր զօրքին.— կային երկաթի, պղնձի, կապարի, արծաթի հանքեր, դրանցից միայն երկաթի հանքերն էին չահագործուած, այն էլ գլխաւորապէս ղէնքեր չինելու համար: Զինագործները տեղացի հայերն էին. զգացւում էր լաւ վառօդի պակասութիւն, իսկ պղնձի և արծաթի հանքերը մնում էին առանց չահագործութեան, որովհետև հասկացող վարդապետներ չը կային: Չը կային նոյնպէս և թնդանօթներ՝ դարձեալ վարպետներ չը լինելու պատճառով, և Թարխանը խնդրում էր մասնագէտներ ուղարկել հայերի մօտ: Երկիրը այնքան առատ բերքեր ունէր, որ հայ ժողովուրդը խոստանում էր իր հաշուով պահել պահպանել ուսնայ օգնական զօրքը:

Սակայն ուսնայ կառավարութիւնը այդ նոր պատգամաւորութեան առիթով մի նոր վճիռ կայացնելու քան չունէր: Նրա վերաբերմունքը մնաց նոյնը, ինչ էր մինչև այդ. եւ ինչ նոր բան կարող էր նա անել, քանի որ Պետրոս Մեծի ծրագիրը ոչ միայն մոռացուելու վրայ էր, այլ և մեծ ծանրութիւն էր դարձել պետութեան համար: Չը կար վերանորոգիչ կայսրի նման պետական հանձաբը, և նրա այնքան ջանքերով, այնքան հեշտութեամբ ձեռք բերած պարսկական մեծ, հարուստ նահանգները ոչ

*) ԾՅՈՒՐՃ, Կր. 442:

միայն ոչինչ օգուտ չէին տալիս գանձարանին, այլ և պատճառում էին ահապին վնասներս Զը կար խելացի, ժիր տնտես, և այդ ծանր բեռից ազատուելու մեծ տրամադրութիւն էր ստեղծուել կառավարչական շրջաններում: Արդէն 1729 թուականի փետրուարին Ռէշտում կնքած մի դաշնագրով Ռուսաստանը համաձայնում էր վերադարձնել Պարսկաստանին Աստրաքադի և Մազանդարանի նահանգները: Այսպիսի պրութեան մէջ գտնուող կառավարութիւնը, ի հարկէ, ոչ օգնական զօրք տուեց հայերին, ոչ նոյն իսկ ուղարկեց նրանց խնդրած վարպետներին: Եւ Թարխան-խզբաշին վերադարձաւ հայրենիք, բերելով իր հետ նոյնը, ինչ բերել էին նրանից առաջ զիմոզները. յուսադրութիւն, խորհուրդ՝ չը հպատակուել օսմանցիներին, զիմանալ առժամանակ, մինչև որ գործերի դրութիւնը կը պարզուի:

Այսքանը ընդհանուր գործի համար: Բայց այս անգամ կար մի մասնաւոր նորութիւն էլ, որ վերաբերում էր հայ զօրքերի գլխաւոր հրամանատարին: Ինչպէս երևում է, Թարխան-խզբաշու բանակցութիւնների ժամանակ նորից արժարժուեց հայերի գոնէ մի մասի զաղթելու հարցը: Թէև Թարխանը իր բացատրութիւնների մէջ դրականապէս յայտարարել էր թէ հայերը չեն ուզում գաղթել, բայց դա, երևի, ընդհանուր, գլխովին զաղթականութեան էր վերաբերում, իսկ մասնաւոր զաղթականութեան հարցը արդիւքների չէր հանդիպում: Գոնէ ռուսաց պետական գաղտնի խորհրդի որոշման մէջ, որ կայացել էր Թարխան-խզբաշու հետ ունեցած բանակցութիւնների հիման վրայ, ասուած է որ եթէ ինքը, Թարխանը կամ նրա հետ Բագու գնացած Աւանը կամենան մնալ ռուսաց տիրապետութեան տակ գտնուող երկիրներում, այդ բանը կը թոյլատրուի նրանց և ռուսաց կառավարութիւնը յանձն է առնում երկուսին էլ բաւարար ռոճիկներ տալ: Թարխան-խզբաշին վերադարձին ստացաւ 1000 ռուբլի և մի սամոյրի մուշտակ: Նոյնպիսի մուշտակ ուղարկուեց և Մէլիք-Աւանին և բացի դրանից՝ հրամայուեց Բագուի ռուս իշխանութեան տեղական արդիւքներից տարեկան 1000 ռուբլի ռոճիկ տալ իւրաքանչիւր եղբորը:

Մէլիք-Աւանը, ուրեմն, վճռել էր թողնել Ղարաբաղը: Թէ ինչ եղաւ Թարխանը, մենք չը գիտենք. բայց Աւանին 1729 թուականից տեսնում ենք արդէն չափ հեռու հայոց Սղխալինիից: Նա դարձեալ զինուոր է, դարձեալ հայերի հետ է, բայց ծառայում է ռուսաց կառավարութեան:

Պէտք է ի նկատի ունենալ, որ հայերը, չը նայած որ իւրանք էլ ունէին զօրք, ունէին կուուղ մարդկանց կարօտութիւն,

բայց ցոյց տալու համար թէ որքան անկեղծ հաւատարմութիւն ունին դէպի Ռուսաստանը, կազմել էին ձիաւոր զօրքի մի բաժին, որ գործում էր Կասպիական ծովեզերքը բռնած ոռւս զօրքերի շարքում: Այդ զօրաբաժինը կոչւում էր «Հայկական Էսկադրօն»: Սկիզբը դնողը, եթէ չենք սխալւում, Պետրոս դի-Սարգիս Գիլանենցն էր, մանրամասն յիշատակարանի հեղինակը, որի մասին խօսեցինք վերևում: Հայրենի ազատութեան նուիրուած այդ վաճառականը իր հաշուով կազմեց մի խումբ հարիւր զինուած հայերից, որոնք ուսաների հետ մասնակցում էին պատերազմական գործողութիւններին Կասպից ծովի հարաւային ափերում և բաւական քաջութիւններ ցոյց տուին: Ինքը Պետրոսը, ընկաւ կռուի մէջ, բայց նրա խումբը մնաց. նրա տեղն անցաւ Եղիազար Սաչատրեանը *), որ երկար ժամանակ ծառայեց, յայտնի էր Լազար Խրիստօֆօրով անունով և հասաւ չեներալ-մայօրի աստիճանին: Հայ գեներալների նախահայրն էր այդ քաջ մարդը: Նա դեռ գնդապետի աստիճանում էր, երբ Մէլիք-Աւանն էլ գնաց ստուարացնելու ոռւսաց բանակում ծառայող հայ զօրաբաժնի թիւը: Աւանը տարաւ իր հետ հինգ իւղբաշի և 232-ից աւելի զինուոր. սրանցից 150 հոգի պահում էր իր հաշուով:

Այսպէս, այժմ Ղարաբաղը մի նշանաւոր կորուստ էլ ունեցաւ: Հայոց զօրքերի գլխաւոր հրամանատարի հեռանալը նշանակում էր հայ զինուորական քայքայումը: Արդեօք այդ քայքայումը պէտք է նկատել իբրեւ մի բնական հետևանք ոռւս կառավարութեան բռնած անտարբեր դիրքի, թէ նա առաջացաւ Մէլիք-Աւանի հեռանալու պատճառով, — մենք այդ չը գիտենք: Բայց որ հրամանատարը իր հռչակուած անունով, իր պատերազմական ընդունակութիւններով կարող էր դեռ շատ հարկաւոր գալ իր հայրենիքին, — այս էլ աւելի քան պարզ է: Մէլիք-Աւանը, որ կոչւում էր նաև Մէլիք-Աւան-խան **), ինչպէս երևում է, Դաւիթ-բէկի նման ճանաչուած էր Շահ-Ռահմադից իբրև գլխաւոր առաջնորդ և ստացել էր նրանից «խան» և «սպասալար» տիտղոսները: Դժբախտաբար, սա էլ, ինչպէս և Դաւիթ-բէկը, իր անունը, իր գործերն է միայն թողել մեզ. բայց թէ որտեղից էր նա, ինչ անցեալ ունէր, — դարձեալ չը գիտենք ***):

*) ЭЗОВЪ, стр. 458.

**) Собрание актовъ относ. къ обозр. Исторіи Армянскаго народа, М., 1838, հատ. II, стр. 57:

***) Բաֆֆին («Խամսայի Մէլիքութիւններ», стр. 53—57 և «Դաւիթ-բէկ» II հատոր) Մէլիք-Աւանին և Տիգրակի Մէլիք-Եղանին համարում է

1730 թուականը մենք կարող ենք ընդունել իբրև մի սահմանակէտ, երբ հայերի ապստամբական շարժումը կատարեալ անաջողութիւն է ներկայացնում: Տեսանք որ այդ ժամանակ վերջնականապէս խլանում է անկախութեան գործը Ղափանում. տեսանք և այն, որ մօտաւորապէս նոյն այդ ժամանակ անյայտանում են Ղարաբաղի Սղխախները: Սակայն այստեղ, Ղարաբաղում, գործը վերջնականապէս չէ մեռնում, այլ ընդունում է ուրիշ կերպարանք, դառնում է երկար ժամանակ մոխրի տակ թաղուած կրակ, ապա նորից արծարծւում է: Այնպէս որ 1730 թուականը հայերի քաղաքական շարժման վերջը չէ. նա միայն փակում է այդ գործի առաջին շրջանը, մի շրջան, որ սկսուել էր Իսրայէլ Օրիի առաջին անգամ Սիւնիքում երևան գալու օրից:

Ի՞նչ է ցոյց տալիս այդ շրջանը: Ամեն յոյս, աջողութեան ամեն հաւանականութիւն հիմնուած էր Պարսկաստանի անկման և ծայրայեղ թուլութեան վրայ: Հայերը ամեն կերպ աշխատում էին օգտուել այդ բարեյաջող հանգամանքից. նրանք ամեն ինչ արին, չը ինայեցին ոչ մի ջանք, ոչ մի զոհ: Զոհ բերողները ապստամբուած երկու նահանգները չէին միայն, այլ և համարեաւ ամբողջ Անդրկովկասի հայութիւնը: Զայրացած մահմեդականու-

մի և նոյն մարդը և ասում է թէ Մէլիք-Նզանը լետոյ անուանուեց Մէլիք-Նան: Բայց սա մի խոշոր սխալ է: Վասն Ղարաբաղի բարբառում «ճով-հանէս» անուան կրճատումն է և Նզանը չէր կարող մի այդպիսի անուն ստանալ: Տիգրակի Մէլիք-Նզանը շատ շինութիւններ է թողել, որոնց արձանագրութիւնների մէջ (տ. «Մրցախ», Մ. Եպիս. Բարխուդարեանի, Բաղու, 1895, եր. 75—76) նա միշտ Մէլիք-Նզան է անուանում: Այդպէս է անուանում և Աբրահամ կաթողիկոս Արեւացին իր «Պատմագրութեան» մէջ (եր. 31): Կայ և աւելի հաստատ փաստ: Ռուսաց կառավարութեան ուղղած մի թղթին ստորագրել են թէ՛ Նզանը և թէ՛ Նանը: Եկատերինա կայսրուհու մի հրովարտակը, գրուած 1726 թուին, ուղղուած է Մէլիք-Նզանին և Նան-խզրաշուն: Ուրեմն Նանը առանձին էր, Նզանը առանձին: Պէտք է ասենք, որ բոլոր պաշտօնական գրագրութիւնների մէջ Նանը անուանուած է իւզբաշի, բայց մենք գործ ածեցինք նրա միւս անունը— Մէլիք-Նան, ի նկատի ունենալով նրա բարձր պաշտօնը և ստացած պատիւները: Զը կամենալով այս մարդու ծագման մասին որ և է գրական բան ասած լինել, մենք ենթադրում ենք, որ Նանը, երեւի տիրում էր պթմեան Շուշու շրջականների վրայ: Մինչև այժմ էլ Շուշու հարաւարեւելեան ժայռը կոչւում է «Նանու» քերձ: Այդտեղ էլ երևում են աւերակներ, որոնք կոչւում են «Նմարաթներ» (ապարանքներ). և ժողովուրդը պատմում է որ այդտեղ էր բնակւում Նան-խզրաշին («Մրցախ», եր. 423): Մենք արդէն ասացինք, որ շատ ցուցմունքներ կան, թէ Փոքր Սղխախը Շուշու մօտերքումն էր գտնուում: Դուցէ Մէլիք-Նանը իբրև հրամանատար, հէնց այդտեղ էլ ապրում էր և հիմնել էր իր համար բերդ:

թիւնը Ղարաբաղի և Սիւնիքի հայ քաջերի վրէժը հանում էր ամեն տեղ, ուր կար խաղող, անպաշտպան հայ աղգարնակութիւն: Միանգամից համոզուելով թէ ուսմանը Անդրկովկաս բերողները հայերն են, թէ քրիստոնէութիւնը պաշտպանելու և ազատելու համար են այնքան պատրաստութիւններ տեսնում, մահմեդական ֆանատիկոսութիւնը սկսեց ամեն յարմար դէպքում կոտորածներ անել զանազան կողմերում:

Ռուսների ռաւերիմ թշնամի էին մանաւանդ, ինչպէս տեսանք, լէզզինսրը, օսմանդինների այդ վայրենի գործակալները: Նրանք դարձան և հայերի կատաղի թշնամին: 1725 թուականի յունուարին լէզզինսրը յարձակուեցան Մուսկիւլի (Դաղստան) 12 դժբախտ հայ գիւղի վրայ և սոսկալի անդթութիւններ կատարեցին: Նրանց առաջ էր մղում այն հաւատը, որ եթէ ուսները գրաւել են ծովի ափը, եթէ քարուքանդ են արել իրանց մի քանի գիւղերը՝ բռնութիւններ են գործ դրել լեւոնի կանանց և աղամարդկանց վրայ, այդ բոլորի պատճառը հայերն են, ապա ուրեմն, չարչարել հայերին, կոտորել, կոզոպտել նշանակում է կատարել մի սուրբ գործ, նշանակում է մանաւանդ «սարը գեալուրներին» (չէկ գեալուր, այսպէս են անուանում ուսներին) փնտս հասցնել: Այդ բարբարոսութիւնները յուզիչ պարզութեամբ, ահաւի գոյներով նկարագրել է մի ոմն Մարտիրոս վարդապետ՝ Դերբենտից գրած իր նամակում *)։ Յափրշտակել տարել են, ասում է նամակագիրը, «թէ ձի, թէ տաւար, թէ գոմէշ, թէ ապրանք, թէ շոր, թէ պղինձ, թէ արծաթեղէն, թէ ոսկեղէն, թէ երկաթեղէն, թէ փող, թէ մարդ, թէ կին, թէ աղջիկ, թէ տղայ, թէ ցորեն, թէ բրինձ, թէ չալթուկ»։ Սարսուռ աղղող մանրամասնութիւններից մէկը հետեւեալն է. «Շատ կին և շատ աղջկանք շատ չնանալէն կոտորուել են, ոմանք մերձ ի մահ են եղել, զերա սոքա որ մնուել և տկարացել են, սոցա տեղ մարդիկ են տանում պղծւում»։

Ահա ինչ զոհեր էր տալիս հայութիւնը քաղաքական այն շարժման համար, որ սկսուել էր լեռնային երկու նահանգներում, ահա որքան սարսափելի թանգ էր նստում այն՝ նոյն իսկ պատճենական համակրութիւնը, որին հայերը արժանանում էին մի քրիստոնեայ պետութեան կողմից։ Արեւոտ զոհերը անհրաժեշտ են ամեն տեղ, ուր ծխում է աղատութեան վառօղը։ Իայց հայերի սուած այնքան զոհերը, այնքան հերոսական ջանքերը անպտուղ մնացին։ Եկաւ ժամանակ, երբ այլ ևս անհնարին էր մի բան անել։ Ձը կարծէնք թէ հայ զինուորութեան կազմալուծ-

*) ՅՅՅՅ, եր. 415.

ման մի միակ պատճառը տաղանդաւոր զօրապետների մահն էր կամ ասպարէզից հեռանալը: Ո՛չ, եթէ չը լինէին էլ այդ մահները, եթէ հայ քաջերը շարունակէին կանգնած մնալ իրանց աեղը, դարձեալ XVIII դարի երեսնական թուականներին դրութիւնը միանգամայն անյուսալի պիտի մնար: Եւ դրա պատճառն այն է, որ աջողութեան ամենամեծ գրաւականը—Պարսկաստանի թուլութիւնը այդ ժամանակ յանկարծ, միանգամից, չքացաւ: Անակնկալ կերպով, աւերակների տակից, վեր կացաւ մի ուժեղ ու ահաւոր Պարսկաստան, որ յիշեցնում էր Արեւմեանեանների, Շահ-Աբաս Մեծի ժամանակները: Թիւրքիան և Ռուսաստանը, որոնք այնպիսի հեշտութեամբ բաժանել էին իրանց մէջ պարսկական ահազին կալուածները, ստիպուած եղան թողնել ամեն ինչ և հեռանալ մրցութեան դաշտից: Մի ահաւոր հոսանք եկաւ քանդեց ու անհետացրեց Պետրոս Մեծի բոլոր ջանքերը, բոլոր ծրագիրները: Իզուր չէր զեռպան Վոլինսկին 1715 թուին գրում. «կարող է երևան գալ մի ուժեղ Շահ և այնուհետև նուաճման գործը կը դժուարանայ»:

Այդ Շահը երևան էր եկել, եւ դա Նադիրն էր:

Ազտանական հարստութեան հիւնադիր Մահմուդ-Շահը իրաւի դահի վրայ երեք տարուց աւել չը կարողացաւ մնալ: Դա մի անգութ բարբարոս էր, որ սիրում էր արեւան լճերի մէջ խեղդել ամեն մի ապստամբական փորձ, որ տեղի էր ունենում Պարսկաստանում: Դազվինի ապստամբութիւնը ճնշելու համար Մահմուդը խնջոյքի կանչեց պարսիկ ազնուականութիւնը, ամենքին կոտորեց, ջնջեց նրանց ընտանիքները: Մի ուրիշ անգամ, նոյնպէս խնջոյքում, նա կոտորել տուեց 3000 պարսիկ զինուորներ, որոնց ընդունել էր իբր զօրքի մէջ: Շահ-Ռահմազին պատժելու համար, վայրենի արինաբբուն նրա հօրը, դժախտ Հիւսէյն-Շահին, մի սոսկալի գործի ակննատես դարձրեց. այդ թագազուրկ ձերունու աչքի առաջ Մահմուդը իր ձեռքերով խեղդեց նրա որդիներին ու թոռներին, թուով հարիւր հոգի: Անզուսպ բարբարոսութիւններից էր արդեք թէ ուրիշ պատճառից, Մահմուդը ցնորուեց, իսկ նրա մարմինը սկսեց լափել մի ինչ-որ զարհուրելի բորոտութիւն: Նա քաշուեց մի ինչ-որ անկիւն, բայց այդտեղ էլ սպասում էր նրան սպանողի դանակը: Սպանողները նրա հարազատ աւղաններն էին. այդ ժամանակ Մահմուդը գեռ 27 տարեկան մի երիտասարդ էր:

Նրան 1725-ին յաջորդեց նրա որդի Ալի-աֆը: Սա էլ մի արինաբբու զաղան էր, բայց զլիաւորապէս իր աւղանների վերաբերմամբ: Պարսիկներին իսկ ինչպէս էր, մինչև իսկ աշխատում էր հաշտեցնել նրանց աւղանական զահի հետ և մո-

ռացնել տալ Սէֆէվիյների տունը: Բայց Շահ-Թահմազը խանգարում էր նրան: Մի կողմից Աշրաֆը, միւս կողմից ռուսների ու օսմանցիների արշաւանքները ստիպեցին այդ գլուխ կորցրած ու թուլամորթ թագաւորին, խեղդուողի նման, բռնել իւրաքանչիւր շիւղից, որ օգնութիւն էր խոստանում: Մենք տեսանք թէ որպիսի հաճութեամբ նա ընդունեց Դաւիթ-բէկի առաջարկութիւնը: Մի ուրիշ մարդ էլ այդ ժամանակներում իր խոնարհ ծառայութիւնները դրեց նրա տրամադրութեան տակ. այդ մարդը խորասանցի էր, յայտնի էր դարձել իբրև յանդուգն աւազազակապետ և կոչւում էր Նանդիր-Ղուլի (հրաշքների ստրուկ): Թահմազը, առանց տատանուելու, բռնեց այդ մեկնած ձեռքը:

Թողնելով աւազակի արհեստը, Նադիրը մտաւ Թահմազի ծառայութեան մէջ, փոխեց իր անունը, կոչուեց Թահմազ-Ղուլի (Թահմազի ստրուկ) և մի կարճ միջոցում դարձաւ սարսափ ազդող, հռչակաւոր զօրավար: Պարսկաստանը զգաց որ նոր մարդ է երևացել և հաւաքեց իր բոլոր ոյժերը: Զէնքը ամենքից առաջ դարձրած էր, ի հարկէ, աւղանների դէմ, որոնք իրանց բարբարոսութիւններով ազգային կատաղի զայրոյթ էին առաջացրել ամբողջ իրանում: Նադիրը նրանց դուրս փնդեց իր հայրենի խորասանից, իսկ 1729-ի վերջում սաստիկ ջարդ տուեց Աշրաֆի զօրքերին Թեհրանի մօտ: Աշրաֆը փախաւ Սպահան, սպանեց այդտեղ Հիւսէյն-Շահին, բայց «գողերի առաջնորդը»— ինչպէս նա հեղնաբար անուանում էր Նադիրին—ամեն կողմից նեղում էր նրան և նա, վերջապէս, փախաւ Աւղանստան, ուր և սպանուեց մի աւազակ ցեղի ձեռքով: Սպահանը ազատուած էր և Նադիրը մեծ հանդէսով այնտեղ մտցրեց Շահ-Թահմազին, թէև շատ նշաններով էր ցոյց տուել որ ինքը չը պիտի լինի այդ Շահի ստրուկը, այլ ընդհակառակն: Եւ Թահմազը հասկանում էր այդ:

Այնուհետև բացուեց պատերազմ Թիւրքիայի դէմ՝ պարսկական երկիրները յետ ստանալու համար: Նադիրը մի քանի փայլուն յաղթութիւններով հարկադրեց Թիւրքերին հաշտութիւն խնդրել: Երբ ղինազադարի ժամանակն անցաւ, Նադիրը այլ ևս կռուի զաշտում չէր, այլ արշաւել էր Հէրաթի դէմ: Թահմազը չուզեց սպասել իր զօրավարին, այլ նախանձելով նրա փառքին, ինքը անցաւ զօրքերի գլուխը: Բայց ժողովուրդը և զօրքը շատ շուտ տեսան թէ որքան մեծ տարբերութիւն կայ այդ անընդունակ, մոլի թագաւորի և աւշառ զօրապետի մէջ: Թիւրքերը մի քանի անգամ լաւ ջարդեցին Թահմազին և իրանց ձեռնառու մի գաշնագիր կնքեցին նրա հետ, որով մի քանի նահանգներ ղիջելով պարսիկներին, իրանց ձեռքում

Թողեցին ամբողջ Վրաստանն ու Հայաստանը մինչև Արաքս գետը, խոստանալով օգնել պարսիկներին՝ ռուսներին կասպիական ափերից հեռացնելու համար։ Այդ պայմանները աւելի ևս զայրացրին պարսիկներին Թահմազի դէմ։ Օսմանեան օգնութիւնը հարկաւոր էլ չէր, քանի որ ռուսները չէին մտածում զէնք վերցնել Պետրոս Մեծի ժառանգութիւնը պահպանելու համար։ 1732 թուականի յունուարին Ռէշտում կնքուած դաշնադրութեամբ նրանք յետ դարձրին կասպիական ամբողջ ծովափը մինչև Կուր գետը, պահելով իրանց ձեռքում միայն Բագուն և Դերբենտը։

Այդ միջոցին Նազիրը, Շահի աչքից ընկած, գտնուում էր Խորասանում։ Թահմազը, սակայն, կանչեց նրան իր մօտ և այդ անխելքութեան համար լաւ պատիժ ստացաւ։ Նազիրը մենակ չը մտաւ։ Սպահան, այլ 50 հազար զօրքի գլուխ անցած, նա դահնկէց արաւ Թահմազին և Իրանի շահինչահ հռչակեց նրա վեց ամսական Աքաս անունով որդուն։ Երբ այդ մանուկը թագադրուում էր, Նազիրը, տեսնելով թէ ինչպէս է նա բղաւում, ասաց. «Հանգստացիր, Շահ, քո կորցրած նահանգները շուտով կը վերագտնան քո իշխանութեան տակ»։ Դա հեղնութիւն էր. Իրանի իսկական տէրը ինքը, Նազիրն էր իր եղբայրների և որդիների հետ։

Նորից պատերազմ յայտարարուեց Թիւրքիայի դէմ. աջողութիւնը փոփոխակի էր, բայց և այնպէս, Նազիրը ցոյց տուեց թէ ինչ զօրավար է ինքը։ 1735-ին նա պատերազմը փոխադրեց հիւսիսային կողմերը։ Յունիսի 14-ին Արփաչայի հովտում Նազիրը 50 հազար զօրքով սոսկալի մի ջարդ տուեց օսմանեան բանակին, որ թուով երկու անգամ մեծ էր. սէրապէր փաշան և 20 հազար օսմանցիներ ընկան այդ պատերազմում, որին ներկայ էր և էջմիածնի Աբրահամ կաթողիկոսը։ Յաղթութեան հետևանքն այն էր, որ Վրաստանը, Հայաստանը, Շիրվանը նորից անցան Պարսկաստանին։ Այս մասին նա մի չարախնդութեամբ հաղորդեց և ռուսաց կառավարութեան. ռուսներին նա արհամարհում էր, ասելով թէ աւելներով պիտի դուրս անէ նրանց պարսկական երկիրներից։ Եւ ռուսները շտապեցին հեռանալ նաև Բսգուից ու Դերբենտից, համաձայն այն դաշնագրի, որ մի քանի ամիս զրանից առաջ կնքուել էր պարսից բանակում, Գանձակի մօտ։

Մի կարճ միջոցում Պարսկաստանը էլի իր հին սահմաններն ստացաւ։ Դա քիչ էր։ Եւրօպայում էլ տարածուեց Նազիրի հռչակը և ամենքը սպասում էին որ Պարսկաստանը կը ստանայ իր հին դիրքը, այսինքն կը զառնայ ամենախոշոր զինուորական պետութիւնը Առաջաւոր Ասիայում։ Կարող էր Նա-

դիրը բաւականապէս մի մեծ, տաղանդաւոր զօրավարի փառքով, երբ ամեն ինչ ասում էր թէ նա պիտի լինի իր ստեղծած պետութեան զլուխը: Հէնց այդ միջոցին էլ մանուկ Շահ-Աբասը դայեակների ձեռքում կեանքից զրկուեց. Թահմաթը արտօրատեղում էր վախճանուել կամ սպանուել: 1736 թուականի ձմեռը Նադիրի հրամանով Մուղանի դաշտը հաւաքուեցան Պարսկաստանի բոլոր կառավարիչները, աշխարհական և հոգևոր պետերը: Կանչուած էր և Աբրահամ կաթողիկոսը. ևկել էին Արարատեան երկրի, Նախիջևանի և այլ կողմերի հայ մէլիքները: Կաղմուեց ահագին բանակ: Նադիրը առաջարկեց այդ բազմութեան մի թագաւոր ընտրել Պարսկաստանի համար. և ով կը համարձակուէր չասել որ այդ թագաւորը ինքը, Նադիրն է: Մարտի 10-ին, Նովրուզ-բայրամի օրը, Նադիրը հանդիսաւոր կերպով թագադրուեց. Աբրահամ կաթողիկոսն էր սուրը նրա մէջքին կապողը: Սէֆէվիների տոհմը վերջացաւ: Մի ահաւոր, խելօք և հեռատես բռնակալ ունէր այժմ Պարսկաստանը: Բոլոր դժբախտութիւնների պատճառ դարձած պարսիկ հոգևորականութիւնը այն աստիճան սաստիկ սանձահարուեց, որ չը յանդգնեց ձայն հանել, երբ Նադիրը, իբրև սիւննի, հրամայեց միացնել չիտ և սիւննի դաւանութիւնները և վերացնել մէջ տեղ եղած բոլոր խտրութիւնները:

Այդ ահաւոր բռնակալը, որից դողում էր Արևելքը, բախտի բերմունքով, մի առանձին սէր և համակրութիւն ունէր զէպի հայոց խեղճ կաթողիկոսը, կատարում էր նրա խնդիրքները, տալիս էր էջմիածնին զանազան արտօնութիւններ: Ի՞նչպէս էր Աբրահամ կաթողիկոսը արժանացել այդ բախտին—յայտնի չէ: Նա մի առանձին խելք ու ընդունակութիւն ունեցող մարդ էր, բայց ինչպէս երևում է, լաւ իւրացրել էր արևելեան քաղաքականութիւնը և գիտէր հաճոյանալ: Արդեօք սա էր պատճառը, թէ մէջ տեղ դեր էր կատարում տաղանդաւոր բռնակալներին յատուկ անհասկանալի քմահաճութիւններից մէկը,—իրողութիւնն այն է, որ հայոց ծերունի կաթողիկոսը իր դիրքը և վայելած համակրութիւնը յաճախ ծառայեցնում էր իր դժբախտ ժողովրդի օգտին, ազերսաւոր հանդիսանալով ահարկու նուաճողի առաջ, խնամք և զթութիւն խնդրելով նրանից: Այսպէս, Նադիրը հրամայել էր որ Արարատեան երկրից և Թիֆլիսից երեք-երեք հարիւր տուն հայեր գաղթեցնեն Պարսկաստան: Կաթողիկոսը այդ միջոցին Նադիրի հետ Թիֆլիսում էր գտնւում: Ճուշակազրուած հայերը լաղով և աղաչանքով ընկան նրա ոտները և նա կարողացաւ իր պաղատանքներով ազդել բռնակալի սրտի վրայ ու փոխել տալ այդ սարսափելի վճիռը: Բայց Արա-

րատեան երկրին օգնել չը կարողացաւ կաթողիկոսը. նշանակուած տները քչեցին տարան և Նաղիբը միայն այն արաւ որ հրամայեց տնային անասուններ տալ այդ դժբախտներին: Նոյնպիսի բարերար հանգիստացաւ կաթողիկոսը և Մուղանի դաշտում. այստեղ նա փողով, աղաչանքներով աղատեց բազմաթիւ հայ գերիներ, ինամեց նրանց և ուղարկեց այս ու այն կողմը: Երախտագիտութեան զգացմունքը թելադրեց Աբրահամ կաթողիկոսին նկարագրել Նաղիբի, այդ «երկրորդ Ալեքսանդրի» (Մակեդոնացու), ինչպէս ինքն է անուանում, մի քանի գործերը և յատկապէս թագադրութիւնը *): Այդ փոքրիկ աշխատութիւնը վերջինն է մեր այն պատմագրութիւնների կամ, աւելի ճիշտ ասած, ժամանակագրութիւնների շարքում, որի սկիզբը դրուեց Մ զարում: Աբրահամ կաթողիկոսը վերջինն է այն հայ հոգևորականներից, որոնք իրանց ժամանակի դէպքերը գրի էին առնում. և նրա մէջ խտացած են մեր այդ տեսակ գրողների բոլոր պակասութիւնները: Սաստիկ սահմանափակուելով իր նիւթի չրջանում, նա ճանաչում է միայն Նաղիբին և իրան, երկար մանրամասնութիւններով պատմում է իր ստացած պարգևները, Նաղիբի սարքած հանդէսները, բերում է Մուղանում հաւաքուած իւաների և բէկերի ցուցակը, բայց հայերի այն ժամանակուայ դրութեան, գործերի մասին ոչինչ չէ գրում: Հետաքրքրական են նրա ճանապարհորդութիւնները: Էջմիածնից Մուղան գնալիս և այնտեղից վերադառնալիս, նա այցելեց Ղարաբաղի և մանաւանդ Սիւնիքի այն բոլոր տեղերը, ուր ընդ ամենը մի 7—8 տարի առաջ բորբոքուած էր հայկական ապրտամբութիւնը, ուր գործում էին Մէլիք-Աւանը, Դաւիթ-բէկը, Մխիթար-սպարապետը: Սակայն այդ գործերի և գործիչների մասին—ոչ մի խօսք անգամ: Հայոց կաթողիկոսը միայն ահարկու Նաղիբի անձով է զբաղուած, միայն նրա ներքոյն է գրում, նրան չէ հետաքրքրում հայերի սկսած այն մեծ գործը, որ աւելի կարևոր էր քան Նաղիբի թագադրութիւնը: Մենք մինչև անգամ չենք տեսնում այդ յիշատակարանի մէջ թէ ինչպէս էր վերաբերում Նաղիբը ապստամբութեան գլուխ կանգնած հայ մէլիքներին, ինչու Մուղանում Ղասաբաղի մէլիքներից ներկայ էր միայն Մէլիք-Նզանը: Նկատենք այստեղ, որ այս հայ մէլիքին Նաղիբը պատիւներ արեց, նշանակելով Ղարաբաղի մէլիքների գլխաւոր: Այդ ժամանակից է, կարծեմ, որ Ղարաբաղում

*) Տպում է Վաղարշապատում 1870 թուին «Աբրահամ կաթողիկոսի Կրիտացու պատմագրութիւն անցիցն իւրոց և Նաղր Շահին պարսից» վերնագրով:

վերջնականապէս կազմակերպւում են հինգ գլխաւոր մէլիքութիւնները, որոնք կոչւում են խամսայի մէլիքութիւններ:

Իր դոված «երկրորդ Ալէքսանդրին» Աբրահամ կաթողիկոսը երկար ժամանակ չը տեսաւ. նա վախճանուեց 1737-ին, մինչդեռ Նաղիբը զրանից յետոյ միայն իսկապէս հասաւ Ալէքսանդրի փառքին. նա նուաճեց Ղանդահարը, Հնդկաստանը, որտեղից անհուն հարստութիւններ գուրս բերեց, Սամարկանդը, Խիվան, Բուխարան: Պարսկաստանը Յփրատից մինչև Ինդոս գետն էր ձգւում, իսկ հիւսիսից նա մինչև անգամ անցել էր Կովկասեան սարերի միւս կողմը: Բայց մեծ աշխարհակալը դարձաւ և մի զարհուրելի բռնակալ: Մի անգամ նրան սպանելու փորձ եղաւ. փորձը չաջողուեց, բայց Նաղիբը զրանից կասկածոտ ու վայրենի մի դահիճ դարձաւ այն երկրի համար, որը հասցրել էր այդքան մեծ փառքի: Ու սկսեց անհնարին, հրէշաւոր գազանութիւններ. կուրացրեց իր որդուն, կոտորած գլուխներից բուրգեր էր կուտել տալիս այս ու այն կողմերում: Շիրազի ամբողջ ազգաբնակչութիւնը կոտորել տուեց, Մէշէղում հանել տուեց բոլոր բնակիչների մի կամ երկու աչքերը: Պարսկաստանը անապատի էր փոխւում. ազգաբնակչութիւնը ահազին խմբերով փախչում էր օտար երկիրներ:

Հայերն էլ իրանց բաժինն ունեցան այս հրէշաւոր անգթութիւնների մէջ: Նաղիբը յանձնարարեց Նախիջևանի խանին իմանալ թէ ինչ տրամադրութիւն կայ ժողովրդի մէջ իր անձի վերաբերմամբ: Կանչելով իր մօտ տեղացի նշանաւոր անձանց, որոնցից երեսուն երեք հոգի հայերից էին, խանը իրան կեղծեց բռնակալ Շահից զգուած մի մարդ և խորհուրդ էր հարցնում թէ արդեօք լաւ չէր լինի որ իրանք էլ փախչեն և ազատուեն: Կանչուածները միամտութիւն ունեցան հաւատալու և յայտնելու թէ, իրաւ, իրանք էլ այդպէս են մտածում: Խանը ցուցակազրեց նրանց, որպէս թէ հարկաւոր կարգադրութիւններ անելու համար, իմացաւ և նրանց համախոհների անուաները, տեղը և ապա այդ բոլորը յայտնեց Նաղիբին: Պատասխանը բերին սարսափելի Շահի գահիճները. նրանք կուրացրին բոլոր ցուցակազրածներին, իսկ նրանց կայքը յափշտակուեց սոսկալի անգթութիւններով. անմեղ երեսններն անգամ տանջանքների էին ենթարկւում *): Բայց Նաղիբի անգթութիւնները աւելի անտանելի էին Նոր-Ջուղայում. այդտեղի հայերի համար նա հանդիսացաւ մի կատարեալ ժանտախտ: Ու զժբախտ ժողովուրդը չը կարողացաւ զիմանալ այդ բարբարոսութիւններին. զանազան

*) Ջամէան, Դ., եր. 816:

կողմերում ապստամբութիւններ էին ծագում: Ժողովրդի խորին ատելութիւնը սարսափով խեղդելու համար Նաղբրը վճռեց կոտորել ամբողջ Սպահանը: Բայց 1744 թուի մայիսի 24-ի երեկոյան Սալահ-բէկ անունով մի զինուորական պաշտօնեայ, չորս ընկերների հետ, մտաւ «երկրորդ Ալէքսանդրի» վրանը, կտրեց նրա գլուխը: Իրանի փառքը սկսեց դարձեալ նսեմանալ:

Մեղ մնում է տեսնել թէ ինչ եղան հայերի ապստամբական շարժման կենդանի մնացած պարագլուխները: Կասկից ծովի ափից յետ քաղաքից յետոյ Հայկական էսկադրօնը շարունակեց իր ծառայութիւնը ռուսաց զօրքերի շարքում: 1734 թրւականին Մէլիք-Աւանը, մի խնդրագրի մէջ յիշատակելով իր մատուցած ծառայութիւնները, խնդրում էր. 1) վերադարձնել իր սեփական միջոցներից իր զօրախմբի վրայ ծախած 8000 ռուբլին. 2) հիւսիսային Կովկասի ռուսաց սահմաններում գրտնուող 9 հայ զիւղերը չնորհել իրան իբրև սեփականութիւն. 3) չնորհել նաև գեներալ-մայորի աստիճան, որպէս զի հայերը դրանով աւելի ևս զրաւունեն և մտնեն ռուսաց ծառայութեան մէջ. 4) թոյլ չը տալ որ թիւրքերի, պարսիկների և լէզգիների գերութիւնից ազատուած և Ռուսաստանում գտնուող հայ գերիները վերադառնան հայրենիք, որպէս զի այդպիսով հայերի քանակութիւնը ռուսաց պետութեան մէջ բազմանայ:

Այդ առաջարկութիւններն ընդունուեցան և Մէլիք-Աւանը, ինչպէս երևում է, այնուհետև զբաղուած էր հայոց գաղթականութեան հիմք դնելու գործով: Թերէք գետի ճահճոտ, վատառողջ ափերի վրայ հայ զիւղեր գոյացան: 1735 թուին այդ գաղթականները հիմնեցին Ղլլար քաղաքը: Նրանք պիտի կռուէին անհիւրասէր բնութեան շատ և շատ արգելքների դէմ և տոկուն ու յամառ աշխատասիրութեամբ կարողացան ծագկեցնել այդ անապատ ու վայրենի տեղերը: Մէլիք-Աւանին մենք մէկ էլ տեսնում ենք Ելիսավետա Պետրօվնա կայսրուհու ժամանակ (1741—1761), Պետերբուրգում: Արքունի պալատում սիրալիւր ընդունելութիւն է գտնում հայ նշանաւոր զօրապետը. կայսրուհին նրա թուան նշանակեց Քրէյլինա: Մէլիք-Աւանի տոհմից առաջացան իշխան Սմբատեանները, իշխան Մէլիքեանները, Հայրապետեանները *):

Շատ ողբալի էր Մինաս վարդապետի վախճանը: 1736 թուականին նա էլ մի երկար գրութիւն է ներկայացնում ռուսաց կառավարութեան՝ իր կատարած գործերի մասին: Այդ թղթից մենք տեղեկանում ենք որ Իսրայէլ Օրիի ընկերը շա-

*) Собрание актовъ, II, 4ր. 57.

բունակում է լինել Ռուսաստանի հայոց առաջնորդ, արդէն ծե-
րացած է, ապրում է մեծ մասամբ Աստրախանում, բայց ոչինչ
համարում չունի հայերի մէջ, զուրկ է միջոցներից: Խնդրում
էր կայսերական հրամանով հաստատել իրան առաջնորդական
պաշտօնի մէջ, հպատակեցնել հայերին իր իշխանութեան և զին-
ուորներ տալ, որպէս զի նրանց հետ գնաց Աստրախան և այդ-
տեղ թշնամիներից ապահով ապրէ պետական ոռճիկով:

Վերջերում Մինաս վարդապետը խնդրեց որ իրան Ընդու-
նեն յունադաւանութեան մէջ և ոռոսաց եկեղեցու պաշտօնեայ
գարձանն: Բայց կարծեմ այդ էլ չը ստացաւ...

Լ Է Օ

(Կը շարունակուի)

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

31) Բ. ՏԷՐ-ՂԱԶԱՐՅԱՆՅ. Տարածամ Պսակ. պօէմա Ղազարի
գիւղական կեանքից: Հրատարակութիւն Գ. Զ. Նարալեանցի: Թիֆլիս,
1901 թ., 48 էր., գինը 10 կոպ.:

Այս «պօէմայի» բովանդակութիւնը հետեւեալն է. տասներկու տարեկան մի որբ աղջկան (Նաթէլ) զօռով մարդու են տալիս «չորս անգամ մեծ» Ազատին: Եօթ տարի դժբախտ կեանք վարելուց յետոյ Նաթէլը վախչում է մարդու անիոյ մի երիտասարդի հետ: «Կնիկկորուս մարդը» դիմում է մօլլին, որ սա զիր անիւ և ստիպէ Նաթէլին սիրել իր ատած մարդուն: Մօլլի գիրը չէ օգնում: Ազատը դիմում է գործակալ քահանային: Բայց «տարիքն ու կեանքը Նաթէլին կրթելայ (?)», չունէր նա սրտում ոչ վախ և ոչ դարդ (?)» և նա «մերժում էր լինել կինը Ազատի»: Նա զղացել է,

Որ ամուսնութեան պատճառն է տարփանք...
Որդեմնութիւն՝ բնական հետեանք...
Երկու բանիցն էլ անշնորհք զանուեցայ...
Նախ վեց ձիգ ամիս ես հիւանդացայ,
Երկրորդ՝ Եօթն տարում որդի չծնայ:
Վճռել եմ արդէն հէնց այստեղ մեռնել,
Բայց չեմ ցանկանայ նրան կողակցել.
Այն ես գիտեմ իրաւունք ունէք
Բռնի ստիպելով մօտը ուղարկել:
Բայց կամք ունեցէք ինձ հաւատալու,
Որ առաւօտեան չետ ենք կանչելու,—
Երկար շուրջառովդ կատարելու կարգ
Հողին յանձնելու իմ սառած դիակ...
Թէ Տէրը երկնից, մեր մեծ Գառաւլար,
Հարցնէ բացատրանք մեղքերիս համար՝
Կըպատմեմ նորան խօսքով սրտաբուխ,
Մատնացոյց կանեմ ձե՞ղ, ո՞վ սեպուղիս,
Որ անխղճաբար հողին ու մարմին
Վաճառած ունիք ժանտ մամոնային.
Ինձ օրս զցեց խաւով ամառակ,
Վարքս անարատ դարձրիք անառակ...

Ապա նաթէլը խեղդում է իրան, իսկ Ազատը դաշոյնի հարուածով վերջ է տալիս իր կեանքին:

Իրական կեանքի մէջ կարող են պատահել այդպիսի դէպքեր և մեր մամուլի մէջ յաճախ պատահում են գաւառական թղթակցութիւններ, որոնց մէջ արձանագրուած են լինում անշափահասների պսակը ծերունիների հետ, սակայն ոչ ոք «բանաստեղծութիւն» չէ համարում այդ թղթակցութիւնները: Անշուշտ խնդիրը չէ փոխում այն բանից, որ Տէր-Ղաղարեանը ձիգ է թափել անտաշ ոտանաւորի ձևով «պատմել դէպքը բառ առ բառ»: Այդ անտաշութեան մասին արդէն գաղափար է տալիս վերև բերած կտորը, բայց մի նմուշ էլ դնենք այստեղ, ողբալու համար հայ «բանաստեղծի» երաժշտական անճաշակութիւնը.

Փնտռողների դէմ բողոք բարձրացրեց,
Վախկոտ հալեացքով միտքը բացատրեց:
Բայց նոցա սրտերն նա չըթափանցեց,
Ոչ մի շրթունքից բնաւ չլսուեց
Գէթ մի խրախուսանք, այլ և նախատուեց,
Որ աւանդական հայ կնոջ օրէնքներ
Իւր տհասութեամբ ոտնատակում էր...

«Իր տհասութեամբ ոտնատակում է» և ինքը «բանաստեղծը» բանահիւսութեան ամենատարրական օրէնքները...

Այդ պօէմայի մէջ չէ կարելի գտնել՝ ոչ Ղաղախի բնութեան ուրոյն նկարագիրներ, ոչ ժողովրդի տիպիկական նիստ ու կաց, ոչ «հերոսների» րևիւնֆ պատկեր, այլ՝ խառնիխուռն, կցկտուր շաղկապած են իրար՝ դիտողութիւններ, մտքեր, զգացմունքներ, ուստի և ոչ մի ամբողջացրած տպաւորութիւն չէ կարող ստանալ ընթերցողը այդ տափակ ստեղծագործութիւնից:

Չը պէտք է մոռանալ, որ բանաստեղծական արտադրութեան համար պահանջւում է նախ և առաջ հոգեկան գործունէութեան այն խորհրդաւոր յատկութիւնը, որ կոչւում է ձիգք:

Աստուածային այդ կայծից զուրկ է պ. Տէր-Ղաղարեանցը: Սակայն ձիգքն էլ ինքն ըստ ինքեան դեռ բաւական չէ. այդ ձիգքը պէտք է գտուի, չղկուի, անցնելով լայն կրթութեան բովից: Մենք տեսնում ենք որ մի Բայրօն, մի Շիլլէր, մի Գեթթէ, մի Պուշկին իրանց ժամանակուայ հասարակութեան ամենադարգացած մարդիկն են, ամենալայն աշխարհայեցողութիւն ունեցող գրողներ են: Իսկ մեր մէջ կարծում են, թէ մեր սեմենարիաներում ստացած ողորմելի մտաւոր պաշարով և տիրապուական ճաշակով կարելի է, նոյն իսկ խոանց բնական ձիգքի, վեր կենալ և հարստացնել մեր խղճուկ գրականութիւնը... Այդ-

պիսով, այո, մեր գրականութիւնը հարստանում է, բայց... գրական բորբոսով և ոչ երկերով:

Լ. Ս.

32) «Ճարարի Բարոզներ», Թարգմ. ոտներէնից Ս. Մ. Վաղարշապատ, 1901.

Նայելով այս գրքին, տեսնելով որ դա մի հատոր է, բազկացած 384 մեծ երեսներից, տպած մանր տառերով, մեր առաջ իսկոյն այն հացն է գալիս թէ՛ ինչու մենք յետ ենք մնացել: Յետ էինք մնում մենք դարերի ընթացքում, յետ էինք մնում այն ժամանակ, երբ մեր շուրջը, մեր հարևանները գրական առաջադիմութիւն ունէին, երբ մենք, իբրև վաճառական ազգ, իբրև շատ թափառողներ, շատ նիւթական միջոցներ ունեցողներ, կարող էինք առջևից գնացողներից մէկը լինել:

Այս յետամնացութիւնը ունի շատ պատճառներ. բայց զլիաւորներից մէկն այն էր, որ գրականութիւնը ժողովրդի հետ չէր գնում. գրականութիւնը մի նեղ նպատակի էր ծառայում, գրականութեամբ պարապողները ամենևին չէին ուզում իմանալ թէ ինչ է կատարւում աշխարհում և ինչ մտաւոր սրնունդի է կարօտ ժողովուրդը: Այն ժամանակ, երբ վրաց արքայորդի Դաւիթը վրացերէնի էր թարգմանում Վօլտէրը, մենք դեռ տպագրում էինք Թոմա Աքուլինացու աստուածաբանական երեք հատորները կամ Տաթևացու հաստափոր քարոզազրբերը: Մենք ունեցանք անթիւ ու անհամար աստուածաբանական գրուածքներ, ինքնուրոյն թէ թարգմանական, անթիւ աղօթագրքեր, մեկնութիւններ, բայց մի հատ կարգին աշխարհային գիրք, մի հատ աշխատութիւն, որ ժամանակակից առաջադիմութեան հետ տանէր ժողովրդի միտքը, պատրաստէր նրան հասկացող, ինքնաճանաչ քաղաքացի լինելու,—մի հատ այդպիսի գիրք մեզանում հազուադիւտ երևոյթների շարքից էր:

Ահա ինչու յետ մնացինք: Մեր հոգու համար անթիւ ու անհամար գործեր, իսկ մեր մտքի, մեր խելքի համար—գրեթէ ոչինչ...

Մի և նոյնը և այժմ: Թափում են ահագին աշխատանք, ծախւում են գրամ և հրատարակւում են ինչ... քարոզագիրք: Կարծէք շատ և շատ մեծ է այդպիսի գրքի կարիքը. կարծէք 1400 տարի հայը բացի քարոզներից, բացի հոգեւան խրատներից ուրիշ մի բան արտադրել է և կարծէք մեր գրականութեան մէջ Դիոգենէսի լապտերով պէտք է որոնել մի այդպիսի գործ: Խօսելով այսպէս, մենք, այո, չենք մոռանում որ պ. Ս. Մ.-ի թարգմանածը անգլիական նշանաւոր քարոզիչ և եկեղե-

ցական գրող Ֆարրարի քարոզներն են: Ինչ էլ լինի, այնուամենայնիւ, քարոզներ են գրանք, իսկ քարոզների մէջ նոյն իսկ Ֆարրարն էլ չէ կարող լինել մի հեղինակ, որի ասածները նորութիւն լինեն, կամ հարիւր ու մի անգամ կրկնուած չը լինեն: Փորձի համար բերենք մի կտոր առաջին պատահած երեսներէց: Ահա.

Մեր Աստուածը կայծակի և որոտման աստուած չէ, ոսկեզարդ ու ակնաձև պաճուճապատանք չէ, հեշտասիրութեան և արինասիրութեան մարմնացումն չէ: Նա չէ ոչ հուր, ոչ հողմ, ոչ շունչ, ոչ երկնականմար, ոչ հեղեղ, ոչ լուսատու մարմին: Նա չէ բնութիւն, այլ բնութեան մէջ է յայտնվում նորա Ամենակալութիւնը, նա չէ և բախտ, որ ճորա անեղեւթ ինամակալութիւն է, իսկ մարդկանց անունով դիպում է: Նա է Տէր, մեծ և հզօր, Քաղաւոր Քաղաւորաց, Տէր իշխանաց, Տէր Ամենակալ: Նա է Աստուած աստուածոց, ճշմարիտ Աստուած: Նա Աստուած է, և հաւասար չկայ նորան: Աստուած է, և նախ քան Ինքը, ոչ ոք չի եղել: Նա Աստուած է, և նման նորա չը կայ: Նա Աստուած է, և բացի նորանից ոչ ոք չը կայ: Նա աչն Աստուածն է, Որ երբէք չի փոխվում: Նոյն իսկ երկինքը չի կարող բովանդակել նորան, մինչդեռ Ինքը հաճում է բնակել մանկան խոնարհ սրտի մէջ: Նա Լոյս է և Հայր Լուսոյ: Ստուեր նորա լուսաւորագոյն է, քան արեգական լոյս: Նա բնակում է անմատչելի փառաց մէջ: Նա—Այլ և Քէ: Նա—Նա եւ որ էն, Երրորդութիւն միութեան մէջ: Աստուած Սուրբ Շնորհաց, Անեղբ կարողութեամբ, Ամենուրեք, Հինաւորցն: Եւ այս անեղ, բարձրագոյն կարողութիւնը, այս անիմանալի, անմատչելի, անեղծ Ողին—մեր Հայրն է: Քրիստոս իջաւ երկիրը, որ մեր աչքը բացուի և ճանաչենք, թէ Նա—Հայր է ամենեցուն:

Հարց է. միթէ մեր ընթերցող հասարակութիւնը այդպիսի գրքերի է կարօտ: Միթէ լաւական չեն հոգեւորական գրողներն ու թարգմանողները, որ դեռ աշխարհականներն էլ առաջ են նետուում կրօնական գիտելիքներով ընթերցողի գլուխը պինդ և պինդ լցնելու համար:

Ափսոս աշխատանք, ափսոս վատնած փող: Եթէ մեր ժողովուրդը այսպիսի գրուածքների կարօտ լինէր, նա մինչև այժմ թաքնուած լինէր աստուածաբաններից ու քարոզիչներից պիտի բաղկացած լինէր, այնքան շատ, այնքան չափազանց շատ են տուել նրան հոգևոր և հոգեչաճ գրքեր: Բայց ժողովուրդը նոյնն է այժմ էլ, ինչպէս դարեր առաջ. հոգով տիրացու, նախապաշարուած, տգէտ. նա ունի հող, որի մշակելու միջոցները չը գիտէ, ունի այգի, մշակել չը գիտէ, ունի խաղող, դինի պատրաստել չը գիտէ, վերջապէս ունի հազար ու մի ցաւ, դարման չը գիտէ: Ուրախանանք որ այդ խեղճ ու անճար բազմութեան հոգին փրկելու համար աշխատել են և աշխատում են բազմաթիւ տնային հոգևոր բժիշկներ և աչքդանը բաւական չը համարելով, կանչել են և կանչում են լուսնի տակ եղած համարեա բոլոր օ-

տարերկրեայ բժշկապետներին էլ: Ո՛չ, ինչո՞ւ ուրախանալ: Հազար տարի և էլ աւել աշդպէս էր, բայց ի՞նչ շահ ունեցանք: Այսօր ձրտեղ ենք, ինչո՞վ կարող ենք պարծենալ:

Եւ «Ֆարրարի քարոզները», այո, հէնց Ֆարրարի քարոզները—պէտք է հաւատալ—աշդպէս էլ կը մնան, մի մեծ, հաստ գիրք, առանց կարտած թերթերի: Մեր տէրտէրներն էլ չեն կարդայ, որովհետեւ կարդացող և հասկացող տէրտէրներ չունենք: Վաղուց վճռած է որ մեզ հարկաւոր չեն կարդացածը հասկացող տէրտէրներ...

Մի երկու խօսք էլ թարգմանութեան մասին: Թարգմանուած է գիրքը մի ծանր լեզուով, գրաբարի վրայ սիրահարուած մարդու ձեռքով: Ամեն ջանք գործ է դրուած տալիակ, արհեստական մի լեզու ստեղծելու համար. մի ինչ-որ պատճառով ներս է հրաւիրուած և պօլսական «անոր» ձեռք: Մարդ սարսափում է, երբ մտածում թէ ի՞նչ կը լինէր մեր աշխարհաբարի վիճակը, եթէ նրան մշակողները, ժողովրդի մէջ տարածողները լինէին Ս. Մ.-ի նման «հայկաբաններ»: Միթէ բաւական չէ երկար անցեալի փորձը: Ժողովրդի վզին փաթաթել մի արհեստական, խորթ լեզու, մեր մէջ դարերի ընթացքում նշանակել է սպանել լեզուն, հարկադրել որ ժողովուրդը ոչինչ չը գտնէ իր լեզուի մէջ և երեսի վրայ դդէ նրան, օտարների մօտ որոնէ հարուստ, ձկուն լեզու: Գրականութիւնը աշդպիսով սպանուած էր, մեռած, անկենդան. և մեզ մնաց մի անմշակ, աղքատ ու խեղճ լեզու: Այսօր մենք էլի յետ ու յետ ենք գնում, դէպի նոյն մեռած և մեռցնող լեզուն և այս քայլը մենք անում ենք Արտիմանից ու Բաֆֆիից յետոյ, որոնք չափազանց սլարդ կերպով յոյց տուին թէ սր լեզուն է ժողովրդին յուզում, լացացնում, դաւալ տալիս, վառում, տաքացնում:

Մեզ համար ոչ փորձ կայ, ոչ օրէնք կայ: Այսօր մենք մեր բոլոր գործերով կարծես ուզում ենք յոյց տալ թէ շատ և շատ ցաւում ենք որ եղբ կաթողիկոսի ժամանակներում անշարժացած ու քարացած չենք մնացել:

Մի նկատողութիւն էլ: Էջմիածնի գոլած ու փառաբանած տպարանը, որ ահագին միջոցներ է կրննել, այնպէս է տպագրել այդ գիրքը, որ կարծես Արդար Թօխաթեցու ժամանակից մի քայլ առաջ չէ եկել: Դեռ աւելի վատ: Թօխաթեցու ժամանակ գտնէ աշխատում էին անսխալ տպագրել, իսկ այդ գրքի տպագրական սխալների ցուցակը՝ ոչ աւել և ոչ պակաս, եօթը երես է բռնում...

Լ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱԽԱՌՈՒՄ

Հողի յատկութիւնը և կլիմայական պայմանները.— Հողագործական նախնական ձևեր և գործիքներ.— Անասնապահութիւն. կաթնա օնտեսութիւն և լեւաք.— Փոշնաբուծութիւն և մեղուապահութիւն.— Այգեգործութեան ու շերամապահութեան բացակայութիւնը. պարտիզպանութիւն և լանջարաբուծութիւն.— Տնայնագործութիւն.— Աթար.— Սալորդութիւն.— Բնական հարստութիւնները ուսումնասիրուած չեն.— Վաշխառութիւն և լաւաքաշտաղք.— Միկիտանշիներ և խանութպաններ.— Արքեցոյութիւն.— Փուշերը իրանց հօտերով.— Խոտոցանութեան ցուցադրութիւն.— Փաղաքային զարդի գիւղատնտեսական շրջանային զասարանները.— Բարեգործական ընկերութեան փակուած ճիւղի զարդարահետանոցը.— Վաթնատնտեսական աւպեան կայարան.— Գիւղատնտեսական գրամաղլուսը.— Գիւղատնտեսութեան պէտքերը և կարիքները.— Հողերի ոռոգումը և պարարտացնելը. դարձեալ խոտոցանութիւն, սերմացուների և գործիքների պահեստները.— Գիւղատնտեսական ընկերակցութիւններ և աշխատակցութիւններ. Հողեր գնելու անհրաժեշտութիւնը.— Գիւղական բանկ.— Դատախօսութիւններ և բրօշխրներ.— Ձեմատվօն և նրա փրկարար դերը:

Ախալքալաքի գաւառը վերջին տարիների իր զփրախտութիւններով գրաւել է հասարակութեան աւանձին ուշադրութիւնը. այդ պատճառով ցանկալի և նպատակաշարմար ենք համարում աւելի մօտիկուց ծանօթացնելու ընթերցող հասարակութիւնը այդ գաւառի տնտեսական դրութեան հետ:

Ախալքալաքի գաւառի ընակիչների գլխաւոր պարապմունքը, անկասկած, հողագործութիւնն է: Գիւղատնտեսութեան այդ ճիւղի զարգացմանը գլխաւորապէս նպաստում է բարերեր հողը: Զաւախքի ընդարձակ սարահարթը ամբողջովին ծածկուած է սեահողի հաստ շերտով, որը յայտնի է իր պտղաբերութեամբ: Շատ վաղուց չէր, որ Ախալքալաքի գաւառը ամբողջ Թիֆլիսի նահանգում յայտնի էր իբրև հացաւէտ գաւառ և աւելայած հացը թէ դէպի միւս գաւառներն էր առատօրէն արտահանում և թէ զօրքին էր մատակարարում: Բայց ժողովուրդը հիմա

բաղմայել է, և հողը այլևս բաւականութիւն չի տալիս ազգա-
բնակութեանը. բայց զբանից՝ սակաւահողութեան պատճառով
խրաքանչիւր տարի հարստահարուող հողը բոլորովին ուժա-
սպառուել է, մասնաւանդ որ պարարտացնելու մասին այստեղի
գիւղացին քիչ գաղափար ունի, և պարարտացնելու գլխաւոր և
մեր գիւղացուն առայժմ միակ մատչելի նիւթը—անասունների
աղբը—գործադրում է աթարի համար, որ փայտից զուրկ Ա-
խալքալաքի գաւառում կարեւոր, նոյն իսկ կենսական, նշանա-
կութիւն տնի, իբրեւ վառելանիւթ՝ թէ՛ իրանց գիւղացիների
համար և թէ՛ քաղաքում ծախելու համար: Մեր գիւղացին ար-
տերը քարերից ընդմիջող մաքրելու մասին էլ գաղափար չունի:
Մի քանի գիւղերի գաշտերում մեծ քանակութեամբ քարեր
կան փռուած: Փոխանակ միանգամից ժողովելու, դուրս տանե-
լու և վաղորօք փորած խոր փոսերում թաղելու և ընդմիջող ա-
զատուելու. այդ քարերից, գիւղացին իւրաքանչիւր տարի ժո-
ղովում է քարերը, թողնում է արտի մէջ, գետնի երեսին, նա
կարծում է, թէ քարերը ժողովելու և արտից դուրս տանելու
գէտքում բարաբաթը կը կորչի. միթէ ժամանակ չէ այդ ան-
միտ նախապաշարմունքը թողնելու:

Դժբախտաբար կլիմայական պայմաններն էլ առանձնապէս
չեն նպաստում հողադործութեան ծաղկմանը: Ընդհանրապէս
գաւառի կլիման, կարելի է ասել, չորային է: Չմեղը տևում է
միջին թուով վեց ամիս: Ինչպէս տեղացի հասակաւոր բնակիչ-
ները պատմում են, ատաջ ձմեռը աւելի ձիւնաշատ և աւելի
ցուրտ է եղել: Հիմա ձմեռը երբեմն սակաւածին է լինում, և
ցրտերը հասնում են մինչև 20—25° R: Գարունը ուշ է սկըս-
ւում: Ամառը երկարապի չէ, բայց բաւական չորային է: Ընդ-
հանրապէս վերջրած՝ անձրևներ բաւականաչափ լինում են, բայց
ոչ համահաւասար. դարնանը անձրևներ յաճախ են լինում, այն
ինչ՝ ամառուայ ընթացքում արտերը չատ անգամ մնաւում են
երաչտից, մասնաւանդ որ գիւղական ժողովուրդը այս գաւառում
արտերը արհեստական կերպով ոռոգելու սովորութիւն չունի՝
չը նայած որ բաղմաթիւ գետակների և լճերի չնորհիւ՝ հեշտու-
թեամբ կարելի էր ամբողջ սարահարթը ոռոգել: Բայց գաւառի
ամենամեծ չարիքը խիստ փոփոխակի եղանակներն են—տաքից՝
ցուրտ և ընդհակառակը: Չմեռուայ վերջի և դարնան սկզբի
երկարատև տաք օրերից յետոյ՝ երբեմն անսպասելի կերպով վի-
րանորոգւում է ձմեռը: Պատահել է, որ նոյն իսկ յունիսին ջեր-
մաչափը իջել է մինչև զրօ կամ աւելի ցած: Գարնան ուշ բա-
յուելու պատճառով՝ դարնանայտնը այստեղ ուշ է սկսւում և
կարճատև ամառուայ չնորհիւ՝ արտերը երբեմն լաւ չեն հասնում:

Ո՛չ թէ միայն աշնան սկզբին վաղ սկսուած ցրտերից են չը հասած արտերը վնասուում, երբեմն ամենևին փչանում, այլ և ամառուայ ընթացքում շատ անգամ արտերը վնասուում են առաւօտեան եղիամից, մանաւանդ բարձր տեղերում, ինչպէս անցեալ տարի էր: Այստեղ հարկաւոր եմ համարում մասնանիշ անել, որ սակաւահողութեան պատճառով՝ գիւղացիները ստիպուած են բարձր սարալանջերում ևս ցանել, տեղ-տեղ նոյն իսկ մինչև 7000 ֆ. բարձրութեան վրայ, որ ցանքսերի ամենաբարձր կէտը կարելի է համարել այս դաւառում:

Անբարեյաջող կլիմայական պայմանները հարկադրել են տեղական բնակիչներին մշակել միայն որոշ տեսակի հացահատիկներ, զլիսաւորապէս դարի, որ յայտնի է իր լաւ յատկութեամբ, և գարնանացան ցորեն. շատ տեղերում նաև աչքի ընկնող չափով կտաւատ, որ հիմա էլ արտահանութեան առարկայ է: Նոյն իսկ առաջացել է մի տռանձին տեսակի տեղական ցորեն, որ աւելի համապատասխան է տեղական կլիմայական և հողային պայմաններին: Տեղ-տեղ գաւառում ցանում են փոքր քանակութեամբ նաև աշնանացան հաճար: Անասունները կերակրելու համար շատ գիւղերում ցանում են նաև վիլ, քուշնա և քիլիկ անուններով յայտնի խոտաբոյսերը:

Ձը նայած, որ պայմանները այդքան փոխուել են դէպի վատը, ինչպէս վերև տեսանք, և հողը չի կարողանում իր բնական ուժերով առաջուայ չափ հաց արտադրել, չը նայած անբարեյաջող կլիմայական պայմաններին, լայց և այնպէս մեր գիւղացին շարունակում է էքստենսիվ, բնական տնտեսութիւնը իր պրիմիտիվ ձևերով. էլի նոյն դութանն ու արօրը, նոյն տափանն ու փոցխը. ոչ մի կատարելագործութիւն, ոչ մի նորութիւն: Բացի դրանից՝ մենք սկսեալ վնասակար չենք համարում և այստեղի գիւղատնտեսական սովորութիւններից մէկը, այն, որ արտերը մանղաղով չեն հնձում, այլ գերանդիով հարում են. տղամարդիկ հարում են, իսկ կանայք միաժամանակ հաւաքում «եղին» (կոյտեր) են դնում: Ծիշտ է, զրանով քաղոցը հեշտ և արաղութեամբ է վերջանում, բայց մեծ քանակութեամբ հասկեր են թափւում և կորչում. բացի դրանից՝ արտերը հարելու ժամանակ շատ անպէտք խոտեր են միասին քաղւում և կալււում, որից հացահատիկը և մանաւանդ կտաւատը շատ աղբոտ են դուրս գալիս և զրանով իրանց արժէքը կորցնում:

Ինչպէս ասացինք, հողագործական գործիքները և հողը մշակելու ձևերը շատ պրիմիտիվ և անկատար են: Ախաբալաքի քաղաքային դպրոցի փորձական դաշտը կարող էր էական օգուտ բերել աղգաբնակութեան՝ ծանօթացնելով նրան կատարելագոր-

ծուած հողագործական գործիքների և հողի պարարտացնելու կամ մշակման ձևի հետ, բայց դրա համա հարկաւոր էր այդ գործը ուրիշ կերպ կազմակերպել:—Պէտք է նկատել, որ դաւառի ազգաբնակչութիւնը տեղ-տեղ մասամբ արդէն ծանօթ է եւրոպական գութանի և նրա առաւելութիւնների հետ ւնին փոքրիկ փորձերի չնորհիւ, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը մի քանի տարի առաջ կատարեց այս գաւառում գիւղատնտես ա. Լ. Ղուկասեանի նախաձեռնութեամբ և որի չնորհիւ մի քանի գութաններ գնուեցին: Բայց դեռ բաւական չէ ազգաբնակչութիւնը ծանօթացնել կատարելագործուած հողագործական գործիքների և հողը մշակելու նոր և նպատակաշարմար եղանակների հետ,— պէտք է նրան հնարաւորութիւն տալ նաև ձեռք բերելու այդ կատարելագործուած գործիքները: Եւրոպական գութանները և այլ հողագործական գործիքները մուտք կը գործեն մեր գիւղական ազգաբնակչութեան մէջ միայն ւնի ժամանակ, երբ մեր գիւղացուն կը տրուի ածան վարկ,— գիւղական բանկի կամ այլ դրամական հիմնարկութեան միջոցով, որով նա կ'ազատուի տղրուկ վաչխառուների ճանկերից և եթէ իւրաքանչիւր գաւառում կը բացուի այդպիսի գործիքների պահեստ:

Անասնապահութիւնը, կարելի է ասել, դաւառի միայն մի քանի, աւելեան արօտներ ունեցող, սար գիւղերում է գիւղատնտեսութեան առանձին ճիւղը կազմում. օրինակ՝ Մեծ ու Փոքր Սամսար, Աբուլ, Փոկա, Գանձա և զլխաւորապէս դուխաբօրների գիւղերում՝ չնորհիւ իրանց լայնածաւալ գեղեցիկ արօտների Դուխաբօրները, սակայն, հայ գիւղացու չափ էլ նոյն իսկ ծանօթ չեն կաթնատնտեսութեանը: Սարի գիւղերում թէ՛ իրանք գիւղացիք են մեծ քանակութեամբ պանիր պատրաստում ու արտահանում և թէ՛ վաճառականներն իրանք են պատրաստի պանիրը առնում կամ՝ մի առժամանակ մնալով նրանց մօտ՝ կաթ առնում, պանիր պատրաստում և արտահանում: Այդպիսով այդ գիւղերում մասամբ դոյութիւն ունի արդիւնաբերական պանրագործութիւն, թէև տեղական ձևով: Բացի դրանից՝ այդ գիւղերից մեծ քանակութեամբ մտացու տաւար են արտահանում, զլխաւորապէս, դէպի Թիֆլիս և Գութայի: Մինչդեռ դաւառի մեծ մասում հողագործ գիւղացին անասնապահութեամբ է պարապում միայն այն չափերով և այն նպատակով, որ հողագործութեան համար անհրաժեշտ եղներն ունենայ: Այդ պատճառով էլ դաւառում մեծ մասամբ խոշոր եղջիւրաւոր կենդանիներ են պահում և փոքր քանակութեամբ միայն ոչխար ու այծ: Բացառութիւն կազմում են սարի գիւղերը, ուր

բաւական զարգացած է ոչխարաբուծութիւնը: Այդ գիւղերի թւում պէտք է հաշուել և դուխաբօրների գիւղերը, որոնք աւելի մեծ չափերով են սլարապում ոչխարաբուծութեամբ՝ քան հարեան հայ գիւղերը: Զիւր նոյնպէս մեծ մասամբ պահում են դուխաբօրները՝ չնորհիւ արօտների և խոտի առատութեան: Նրանց ձիերը յայտնի են իրանց խոշորութեամբ ու դիմացկանութեամբ: Բայց և այնպէս նրանք աշխատում են իրանց ձիերի տեսակը աւելի ևս ազնուացնել՝ Թիֆլիսի պետական աստանից ազնիւ տեսակի որձ ձիեր բերել տալով իրանց գիւղերը և առանձին վճարով իրանց ձիերը «քաշել տալով» նրանցով: Դուխաբօրների գիւղերում «СЛУЧНОЙ ПУНКТА»-եր են նշանակուած, բայց մեր հայ գիւղացիները չեն օգտուում իրանց ձիերի համար: Մի ժամանակ յայտնի էին և Վաչիան հայ գիւղի ընտիր նժոյգները, բայց վերջին տարիների անբերրութիւնների պատճառով այդ նժոյգները այլ ևս չը կան: Ինչ վերաբերում է խոզապահութեանը, պէտք է նկատել, որ այդ բանով աւելի ևս քիչ են սլարապում դաւառում՝ անտառ չը լինելու պատճառով և մի քանի գիւղերում միայն շափից-քչից խոզ է պատահում:

Անասնապահութեան զարգացմանը, որ գիւղատնտեսութեան շատ կարևոր ճիւղն է կազմում առհասարակ, մեծ արդեւք է լինում սակաւահողութիւնը և այդ պատճառով արօտների և կերի պահպանութիւնը: Ազգաբնակչութեան խիտ լինելու և սակաւահողութեան պատճառով դատուի ամբողջ տարածութիւնը՝ բացի լեռի ժայռերից և ճահիճներից՝ հերկուած ու մշակուած է. խոտ հող բոլորովին չը կայ: Տաւարը արածելու տեղ չունէ. դարնանը և ամառը նա թափառում է աստառաժոտ տեղերում, իսկ աշնանը գերանդիով հարած արտերում, ուր համարեա նոյնպէս ոչինչ չէ գտնում: Անասունների ձմեռայն պաշարը դաւառի մեծ մասում (տափարակ տեղում) կադմում է միայն յարդը: Ահա այդ պայմաններն ևս պատճառ, որ գիւղացիք սահմանափակ տարածութեամբ են տաւար պահում: Կաթնատնտեսութիւնը դաւառում զարգացած չէ և չի կարող զարգանալ այդ պայմաններում: Սակայն Ախալքալաքի կաթն ու կարագը յայտնի են իրանց ընտիր յատկութիւնով՝ չնորհիւ, դիխաւորապէս, ալպական ծաղկաւէտ արօտների: Կարագի գեղեցիկ յատկութիւնը, սակայն, պէտք է վերագրել և և սերուցքից կարագ պատրաստելու այն հմտութեանը, որ ունի մեր հայ գիւղացի կիներ: Առհասարակ կաթնատնտեսական ձեերում այստեղի հայ կիներ, իմ կարծիքով, անհամեմատ աւելի բարձր է, քան ուրիշ շատ տեղերի կանայք: Այստեղի ձևով սեր պատրաստելը, կամ, ինչպէս ասում են, «սեր դնելը», կաթի և

թանի համարեա բոլոր բաղադրիչ մասերը որ և է նպաստելի (օր. «թել-պանիր» և այլն պատրաստելու համար) այսքան տընտեսաբար գործադրելը արհեստան Անդրկովկասի գաւառներում եւ չեմ պատահել:

Այստեղ աւելորդ չեմ համարում յիշել գաւառում տարածուած մի կաթնամանստեղծական սովորութեան վրայ, որ յայտնի է «խաբ» անունով: Դրա էութիւնը այն է, որ հարեանուհիները ամբողջ կաթնային սեղօնի ընթացքում միացնում են իրանց ունեցած կաթը՝ հերթով նրանից իւր ու պանիր պատրաստելու: «Խաբին» մասնակցողները այդպիսով կազմում են մի տեսակ խնայողական ընկերակցութիւն, ընկերավարական միութիւն, որի անդամուհիները շարունակ օգուտ են ստանում, բայց զրկանք և զործողութեան սահմանափակումն երբէք: Հետաքրքիր է, ի հարկէ, ընկերուհիների կամ «խաբուոր» կանանց ժողովները, վէճը, զործողութիւնը և այլն:

Գաւառում քոչմաբուծութեամբ պարապում են մեր գիւղական տնտեսութիւնների մէջ ընդունուած ձեով և չափերով. գլխաւորապէս պահում են հաւ և ջրառատ տեղերում նաև, աչքի ընկնող քանակութեամբ, սագ: Այդ նրկու տեսակի թռչունները՝ իրանց արտադրութիւններով որոշ չափով ծառայում են նաև իբրև արտահանման նիւթ: Չարվագարները գիւղէ գիւղ ման գալով՝ մեծ քանակութեամբ ու չարչիական սխառմով ձու են առնում չնչին գներով, գլխաւորապէս գիւղացի կանանցից, և ձիերի վրայ բարձած քթոյների ու արկղների մէջ՝ Մթին լեռների և Մանգլիսի վրայով տանում են Թիֆլիս, ուր ձեռնառու գներով ծախելով՝ վերադարձին իրանց ձիերով ապրանք են բերում Ախալքալաքի վաճառականների համար, որից նոյնպէս օգտուում են: Առհասարակ ձու վաճառելուց գիւղացին շատ քիչ է շահւում. գլխաւորապէս օգտուում են մի խումբ ոչ-գիւղացի մարդիկ: Այդ գործով մեծ մասամբ պարապում են ստամաստեցի պանգուխտ հայերը, որոնք քաղաքում և գաւառում մի քանի տասնեակ ընտանիքներ են կազմում: Այստեղի մի քանի հարուստ սալմաստեցի վաճառականները իրանց հարստութեան հիմքը ձու վաճառելով են դրել և հիմա արդէն Մոսկուայի և Վարչավայի հետ գործ ունենան: Երբեմն երամակներով սագեր էլ են քչում Թիֆլիս ծախելու: Մի քանի գիւղերում զգալի օգուտ են ստանում նաև սագի բմբուլի (ղուլի) վաճառումից, որ յայտնի է իր ընտիր յատկութեամբ:

Մի քանի գիւղերում պարապում են նաև մեղուաբուծութեամբ: Չը նայած անտառների, ուրեմն և լորենիների, բացակայութեանը՝ չնորհիւ բազմատեսակ ալպեան ծաղիկների՝ աչքի

ընկնող քանակութեամբ ընտիր մեղր է ստացում այդ գիւղերում, որ և արտահանում են քաղաք:

Այգեգործութիւն (եթէ այդի անուանելու լինենք միայն խաղողի և թթի այգիները) համարեա գոյութիւն չունի այստեղ: Ամբողջ գաւառում միայն Խիզարավրա վրայախօս կաթուղի գիւղը խաղողի այգիներ ունի և սեփական գործածութեան համար սոսր տեսակի գինի է պատրաստում: Մի ժամանակ, ինչպէս ասում են, Թափարվան (կամ Փարվանա) գետի կիրճում, մինչև Ախալքալաքի մօտը, խաղողի այգիներ են եղել, բայց հիմա վաղերի հետքն անգամ չէ մնացել: Թթենիների առանձին այգիներ էլ չը կան, թէև Խէրթվիս (կամ Խրթըզ) թուրք գիւղի ծառայողի այգիներում պատահում են հսկայական թթենիներ, որի պտուղը գործադրում է մեծ մասամբ պատեղ չինելու համար:

Հարկաւոր եմ համարում այստեղ մատնանիչ անել, որ թթենու հետ կապ ունեցող Շերաւապանութիւնը այդ գիւղում գոյութիւն չունի, և բնակիչները, ինչպէս և զաւառի մնացած աղყարնաութիւնը, համարեա զաղափար չունեն գիւղատնտեսութեան այդ կարևոր ճիւղի մասին:

Բայց Խէրթվիսը, ուր Թափարվանը թափում է Կուրի մէջ, և երկու գետերի կիրճերում գտնուող մի քանի ուրիշ (ոչ-հայաբնակ) գիւղեր յայտնի են ծառայողի գեղեցիկ, նոյն իսկ ճոխ այգիներով և պարտէզներով: Խէրթվիսի, Յունգայի ու Մարգաստանի այգիները, որ գտնւում են Կուրի կիրճում, Ախալքալաքից 15—20 վերստի վրայ, յայտնի են խնձորի, տանձի, կեռասի, սալօրի (ճանջուլ) ընտիր տեսակներով: Խէրթվիսի ընտիր խնձորը, մեծ մասամբ Ախալքիսայի խնձորի անունով, հասնում է ոչ միայն Թիֆլիս, Բաթում, այլ և Վլադիկավկազ, Բոստօլ, Օդեսսա և այլն, լաւ յարգի է չուկայում և ծախւում է լաւ գնով: Այգիգործութեամբ պարապող այդ մի քանի գիւղերը, նեղ կիրճերում գտնուելով՝ զուրկ են վարելահողերից և ապրում են միայն գիւղատնտեսութեան այդ ճիւղով: Նոյն իսկ այգիների համար էլ չափ քիչ յարմար հող ունենալով՝ գետերի սոխերին՝ խեղճ գիւղացիք ափսոսում են ապագածների վրայ եղիպտական աշխատանքով արհեստական դարատափեր (տերրասներ) չինել և նրա տափճանների վրայ ծառեր տնկել:

Այդ նոյն գետերի կիրճերում պարապում են նաև բանջարաբաժութեամբ: Դէպի Ախալքիսա տանող խճուղու երկու կողմերում պատահում են սիմֆնդրի արևուր, ծխախոտի տնկարաններ և կաղամբի, վարունգի, իսկ վերջին տարիներս նաև բաւական մեծ տարածութեան վրայ ձմերուկի բուստաններ: Ձմեռ

րուկ ցանկու փորձերը կատարեալ աջողութիւն ունեցան, որովհետեւ ընտիր տեսակի ձմերուկ է ստացուում, որը քաղաքի շուկայից դուրս է քշել Բօրչալուի ձմերուկը:—Բանջարաբուծութեամբ այդ կիրճերում զբաղւում են գլխաւորապէս տեղական թուրքերը, վրացիք և մասամբ եկուոր աճարեցիք, որ կապուով են վերցնում հողերը:—Իսկ սարահարթի հայ գիւղերում և դուխաբօրները, աւելի սար գիւղերում՝ կլիմայական պայմանների շնորհիւ՝ քիչ են պարապում բանջարաբուծութեամբ. դուխաբօրները, սակայն, արտերի փոխարէն, որ շատ անգամ ցրտից փրկանում են, մեծ տարածութեան վրայ գետնախնձոր են ցանում, իսկ սարահարթի մի քանի տեղերում, օր. Կարտիկամ հայ-կաթողիկ գիւղերում, նոյնպէս մեծ քանակութեամբ շաղգամ, բազուկ (տակ) ու բողի են ցանում:

Գաւառում անտառներ չը կան, և ժողովուրդը զաղափար չունի անտառային մրգերի մասին, որով ուրիշ շատ տեղերում օգտուում են, և եթէ գիւղացի կինը աջողեցնէ դաշտերից մի քիչ զըմի, զոխ, ժախ և բիզա ժողովելու՝ թթու դնելու համար, մի քիչ էլ աւելուկ, թրթնջուկ, ծէթրոն կամ դաղձ ժողովելու՝ չորացնելու համար, այն ժամանակ մեր գիւղացու աղքատիկ պաշարն ու սեղանը պատրաստ կը լինի:

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ կլիմայական պայմանների շնորհիւ՝ գաւառում ոչ բամբակ են ցանում, ոչ չալթուկ (բրինձ), ինչպէս Անդրկովկասի շատ գաւառներում: Միաժամանակ չեն պարապում հողագործութեամբ և լայն չափերով անասնապահութեամբ ու այգեգործութեամբ և այլն, որ եթէ մէկի բերքը անաջող լինի, գիւղատնտեսութեան միւս ճիւղերով իր դոյութիւնը պահպանէ ժողովուրդը: Մեծ մասը պարապում է համարեա միայն հողագործութեամբ, իսկ մի քանի գիւղ՝ համարեա միայն պարտիզպանութեամբ կամ բանջարաբուծութեամբ, և այդ պատճառով, եթէ հունձը անաջող է լինում, ժողովուրդը մնում է միանգամայն անօգնական դրութիւնում: Չեզ օրինակ գաւառի ներկայ անմխիթար դրութիւնը:

Վերջին տարիների անբերրիութիւնները, օգերիոյթարանական տնտեսական շուկայի հանգամանքները, վնասակար միջատները, երկրաշարժը խիստ քայքայեցին գիւղացիների տնտեսական բարօրութիւնը: Որ և է կողմնակի պարապմունք էր հարկաւոր, որ կարող լինէր գիւղացիներին նպաստել նիւթապէս, Ընտանիքը և տնտեսութիւնը պահպանելու համար՝ հարկաւոր էր ձեռք զարկել որ և է արդիւնաւոր աշխատանքի, յարմարուել

կեանքի պայմաններին. լայց, դժբախտաբար, մեր ներկայ դիւ-
ղացին՝ իր դաւառում մնալով՝ ոչինչ չէ կարող անել, որովհետեւ
ահագին մեծամասնութիւնը ոչ թէ միայն որ և է արհեստ չը
դիտէ կանոնաւոր, այլև համարեա բոլորովին զուրկ է ցնայնա-
գործական արդիւնադործութիւնից և որ և է հմտութիւնից *)
Թուրքերը և սակաւաթիւ քրդերը պատրաստում են կոպիտ
տեսակի գորգեր, կապերաներ, խուրճիկներ և այլն. հայերը՝
կոպիտ չուխացու շաւր և այծի աղուամաղից կամ տիֆտիկից
ընտիր տեսակի ձեռնոցներ, շարփեր, ականջակալներ և այլն,
իսկ դուխարօրները՝ մի փոքր աւելի լուս շաւր և թաղիքներ:
Հարկաւոր եմ համարում մատնանիչ անել, որ այս դաւառում
առանձին արհեստաւոր բրուտներ չը կան, և դիւզերում գործ-
ածուող կառէ ամանները հայ գեղջկուհու ձեռքի արտադրու-
թիւն են. հէնց որ մտնէք գիւղացու տունը, կը տեսնէք, որ՝
լայցի գործածուող ամաններից՝ բազմաթիւ կառէ նոր ու վաշ-
լուն բղուղներ և այլ ամաններ շարուած են պատերի տակը
կամ դարազների վրայ, լոկ գեղեցկութեան կամ, ինչպէս ա-
սում են, «աչքի համար»: Այդ բոլոր ամանները, որ յայտնի են
իրանց զիմացկանութեամբ, հայ գեղջկուհին է իր մատներով
պատրաստել և ապա քրծել (վառել) մեծ մասամբ թոնրի մէջ:
Ուրիշ տեսակ տնայնագործութիւն մի որոնէք դաւառում:

Ընտելանալով իր գութոնին, արօրին և տափանին՝ մեր
դիւղացին չէ մտածել և կարիք էլ չի ունեցել մտածելու ար-
հեստների մասին: Գութանն ու արօրը կերակրում էին ազգա-
բնակութիւնը, և դրանով նա բաւականանում էր, այն ինչ՝
վեցամսեայ երկարատեւ ձմեռուայ ընթացքում զսււառի ազգա-
բնակութիւնը ոչնչով չէ պարագում և այդ պարագ ժամանակը
ոչ թէ անօգուտ է անցնում, այլ շատ անգամ նոյն իսկ վնասակար:
Արհեստից զուրկ լինելու պատճառով՝ նրա հետ կապ ունեցող
ամեն մի չնչին բանի համար մեր գիւղացին ստիպուած է միշտ
քաղաք գիմելու, որ չէ նկատում գաւառի դուխարօրների մէջ:
Վերջիններիս մէջ համեմատաբար աւելի շատ է տարածուած
տնայնագործութիւնը և մի ժամանակ նրանք մտնել էին իրանց
«սեփական միջոցներով» բաւականանալ և քաղաք գիմել միայն
ծայրայեղ դէպքերում, գործարանական ամենաանհրաժեշտ ար-
տադրութիւնների համար, օրինակ ասեղ գնելու և այլն:—Գիւ-
ղատնտեսական նոր, ինտէնսիվ ձևերին ընտելանալու հետ միա-

*) Եւ այդ պատճառով առաջին անգամ պանդխտութեան սկիզբը
զրուեց. շատերը գաւառից ցրուեցին քաղաքներ՝ բանուորութեան հա-
մար, իսկ շատերն էլ ընտանիքներով տեղափոխուեցին ուրիշ գաւառների
գիւղերը՝ մտաբայութիւն անելու:

սին արհեստներն ու տնայնագործութիւնը կարող էին ահագին ծառայութիւն անել ժողովրդին, սբա դատարէ պարապութիւնը օգտաւէտ աշխատանքով լցնելով և մշտապէս մի կտոր հաց ապահովելով նրա համար: Բայց ինքը ազգաբնակչութիւնը՝ առանց զրաի ինտելիկենտ և ձեռնհաս ուժերի օգնութեան՝ ոչինչ չի կարող անել: Այդ նպատակով մի քանի տարի առաջ Ախալքալաքի քաղաքային զարոյցին կից գիւղատնտեսական բաժին բացուեց, որը ժողովրդից ահագին ծախսեր կլանելով հանդերձ՝ իր հինգ-վեց տարուայ գոյութեան ընթացքում ոչ մի շօշափելի օգուտ չէ տուել ժողովրդին:

Մեր գիւղացու աղքատիկ տնտեսութեան մէջ պակաս էր շահակութիւն չունի և արար, որ ամբողջ գաւառի և քաղաքի գլխաւոր վառելիքն է կաղձում: Գիւղացին՝ կենդանիների աղբից աթար պատրաստելով՝ թէ իր վառելիքն է հոգում և թէ քաղաքում ծախելով՝ իր միւս դարդերն է մատամբ հոգում: Տաւարի աթարը վերջին տարիներս ծախուում է խորանարդ սաժէնը 10—12 ոտըլիով, իսկ ոչխարի աթարը, որ յայտնի է քաղք սնունդով և համարեա փայտի նման է վառուում լաւ տաքութիւն է տալիս, աւելի յարգի է և ծախուում է սաժէնը մինչև 15 ոտըլիով, համարեա այն գնով, ինչ գնով որ շատ տեղերում փայտն է ծախուում: Քաղաք աթար են բերում ծախելու ընդհանրապէս հայ գիւղացիները, իսկ տարթ՝ մեծ մասամբ դուխաբօրները: Քաղաքի համար փայտ են բերում Բօրժօմի և Յիգիանտլիների կալուածքների տնտեսներէր զաւառի հիւսիսային մասի գիւղացիները, Բարալէթի և Վարեանի հասարակութիւններից:

Փաւառում սայլորդութիւն—բրեհտարութիւն էլ են անում, մեծ մասամբ դուխաբօրները և մատամբ հայերը, գլխաւորապէս Արաղօփա գիւղի բնակիչները: Սայլորդութեամբ պարապում են ամառը Քուրգօններով, իսկ ձմեռը՝ մի տեսակ սահնակներով, կամ, ինչպէս ժողովուրդն ասում է, խզակներով: Ահն այն կէտերը, որոնց մէջ սայլորդութիւն է անում մեր գիւղացին. Բօրժօմ, Ախալցխա, Ալէքսանդրապօլ և Կարս ու Արդահան:

Մեր գիւղացու տնտեսական աղբիւրները լրիւ պարզելու համար հարկաւոր եմ համարում մատնանիչ անել, որ գաւառում մինչև հիմա ոչ մի բնական հարստութիւն չի երևան հանուել, գիւղատնտեսութեան հետ կամ ունեցող կամ չունեցող, որ կարողանար իբրև օժանդակիչ միջոց ծառայել մեր գիւղացու աղբուտի համար: Համեղ կարմրախալտով հարուստ մեր գաւառի լիւնային լճերի, այն է՝ Տարաջխտի, Տապարվանի և այլն, նաև

հարեան Չլըբրի լճի ձկները հարուստ կապտադեղնափայլ ձկնաբլիթներն են և միանգամայն մեր գիւղացու համար անմատչելի: Երբեմն միայն լեռնային գետակներում կարմրախայտ և ուրիշ տեսակի ձկներ են որսում մեր գիւղացիները և բերում ծախում են քաղաքում: Հատ-հատ էլ աղուէսի մսրթիկներ են չնչին գներով գիւղացու ձեռքից առնում մեր վաճառականները: Ուրիշ բնական հարստութիւն չը գիտէ մեր գիւղացին՝ բացի հողից, և մենք տեսանք լինչպէս և լինչ պայմաններում է նա օգտւում այդ հարստութիւնից:

Բացի կլիմայական անբարեկյաջող պայմաններից և բնական պատահարներից, այն է՝ հացաբոյսերը վնասող միջատներից, երաշխից, ցրտից և ժանգից՝ մեր գաւառի գիւղատնտեսութեանը մեծ վնաս է տալիս և խիստ զարգացած վաճառութիւնը: Թէ որքան մեծ պատուհաս է վաշխառութիւնը այս դժբախտ գաւառում, կարելի է եզրակացնել այն փաստից, որ միայն դուխաբօրների Սպասիօէ շինական համայնքը պարտք չունի (դուխաբօրները, ընդհանրապէս վերցրած, նոյն իսկ փող ունին խնայողական դրամարկղում), իսկ գաւառի մնացած 10 գիւղական համայնքների աղղաբնակութիւնը 1895 թուին 1,103,137 ռուբլի մասնաւոր պարտք ունէր մուրհակներով, և դա ոչ պետական հարկերի ապուրիկ էր (մեր գիւղացին հարկի ապուրիկ համարեա երբէք չէ ունենում), ոչ մի արտասովոր դժբախտութեան հետեանք, այլ մեծ մասամբ անհափաճ, աշխատելու գեռ անընդունակ, պատանիների ամուսնացնելու համար «զըլ-խագին» տալու նպատակով վերցրած պարտք է, տնմիտ շուայլութեան հետեանք: Այդ ահագին պարտքից ամեն մի գիւղական ծխին գալիս էր 170 ռ., իսկ տոկոս 34 ռ. (տուաջ 20⁰/0-ը չափաւոր էր համարւում այս գաւառում): Դա 1¹/₂ անգամ աւելի է՝ քան պետական, զիմսիկ և հասարակական տուրքերը... Վերջին տարիների դժբախտութիւնների պատճառով, անկասկած, պարտքը գեռ աւելացած կը լինի:

Օգտուելով գիւղացու իսկուպէս նեղ և անճար գրութիւնից կամ արհեստական կերպով ստեղծելով այդպիսի դրութիւն խաւարում խարխալող խեղճ ու կրակ գիւղացու համար՝ վաշխառուները տուած փողերի սոկոսի տեղ խլում են նրա ճար ու մատար արտը նոյն պայմանով, որ վաշխառուն ձրի օգտուի արտից, մինչև որ գիւղացին կարող կը լինի վերադարձնել նրա փողը: Այդ սովորութիւնը, որ յայտնի է «ախչափայտալ» անունով, նոր օրէնքով արգելուած է, սակայն գեռ շարունակւում է և շատ դժբախտ գիւղացիների դարձնում է գիւղական պօլիտարի

հողագուրկ բաժնակ, որ հող չի ունենում ցանկու, իսկ գիւղական վաշխառուներին դարձնում է օրէնքով չը նախատեսնուած կալուածատէրեր: Բայցի դրանից՝ վաշխառուները քաշում, տանում են հողագործ գիւղացու աշխատաւոր եզը և լուծը թողնում գեանին. նրանք կալոցի ժամանակ քաշում, տանում են գիւղացու արին-քրտնքի արդիւնքը, նրա երեխաների բերանի հացը կտրում և թողնում նրանց ճակատադրի կամքին. էլ ինչ սրտով նա կատարելագործութիւնների կտիւց ընկնի: Ահա թէ ինչ վնասներ է տալիս վաշխառութիւնը, մանր կապիտալիզմի այդ ամենատուր և խայտառակ տեսակը, մեր գիւղատնտեսութեանը: Սակայն վերջին տարիներս վաշխառուները սանձահարուել են, սակայն պէտք է աւելի արմատական միջոցներ ձեռք առնել՝ ընդամիշտ անվնաս դարձնելու այդ հրէջներին:

Վաշխառուների տիպին են պատկանում և գիւղական խաւնութպաններն ու միկիթանչիները: Մի կողմը թողած անբարոյականութիւնը, որ տարածում են միկիտանները և նոյն իսկ սովորական խանութները, այն է՝ արբեցողութիւնը իր քայքայիչ հետեանքներով, ընտանիքի անդամների մէջ առաջացող փոխադարձ գողութիւնները՝ այդ հիմնարկութիւնները ամենալատ, փտած, փչացած ապրանքը տալիս են գիւղացուն ամենաթանգ գներով, և անհաշիւ գիւղացին առնում է շատ անգամ միայն այն պատճառով, որ ապագիկ է տրւում. բայց այդ սպառիկը իւրաքանչիւր տարի սրբում-տանում է գիւղացու կալից նրա ունեցած-չունեցածը կամ մուրհակ է դառնում և հրէշաւոր տոկոսներով ընդամիշտ գերում խեղճ գիւղացուն: Ապագիկ առևտուր չեն առնում միայն տան կրտսեր անդամները, ջահիլ-ջիուլը, հարան ու աղջիկը. նրանք մեծ մասամբ հէնց իրանց տանից գողացած ցորենով և այլ բերքերով են զիմում խանութ և այդ գողունի առևտրի ժամանակ յիմար ու չնչին զիգիւրիզի բաների համար մեծ քանակութեամբ ցորեն է վերցնում վաշխառու խանութպանը և տնտեսապէս քայքայում դրանով գիւղացուն:

Թէ որքան է օլիի գործածութիւնը տարածուած գաւառի մի քանի գիւղերում, դա կարելի է եզրակացնել այն հանգամանքից, որ մի քանի գիւղերում այսպիսի մի սովորութիւն կայ. տան՝ օղի խմող՝ մեծի համար մի առանձին արտ են ցանում և անունը դնում «բախու առս». այդ արտի ապագայ բերքի հաշուով գիւղացին ամբողջ տարին չարունակ «բախի» է խմում քաղաքի կամ հէնց գիւղերում գանուող միկիտաններում, մինչև որ կալոցի ժամանակ միկիտանչին գալիս տանում է «բախու արտի» բերքը ամբողջովին: Շատ անգամ գիւղերում նոյն իսկ

ծածուկ կերպով օղի են քաշում հայահատիկից: Չը նայած, որ գաւառում այգիներ չը կան, բայց այստեղ արեւոյդութիւնը աւելի մեծ չափերով է տարածուած, քան ուրիշ շատ գաւառներում:

Գաւառի զիւղատնտեսութեանը վնասում են նաև հովու-թեամբ պարապող թուչերը, որոնք թիօնէթի գաւառից իրանց ահագին հօտերով գալիս են, մեր գաւառով անցնում դէպի Գեօգ-դաղի և Արդահանի չըջանի արօտները: Գնալու ժամանակ և վերադարձին նրանց հօտերը վնասում են մեր զիւղացու արտերը, որի շնորհիւ յաճախ ընդհարումներ են լինում: Օսերը աւելի նուազ չափերով են վնասում Գորու գաւառի սանմանակից զիւղերին: Այս երևոյթները կարօտ են պատշաճաւոր իշխանութիւնների ամենալուրջ ուշադրութեանը:

Մենք անասնը, թէ ինչպիսի ողբալի դրութիւնում է զիւղատնտեսութիւնը և անայնագործութիւնը Ախալքալաքի գաւառում: Ի՞նչ է արուած, արդեօք, իրերի դրութիւնը բարեփոխելու մտքով:—Մի քանի տարի առաջ այս գաւառի նախկին հարկային տեսուչ պ. Լ. Ղուկասեան, որ մասնագէտ զիւղատնտես է, խոստացանութեան սկիզբը դրեց գաւառում. նա գաւառի բոլոր 11 զիւղական հասարակութիւնների համար մի-մի ցուցադատեց ցանկի զանազան տեսակի խոտերի սերմերով, համայնքների յատկացրած տեղերում, և հետզհետէ ցուցադաշտերի թիւը հասցրեց մինչև 24-ի: Պ. Ղուկասեան վաճառականներից մէկի հետ պայմանաւորուել էր, որ վերջինս սերմեր բերել տայ և սրոջ գնով վաճառէ ցանկացող զիւղացիներին: Գիւղացիները սկսել էին խոտերի սերմեր առնել, թէ՛ ցուցադաշտերից ստացած փողով՝ համայնքների համար, և թէ՛ առանձին անհատներ: Երկրագործութեան մինիստրութիւնը լուրջ ուշադրութիւն դարձրեց այդ երևոյթի վրայ և նպաստում էր գործին, որով խոտացանութեան սկիզբը կանոնաւոր կերպով դրուեց գաւառում: Պ. Ղուկասեան՝ խրախուսուած սկզբի աջողութիւններից՝ շարունակում էր գործը, աշխատում էր հետզհետէ աւելացնել ցուցադաշտերի թիւը, որ ամեն մի զիւղ ունենայ իր դաշտը: աշխատում էր սերմերի և զիւղատնտեսական գործիքների պահեստներ բանալ քաղաքում, բայց անակնկալ կերպով նրան փոխադրեցին այստեղից և վերջնականապէս չը հաստատուած այդ համակրելի գործը ոչնչացաւ, նոյն իսկ մնացած սերմերը յետ տարուեցին թիֆլիս և այնտեղ վաճառուեցին: Սակայն մենք կարծում ենք, որ պ. Ղուկասեանի այդ գործը առանց հետևանքի չը մնաց և դա մի քայլ էր դէպի առաջ:

Գիւղատնտեսութիւնը բարեօրէնու համար այստեղ արուեստ եւ մի ուրիշ քայլ: Ինչպէս ասացինք, Ախալքալաքի քաղաքային դպրոցին կից կայ (1895 թուից) գիւղատնտեսական բաժին կամ «լրացուցիչ դասարաններ», որոնց նպատակն է դաշտամշակութեան ու կաթնատնտեսութեան նոր, խելացի ձևեր եւ արհեստներ տարածել ժողովրդի մէջ: Մի փոքր կանգ առնենք այդ հիմնարկութեան վրայ: Քաղաքը եւ դաւառի 8 գիւղական համայնքները, մեծ յոյս ունենալով այդ հիմնարկութեան վրայ՝ մեծ զահագութիւններ յանձն առան: Քաղաքը իր կողմից երեք կտոր քաղաքային հող եւ մի չինութիւն յատկացրեց այդ նպատակին՝ 1, Չանդուրա գիւղի դէմը 10 դեսեատին՝ փորձնական դաշտի համար, 2, Դըրբա-լուլաղի ձորում 4 դեսեատին՝ կաթնատնտեսական ագարակի (ֆերմայի) համար եւ 3, այն նախկին քաղաքային չինութիւնը իր առաջը գտնուած հողով, ուր ներկայումս զտնդուած է դաւառական վարչութիւնը: Գանձարանը քաղաքի նուիրուած այդ չինութիւնը յատկացնելով դաւառական վարչութեանը՝ փոխարէնը սուեց երեք հազար ուսուրի, որի վրայ ուսումնարանական վարչութիւնը աւելացնելով վնց հազար ուսուրի՝ մի նոր, աւելի նպատակաշարժար, հոյակապ չինութիւն շինեց քաղաքի տան հետ տուած նոյն հողի վրայ՝ բուն դասարաններ, պանսիօնի եւ արհեստանոցների համար: Բացի այդ երեք կտոր հողից եւ մի չինութիւնից՝ քաղաքը պարտաւորուեց տասը տարուայ ընթացքում իւրաքանչիւր տարի տալ 500-ական ուսուրի: Գաւառի ութ համայնքների ամեն մի ծուխը տալիս է եւ համալճիւններով պարտաւորուել է շարունակ տալ 40-ական կոպ. իւրաքանչիւր տարի, որից տարեկան գոյանում է 2088 ուսուրի: Մնացած երեք համայնքներից դուխարօրների երկու համայնքը հրաժարուել են մասնակցելույ, իսկ Խէրթվիսի չինական, մեծ մասամբ թուրք, համայնքը այդ 40-ական կոպ. ծխահարկը տալիս է Խէրթվիսի գիւղական ուսումնարանին կից պարտէզպանական բաժնի համար, որը, սակայն, գոյութիւն չունի: Բացի այդ 2088 ուսուրուց՝ Բարալէթի չինական համայնքը իւրաքանչիւր տարի տալիս է 1300 ուսուրի. Զեմսկի գումարներից, որ նոյնպէս գիւղական փող է, իւրաքանչիւր տարի յատկացուած է 1000 ուսուրի. քաղաքային դպրոցը իր սուղ միջոցներից իւրաքանչիւր տարի յատկացնում է 400 ուսուրի:—աշակերտների տուած ուսումնաւարձից: Ուրեմն «լրացուցիչ դասարանները» տարեկան բիւջէն հետեւեալն է՝

- | | |
|--|---------|
| 1) Քաղաքից | 500 ո. |
| 2) Գաւառի 40-ական կոպ. ծխահարկից | 2,088 » |
| 3) Բարալէթի համայնքից | 1,300 » |

4) Զեմակի գումարներից	.	.	.	1,000 »
5) Քաղաքային դպրոցից	.	.	.	400 »

Ընդամենը . 5,288 ո.

Բացի այդ հաստատու և որոշ մուտքից՝ դասարանները օգուտ են ստանում նաև փորձնական դաշտից, կաթնատնտեսական ագարակից (կաթնային արտադրութիւնների և կենդանիների ծախելուց) և արհեստանոցից, այնպէս որ այդ հիմնարկութեան տարեկան բիւջէն հասնում է մօտ 7500—8000 ռուբլու, որը ամբողջովին ծախսւում է։ Այդպիսով դասարանների հինգ-վեց տարուայ ընթացիկ ծախսերը հասնում են մօտ 35,000 ռուբլու։ Բացի դրանից՝ միանուսդ ծախսեր եղել են—լրացուցիչ դասարանների, պանսիօնի և արհեստանոցի շինութիւնը, կաթնատնտեսական ագարակի երկայրկանի շինութիւնն ու գոմը և դաշտի փոքր շինութիւնը կանգնեցնելու համար մօտ 21,000 ռուբլի. կովեր ու ինվենտար (սերձատ ու կաթնատնտեսական ուրիշ գործիքներ և հողագործական գործիքներ) ձեռք բերելու համար գործադրուած է մօտ 5—6 հազար ռուբլի. այդպիսով միանուսդ ծախսերի գումարը հասնում է մօտ 26—27 հազարի, իսկ այդ հիմնարկութեան վրայ արած ծախսերը սկզբից մինչև հիմա հասնում է ամենաքիչը 60,000 ռուբլի պատկաւովի գումարին։ Մոռացայ ասել, որ երկրագործութեան միջնաարութիւնը կաթնատնտեսական ֆերմայի համար Խուսիս գիւղի մօտ, Տաբայիսուր լճի ափին, յատկացրել է 216 գեսեաւտին տնտեսայ արօտատեղ՝ արածացնելու և խոտ հարելու համար։ Ուրեմն այդ հիմնարկութիւնը, որ այս 5—6 տարիներին ընթացքում ծախսել է մօտ 60 հազար ռուբլի, ներկայումս իր տրամադրութեան տակ ունէ չորս կտոր հող—230 գեսեաւտից տւելի, չորս շինութիւն, 30—40 կով (բոլոր անասունների թիւը հասնում է 88-ի), ահազին ինվենտար և տարեկան 7—8 հազար ռուբլի փող։—Հիմա տեսնենք, թէ այդ բոլորի փոխարէն այդ հիմնարկութիւնը ինչ է տուել ժողովրդին։ Համարեա թէ ոչինչ։ Կանոնադրութեան համաձայն՝ այդ դասարանները պէտք է ձրի պահեն 12 գիշերօթիկ աշակերտներ՝ ընտրուած շինական համայնքների համավճիռներով։ Մնացած աշակերտները պէտք է լինին վճարող գիշերօթիկներ կամ երթեկներ։ Սակայն համարեա երբեք 12 գիշերօթիկ աշակերտներ լրիւ չեն եղել. ոչ համայնքներն են իրանց համավճիռներով աշակերտ ուղարկում, ոչ տնտեսաւոր անհատներն են խնդիր տալիս։ Մի քանի անգամ արհեստական միջոցներով աշակերտներ են գրաւել, բայց ամեն անգամ հեռացել են։ Ի՞նչ հանելուկ է սա. ձրի ուսում են տա-

լիս, այն էլ հային, բայց փախչում են, չեն մնում: Մեր կարծիքով պատճառն այն է, որ միանգամից շատ բան են ուղղում սովորեցնել, որի շնորհիւ որ և է բան կանոնաւոր չեն սովորում, մէկ էլ որ կաղմակերպութիւնն այնպէս է, որ գործնական պարագմունքները ֆիզիկապէս ծանր են աշակերտնի համար: Եթէ չը հաշուենք մի պատահու, որ ատաղձագործութիւնը բաւարար սովորեց ու հետացաւ, մինչև աժմ ոչ մի ընթացաւարտ չէ եղել, չը նայած որ ընդամենը երեք տարուայ դասընթացք է, իսկ դասարանները անհ 6-րդ տարին է որ գոյութիւն ունեն: Ներկայումս դասարաններում միայն ետեք աշակերտ կան, որոնցից երկուսը միայն արհեստանոցումն են աշխատում: Կաթնատնտեսական ֆերման և փորձնական դաշտը մնացել են առանց սովորողների, և գործերը կատարում են վարձուած մշակները:

Սկզբի տարիներում կաթնատնտեսական ֆերմայում գէթ մի քանի տեսակ պանիր էին պատրաստում՝ բաքլաշին, բրի և այլն, բայց հիմա այդ էլ չը կայ. ամառը խումբիսում կարագ են պատրաստում և ուղարկում Բորժոմ ծախելու, իսկ ձմեռը ֆերման լոկ կաթ է մատակարարում քաղաքի ծառայող դասակարգին և մանաւանդ զինուորականներին:

«Լրացուցիչ դասարանների» անաշտղութեան պատճառով տեղական գաւառապետը հարց է բարձրացրել պատշաճաւոր իշխանութեան առաջ, որ այդ հիմնարկութիւնը վերականգմուի նոր, աւելի նպատակայարմար հիմունքներով:

Լրացնելու համար աւելորդ չենք համարում մատնանիշ անել, որ տեղական տնայնագործութիւնը զարգացնելու նպատակով՝ Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան Ախալքալաքի նախկին ճիւղը գործելու արհեստանոց էր բացել. սակայն ընկերութեան ճիւղի փակուելովը՝ գործը կիսատ մնաց, և արհեստանոցը ժամանակաւոր կերպով յանձնուեց մասնաւոր անհատներին: Այդ արհեստանոցում, որ մինչև հիմա էլ գոյութիւն ունի, վարձով աշխատում և իրանց պարէնը հայթայթում են 8 աղքատ կանայք. բայց գործը չէ տարածւում, ինչպէս յոյս ունէինք, և գաւառը անմասն է մնում:

Հիմա տեսնենք, թէ ինչ են մտադիր անելու գաւառի գիւղատնտեսական գրութիւնը բարեփոխելու համար:—Դուխաբորների գիւղերում մի գեղեցիկ կալուածք կայ «Калмыковскій хуторъ» անունով, որ պատկանում էր դուխաբորների աղանդապետ Լուկերիա Վասիլիւիւս Կալմիկովային և որը նրա մահից յետոյ անցել է գանձարանի ձեռքը: Այդ կալուածքի եկա-

մուտով որքանոց և այլ բարեգործական հիմնարկութիւններ էին պահպանուում գութաբարձրների մէջ: Վերջիններս աշխատում էին յետ ստանալ այդ խուտորը, և երբ նրանց առաջարկեցին ուսումնարան բանալ Գարեկովկա գիւղում, նրանք համաձայնութիւն էին տալիս միայն այն պայմանով, որ այդ կալուածքը իրանց տրուի. բայց կառավարութիւնը չը համաձայնուեց. և հիմա երկրագործութեան միներստրութիւնը մտադիր է կաթնատնտեսական «ալպեան կայարան» բանալու անտեղ: Մտադրութիւն կայ այդտեղ մի մեծ շինութիւն շինելու. գործը կարող է շուտով գլուխ գալ, եթէ սկզբնական ծախսերի համար բաւականանայ 25—30 հազար ռուբլի. հակառակ դէպքում պէտք է յետաձգուի: Մենք ողջունում ենք այդ գեղեցիկ միտքը և ցանկանում ենք շուտափոյթ իրագործուի:

Գաւառի գիւղատնտեսութիւնը բարւոքելու նպատակին պիտի ծառայէ և այսպէս անուանած «գիւղացեացեալկան կապիսալը», որի վրայ հարկաւոր ենք համարում մի փոքր աւելի կանգ առնել:

Հացի շտեմարանների գաղափարը վաղուց գոյութիւն ունի մեր նահանգում, եթէ չեմ սխալուում, նոյն իսկ 70—80 թրււերից: Նահանգական իշխանութիւնները կարգադրութեամբ այդ ժամանակից նահանգի գիւղերում հացահատիկ էր հաւաքւում հասարակական շտեմարանների համար, միայն առանց կանոնաւոր համալծիւնների, լոկ գիւղացիների բանաւոր հաւաձայնութեամբ:

Գիւղական համալծիւններ կազմուեցին և հացահատիկը աւելի կանոնաւոր և եռանդով սկսեցին ժողովել ութսունական թուականների վերջերից, նահանգապետ իշխ. Շերվաչիձէի օրով:—Հացի շտեմարանների և գիւղատնտեսական կապիտալի նպատակները, անկասկած, շատ համակրելի են: Նոր կանոնադրութեան նախագիծը, որ առաջարկուել է պատշաճաւոր հաստատութեան, ձեռքի տակ չունենալու պատճառով աչքի անցկացնեք դէթ սկզբնական նպատակի մի քանի հիմնական կէտերը, որ համոզուենք այդ բանում:

1) «Պաշարի կողմից նահանգի գիւղական ազգաբնակչութիւնը ապահովելու և նրան միջոց տալու համար, որ ինքնուրոյն կերպով իր տնտեսական շրջութիւնը բարձրացնէ—զոյացնել գիւղատնտեսական կապիտալ՝ կամ հայի պաշարով, կամ փողով»:

2) «Դրամագլուխ կազմելու համար տուրք նշանակելը պէտք է կամաւոր լինի»:

3) «Պէտք է ազգաբնակչութեանը հաւատացնել, որ ժողո-

ված գումարը նրա անձեռնմխելի սեփականութիւնն է և որ նրա այդ սեփականութիւնը պէտք է ղգուշութեամբ պահպանուի»:

4) «Ազգաբնակութիւնը պէտք է ինքն իր վրայ տուրք նշանակէ (самодлажение) ըստ կարելոյն հաշարոյսերի բերքով»:

Դրամագլուխը կազմուած էր հասարակութեան համաժողով համաձայն՝ ցորենի կամ այլ հացահատիկի տուրքերով, արական սեռի 12 տարեկանից մինչև 60 տարեկան ամեն մի հոգուց ամենաքիչը 20-կան ֆունտ: Հացահատիկը պահպանուած էր զիւղական շտեմարաններում, զիւղական իշխանութիւնների հսկողութեան տակ: Ժամանակ-ժամանակ հացահատիկը ծախուած էր աճուրդով՝ նոյն իշխանութիւնների ձեռքով և ստացած փողը հասարակութեան անուշով տրուած էր խնայողական դրամարկըղը, ուր և մնում է մինչև հիմա: Դրամագլուխը նշանակուած է. 1, համայնքի համար սեփական վարելահող, անտառ, արօտներ և այլն ձեռք բերելու, 2, Ոռոգելու համար ջրանցքներ անցկայանելու, ջրաղացներ և հասարակութեան կարիքների համար այլ շինութիւններ կառուցանելու, 3, ազնիւ ցեղի ընտանի կենդանիներ ձեռք բերելու, հողագործական գործիքներ բերել տալու և այլ մանր կարիքներ հոգալու համար:

Վերջին տարուայ հաշիւը ձեռքի տակ չունենալով՝ դժբախտաբար չենք կարող այստեղ որոշակի դնել Ախալխալաքի գաւառի զիւղատնտեսական զրամագլխի ներկայ գումարը. բայց հաստատ ասում ենք, որ այս գաւառի իննը զիւղական համայնքներին պատկանող զիւղատնտեսական զրամագլուխը աւելի մեծ է՝ քան Թիֆլիսի նահանգի ուրիշ որ և է մի գաւառին՝ չը նայած, որ դուխաբօրների երկու համայնքները, որ սկզբից համաձայնութիւն էին տուել և մասնակցում էին, յետոյ յետ վերջին իրանց փողերը, Այդ զրամագլուխը կազմում է նահանգի բոլոր իննը գաւառների զրամագլխի մի հինգերորդ մասը, և գաւառի զիւղական, ներկայումս կիսաքաղցած, ազգաբնակութիւնը՝ առանց դուխաբօրների՝ մօտաւորապէս 300,000 ուրբլի սեփական զրամագլուխ ունի ներկայումս: Մենք հիմք ունենք այդպէս ենթադրելու, որովհետև մի քանի տարի առաջ այդ զրամագլուխը հասնում էր մօտ 250 հազարի:

Հիմա նայենք մեղալի միւս երեսին: Կանգ առնենք ամենից առաջ տուրքը ժողովելու վրայ: 12 տարեկանից մինչև 60 տարեկան ամեն մի հոգուց միմիայն 20 ֆունտ տուրքը, յիշաւի, մեծ բան չէ: Բայց փորձը չուտով ցոյց տուեց, որ հացահատիկ ժողովելը անյարմար է. այդ պատճառով էլ աւելի նպատակայարմար համարեցին պահանջուող հացահատիկի տուղ

փող առնել, այն պայմանով, որ հացահատիկը չուկայի գնից աւելի նուազ գնահատուի: Ենթադրենք, թէ չուկայում ցորենի պուղը արժէ մի ուրլի, ծուխը բաղկացած է 4 վճարող հոգուց, ուրեմն պէտք է առնել 2 պուղ ցորենի զին ոչ աւելի քան երկու ուրլի: Գիւղական իշխանութիւնները հէնց այդքան էլ կ'առնեն, բայց ճիշտ կը ներկայացնեն պատշաճաւոր տեղը: Նրանք միշտ էլ կարող են ասել, որ ցորենի տեղ փող են վերցրել չուկայի գնից աւելի ցած գնով, օրինակ՝ 60, 70, 80 կոպէկով: Իսկական, նպատակայարմար հսկողութիւն չի կարող լինել, միայն ինքը համայնքը կարող էր կանոնաւոր ստուգել այդ բոլորը, սակայն յայտնի է, թէ մեր շինական համայնքը որքան ընդունակ է ստուգելու իր ծախսերը: Բաւական է, որ տանուտէրը, գրագիրը, հարկահաւաքը ասէ—«ձէնդ», և բողոքը իսկոյն կը խեղդուի, որովհետեւ մեզանում փոքր մարդու նոյն իսկ ամենաօրինաւոր պահանջը ոտնատակ է ընկնում: Ամենքին յայտնի է նաև, թէ մեր հարկահաւաքը ինչ բարեխղճութեան տէր է առհասարակ: Յետոյ, որչաւում է պահանջելի հացի քանակութիւնը—minimum 20 ֆունտ, պէտք է ենթադրել, որ maximum-ը թողնուում է գիւղական իշխանութիւնների բարեհայեցողութեանը, $1\frac{1}{2}$ պուղը քիչ է թւում—վերցրու մի պուղ: Այս ինչը հարուստ է, կարող է նոյն իսկ 10 պուղ տալ, հէնց տասը պուղի գինն էլ ան, բայց կարելի է, օրինակ, ցոյց տալ միայն երեք պուղի կինը: (Կարող են ասել, հապաւ կամաւոր համալճիւնները, մենք դրան կը պատասխանենք—կամաւոր վճիռները առաջադրուում էին կազմել): Հօ ամենքին էլ չը պիտի հարցնեն, վերջապէս, մէկին կը բռնեն, բայց հարիւրը հօ կ'օգտուեն:

Կրկնում ենք, գիւղական իշխանութիւնների գործողութիւնները այդ հարցի վերաբերմամբ ներկայ պայմաններում շատ դժուար է ստուգել: Այդ պատճառով մեծ հաւանականութեամբ կարելի է ասել, որ ժողոված այդ 300,000 ուրլին գաւառի գիւղական ազգաբնակչութեան վրայ նստել է ամենաքիչը կէս միլիօն և աւելի: Գալիս է հարկահաւաքը, տանտէրը չը կայ: Խնդրում են, որ նստէ և սպասէ ու սկսում են հիւրասիրել: Գալիս է տանտէրը, փող, ի հարկէ, չէ ունենում: «Մի ուրիշ անգամ կը գամ, փողն անպատճառ պատրաստիր», սուրանական ձևով ասում է փորը կշտացրած իշխանութիւնը (գիւղական) և դուրս է գնում: Եւ ամեն մի աւելորդ դալը գիւղացու վրայ շատ թանկ է նստում: Մի խօսքով՝ այստեղ կրկնուում է այն բոլորը, ինչ որ տեղի է ունենում միւս հարկերի հաւաքելու ժամանակը:

«Պէտք է ազգաբնակչութեանը հաւատացնել, որ ժողոված գումարը...» և այլն: Ի՞նչ միամտութիւն: Ազգաբնակչութիւնը, որ տասնեակ տարիներ նայում է գիւղական իշխանութիւնների վրայ, ինչպէս ժողովրդի գրպանը մաքրողների վրայ, որի ամբողջ սերունդները խմորուած են այդպիսի համոզմունքով, հիմա գրչի մի հարուածի շնորհիւ պէտք է փոխէ իր համոզմունքը և հաւատայ ինչ որ հայրական հոգացողութիւնների: Գիւղացին նայում է այդ տուբքի վրայ, ինչպէս իրանից ժողովուրդ միւս բազմութիւ հարկերից մէկի վրայ: Նա ծայրայեղ սկեպտիկ է և դարեւոր փորձից պիտէ, որ ինչ որ իր գրպանից դուրս է դնացել այդ ճանապարհով, այլ ևս չի վերադառնալ նրա մօտ, և որքան սրտազին էլ քարոզէք դուք «անձեռնմխելի սեփականութիւն» լինելու մասին, նա քթի տակ դառը կերպով կը ծիծաղէ:—«Տուբք նշանակելը պէտք է կամաւոր լինի»: Բայց որ գիւղացին իր բաւի կամով կը տայ ան համոզմունքով, թէ մի ժամանակ իրան պիտի բախտաւորացնեն: Չար լեզուները ասում էին, որ մի ժամանակ մի քանի շտեմարաններում հաշա-հատիկի տեղ պահւում էին դորգեր, տան անօթներ, կարասիներ (և ի հարկէ, դա կամաւոր կերպով էր): Բայց մենք չենք հաւատում այդ լուրերին և այդպիսի սկեպտիկներից չենք, այլ հաւատում ենք այդ ձեռնարկութեան բարերար ոյժին:—Ուրեմն չրամը կայ և ժամանակ է արգէն սկսել զեղեցիկ նախատակները իրագործելու:

Սակայն ո՞ւմ միջոցով պէտք «վարելահողեր, անտառ, արօտներ և այլն ձեռք բերուեն»: Ո՞ւմ ձեռքով պէտք է «ոռոգելու համար ջրանցքներ անցկացնուեն, ջրաղացներ և հասարակութեան կարիքների համար ուրիշ շինութիւններ կառուցանուեն»: Ո՞ւմ առաջակարգութեամբ և ո՞ւմ միջոցով պէտք է «աղնիւ ցեղի ընտանի կենդանիներ ձեռք բերուեն, հողագործական գործիքներ բերել տրուին և այլն»:

Ուրեմն «անձեռնմխելի սեփականութիւնը» պէտք է վերագառնայ դէպի ժողովուրդը նոյն ճանապարհով, ինչ ճանապարհով որ դուրս է դնացել նրանից: Շատ բան կը հասնի ժողովրդի ձեռքը: Բոլորովին ուրիշ բան է, եթէ գեմստօ լինէր և այդ գումարը ընկնէր զեմստօյի ձեռքը... Բայց դա դեռ մեզ համար ցնորք է:

Կանոնադրութեան նոր նախագծի մէջ մի կէտ կայ, որով իւրաքանչիւր գաւառում պէտք է նշանակուի մի գործակատար—հաշուապահ՝ գիւղատնտեսական գրամագլխի հաշիւները պահելու համար, և ուժիկ պէտք է յատկացնուի 600 ո. տարեկան: Դրանով, ի հարկէ, բան չի լինիլ, շատ, շատ պէտք մեր բազմա-

թիւ «գրագիրներին» թիւը մէկով աւելանայ: Մի կողմը թողնենք այդ կիսամիջոցները. քաղցած ժողովուրդը համոզուած է, թէ այդ գումարը իրանն է, նրա նպատակների մասին գաղափար չունէ նա, և այդ գեղեցիկ նպատակները չեն իրագործուիլ, եթէ գեմատվօ չը լինի:

Թէ երբ այդ գիւղատնտեսական գրամագլխի կանոնադրութիւնը կը հաստատուի և գործադրութեան մէջ կը մտնի, երբ մեր գիւղացիները կը հասկանան, որ այդ գրամագլուխը իրանց սեփականութիւնն է և համալճիճներով կը խնդրեն, որ նրանով իրանց գիւղատնտեսական դարգերին դարման անուի, դրամասին մենք ոչինչ չը գիտենք: Եւ քանի որ այդ գրամագլխի նպատակայարմար գործադրութիւնը մեզ համար առայժմ ուսուցիչ է, չը պէտք է ձեռքերը ծալած նստել: Պէտք է մեր թշուառ զիւղերում հողը պարարտացնելու և ոռոգելու, բազմաթիւ ճահիճները ցամաքեցնելու, ցանքսերը ապահովագրելու և առհասարակ ինքնօգնութեան գաղափարները տարածել և դրանց միջոցները սովորացնել: Երաշտից շատ անգամ ֆեասուող Ախալխալաքի գաւառի համարեա ամբողջ սարահարթը կարելի է հեշտութեամբ ոռոգել բազմաթիւ լճերի և գետակների ջրերով, բայց այդ բանը սովորութիւնն է գաւառում:

Դարձեալ պէտք է ձեռք զարկել ցուցադաշտերի միջոցով խոտացանութեան գաղափարը տարածել, վուչի ու կանեփի, գետնախնձորի մշակութիւնը մտցնել գաւառում: Կարծում եմ, որ եթէ խոտացանութիւնը սովորութիւն դառնայ և մեծ ծաւալ ստանայ, կարելի է նոյն իսկ մեր սակաւահող գաւառում մեծ չափերով անասնապահութեամբ պարապել, կենդանիներին ամբողջ տարին տանը կերակրելով (ամառը, ի հարկէ, բայօթեայ), ինչպէս անում են Եւրոպայի շատ տեղերում: Կենդանիների աղբը, որ այս գաւառում մեծ նշանակութիւն ունի, այս գէպքում չի կորչիլ և աւելի մեծ չափերով կը գործադրուի աթարի և հողերը պարարտացնելու համար: Կրկնում ենք, պէտք է այդ նպատակով խոտերի և նպատակայարմար հացաբոյսերի սերմացուների պահեստ բանալ: Դարձեալ կրկնում ենք, պէտք է աշխատել նորագոյն սիստեմի գիւղատնտեսական գործիքներ ու խելացի ձևեր տարածել ժողովրդի մէջ. այդ նպատակով հարկաւոր է հողագործական գործիքների նորանոր փորձեր անել և այդ գործիքների պահեստներ բանալ: Պէտք է աշխատել գիւղական ազգաբնակչութեան մէջ գիւղատնտեսական ընկերակցութիւններ կազմակերպելու գաղափարը հետզհետէ տարածել: Պէտք է մեր գիւղացիներին հասկացնել, որ մեր երկրում իրանց

համար այլևս ազատ հող չը կայ, յոյս չը դնեն կառավարութիւնից նոր հողաբաժիններ ստանալու վրայ և աշխատեն սեփական համայնական միջոցներով հողեր գնելու իրանց համար՝ թէ կալուածներից և թէ պետական ազատ հողերից: Իսկ այդ բոլորի համար և մեր գիւղացուն միանգամից և ընդմիջտ Շէյ-լօկ-վամպիրների ճիրաններից ազատելու համար գիւղական բանկ *) կամ ուրիշ տեսակի աժան կրեդիտ է հարկաւոր, ինչպէս ասել էինք: զաղափար, դիտակցութիւն և ինքնաճանաչութիւն է հարկաւոր նրան, որ մեր ինտելիգէնտները, մեր մասնագէտները պարտաւոր են դասախօսութիւններով, բրօշիւրներով, գործնական և այլ միջոցներով մտցնել ժողովրդի մէջ... Մեր խօսքը իսկական ինտելիգէնտների և ոչ թէ վարձկանների, ժողովրդասէր մասնագէտների և ոչ թէ ձեականօրէն պաշտօնակատար բիւրօկրատների մասին է. կենդանի, ժողովրդական դործի համար կենդանի մարդիկ են պէտք:

Այն, մեր գիւղացու աչքերը ծածկող մշուշը ցրելու համար, նրան հասկացնելու համար, թէ իր սեփական մէջքը ցաւում է, չատ բաներ են պէտք և կրկնում ենք, այդ բոլոր «պէտքերը» կարող է իրագործել միայն և միմիայն տեղական ինքնավարութիւնը կամ զեմսսվօն, այն զեմստվօն, որ գոյութիւն ունի կայսրութեան ներքին հահանգներում: Այն ժամանակ գիւղացու սև օրերին «կօմիտեաների» կարիք էլ չի լինիլ, և ժողովուրդը ինքն իրան օգնութեան կը հասնէ: Ահա այդ փրկարար զեմստվօն ունենալու համար են պարտական աշխատելու երկրի ինտելիգէնտ ուժերը, կենդանի մարդիկ:

ՍԱԼԼԻԻՄԵԱՆ

*) Մենք յօշտով էինք, թէ կարելի կը լինի գիւղատնտեսական զրամագլխից մի գումար լսողացնել գիւղական բանկ բանալու գաւառում, բայց մեզ պատասխանեցին, թէ այդ զրամագլուխը զուտ մեկխօրատիվ նպատակներ ունի:

ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

II *)

Տ Ի Կ Ի Ն Ս Ր Բ ՈՒ Հ Ի Տ Ի Ի Ս Ա Բ

Այգալիսիւններից մէկն էր տիկին Տիւսար:

Նա ծնունդ է Կ. Պօլսում 1841 թուականին: Շրջանը, ուր նա աշխարհ տեսաւ, այն իսկ օտարացող և օտարացնող շրջանն էր, որ յիշեցինք վերևում: Դա Կ. Պօլսի՝ այսպէս անուանուած բարձր շրջանն էր, մի միջնավայր, ուր ամեն ջանք գործ էր դրւում եւրոպականանալու համար և ուր մայրենի լեզուն արհամարուած ու մոռացուած էր: Չը կայ, կարծեմ, մի այլ ազգ աշխարհի վրայ, որ հայի չափ ընդունակ ու զիւրաթեք լինի օտարներից ընդօրինակելու մէջ, որ այնքան թշնամի լինի իր մայրենի լեզուին: Եթէ կոպիտ թաթարեւէնը, չեքքէզերէնը, քրդերէնը կարող եղան հային իսպառ մոռացնել առ իր մայրենի լեզուն, ինչ կասկած կարող է լինել որ ֆրանսերէնի պէս մի գեղեցիկ, հարուստ լեզու պիտի միանգամայն դուրս հալածէր հայերէնը եւրոպականացող բարձր շրջաններից:

Սրբուհին մեծանում էր մի այգալիսի շրջանում: Նա սովորեց ֆրանսերէն, իտալերէն, յունարէն լեզուները, բայց հայերէնի վերաբերմամբ ոչ միայն անտարբեր էր, այլ և առող, հեղնող: Երբ նրա մօտ խօսում էին հայերէնի մասին, նա սկըսում էր ծաղրել այդ լեզուի կոպտութիւնը, արտասանելով «ուղղղղկան, սևռռռկան» բառերը **):

Բայց Սրբուհու մայրը, տիկին Նազլը վահանեան, Կ. Պօլսի ամենահամակրելի հայուհիներից մէկն էր: Անցեալ անգամ,

*) ՏԻՍ «Մուրճ» № 6.

**) Սրբուհի Երիցեան—«Իմ ծանօթութիւնը Պէշիկթաշլեանի հետ», «Փորձ» հանդէս, 1876, № 2, եր. 194:

Մատթէոս Մամուրեանին նուիրած յօդուածում, մենք մանրամասն խօսեցինք այն վերանորոգչական եռանդուն շարժման մասին, որ սկսուեց թիւրքահայերի մէջ անցեալ տարի քառասնական թուականներէից: Մի և նոյնը այստեղ կրկնելու կարիք չը կայ: Կ'ասենք միայն որ ոգևորութեան, տաք գործունէութեան այն ժամանակներում հայ կիներն էլ իր համեստ բաժինը մտցրեց աղգային առաջադիմութեան գործի մէջ: Տիկին Վահանեան նուիրուեց իր սեռի կրթութեան զաղափարին. Օրթագիւղի Հոփփսիմեան վարժարանի հիմնադիրը դարձաւ (1859) և երկար ժամանակ եռանդով վարում էր այդ դպրոցի ինքնամակալուհու սլաշտօնը: Իբրև մի պարտաճանաչ հայուհի և բարեկիրթ մայր, տիկին Նազլըն առանձին հոգս էր տանում Սրբուհու կրթութեան մասին, ղեկավարում էր նրան երիտասարդական տարիներում, ցոյց էր տալիս աշխարհի չարն ու բարին: Սրբուհին էլ մօտ էր Հոփփսիմեան վարժարանի գործերին: Բայց օտարացող շրջանի աղղկցութիւնը կը չէղբայնէր մօր բոլոր ջանքերը և հայերէն լեզուն «ուղղղկան» կը մնար օրիորդի համար, եթէ ճակատագիրը չը ծանօթացնէր նրան Մկրտիչ Պէշիկթաշլեանի հետ:

Ահա մի խոշոր, երախտաւոր դէմք, թիւրքահայերի աղգային վերածնութեան շրջանի զարդերից մէկը: Պէշիկթաշլեանին մենք ճանաչում ենք իբրև ղգայուն, տաղանդաւոր բանաստեղծի: Բայց նա մի հպարտ պարնասական չէր, որի համար ամբօխը, նրա կեանքը, նրա ցաւերը անհասկանալի, դատարկ բաներ են: Պէշիկթաշլեան մի հասարակական գործիչ էր, այդ բառի ամենագեղեցիկ մտքով: Նրա քնարը երգում էր հայրենիքի սէր, կոյսի սէր, տխուր ղգացմունքներ, եղբայրութիւն. և նա ինքն առաջինն էր, որ իր անձնական օրինակով ցոյց էր տալիս թէ ինչ են առում իր երգերը: Նա գերասանութիւն էր անում՝ հայկական բեմը մի մշտական, առաջակարգ հիմնարկութիւն դարձնելու համար. նա ուսուցիչ էր և հայերէնի դասն էր պաշտպանում Կ. Պօլսի բարձր շրջաններում, օտարամոլութեան այդ որջերում: Ինքը կաթոլիկ, նա քարոզում էր սէր և եղբայրութիւն զաւանութիւններով բաժանուած հայերի մէջ: Դա մի լուսաթաթախ միտք էր, մի վերին աստիճանի ազնիւ մարդ, սիրուն երգերի մէջ ձուլուած մի բանաստեղծ, որ ամեն տեղ հրաշալի տպաւորութիւն էր թողնում և իբրև մարդ, իբրև հասարակութեան անդամ:

Օրիորդ Սրբուհին ծանօթանում է այդ բիւրեղեայ սրտի հետ, զրաւում է նրա խօսքով, նրա երգերով և հասկանում է որ իր մայրենի լեզուն «ուղղղկան» չէ, այլ մի կենդանի լե-

զու, որ ունի իր հմայքները, իր նրբութիւնները, իր բանաստեղծութիւնը: Եւ նա աշխակերտում է Պէշիկթաշլեանին, սիրով ուսումնասիրում է հայերէնը և այնքան հիմնաւոր կերպով որ մեծ հմտութիւն է ցոյց տալիս նոյն իսկ գրաբարի մէջ:

Պէշիկթաշլեանը օրիորդ Սրբուհու նման շատ աշակերտուհիներ ունէր: Բայց զրանցից ամեն մէկը Սրբուհի չէր: Բանաստեղծի հոգին խոր արձագանք է գտնում օրիորդի սրտի մէջ, տաքացնում, կենդանութեան է հրաւիրում այնտեղ թաղնուած ծիւերը, հաղորդում է նրան իր, երազող, մեղամաղձոտ տրամադրութիւնը, իր քնքոյշ թախիծը: Մայրենի լեզուն դառնում է Սրբուհու սրտի թարգման: Նա էլ բանաստեղծ է և իր ուսուցչի նման բանաստեղծ: Նշակերտուհու և ուսուցչի գրուածքների մէջ մենք գտնում ենք շատ հարազատ, միանման գծեր: Նոյն լեզուն, նոյն շեշտերը, նոյն տրամադրութիւնը:

Եւ այդ խոր ազդեցութիւնը միանգամայն հասկանալի և բնական է երևում, երբ մենք աչքի առջև ենք առնում բանաստեղծի և նրա աշակերտուհու մէջ եղած յարաբերութիւնները: Սրբուհու համար Պէշիկթաշլեանը մի վարձկան ուսուցիչ չէր, այլ մօտիկ բարեկամ: Նա երկրպագում էր իր այդ ուսուցչին: Պէշիկթաշլեանը թոքախտ ունէր, որ կամաց-կամաց տանում էր նրան դէպի գերեզման: Երբ հիւանդութիւնը սաստկացաւ, օրիորդ Սրբուհին էր, որ անձնուիրաբար ծառայում էր այդ մեռնակ, աղքատ մարդուն: «Օրիորդ Սրբուհի Վահանեանը—ասում է տ. Երիցեան—իր յարգած դասատուին երախտագիտութիւն յայտնելու համար, իրան սրբազան պարտականութիւն էր համարում օրը մէկ կամ երկու անգամ գնալ նրա մօտը նստել, դեղը իր ժամանակին տալ, բժիշկներին պատասխանել, հիւանդին սփոփեցնել իր զուարթ և սուր խօսակցութեամբ կամ նրա սիրած հեղինակների գրուածքները կարդալով ժամանակ անց կայնել տալ»:

Բայց Վահանեան ընտանիքի խնամատարութիւնը չը կարողացաւ ազատել բանաստեղծին սոսկալի հիւանդութեան ճանկերից: Պէշիկթաշլեան վախճանուեց 1868-ին: Օրիորդ Սրբուհին ողբաց այդ մահը մի ոտանաւորի մէջ, որ տպագրուած է Պէշիկթաշլեանի հեղինակութիւնների ժողովածուի մէջ: Տարիներ անցան, Սրբուհին ամուսնացաւ, բայց իր հռչակաւոր ուսուցչի երախտագէտ երկրպագուն մնաց: Ահա ինչ էր գրում նա 1880 թուականին.

Յետոյ Մեծն Պէշիկթաշլեան, որ իւր կարճատե կեանքն ազգային լառաշաղիմութեան նուիրեց, աշխարհաբարին մասնաւոր կերպարանք մը տուաւ իւր ոճոյն զարմանալի գեղեցկութեամբն և թատերական երկու-

սիրութեամբքը: Մերթ ի լուր իւր փանդոսն մեր վաղեմի քաջերը իւրեանց պատանքը թօթափելով՝ թատերարեմէն կու գային ճառել անցեալ փառքը և տխուր արկածները հայրենեաց. մերթ իւր մեղամաղձոտ քնարը կողբար կողկողագին ի վերայ շիրմաց իւր սիրելեաց. իւր մեղեդիք տխուր էր լայնժամ իբրև զկոծ մօր լուսահատ ուր կ'ողբայ իւր մանկան թափուր արանին վրայ: Եւ մերթ իւր սխրացեալ հոգին կ'երգէր անոյշ իբրև դարնանային սոխակը: Հայերը լսեցին սրտագին ձայնը Պէշիկթաշլեանի և սքանչացան. սպրդեցաւ նա իւրեանց հոգւոյն մէջ և տիրապետեց լիազօր: Ազգասիրութեան հօրը զօրաւոր շնչովն արծարծեց Պէշիկթաշլեան. Հայոց մէջ նոր յառաջադիմութեան շարժում մը պատճառեց. լռեցուց մախանքն ու ատելութիւնը, սրտերը միացուց և բերանները «Եղբայր եմք մեք» զուարթագին ձայնեցին: Նյնպիսի հոգիներ կան, որոնք ծնած են սրտին լեզուն խօսելու համար. նոցա բառերն անմահ են, որովհետև սրտերուն մէջ քանդակեալ են, և Պէշիկթաշլեանը ի նոցանէ էր. իւր երգը ամեն մարդ երգեց, և իւր լեզուն ամեն մարդ սիրեց *):

Այսպէս էր հասկանում՝ Սրբուհին իր ուսուցչին: Հարկաւոր է աչքի առաջ ունենալ այս վկայութիւնը, որովհետև ինքը, Սրբուհին էլ այդպէս էր հասկանում զեղարուեստը, ինքն էլ մի մեղամաղձոտ, թախծալից գրող էր:

Մինչև գրական ասպարէզ դուրս գալը, Պէշիկթաշլեանի աշակերտուհին նուիրուած էր կրթական գործին: Հռիփսիմեան վարժարանը, իր մօր ջանքերի պտուղը, այն տեղն էր, ուր նա գտնում էր գործունէութեան լայն ասպարէզ: Վարժարանի վարչութեան ատենադպրի պաշտօն էր վարում. յետոյ, երբ Հռիփսիմեան վարժարանը աւարտած մի քսնի կանայք հիմնեցին «Դպրոցասէր Հայուհեաց» ընկերութիւնը, նա դարձաւ այդ ընկերութեան եռսնդուն ղեկավարներից մէկը:

Պէշիկթաշլեանի դպրոցը, ժամանակի հոսանքները, ստացած կրթութիւնը ղեռ բաւական չէին որ Սրբուհուն մղէին դէպի գրականութիւն: Հարկաւոր էր և մի այլ նպաստաւոր հանգամանք: Այդ հանգամանքը նրա համար ամուսնութիւնն էր: 1871 թուականին օրիորդ Սրբուհին ամուսնանում է Ֆրանսիացի երաժշտագէտ Տիւսսարի հետ: Ամուսնական յարկի տակ տիկինը գտնում է գրականագէտ դառնալու համար խրախոյաններ, ազատութիւն: Գոնէ նա ինքը այդպէս է վկայում իր «Մայտա» վէպի առաջաբանի մէջ:

«Գերջապէս հասաւ այն օրը յորում բաղդակից եղաւ ինձ գեղարուեստի գաւակ մի, այսինքն անհունութեան դաւակ՝ զի գեղարուեստն անծիրն է: Ներդաշնակութեան աշխարհներու մէջ ազատօրէն դեգերող ճախ միտքը բնականապէս սահմանափակ միջավայրերու և նախապաշարմանց թշնամին ըլլալով, ազատ թողոյց զիս մտածելու և բողոքելու: Այսօր հըրապարակաւ երախտագիտութեանս տուրքը կը մատուցանեմ Ամուսնոյս,

*) «Աշխարհաբար Հայ Լեզուն», Կ. Պոլիս, 1880, եր. 10:

հոգւոյս պէտքը հասկցած, քաջաւիրած և կերպով մի Մօրս ընթացքը շարունակած ըլլալուն համար»...

Առաջին գրական աշխատութիւնը, որ լոյս հանեց Սրբուհի Տիւսար, մի փոքրիկ բրօշիւր է, «Աշխարհաբար Հայ Լեզուն» վերնագրով 15 երես: Յիշատակում ենք այդ աշխատութիւնը ոչ թէ այն պատճառով, որ նա մի առանձին կարեորութիւն ունի աշխարհաբար լեզուի դատը պաշտպանելու մէջ, այլ այն պատճառով որ այդտեղ տիկին Տիւսար գրել է շատ տողեր, որոնց մէջ երևում է նրա առաջադիմասէր հոգին: Յայտնելով որ «հին նախապաշարունակների, հին գաղափարների, հին սովորութիւնների, հին շահերի» դէմ պէտք է պատերազմ մղուի, տիկին Տիւսար ասում է թէ աշխարհի մէջ ամեն ինչ շարժում է դէպի առաջ և չը պէտք է ժամանակ կորցնել, հարկաւոր է գնալ ժամանակի պահանջների ետեւից: Բրօշիւրը հրատարակուած է յօգուտ «Դպրոցասէր Հայուհեաց» ընկերութեան և նուիրուած է նոյն ընկերութեան օրիորդներին: «Հայ կուսանք, չքնաղ ծաղկունք Հայ դարնան, դուք յոյսն էք, դուք ապագան էք, ձեզ աշխատութիւնը, ձեզ պատիւը» — այսպէս էր ասում նա իր ձօնի մէջ:

Բայց հայ կուսանքները ինչ կարող էին պատասխանել այդ հրաւերին: Նրանք իրանց զբոսութիւնը կարող էին հրապարակում դնել: Հայ կինը, դարերից ի վեր իրաւազուրկ մի էակ, ճնշուած տափակացած էր նախապաշարունակների տակ, եթէ հայ գարունն էր եկել, կարող էր հայ կինը այդ գարնան ծաղիկը դառնալ, քանի որ նա մի կաշկանդուած գերի էր: Գերի՝ հասարակական և ընտանեկան հասկացողութիւնների, գերի՝ իր ամբողջ անցեալի, որ նուիրագործել ու հաստատել էր թէ կինը իրաւունքների և պարտաւորութիւնների հաւասարութեան մէջ ոչինչ տեղ չունի:

Եւ տիկին Տիւսար, մէկը այդ հայ կուսանքներից, դուրս է գալիս բողոքելու իր երեք վէպերով, բողոքելու անարդարութեան դէմ, բողոքելու յանուն կանանց մարդկային իրաւունքների: Նրա առաջին վէպը, «Մայտա» անունով, լոյս տեսաւ 1883 թուականին և նրա համար անուն ստեղծեց մեր գրականութեան մէջ:

Վէպը գեղարուեստական գրականութեան այն ճիւղն է, որ ամենից քիչ բախտ ունեցաւ թիւրքահայերի մէջ: Մեր արևմտեան եղբայրները համարձակ կարող են պարծենալ որ մեզանից շատ առաջ են սկսել քաղաքակրթուել, առաջ գնալ գրական և կրթական ասպարէզներում: Մենք դեռ անշարժ ու անշղթայ էինք, երբ նրանք աշխարհաբար լեզու մշակեցին, պարբե-

րական մասուլ հաստատեցին, թատրոն հիմնեցին, աշխարհիկ գրքեր էին տպագրում: Թիւրքահայերի մէջ երեան եկան հրապարակաթօսներ, նշանաւոր բանաստեղծներ, հասարակական գործիչներ, աննման երգիծաբաններ, նոյն իսկ հռետորներ. բայց վէպը չունեցաւ այնտեղ տաղանդաւոր ներկայացուցիչներ: Ի հարկէ ինքնուրոյն, հայկական վէպը: Եւրոպական գրականութիւնից բաղմաթիւ վէպեր թարգմանուեցան. բայց իբրեւ ինքնուրոյն վիպագրող համարեա մի հատ մարդ չերեաց, որ հաւասար լինէր մեր Արմօնին կամ Րաֆֆիին: Ինչիցն է սա:

Իրանք, թիւրքահայերը, պատճառ են համարում այն գրական ազդեցութիւնը, որի տակ ապրում ու մեծանում էին սերունդներ: Դա արեւմտեան Եւրոպայի բօմանտիկ ուղղութեան ազդեցութիւնն է: Մի ուղղութիւն էր դա, որ զգացմունքների աշխարհում էր ապրում, չէր կապուած իրականութեան հետ, հիմնուած կեանքի գօտումենտների վրայ: Թիւրքահայերը դրեւ են վէպեր. բայց զրանց մեծամասնութիւնը կարելի է ամենայն իրաւունքով թարգմանութիւն կամ փոխադրութիւն համարել, այնքան բացակայում է այնտեղ հայի կեանքը: Ուսումնասիրել մեր իրականութիւնը, ոգևորուել նրանով, որոնք նրա մէջ հերոսներ, տիպեր, դուրս բերել դրանց կեանքի բնորոշ պայմանների մէջ—այսպիսի գործ չը կարողացան կատարել թիւրքահայերը: Եւ այդ պատճառով նրանց վէպերը դժգոյն ու անհոտ են, չինծու, արհեստական, առանց խորութեան, առանց նոյն իսկ իդէալի: Մենք չենք ուղում աւելի երկար կանգ առնել այս իրողութեան պատճառների վրայ. դրա համար հարկաւոր կը լինէր շօշափել շատ հարցեր: Ասենք միայն այն, ինչ մեր ներկայ տեսութեան հետ կապ ունի: Դա այն է, որ արեւմտեան գրականութեան մէջ վիպագրողի անուն ստացել է միայն Սրբուհի Տիւսաբը (մեր խօսքը նորագոյն գրողների մասին չէ): Սա արդէն մի հանգամանք է, որ վկայում է հանգուցեալ վիպագրողի խոշոր արժանաւորութիւնների մասին:

Աւելայնենք այս հանգամանքի վրայ և այն, որ «Մայտայի», «Սիրանոյշի» և «Արաքսի» հեղինակը կին է, հայ կին, և երեւոյթը աւելի մեծ նշանակութիւն կը ստանայ: Հայ կինը գրում է այնպիսի վէպեր, որոնք կարգացւում են ամեն տեղ հետաքրքրութեամբ, տալստրութիւն են թողնում, հարցասիրութիւն են զարթեցնում: Մեր գրականութեան պատմութիւնը մինչև տիկին Տիւսաբ այսպիսի երևոյթ չէ ճանաչում. Պէշիկթաշլեանի աշակերտուհին առաջինն էր իր սեռի մէջ, որ այսքան պատուաւոր դիրք գրաւեց:

Բայց կայ և երրորդ նշանաւոր հանգամանք: XIX դարի

մեծագործութիւններից մէկն էլ այն շարժումն է, որ սկսեցին կանայք՝ մարդկային ընկերութեան մէջ հաւասար իրաւունքներ ձեռք բերելու համար: Շարժումը սկսուեց Ամերիկայից. կանանց հարցը գնալով կարեւորութիւն ստացաւ. գեղեցիկ սեռը բողոքում էր այն նախապաշարմունքների դէմ, որոնք անբնական դիրք են ստեղծել նրա համար: Կինն էլ պիտի մարդ լինի. տղամարդը յափշտակել է նրա բոլոր իրաւունքները, ստեղծել է տիրապետողի դիրքը և լսել անգամ չէ ուզում որ ինքն էլ պարտաւորութիւններ ունի կնոջ վերաբերմամբ:

Ահա այդ ազատագրական շարժման արձագանքներն են, որ հնչում են տիկին Տիւսաբի վէպերի մէջ: Վիպագրողը բողոքի ձայն է բարձրացնում ընկերական անիրաւութիւնների դէմ, բաց է անում կնոջ սիրտը, ցոյց է տալիս նրա տանջանքները, ցոյց է տալիս այն պայմանները, որոնցից այդպիսի տանջանքներ են ծնւում և պահանջում է որ հասկանան կնոջ, որ թոյլ տան նրան ազատ լինել իր զգացմունքների մէջ, որ նրան չը դատեն հին փտած նախապաշարմունքների տեսակէտից: Սա էլ մի խոշոր նորութիւն էր մեր գրականութեան մէջ. լուսաւոր աշխարհներում նոր միայն սկսուած այդ մարդասիրական շարժումը հաղորդւում է և մեր կեանքին վէպի միջոցով: Կինը ստրուկ է, գոչում է տիկին Սրբուհին. նա «չղթաններուն շաշիւնը լսելով ապրեցաւ մինչև ցարդ առանց երբէք զանոնք խորտակելու փորձն ընելու, նա կը ծնանի ստրուկ, կը մեռնի ստրուկ»: Մենք դեռ չը գիտենք թէ ինչեր կ'անէ կնոջ ազատագրութեան համար սկսուած կռիւը. բայց ապագայ պատմագիրը, քրքրելով այդ կռուի հանգամանքները հայերի մէջ, կը տեսնէ տիկին Տիւսաբին նրա սկզբում և կը տայ նրան այն տեղը, ինչ ունի մի Բիչեր-Ստուս սուսմորթների ազատագրութեան պատմութեան մէջ: Սրանով մենք չենք ուզում ասել թէ Տիւսաբի վէպերն էլ այն ազդեցութիւնն են ունեցել մեզանում, ինչ հըռչակաւոր Աղբար Թօմասի տնակը: Բայց ուրանալ չէ կարող ոչ ոք որ տիկին Տիւսաբ առաջին պիօնէրն էր, առաջին կին-մարտնչողը իր ստրուկ սեռի բարօրութեան համար:

Կանանց հարցը ամբողջապէս ժամանակի առաջադիմական հասկացողութիւններից ճագեց. նա կը յաղթէ, երբ նրան կաջողուի ջախջախել հին գաղափարներն ու նախապաշարմունքները: Այստեղից արդէն պարզ է որ կնոջ ազատագրութեան գինուորները պիտի տոգորուած լինեն առաջադիմական գաղափարներով, լինեն ժամանակի նոր, թարմ հասկացողութիւնների մարդիկ: Տիկին Տիւսաբ գուրկ չէր այդ գաղափարներից, այլապէս նա չէր էլ կարող կանանց դատի պաշտպանը հան-

դիսանալ: Յայտնի է թէ որքան աւանդապահ է կինը առհասարակ և հայ կինը մասնաւորապէս: Ուստի զարմանք են ազդուժ ընթերցողին տիկին Տիւսարի գրած շատ տողերը: Օրինակ հէնց սրանք.

Կրօնքն հարստահարութեան և տանջանաց գործիք դարձած է. զոր օրինակ խիղճն ազատ չէ, և ոչ իսկ միտքը, սիրտն ու գործողութիւնը: Խիղճը, միտքը, սիրտն ու գործը ազատ մարդը կը ձևացնեն, և ազատ մարդը դարերէ ի վեր իւր ազատութիւնը կը զոհէ կարգ մը մարդոց որ կանոնանի կղեր, և սա կը մտցնէ մարդն երկաթեայ շրջանակի մէջ: Մարդիկ այս անձուկ սահմանին մէջ կը խլրտին վիրար վանելով, բաղխելով, աստելով, վիրաւորելով. ի խաւարին իրարու վրայ թաւալելով, զիրար կոխկոտելով, մեռցնելով («Մայտա», եր. 57):

Ձը կայ յաղթութիւն առանց կռուի: Եւ տիկին Տիւսար մի վայրկեան անգամ չէ վարանում այս պարզ ճշմարտութիւնը հայ կանանց յանձնարարելու: Նա դրուատում է մաքառումը՝ իրաւունքներ ձեռք բերելու համար, հրաւիրում է չընկճուել հասարակութեան սահմանած կարգերի տակ. նահատակուել, բայց չը հպատակուել անարդարութեան: Անկախ, ազնիւ աշխատանքը կ'ազատէ կնոջը ստրկական հպատակութիւններից, կը տայ նրան պատուաւոր դիրք հասարակութեան մէջ:

Ահա ինչ հանգամանքներ էին միացած՝ տիկին Սրբուհու համար գրական անուն ստեղծելու: Բայց նա վիպագրող է: Ուստի պէտք է պատասխանել և այն հարցին, թէ ինչպէս էր նա իբրև վէպ ստեղծագործող, իբրև գեղարուեստագէտ:

Այստեղ արդէն նոյն իսկ շատ ներողամիտ քննադատն էլ չէ կարող դափնիններ յատկացնել տիկին Տիւսարին: Ինքնուրոյնութիւն չը կայ նրա վէպերի մէջ: Մտքեր շատ կան, բայց այդ մտքերը չեն բղխում վէպերի մէջ կատարուող գործողութիւններից, այլ դրուած են իբրև քարոզներ, որոնք ոչինչ կապ չունեն պատմութեան հետ: Տիկին Տիւսար լաւ դատողութիւններ անող է, փիլիսոփայական խորհրդածութիւններ շատ է սիրում, բայց թոյլ է իբրև ստեղծագործող: Շինծու, դիմազուրկ են նրա հերոսները. ոչ լաւ մշակուած դիմաքներ, ոչ բնաւորութիւն, ոչ հոգեբանութիւն չէք գտնի նրա վէպերի մէջ: Գործում են կամ անպայման մաքուր, իդէալական անձեր, կամ սարսափելի, փրչացած հրէշներ: Հեղինակը սիրում է բարդ, մանուածապատ ինտրիգներ և արհեստական դրութիւններ: Եւ ամեն ինչ կարծես չարժուում, գործում է օգի մէջ. չը կայ իրականութիւն, չը կայ արեւ լոյս, կեանքի ճշմարտութիւն չէ երևում գործողների և գործողութիւնների մէջ: Դա սղոյսական վէպերի ընդհանուր պակասութիւնն է, բոմանտիկ ուղղութեան խիստ դրօշմ:

է. երգել, ողբալ, խօսել, բայց ոչ նկարել, ոչ կեանք պատկերացնել:

Տիկին Տիւսաբ շատ միամիտ է այն կեանքի վերաբերմամբ, որից պատկերներ ու գաղափարներ է դուրս հանում: Կարգում էք նրա վէպերը և ձեր աչքի տուջն կանգնած է մի հեղինակ, որի համար կարծես խորթ, օտար է այդ կեանքը. կարծէք այդ կեանքի մէջ նա ինքը չէ ապրել, սնմիջապէս արպաւորութիւններ չէ ստացել, այլ լսել է մանրամասնութիւններ մի ուրիշից և պատմում է իր լսածները: Այդ արհեստական դրութիւնը, ի հարկէ, հետևանք է այն շրջանի, որի մէջ ապրում էր տիկինը: Բայց շրջանն է դա, որ գործ ունի աւելի օտար ազգերի կեանքի հետ, քան բուն հայ ժողովրդի, նրա առօրեայ կեցութեան հետ: Բարձր աստիճանին յատուկ է մի սաստիկ նախապաշարմունք իր ազգի ընդունակութիւնների, բարոյական յատկութիւնների վերաբերմամբ. բարձր խաւերը մի տեսակ արհամարհանքով են նայում դէպի ցած: Թէև տիկին Տիւսաբ սիրում է իր ազգը, թէև հայ կնոջ պարտաւորութիւններից գլխաւորը համարում է ազգին, նրա տանջանքներին ու ցաւերին նուիրուելը, բայց և այնպէս, նա զուրկ չէ դասակարգային արհամարհանքից: Իր վէպերի մէջ նա շատ անգամ է դիմում օտար ազգերին, վերցնում է նրանցից հերոսներ և դնում է իր վէպերի մէջ՝ ցոյց տալու համար ազնուութեան, բարեխղճութեան օրինակներ: Այսպէս, «Սիրանոյշի» մէջ հանդէս է բերուած մի իտալական ընտանիք իբրև ընտանեկան համաձայնութեան, սիրոյ և անձնազոհութեան տիպար:

Այս դասակարգային նախապաշարմունքը աւելի ևս արհեստականութիւն է հաղորդում նրա վէպերին: Նախապաշարմունք երևում է նոյն իսկ լեզուի վերաբերմամբ: Յայտնի է որ «Մայտան» տիկին Տիւսաբ գրել է նախ Փրանսերէն: Որքան և լաւ իմանար նա այդ լեզուն, բայց յայտնի է որ գեղարուեստական ստեղծագործութիւնը օտար, ոչ մայրենի լեզուով չէ կարող ունենալ ինքնատիպ, ուժեղ գործի յատկութիւններ և ամենալաւ դէպքում նա կը թողնէ մի աջոյ թարգմանութեան տպաւորութիւն:

Վէպերի նկարագրական մասին դիմելով, մենք պիտի խօստովանենք, որ տիկին Տիւսաբ ունի շատ մեծ ձիրք սրտի զգայմուցքները նկարագրելու մէջ: Վիշտ, թշուառութիւն, արտասուք, մանաւանդ մահ նկարագրելիս նա ցոյց է տալիս մեծ ոյժ, գոյների հարստութիւն ունի, եռանդոտ ու ազգու է: Պէտք է ասել որ այս ընդունակութիւնը առհասարակ յատուկ է թիւրքահայ գրողներին, մանաւանդ այն շրջանում, երբ զարգանում

էր տիկին Տիւսաբի գրական ճաշակը: Մենք տեսանք որ Պէշիկ-թաշլեանի բանաստեղծութեան մէջ տխուր, մեղամաղձոտ, ողբերգու շեշտերն էին ամենից շատ աղդում Սրբուհու վրայ. և ճրպիսի յափշտակութեամբ է նա խօսում այդ լացացնող, սիրտ ճմլող բանաստեղծութեան մասին: Մի ուրիշ նշանաւոր թիւրքահայ բանաստեղծ, Պետրոս Դուրեան, գերեզմանների, մահուան երգիչ էր: Տիկին Տիւսաբն էլ մէկն է տխուր, մեղամաղձոտ, արտասուող բանաստեղծութեան ներկայացուցիչներէ:

Խոր, անկեղծ է այդ լալկան շեշտը, նա գալիս է հեղինակի սրտի միջից: Տիկին Տիւսաբ կեանքի մէջ էլ մի վերին աստիճանի զգայուն, փափկասիրտ կին էր: Նրա ընտանիքում պատահում է մի դժբախտութիւն. ծաղիկ հասակում վախճանւում է նրա աղջիկը, Դօրին: Ի՞նչ է անում վշտերի երգչուհին: Հարուածը բոլորովին շփմեցնում է նրան, բոլորովին խորտակում: Նա կտրւում է աշխարհից, փակւում է իր տան մէջ, ոչնչացնում է իր գրական աշխատութիւնները, նա ինքն էլ մեռած է և միայն մի բան գիտէ—պաշտել իր աղջկայ գերեզմանը: Մայրական սիրող և տանջուող սիրտը հարկադրում է նրան կաթսիլիկութիւն ընդունել, որպէս զի մեռնելուց յետոյ պառկէ իր աղջկայ հետ մի գերեզմանում, միանալ նրա հետ յաւիտենականութեան մէջ: Այսպէս էր Պէշիկթաշլեանի տաղանդով սնուած, նրա գաղափարները մինչև վերջը պաշտած հայ բանաստեղծուհին...

Նա մեռաւ, բայց նրա անունը չի մեռնի մեր գրականութեան մէջ:

Քանի որ մեր խօսքը գրող հայուհու մասին է, չը մոռանանք, իրբն տխուր վերջաբան, լոյս հանել մի հանդամանք: Թիւրքահայերի մէջ տիկին Տիւսաբ մի անհատական երևոյթ չէ. այնտեղ կան և կը լինեն իրանց մայրենի լեզուին տիրապետող հեղինակ կանայք: Այժմ ապրողներից յիշենք տ. Զապէլ Տօնելեանին. նա այնքան հմուտ է հայերէնի մէջ, որ նոյն իսկ քերականութեան դասագիրք էլ է կազմել: Նա գրում է վէպեր, հրապարակախօսական յօդուածներ:

Աչքներս դարձնենք արեւմտաքից արեւելք. նայենք մեզ, ռուսահայերիս: Մենք չը խօսենք. հանգուցեալ Նալբանդեանը մեր փոխարէն հնչեցնում է իր տխուր երգը.

Բայց մեր կանայք... օւր եղիչէ...

Լ.

ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

«Մօզզաուրի» ամսագիրը.—Նրա յօդուածները հայերին վերաբերեալ.—
«Վրացի-լուսաւորչականների» հարցը.—Բանաստեղծ Վաթա-Փշաւեան.—Վի-
պագիր Արագվիսպիրելին.—Վրաց բարձր հոգեւորականութիւնը.—Մի անձ-
նուէր երաժշտագէտ.—Դարձեալ աղգայնութեան հարցեր:

Ներկայ 1901 թուականին վրաց մամուլը հարստացաւ մի
նոր, մասնագիտական պարբերական հրատարակութեամբ: Դա
պ. Ի. Ռոստոմաշվիլիի խմբագրութեամբ լոյս տեսնող «Մօզզաու-
րի» (ճանապարհորդ) ամսագիրն է, որ նպատակ ունի տալու
ղիւրամատչելի յօդուածներ Վրաստանի պատմութեան, հնագի-
տութեան, ազգագրութեան և աշխարհագրութեան մասին: Հրա-
տարակութիւնը պատկերազարդ է, բաղկացած մօտ 100 միջա-
դիր երեսից: Մինչև օրս լոյս տեսած համարների հիման վրայ
կարելի է վկայել որ «Մօզզաուրին» մի հետաքրքիր և օգտա-
կար օրգան է վրաց հասարակութեան համար. նրա բազմա-
կողմանի և միեւնոյն ժամանակ ղիտմամբ շատ պարզ գրուած
յօդուածները կարդացւում են հաճոյքով: Այդ բանին քիչ չէ
նպաստում և այն հանգամանքը, որ յօդուածները լինում են
կարճ, մի քանի երեսից բաղկացած, որ մեծ առաւելութիւն է
այդպիսի հանրամատչելի, ժողովրդական ընթերցանութեանը
ծառայող հրատարակութիւնների համար: Չէ կարելի նոյնպէս
չը չնորհաւորել պ. Ռոստոմաշվիլիի մի յաջող ձեռնարկութիւնը
—«Վրաստանի պատմութիւնը (սխտեմական)՝ հասարակ ժողո-
վրդի համար գրուած», որ տպագրւում է ամսագրի յաւելուա-
ծում: Աւելացնենք նոյնպէս որ «Մօզզաուրում» տպւում են
նաև պատմական վէպիկներ, պօէմաներ և ոտանաւորներ:

Վրաց նոր ամսագրի բազմազան յօդուածներից հայերին
համար առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում երկուսը
—պ. Իւստինէ Արուլաձէի «Վրաց մի մատենանի հին հայերէն
թարգմանութիւնը» և պ. Զ. Ճիճինաձէի «Հարաւային Վրաս-

տանը»։ Պ. Աբուլաձէն, ինչպէս երևում է նրա յօդուածից, պատրաստել է տպագրութեան համար մեր հին մատենագիրներից մէկի՝ Զուանչիւրի՝ «Համառօտ պատմութիւն վրաց» գրքի վրացերէն թարգմանութիւնը*)։ Զուանչիւրի գրած Վրաստանի պատմութիւնը հասնում է մինչև ութերորդ դարի սկիզբը, այն է մինչև Արչիլ II թագաւորի մահը (688—718 թ.), բայց հայերէն մատենը ունի նաև յաւելուած, որի մէջ այդ պատմութիւնը հասնում է մինչև 12-րդ դարի սկիզբը։ Այդ մատենի վրացերէն ընագիրը մինչև օրս ոչ մի տեղ չէ գտնուել։ Յայտնի չէ նոյնպէս, թէ ո՞վ է վերածել այդ գիրքը հայերէնի։ Մատենանի վրացերէնից թարգմանուած լինելը ապացուցանում է պ. Աբուլաձէի կարծիքով նախ նրանով, որ Զուանչիւրը, ըստ վրաց ուրիշ գրաւոր աղբիւրների, յիշեալ Արչիլ II թագաւորի եղբօր փեսան էր. երկրորդ՝ հայերէն ընագրի շատ անհասկանալի, աղաւաղուած տեղերը հասկանալի են դառնում միայն վրաց ուրիշ պատմական աղբիւրների հաղորդած տեղեկութիւնների հիման վրայ և երրորդ՝ մատենանի մէջ սաստիկ զգացւում է վրաց լեզուի աղղեցութիւնը և շատ մութ տեղեր պարզւում են նոյնպէս այդ լեզուի օգնութեամբ։

Մատենանի ֆրանսերէն թարգմանութիւնը, որ կատարել է Պետերբուրգում 1851 թ. յայտնի հայագէտ և վրացագէտ ակադեմիկոս Բրօսսէն, պարունակում է իր մէջ, պ. Աբուլաձէի ասելով, բազմաթիւ խոշոր սխալներ։ «Այդ պատճառով Զուանչիւրի մատենանը վրացերէնի թարգմանելիս,—նկատում է պ. Աբուլաձէն—ես ուղղեցի նոյնպէս հայերէն տեղըստի (ընագրի) աղաւաղուած տեղերը, ինչպէս նաև այն սխալները, որոնց մէջ ընկել է ակադեմիկոս Բրօսսէն»։

Թարգմանիչը պահպանել է նոյնպէս իր աշխատութեան մէջ Բրօսսէի այլ և այլ ծանօթութիւններն ու նկատողութիւնները, լուսաբանելով նրանց և իրաններն էլ աւելացնելով վրան։ Պ. Աբուլաձէի առաջ բերած մի քանի նմուշները հայերէն ընագրի խանգարուած տեղերի ուղղելու մասին բաւական համոզեցուցիչ են և նրա աշխատանքը—չնորհակալութեան արժանի հայերիս կողմից։

«Մօզգաւորիի» միւս յօդուածի—«Հարաւային Վրաստան»—հեղինակի նպատակն է ցոյց տալ թէ իբր այժմեան թիֆլիսի նահանգի ընդարձակ Բօրչալու գաւառի (որի մէջն են Լօոփն, Շուլաւէրը) հայ բնակչութեան մեծամասնութիւնը... հայացած

*) Այդ երիտասարդ հայագէտ պարոնն աւարտել է իր ուսումը Պետերբուրգի համալսարանի արեւելեան բաժնումը։

վրացիներ են: Այդպիսի հայացած վրացիներ՝ ահագին քանակութեամբ՝ ապրել են, յօդուածագրի կարծիքով, Վրաստանի հարաւ-արեւելեան, այն է հին Հայաստանի սահմանակից, մասում, այսինքն այժմեան Ալեքսանդրօպօլի, Բօրչալուի, Գանձակի, Երևանի, Շուշու, Սղնախի, Թելաւի և այլ գաւառներում: Այդ երեւոյթը տեղի էր ունենում այն պատճառով, որ վրացիների հայ լուսաւորչական եկեղեցուց անջատուելուց յետոյ՝ չատ վրացիք հաստատ մնացին իրանց հին հաւատի մէջ, սովորեցին հայոց լեզուն, ծէսերը և կամայ-կամայ ձուլուեցան նրանց մէջ, ի հարկէ գլխաւորապէս հայերի աշխատանքով: Նոյն կերպարանափոխութեան ենթարկւում էին վրացիների ձեռքով հայերին ծախուած բաղմաթիւ ճորտերը, և նոյնպէս այդ ճորտերի այն խմբերը, որ կամովին փախչում էին հայերի մօտ վրացի կալուածատէրերի ու թաւաղների (իշխանների) չափազանց խստութիւններից: Գալով յատկապէս «Հարաւային Վրաստանին», որին պ. Ճիճինաձէն նուիրել է «Մօզզուրերում» երեք յօդուած (№№ 1, 3 և 4), յօդուածագիրն ասում է, որ այդ գաւառը ժամանակով վրաց թագաւորութեան ամենահարուստ, ծաղկած անկիւններից մէկն էր: Նրա խիս բնակչութիւնը բաղկացած էր ամբողջապէս վրացիներից, որոնք ունէին մօտ 200 վանք ու եկեղեցի և երեք եպիսկոպոսական աթոռ: Սակայն միջին դարերում այդ կողմը գաղթած հայերը, օգտուելով Վրաստանի քաղաքական ձախորդ հանգամանքներից, տարածեցին քիչ-քիչ տեղական վրացիների մէջ հայ-լուսաւորչական կրօնը, հայ լեզուն, սովորութիւնները և ձուլեցին նրանց իրանց մէջ: Իսկ վրաց տէրութիւնն ու հոգևորականութիւնը մատնների արամքից էին նայում այդ երեւոյթի վրայ, բռնուած լինելով սուկի մեծ ջաւով—Վրաստանի քաղաքական անկման երկիւղով: «Ծիշտ է, վրաց թագաւորները ունենում էին շարունակ այդտեղ,—ասում է պ. յօդուածագիրը—իրանց հսկող ներկայացուցիչները, բայց այս վերջիններն էլ փայլում էին իրանց անտարբերութեամբ և յաճախ հէնց իրանք հայ եկեղեցու գիրկն ընկնում»: Վրաց հոգևոր տաճարներն էլ, բնականաբար, անցնում են հայ հոգևորականութեան ձեռքը և դրանց թուումն են իբր թէ և հռչակաւոր Հաղպատի ու Սանահնի վանքերը: Այժմ այդ «Հարաւային Վրաստանում» յօդուածագիրը թւում է մի 10—15 գիւղի անուն, որոնց մէջ միայն մնացել են վրացիք, այն էլ կիսով չափ, որովհետև բնակիչների միւս կէսը՝ չը նայելով իրանց վրացի ծագման՝ պնդում է յօդուածագիրը՝ իրանց հայ են հռչակում, Գրիգոր Լուսաւորչի գաւառութեանը յարած լինելու պատճառով: Այդ մնացած վրացիքն էլ, պ. Ճիճինաձէի

կարծիրով, կարող են ժամանակով հայանալ, աչքի առաջ ունենալով որ այդ գիւղերը կամաց-կամաց անցնում են այժմ հայ կալուածատէրերի ձեռքը...

Պ. Ճ. վերջացնում է իր գրութեանը հետեւալ սրտառուչ ողբով և անապատոյց մեղադրանքով.

«Հայ կը լինեն այդտեղ կալուածատէրերը, հայ-լուսաւորչական՝ բնակիչները և, ինչ ասել կ'ուզի, ամբողջ այդ կողմի անցեալը, ներկան և ապագան էլ նրանց (հայերի) սեփականութիւնը կը դառնայ և այն ամենը, ինչ որ վրացական էր, կը փոխուի և ուրիշ կերպարանք կ'ընդունի: Կը փոխուեն (?) մինչև իսկ հին, մեծամեծ եկեղեցիների արձանագրութիւնները և նրանց անունները (?): Ասում ենք այս այն պատճառով, որովհետև դրա նման օրինակներ չատ ենք տեսել (?): Զեռքներիցս գնաց այդպէս և այդ ձևով Բօրչալուի գաւառը, այն անկիւնը, որտեղ երբեմն վրացի բնակիչների թիւն այնչափ մեծ էր, որ այդ եպիսկոպոսներն էլ բաւական չէին լինում նրանց հովուելու համար... Այսօր այնտեղ վրացիների այն փառքիկ թիւն է մնացել, որ մենք վերը յիշեցինք և այդ թիւն էլ, հասկանալի է, կ'անհետանայ, եթէ մենք ջոյց չը տանք հետատեսութիւն, զգաստութիւն և դործունէութիւն *):»

Ահա ինչպէս են վրացիները «պատմութիւն» գրում:

Մարդ մնում է ապշած, թէ ինչպէս պ. Ճ., որ նեղութիւն է քաշել այդքան կարևոր, հետաքրքիր և զարմանալի «պատմական» տեղեկութիւններ տալու իր ընթերցողներին, մոռացել է միանգամայն յոյց տալու և այն պատմական աղբիւրներ, որոնցից նա քաղել է այդքան անհաւանական, ուղղակի հէքիաթական անցքերի նիւթը: Այդ «պատմաբանի» համար կարծես գոյութիւն չունեն աշխարհիս երեսին ոչ պատմական գրաւոր յիշակարաններ, և ոչ մինչև իսկ հասարակ թուականներ, անցքերի ժամանակներ: Ապացոյցներ բերելը աւելորդ է համարում այդ վրացի «պատմաբանը»: Մենք գեռ ևս յունուար ամսի սկզբին, երբ լոյս տեսաւ պ. Ճ. առաջին յօդուածը «Մօգզաուրիում», հրաւիրեցինք պարոնի ուշադրութիւնը այդ մասին տեղական «Новое Обозрѣніе» լրագրում տպուած մեր մի յօդուածով, բայց այդ հրաւերը մնաց ձայն բարբառոյ յանապատի և պ. Ճ. շարունակեց էլի առաջուայ նման «իր էջը քշել»...

Ի վերջոյ, չը մոռանանք յիշելու և մի կարևոր բան. Բօրչալուի գաւառը, պ. յօդուածագրի տակով, յայտնի էր Վրաստա-

*) Տե՛ս «Մօգզաուրի», № 4:

նում գլխավորապէս «Սօմխէթի» (Հայաստան) անունով: Հարց, ինչո՞ւ հարաւայի Վրաստանի և այդ զուտ վրացական դաւառը «Հայաստան» էր կոչւում, եթէ նրա «խիտ բնակչութիւնը բաղկացած էր ամբողջապէս վրացիներից»:

Վերոյիշեալ «պատմաբանի» գրութիւններից յետոյ մեզ համար, ի հարկէ, այնքան էլ զարմանալի չէր տեսնել «Իվերիա» լրագրի յունիսի 5-ի համարում (№ 119) այսպիսի մի՛ յամենայն դէպս անսպասելի՝ վերնագրով յօդուած.— «Վրացի-Գրիգորեաններ»: Հարցն, ուրեմն, մի տեսակ, եթէ կարելի է այսպէս ասել, պաշտօնական կերպարանք է առնուած Վրաց մամուլի մէջ շատ սովորական է կարգալ «վրացի-մահմեդական», «վրացի-կաթոլիկ» դարձուածը, իսկ «վրացի-գրիգորեան», այն էլ այդպէս ապլօմբով գործ ածուած՝— առաջին անգամն էինք տեսնում: Պէտք է սակայն ասած, որ յօդուածի հեղինակը, մի հանգարտաբարոյ ծերունի, ամենեկին միտք չունի որ և է վէճ յարուցանելու վրացի-լուսաւորչականների հարցի մասին կամ սրան ու նրան զրգուելու: Նա, իր հասակին ու տեմպերամենտին վայել մեղմութեամբ, տալիս է միայն յիշողութիւններ, որոնցով՝ նրա կարծիքով՝ հաստատուում է վրացի-գրիգորեանների բաւականաչափ թուով գոյութիւնը Կովկասի այլ և այլ մասերում: Գրիգոր Լուսաւորչի հաւատը, յօդուածագրի ասելով, անարգել քարոզւում էր Վրաստանում մինչև 19-դ դարի սկիզբը, այն է մինչև ռուսականութիւնը: Վրացիք միշտ սիրով էին ապրում հայերի հետ և անխտիր յաճախում նրանց եկեղեցիներ, կրօնախայրութիւն, խաչեղբայրութիւն անում նրանց հետ: Ինչպէս կաթոլիկ միսիօնարներին, այնպէս էլ ես առաւել հայ հոգևորականներին վրաց տէրութիւնը չէր արգելում՝ վրացիներին իրանց եկեղեցիների գիւղը քաջելու: Եւ հայ հոգևորականութիւնը պարապ չէր մնում: Նա գործում էր եռանդով, իսկ շատ վրացիք էլ իրանք իրանց կամքով զբաղւում էին հայ եկեղեցու անդամ, ոչինչ դատապարտելի բան չը տեսնելով դրանում: Հայ հոգևորականութիւնն էլ իր կողմից մի նշանաւոր գիշում էր անում այդ նորադարձ լուսաւորչականներին, մտցնելով ժամերգութեան և եկեղեցական արարողութիւնների մէջ վրաց լեզուի գործածութիւնը՝ զուգընթացաբար հայերէնի հետ «Տասնիններորդ դարու համարեա մինչև երկրորդ կէտը, — հաւատացնում է ծերունի յօդուածագիրը — հայոց եկեղեցիներում գործ էին ածւում նաև վրացերէն աղօթքներ և չարարանքի չարաթում խաչելութեան աւետարանը կարդացւում էր վրացերէն և Գրիստոսի սգի երգն էլ երգւում էր վրացերէն: Դա այնքան յայտնի իրողութիւն է, որ ապացուցանելու կարիք էլ չը կայ. այսօր

դեռ եւս չատ ծերունիներ կենդանի են և նրանց թւում ձեր խոնարհ ծառան, որ տեսել եմ աչքովս այդ ամենը և ահա կենդանի վկայ եմ կանգնած: Մինչև իսկ հայոց պատարագը թարգմանուած էր վրացերէնի և այդպիսի մի թարգմանութեան օրինակը կարելի է գտնել հիմա վրաց գրագիտութիւն տարածող ընկերութեան գրադարանում»,

Վրացի-լուսաւորչականների գոյութեան կամ չը գոյութեան հարցը, այն էլ այդքան մօտիկ անցեալում, թողնելով հմուտ անձերի աւելի հիմնաւոր քննութեան, մենք կը ցանկայինք իմանալ՝ չէին գտնուի արդեօք նաև հայ ծերունիներ, մանաւանդ ծերունի քահանաներ, որ յիշելիս լինէին վրաց լեզուի նկարագրած գործածութիւնը մեղանում, Վրաստանի հայ եկեղեցիներում: Դա հետաքրքիր կը լինէր, ի հարկ է, որպէս մի պատմական փաստ, որովհետև չատ հաւանական է որ վրաց լեզուն գործածուած լինէր, զիջանելով լոկ վերախօս հայերի կարիքներին:

Գեղարուեստական բաժինը վրաց գրականութեան մէջ միշտ աչքի ընկնող, պատուաւոր տեղ է բռնել: Եթէ այդ բաժինը մենք համեմատելու լինենք, օրինակ հայ գրականութեան նոյնատեսակ բաժնի հետ, կը տեսնենք, որ տաղանդով գրուած, ընդհանուրի ուշադրութիւնը հրաւիրող վէպեր, պատմուածքներ, պօէմաներ և ոտանաւորներ դա աւելի յաճախ հանդէս են գալիս վրաց, քան հայոց գրականութեան մէջ: Խօսքն այստեղ, ի հարկէ, ինքնուրոյն և տաղանդաւոր գրուածների մասին է: Ուշադրութեան արժանի է այստեղ և այն հանգամանքը, որ եթէ մենք առանձին-առանձին վերցնենք այդպիսի շնորհքով գրողներին նրանց և մեր մէջ, կը տեսնենք որ նրանց վիպագիրներն ու բանաստեղծները անհամեմատ աւելի աշխատասէր ու բեղմնաւոր են, քան մերոնք: Այս նկատողութիւնը, ի հարկէ, չի կարող վերաբերել մեր հսկայ—գրող Բաֆֆին, որի չափ խոշոր հատորներ դեռ չի տուել աշխարհին ոչ մի վրացի վիպագրող:

Ներկայ 1901 թուին լոյս տեսած վրացերէն բնլետրիստիկական արտադրութիւններից առանձին կերպով աչքի են ընկնում իրանց արժանաւորութիւններով պ. Վաթա—Փչաւելայի ընդարձակ «Օձուտողը» պօէման, որ տպուած է «Մօսմէ» (համբաւաբեր) ամսագրի 2-դ և 3-դ համարներում և պ. Շ. Արապիլիսպիբելիի «Իմ սիրտը—իմ հայրենիքն է» պատմուածքը, տպուած նոյն ամսագրի 3-դ համարում:

Պ. Վաթա—Փչաւելան (ծածկանունն է) մի բոլորովին որոշ

տեղ է բռնում իր մայրենի գրականութեան մէջ: Սրանից մօտ 12 տարի առաջ, թողնելով կիսատ ուսումը Պետերբուրգի համալսարանում (2-դ թէ 3-դ կուրսից), նա գնում է ուղղակի իր հայրենիքը—Կախէթի լեռները—որտեղ դարերից ի վեր ապրում են կտրիճ ու վեհանձն վրացի լեռնականներ և խովն ու արօրը ձեռքն առնելով հասարակ երկրագործի կեանք է վարում մինչև օրս, ի մօտոյ ուսումնասիրում իր հայրենակիցների ներկան և անցեալը, ուրախանում ու տխրում նրանց հետ միասին: Այդ լեռնականները (փշաւեր, թուշեր, խսուրեներ), որ յայտնի են այժմ որպէս հմուտ որսորդներ ու խաշնարածներ, նշանաւոր էին անցեալում իրանց արիւնահեղ դարերը ընդհարումներով լեզգիների և քիստերի հետ, ընդհարումներ, որոնք վերջացան ընդամենը սրանից մօտ 40 տարի առաջ, Կովկասի վերջնական տիրապետութիւնից յետոյ: Ահա Կախէթի այդ լեռները լիքն են այսօր անթիւ աւանդութիւններով ժողովրդական նշանաւոր հերոսների մասին, որոնց կտրճութեան, անվեհերութեան ու վեհանձնութեան դովքն ու պատմութիւնը երգւում են ու բերանէ բերան անցնում այնտեղ, ոյժ ու աշխոյժ ներշնչելով նոր սերունդներին: Եւ պ. Վաթա—Փշաւեւան, այդ լեռների որդին, տողորուած այդ հերոսների աշխարհի մթնոլորտով, ընծայում է տարին մի քանի մեծ ու փոքր չքնաղ, կախարդիչ պօէմա իր մայրենի գրականութեան, որոնք բոլորն էլ կարգացւում են անսղացման յափշտակութեամբ: Այդ պօէմաներում հանդէս են գալիս համարեա միշտ նաև լեռնի համալիրելի կանայք իրանց նոյնպէս անվեհեր հոգով և անձնուրայ, լեռնական վճիտ աղբիւրի նման մաքուր, յատուկ սիրով, լեռնական չքեղ բնութեան աննման ուժգին թափով շնչողուած նկարագրութիւններ, որսորդական կեանքի հրապուրիչ պատկերներ, ժողովրդական լեզուի ճոխ դարձուածքներ ու բառեր: Այդ իր սիրած աշխարհից տաղանդաւոր բանաստեղծը տուել է մինչև այժմ մօտ 10 բաւականին մեծ պօէմա, իսկ փոքր պօէմաների, ոտանաւորների և մանր, արձակ ձևով գրած պատկերների թիւը հասնում է մի քանի տասնեակի: Այդ բոլոր արտադրութիւնները կրում են իրանց վրայ արտադրողի մեծ խոտմբի և վարպետութեան կնիքը: 2 է կարելի միայն չը յաւել, որ նա մի քիչ սիրում է ձգձգել իր մեծ պօէմաները, մանաւանդ նրանց մէջ պատահող խօսակցութիւնները: Այդ պակասութիւնից բոլորովին զերծ է, մեր կարիքով, միայն «Էթերա» պօէման, որ զարմանալի կատարելութեամբ ձևած ու կտրած ամբողջութիւն է ներկայացնում:

Մօամբէ» ամսագրի միւս յաջող զեղարուեստական զը-

րուածքի («Իմ սիրտը—իմ հայրենիքն է») հեղինակն է, ինչպէս ասացինք, պ. Շ. Արագվիսպիրելին (ծածկանունն է)։ Սա նոյնպէս բարձր ուսումով (անասնաբոյժ է) և վերջին 10—12 տարուայ գրող է։ Ստեղծելով իր գործունէութեան սկզբի տարիներում մի շարք գեղեցիկ, ճշգրիտ և կոկիկ պատկերներ գիւղական նիստ ու կայից, նամանաւանդ գիւղական մանուկների կեանքից, պ. Արագվիսպիրելին վերջին տարիները նուիրեց իր տաղանդաւոր գրիչը մարդկանց հոգու խորքերը թափանցող սուր դիտողութիւնը համարեա թէ ամբողջապէս՝ ժամանակակից վրացի ինտելիգէնտների տիպերի ստեղծագործութեան։ Նրա այդ վերջին ուղղութեան բազմաթիւ մանր ու մեծ պատմութեանքները մի չքեղ կալէյդոսկոպ են, որի մէջ կարելի է տեսնել ամեն տեսակ հաւատի, սկզբունքի, իդէալի և տրամադրութեան երիտասարդ ինտելիգէնտներին՝ իրանց ամբողջ հոգեկան մերկութեամբ։ Նա մեծ ջանք է գործ դնում իր հերոսների հոգեբանական վերլուծութեան վրայ և այդ կողմից նա ունեցաւ մի շարք հետեւողներ երիտասարդ վրացի վիպագրողների մէջ և համարուեց հիմնադիր մայրենի վիպագրութեան հոգեբանական դպրոցի։

Իրբի փիլիսոփայ, պ. Արագվիսպիրելին ծայրայեղ պեսսիմիստ է և նրա գրութեանքների մեծ մասը համակում են ընթերցողներին խոր թախիծով և անյուսուցեամբ։ Այդ պեսսիմիզմը աւելի զօրեղ կերպով արտայայտւում է մանաւանդ նրա սիրոյ մասին ունեցած հայեացքի մէջ. նրա բոլոր սիրահարուած հերոսները ունենում են միայն մի շատ կարճատև և բուռն երջանկութիւն և ապա ընկնում չարահար դժբախտութեան մէջ... Վրաց նոր բելլետրիստներից այդ ամենատաղանդաւորի զբոսածքները թողնում են երբեմն մեղ վրայ այնպիսի տպաւորութիւն, որ կարծես թէ նրանց հեղինակն աշխատում է յարմարեցնել կեանքը իր առաջուց կազմած ծրագիրներին։ Պատահում են նրանց մէջ նաև անբնական տեղեր ու դրութիւններ։

Հաղորդներ այժմ մի քանի խօսքով պ. Արագվիսպիրելու վերոյիշեալ նոր պատմութեանքի բովանդակութիւնը, որ կապ ունի վերջերս վրաց մամուլի մէջ առանձին կերպով շեշտուած ազգային ինքնաճանաչութեան հարցի հետ։

Համալսարանական երիտասարդ լեհացի Չդիսը պատահմամբ հանդիպում է Թիֆլիսում իր նախկին ընկեր, նոյնպէս համալսարանաւարտ, վրացի Գաբրոյին, որի երակը ուժգին կերպով զարկում էր հասարակական բարիքների համար։ Սա ունէր ծանօթ ընտանիքների մեծ շրջան, որոնց մէջ նոյնպէս աշխատում էր վառել ժողովրդասիրական զգացումները։ Օտա-

րական Զդիսը սաստիկ հետաքրքրուում է վրացի կանանց մտաւոր և բարոյական վիճակով և խնդրում է իր ընկերոջը ծանօթացնելու նրանց հետ: Լեհացին շատ գոհ է մնում վրացուհիների գեղեցկութեամբ, բայց շատ էլ վշտանում է նրանց հոգեկան դատարկութեան, անտարբերութեան և անհայրենասիրութեան պատճառով: Միակ բացառութիւնը լեհացին գտնում է չքնաղադէմ օրիորդ Մարօի մէջ, որ սաստիկ ոգևորւում էր Գարբօի գաղափարներով: Զդիսի և օրիորդի մէջ գոյանում են շուտով փոխադարձ քնքոյզ զգացումներ և երբ առաջինը խորին դաւով յայտնում է նրան, որ նրանց երջանկութիւնը չէ կարելի գլուխ դալ, որովհետեւ ինքը պարտաւոր է ապրել Լեհաստանում, իսկ Մարօի նման մի անձնուէր հայրենասիրի համար անհնարին կը լինի թողնել Վրաստանը, — «աղնիկ» օրիորդը մի ակնթարթում պատուում է իր դիմակը և բղաւում. «Ի՞նչ, միթէ դուք կարծում էք, որ ես ճիշտ՝ բանի տեղ եմ գնում Գարբօի թիթուած կարծիքները: Իմ հայրենիքն աշխտեղ է, որտեղ իմ սիրտն է... Ես ձեզ սիրում եմ, գնանք, ուր ուզում էք...» Ապուշ կտրած լեհացին նայում է մէկ էլ չքնաղադէմ օրիորդի անասնական կրքով լի աչքերին և զղուանքով փախչում նրանից, հէնց միւս օրը դէպի Լեհաստան ճանապարհւում: Վարչաւից գրած երկար նամակում նա ասում է, ի միջի այլոց, իր մտերիմ ընկեր Գարբօին. «Վրացուհիներն ասում են, թէ իրանց հայրենիքն աշխտեղ է, որտեղ իրանց սիրտն է, բայց լեհուհիները բոլորովին այլ կարծիքի են. մեր սիրտն, ասում են սըրանք, աշխտեղ է, որտեղ մեր հայրենիքը, և եթէ չի լինի հայրենիք — թող չը լինի և մեր սիրտը»:

Պ. Արագվիսպիրելին գրել է վերջին ամիսներս «Յնօբիս փուրցելի» լրագրումն էլ մի քանի աւելի մանր պատմութեաներ, որոնք բոլորն էլ կարգացւում են սովորական հաճութեամբ:

Մի ուշադրութեան արժանի չրջաբերական է ուղարկել իմէրէթի վրացի առաջնորդ սրբազան Լէոնիդը իր ստորագրեալներին: Բանը նրանումն է, որ այդ կողմի վրացիք (իմէրէթները) զարմանալի սովորութիւններ ունեն իրանց ննջեցեալը սգալու և թաղելու համար: Մեռելը ամբողջ մի շաբաթ և աւելի դըրւում է տան բակում և ամեն, օր հարևանները, ծանօթները, ազգականները՝ մարդ և կին՝ գալիս շարւում են դիակի չուրջը և անասելի սուգ ու չիւան բարձրացնում, նամանաւանդ կանայք, որոնց մի մասը «մասնագիտաբար» զբաղւում են մեռելներ սգալով և որոշ վարձատրութիւն ստանում: Այդ վարձկան լալկաններին միանում են, ինչ ասել կ'ուզի, և մեռելատէրերը,

որոնք չանկառում են անխնայ իրանց երեսները և փետում մաղերը: Աւելի մեծ վաճառուն է բարձրանում, ի հարկէ, թաղման հանդէսին և այդ ժամանակ կատարւում են էլի ուրիշ, կռապաշտական ժամանակներից մնացած աւելորդ, ծէսեր: Ապա դալիս է շուայլ քէլէխը, որին մասնակցում են մինչև իսկ մօտակայ գիւղերից եկած հիւրերը: Այդպիսով մահը դառնում է իմէրէթում ոչ միայն մի բարոյական դժբախտութիւն միւսնողի շրջապատողների համար, այլ և մի կատարեալ տնաքանդութիւն նիւթական տեսակէտից: Կան գիւղացիներ, որոնց վրայ մեռել թաղելը նստում է 500, 1000, մինչև իսկ 1500 ուրբի: Այդ ծախսերը նրանք հոգում են պարտքով և մինչև մահը անքում նրա ծանրութեան տակ: Լէոնիդ եպիսկոպոսը խստիւ հրամայում է քահանաներին վերացնելու իրանց ծխերից թէ յիշեալ հեթանոսական սովորութիւնները և թէ այդ փարթամ «հոգեհացերը»: Հրամայում է, որ ննջեցեալը թաղուի ոչ ուշ քան երեք օրից յետոյ և որ իրանք քահանաները ամենից առաջ զործադրեն այդ առաջարկութիւնները իրանց տան և մօտիկ ազգականների մեռելների վրայ, որպէս զի ժողովուրդն էլ նրանց հետևի: Պատուիրազանց քահանաները կ'ենթարկուեն այսուհետև խիստ պատասխանատուութեան:

Աչքի առաջ ունենալով սրբազան Լէոնիդի ահագին ժողովրդականութիւնը իր թեմում, կարելի է յուսալ, որ նրա այդ խելացի ցանկութիւնը կամաց-կամաց կ'իրագործուի: Վրացոյ կարելի է բաղդաւոր համարել, որ նրանց բարձր հոգևորականները եղել են միշտ՝ այս վերջին մի քանի տասնեակ տարիներում՝ անպայման արժանաւոր մարդիկ: Մի քանի տարի սրանից առաջ վախճանուած իմէրէթի առաջնորդ Գաբրիէլը կատարելապէս պաշտում է իր թեմից և ամբողջ Վրաստանից: Երբ մի որևէ վրացու պատմում էք, օրինակ, մի հայ իդէալական եպիսկոպոսի կամ վարդապետի մասին, վրացին չէ գտնում իր հիացմունքը յայտնելու ուրիշ ձև, բայց եթէ հետեւեալը. «ուրեմն դա էլ մեր Գաբրիէլ եպիսկոպոսի նման է եղել»: Այժմեան Գուրիայի և Մինգրէլիայի եպիսկոպոս ծերունազարդ Ալէքսանդրը, իմէրէթի եպիսկոպոս Լէոնիդը և Գօրու եպիսկոպոս (էկզարխի փոխանորդ—викаріѣ) Կիրիոնը—վախելում են իրանց հօտի անպայման յարգանքն ու սէրը: Դրանք բոլորն էլ իրանց հօտի անձուէր, ժիր, արթուն հովիւներ են: Դրանց շնորհով այսօր, ի միջի այլոց, ամբողջ Վրաստանը ծածկուել է ուսումնարանների ահագին ցանցով: Ոչ մի վրացու բերանից չէք լսի գանգատ այդ պատուական հայրերի մասին: Շրջադայելով յաճախ

իրանց հովուութեան յանձնած ժողովրդի մէջ, դրանք յոյս ու հաւատ են ներշնչում ամեն տեղ իրանց ազնիւ խօսքով, եռանդով և լուրջ գործունէութեամբ: «XIX դարու երկրորդ կէսին,—ասում էին սրանից մի ամիս առաջ Լէոնիդ սրբազանին՝ Իմէրէթի մի կողմում նրան դիմաւորելիս—Գաբրիէլ եպիսկոպոսը առաջնորդում էր խօսքով ու գործով Իմէրէթի թեմի ժողովրդին որպէս մի լուսաւոր սիւն... Նոյնն ենք սպասում ձեր սրբազնութիւնից ներկայումս: Քսաներորդ դարում ձեզ է վիճակւում առաջնորդելու այդ ժողովրդին Քրիստոսի խաչով եւ արթուն գործունէութեամբ: Լիայոյս ենք և համոզուած, որ դուք պիտի հասցնէք ձեր հօտը մինչև ցանկալի նոտահանդիստը *)»:

Աւելացնենք նաև, որ մեր թուած բոլոր եպիսկոպոսները յայտնի բարեգործներ են միևնոյն ժամանակ. նրանք իրանց ռոճիկն ու նիւթական հասոյթները բաժանում են շարունակ ազգային այլ և այլ հաստատութիւններին և կարօտեալ ժողովրդականներին:

Քսան տարուց աւել է, որ վրացիք ունեն մի արդիւնաւէտ և համակրելի երաժշտադէտ, պ. ֆ. Քօրիձէ: Իտալիայում իր մասնագիտական ուսումնն աւարտելուց և հայրենիք վերադառնալուց յետոյ, նա նուիրեց իրան բացառապէս ազգային ժողովրդական երգերի հին և նոր եղանակները ուսումնասիրելուն և իր հայրենակիցների մէջ մուգիկայի ճաշակը զարգացնելուն: Ծանապարհորդելով շարունակ Կախէթի, Իմէրէթի, Մինգրէլիայի, Գուրիայի և վրացաբնակ տեղերի այլ և այլ կողմերում, պ. Քօրիձէն առանձին ջանասիրութեամբ դրի է առնում բոլոր ուշադրութեան արժանի երգերը իրանց մօտիւններով և ապա, վերադառնալով Թիֆլիս, կարգի է բերում այստեղ իր հաւաքածունքը, մշակում և տպագրութեան յանձնում նրանց, որքան որ միջոցները ներում են: Իսկ այդ միջոցները կազմում են այն նուէրները, որ տեղում են շարունակ նրա հասցէով Վրաստանի զանազան անկիւններից, թէպէտև չափաւոր քանակութեամբ: Նա մշակում է նոյնպէս հոգևոր, եկեղեցում գործածուող երգերը: Միւս կողմից պ. Քօրիձէն պատրաստում է յաճախ երաժշտական խմբեր և համերգներ տալիս իր սիրած ժողովրդական երգերից թէ Թիֆլիսում և թէ գաւառներում: Այդպիսով նա յիշեցնում է մեզ մեր երաժշտադէտ պ. պ. Կարա-Մուրզային և Մ. Եկմալեանին՝ միասին վեր առած: Բայց պ. Քօրիձէն դեռ մի բանով էլ գերազանցում

*) Տեա «Իվերիա», № 102

է նրանց, ինչպէս հիմա կը տեսնի ընթերցողը: Նա տալիս է շարունակ ձրի դասեր իր բնակարանում և մեծ պատրաստականութեամբ՝ բոլոր այն երկու սեռի երիտասարդներին, որոնք կը ցանկան սովորել նախ այդ ազգային մօտիւնները և ապա ընդհանուր, եւրոպական երաժշտութիւնը: Այդ նպատակով նա սպում է ամեն տարի յայտարարութիւններ վրաց ըրագիրներում, իսկ վերջերս նրա՝ «Իվէրիայում» զետեղած «Վրաց ազգային երաժշտութեան նշանակութեան մասին» ընդարձակ յօդուածում կարդում ենք հետեւեալ ուշադրութեան արժանի տողերը. «Նայեցէք, — ասում է պ. Քօրիձէն վրաց երկու սեռի թարմ ներկայացուցիչներին — ձեր հարեան երիտասարդ օրիորդներին և պարոններին, որոնք չեն ինայում ոչ ժամանակ, ոչ աշխատանք և ոչ փող՝ իրանց երաժշտութիւնը սովորելու և նրան լաւ հողի վրայ կանգնեցնելու համար: Իսկ դուք հօ ոչինչ չը պէտք է կորցնէք բացի օրական մի ժամից, քանի որ դիտութիւնը անվարձ կը ստանաք: Պատրաստ եմ սովորեցնելու ձեզ, բացի վրաց երաժշտութիւնից, նաև եւրոպական մուզիկան ու երգերը՝ որ լեզուով որ կամենաք: Առհասարակ վրացիք երաժշտական ձիրքի տէր են, ինչու հապա չը պէտք է յուսանք, որ մերոնցից էլ կարող են շատերը պատուաւոր դիրք բռնել երաժշտական ասպարէզում: Մէկ ուշադրութիւն դարձնենք լրագրական յայտարարութիւնների վրայ. մեզ կը պատահեն գերմանացի, ֆրանսիացի, ռուս և հայ երգիչների անուններ: Իսկ վրացի երգչի անուն... Ուր է այդ վրացի երգիչը... ձեզ եմ թողնում պատասխանը տալու *):»

Ձրի դաս առնողները ամենեւին պարտաւոր չեն, ի հարկէ, մասնակցելու իրանց ուսուցչի տուած համերգներում: Ինքը պ. Քօրիձէն սպրում է ունենոր ընտանիքներում աւանդած մասնաւոր դասերով:

Մեր ընթերցողներին յայտնի պ. Արչ. Ջօրջաձէն դարձեալ մի քանի յօդուած տպեց «Յնօբիս-Փուրցելի» լրագրում և «Մօամբէ» ամսագրում իր այդ սիրած թեմայի մասին: Այս անգամ նա աւելի որոշ կերպով կանգ է առնում հայ գաղթականների հարցի վրայ և յայտնում, որ իր հայրենակիցները չեն կարող հաշտ աչքով նայել հայերի վրայ, քանի որ տաճկահայ մշակները կը շարունակեն կտրել վրացի բանուորների հացը և էժանացնել սրանց ստացած օրավարձը: «Կվալի» շաբաթաթերթը մի շարք իմքադրական յօդուածներով (№ № 22, 23, 24, և 25) ցոյց տուեց պ. Ջօրջաձէնի յօդուածների անթիւ անհեթեթու-

*) Տե՛ս „Իվէրիա“, № 96.

թիւները, առողջ կրիտիկային չը դիմանալը և նրանց վնասակար ոգին: Նոյն ուղղութեամբ մի գեղեցիկ յօդուած գրեց նորից այդ լրագրի աշխատակից պ. Ի. Գօմարթեկին «Новое Обозрение» լրագրում (№ 5747):

Միշտ հայատեաց «Իվերիա» լրագիրը մի անսովոր սառնութիւն ցոյց տուեց այս անգամ: Նա չը միացաւ պ. Զօրջաձէին, չը յիշեց նրա անունը, այլ բաւականացաւ միայն տպելով երկու մեծ, հինգ համարում տեղաւորուած, ֆէլիէտօն «Վրաց ազգային ինքնաճանաչութեան» և «Վրաց բռնելիք ուղղութեան» մասին, որոնց մէջ սակայն հայերի «իզն ու թողը չը կայ»: Զարմանք...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս ՈՒ Թ Ի Ւ Ն

կրթութեան հարցը.— Լաազոյն կրթութիւն.— Դժգոհութիւն միջին կրթութիւնից Եւրոպայում և Ռուսաստանում.— Միջնակարգ դպրոցների վերակազմութիւնը.— Վաննօվսկուէկազմած մասնաժողովի հիմնական որոշումները միջնակարգ դպրոցների վերաբերմամբ.— Դասատուների նախապատրաստութեան հարցը.— Սկզբնական, քաղաքային և միջին դպրոցները բուժանող անջրպետների վերացումը.— Տեղական լեզուների նշանակութիւնը ծայրերում.— Ժողովրդի կրթութեան այլ դործօններ.— Ժողովրդական ընթերցանութիւնների վերաբերեալ նոր կարգադրութիւն.— Ռուսահայերիս մտաւոր առաջադիմութեան մի չափը.— Պարբերական հրատարակութիւնների նախադրուիթեան վերջնական ժամանակամիջոցը.— «ЖИЗНЬ» ամսագրի դադարեցումը.— «Прав. Вѣстн.» հաղորդագրութիւնը միջնակ. դպր. բարեփոխութեան մասին:

Առհասարակ կրթութեան մակերևոյթից, նրա տարածման չափից և նրա ուղղութիւնից է կախուած իւրաքանչիւր ազգի քաղաքական, հասարակական և տնտեսական վիճակը: Եւ իսկապէս իւրաքանչիւր ժողովուրդ ունի այնպիսի պետական-հասարակական կայութիւն, որ արդիւնք է նրա մեծամասնութեան մտքի, կամքի և զգացմունքների համագումար արտայայտութեան: Իսկ մտքի, կամքի և զգացմունքների զարգացման աստիճանը մեծապէս կախուած է մատաղ սերնդի կրթութիւնից: Բնականաբար ժողովրդի կրթութիւնը մի այնպիսի հզօր գործօն է, որ պետական մարդիկ յարմար չեն տեսնում բաց թողնել իրանց ձեռքից և թոյլ տալ, որ հպատակները իրանց ազատ կամքով որոշեն կրթութեան լաւագոյն ձևերը: Պետութիւնը ինքն է ուզում ժողովրդի աշխարհայեցողութիւնը փոփոխող գործօններին ըստ իր հայեցողութեան ընթացք տալ, ուստի դպրոցական հարցի մէջ խառնուած են նաև քաղաքական նպատակներ: Բայց մի կողմ թողնելով այդ՝ մենք աշխատենք որոշել թէ ի՞նչ է իդէալական լաւագոյն կրթութիւնը:

Մենք արդէն մի անգամ յայտնել էինք (մայիս) որ զըպ-

րոյցը չը պէտք անտես առնի մարդկային կեանքի երկու միջավայր— բնականը և հասարակականը: Հետևաբար, լաւագոյն կըրթութիւնը պէտք է հաղորդի մատաղ սերնդին առաջագէժ մարդկութեան ամբողջացրած աշխարհայեցողութիւնը այդ երկու միջավայրի երևոյթների մասին: Այդ նպատակին հասնելու համար սկզբնական և միջին կրթութեան մէջ պէտք է մտքած լինեն միայն այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են իբրև աստիճաններ կրթուողի համար՝ հոգով և սրտով վեր բարձրանալու: Սկզբնական և միջին կրթութիւնը պէտք է աստիճանաբար նախապատրաստի պատանուն այնպէս որ նա կարողանայ հանձարեղ մտածողների և բանաստեղծների օգնութեամբ սրտով և մտքով վեր պլանալ իրականութեան նեղ, մուլթ ձորերից դէպի մտքի և զգայմունքների վիթխարի, լուսաւոր դադաթները և այնտեղից տեսնել տիեզերքը, աշխարհը, հեռու հորիզոններ, հասկանալ անցած դարձածը, նշմարել մշուշի մէջ երևացող լաւագոյն ապագայի շաւիղները: Այդ բարձրութիւնից նա պէտք է տեսնի և իրականութեան մուլթ, նեղ ձորերը, ուր վխտում են թրշուառ մարդուկներ իրանց ողորմելի սնափառութեամբ, զծուծ հաշիւներով և մարդկային արժանաւորութեան անվայել կրքերով, ուր մաքառում են խաւարի և բռնութեան դէմ մի քանի ընտրեալներ, մոռանալով իրանց անձնական բարեկեցութիւնը... Եւ ապա, երբ այդ բարձրութիւնից կ'իջնի պատանին իրականութեան մուլթ ձորը, նա կը զգուի մամօնայի և անառակութեան սեղանի առաջ կատարուող վակիւանալիայից և կը լսէ կեանքի թշուառութեան հեկեկանքը, կը տեսնի տանջանքների լացը և ձեռք կը մեկնի այն սակաւաթիւ ընտրեալներին, որոնք ուզում են վերացնել կեանքից անարդարութիւնը... Սակայն կրթութեան այդ իդէալական պահանջից ներկայումս հեռու են նոյն իսկ ամենաառաջագէժ ազգերը: Ծիշտ է, սկզբնական կրթութիւնը պարտադիր է նրանց մօտ, բայց միթէ բարիքը հօմեօպատրիկական չափերով պէտք է բաժանել: Կրթութիւնը ընդարձակ մտքով առած այժմ շատ անհաւասար է բաշխում մարդկանց մէջ: Եւ ինչո՞ւ պէտք է այն բարիքը, որ ստեղծւում է համամարդկային ջանքերով՝ դառնայ սեփականութիւն միայն արտօնեալ կամ ունևոր դասակարգերի:

Սկզբնական կրթութեանը՝ միայն առաջին աստիճաններն են, և ահա նոյն իսկ Եւրոպայում մասսային յայտնում են, թէ կաց այդ աստիճանների վրայ և մի բարձրացիր աւելի վերև: Ի հարկէ, ուղղակի չի արգելւում մասսային ստանալ և միջին կրթութիւն, բայց իրականապէս պայմաններն այնպէս են բերում, որ հէնց այդպէս է դուրս գալիս:

Անշուշտ մենք չենք մոռանում, որ այդ անարդարութեան դէմ աշխատում է մաքառել ինքը ինտելիգէնտ դասակարգը՝ ժողովրդական համալսարաններ, դասախօսութիւններ, հրատարակութիւններ, թատրոններ, թանգարաններ հիմնելով, բայց և այնպէս շատ դէպքերում աշխատող դասակարգը այնպէս յոգնած, ճնշուած է լինում, որ անկարող է գտնում օգտուել այդ բոլորից. շատ անգամ նրա զարգացումը այն աստիճան ստոր է լինում, որ պահանջ չի զգում, և նոյն իսկ գերադասում է ակօհօլը այդ բոլորին... Ուրեմն ցանկալի է, որ միջին կրթութիւնը մատչելի լինի իրականապէս բոլոր խաւերի մատաղ սերունդին: Եթէ համեմատելու լինենք Ռուսաստանի միջնակարգ դպրոցների թիւը այժմ և 30 տարի առաջ, անշուշտ ահագին առաջադիմութիւն կը նկատենք, որովհետև փոխարէն 10—12 միջնակարգ դպրոցների այժմ գոյութիւն ունեն 196 գիմնաղիաներ, 44 պրօգրիմնաղիաներ, 117 բէալական դպրոցներ, բոլորը շուրջ 112 հազար աշակերտներով: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մօտ 150 միլիօն ազգաբնակչութեան համար այդ դեռ շատ քիչ է, սակայն միտթարականը այն է, որ զբարոյական կեանքի մէջ նոր հոսանքը գրաւական է, որ այսուհետև աւելի ևս փութացրած քայլերով առաջ կը տանուի գործը:

Ներկայ միջնակարգ դպրոցը ոչ միայն Ռուսաստանում, այլ և Եւրոպայում, բացի այն որ հանրամատչելի չէ, ունի և այլ պակասութիւն: Ժամանակակից մարդը իր աշխարհայեցողութեամբ իր հասարակական տնտեսական կարգերով շատ է տարբերում միջնադարեան մարդուց, մինչդեռ նրա միջին դպրոցը շատ քիչ է զանազանում սխօլաստիկական հիմքերի վրայ դրած միջնադարեան դպրոցից: Բնականաբար ծնողները, հասարակութիւնը դժգոհ են գոյութիւն ունեցող միջնակարգ դպրոցներից, մանաւանդ զորանց այն տիպից, որ հին լեզուներով է ուզում կրթել XX-րդ դարի մարդկութիւնը: Այդ ընդհանուր դժգոհութիւնը առաջ բերեց Անգլիայում նոր ձեւի միջին դպրոցների որոնումներ, և մի քանի տարի առաջ մասնաւոր նախաձեռնութեամբ (գօկտօր Սեսսիլ Բօդս) հիմնուեց նոր տիպի մի դպրոց: Այդ աջող փորձին հետևողներ եղան ոչ միայն Անգլիայում, այլ և Ֆրանսիայում (Դեմօլէն) և այլ երկրներում: Սակայն այդ մասնաւոր փորձերը, լինելով ժամանակակից հասունացած պահանջների արդիւնք, ընդհանուր նշանակութիւն կարող էին ստանալ միմիայն այն դէպքում, երբ նոր տիպի այդ դպրոցները իրանց նոր հիմքերով, նոր ծրագիրներով և մանկավարժական նոր

մեթոդներով մատչելի դառնային ընդհանրութեան և ոչ միայն ուսնեորների զաւակներին: Իսկ դրա համար պէտք է որ այդ դպրոցները հիմնուեն հասարակական կամ պետական միջոցներով և ոչ միայն մասնաւոր: Շատ նշանաւոր երևոյթ է, որ այժմ թէ Անգլիայում, թէ Փրանսիայում և թէ Գերմանիայում պետական մարդիկ սկսել են զբաղուել միջնակարգ դպրոցների վերակադմութեան հարցով:

Ռուսաստանը ևս յետ չը մնաց այդ ընդհանուր հոսանքից, մասնաւանդ որ երեսուն տարի առաջ Տոլստոյի նախաձեռնութեամբ միջնակարգ դպրոցները այնպիսի ցաւալի կերպարանափոխութեան ենթարկուեցին, որ միմիայն առաջադիմութեան երգուեալ թշնամիները կարող էին ուրախանալ: Տոլստոյի կլասիկական գիմնադիւանները դառան մատուց սերնդի համար տանջանքների սարսափելի գործիքներ: Հին լեզուների մեռցնող ծանրաբեռնութիւնը, զարգացուցիչ առարկաների՝ բնագիտութեան, օրէնսգիտութեան վտարանդումը կամ զրականութեան, պատմութեան, աշխարհագրութեան կրճատումը. չոր, անսիրտ, ձևամոլ ու կոպիտ դպրոցական կարգապահութիւնը, ուսուցիչների նախաձեռնութիւնն ու անկախութիւնը ոչնչացնող մանրակրկիտ բեզլամենտացիան, վերատեսչի միանձնական իշխանութեան թագաւորութիւնը—այդ բոլորը ստեղծեցին մի սոսկալի մթնոլորտ, ուր՝ դժուար էր կայտառ, կենսութախ, առողջ կեանք պահպանել: Ծնողները, հասարակական կարծիքը դժգոհ էին, բայց զրկուած էին կարծիք յայտնելու իրաւունքից դպրոցների ներքին կարգ-կանոնների, նրանց մէջ տիրապետող րեժիմի մասին: Եւ չը նայած ընդհանուր դժգոհութեան, ծնողները ստիպուած էին իրանց որդոց ուղարկել այդ սպանդանոցները, որովհետեւ այլ կերպ փակած էր նրանց զաւակների համար կեանքի մէջ լաւ վարձատրուող ասպարէզները—փաստաբանութիւն, բժշկութիւն, պրոֆէսորութիւն, ուսուցչութիւն և առհասարակ աստիճանաւորի կարիէրը: Սակայն ամեն բան վերջ ունի. լուսաւորութեան միներստրութիւնը ևս, Բոգոլիպուլի օրօք, անկարող եղաւ ընդունել, որ ամեն ինչ կատարեալ է: Նրա նախաձեռնութեամբ սկիզբ դրուեց միջին դպրոցների վերակադմութեան խնդրին: Բայց, ինչպէս յայտնի է, նա կողմնակից չէր արմատական փոփոխութիւններին: Այլ կերպ նայեց հարցին՝ Վան-նովսկին, որի եռանդուն և սրտագին վերաբերմունքի շնորհիւ հարցը արագ լուծում ստացաւ: Վաննովսկու կազմած մասնաժողովը ջնջեց, վերացրեց ոռոսական կեանքից 1871 թուից ստեղծած միջին դպրոցի արուեստական, այլանդակ այն տիպը, որ կոչւում է կլասիկական գիմնադիւան, և հիմնական կէտերով

վերադարձաւ այն բէալական տիպին, որ գոյութիւն ունէր մինչև այդ տարաբախտ 1871 թուականը:

Աւելորդ է նաև համարում այստեղ առաջ բերել Վաննօվսկու մասնաժողովի կազմած հիմնական որոշումները միջնակարգ դպրոցի վերակազմութեան վերաբերեալ:

1) Պետական համակրթական միջնակարգ դպրոցը պէտք է լինի մի ընդհանուր տիպի բոլոր այս տեսակ դպրոցների համար: Ծանօթութիւն 1. Միջնակարգ դպրոցները, որոնք պահպանւում են քաղաքների, գեմաւօնների, հասարակութիւնների, դասակարգերի և մասնաւոր անձանց հաշուով, բայց օժանդակութեամբ պետութիւնից կամ պահպանւում են գանձարանի հաշուով, բայց օժանդակութեամբ յիշեալ հաստատութիւններից և անձերից՝ պէտք է ունենան պետական դպրոցների տիպը: Սակայն չեղումներ այս կանոններից կարող են թոյլատրուել ժողովրդական լուսաւորութեան մինիստրից, եթէ խնդրամատոյց լինուեն որոշուած կարգով: Ծանօթութիւն 2. Միջնակարգ դպրոցները, որոնք պահպանւում են բացառապէս քաղաքների, գեմաւօնների, հասարակութիւնների, դասակարգերի կամ մասնաւոր անձանց միջոցներով, կարող են տարբերուել ընդհանուր տիպից այն պայմանով, որ իւրաքանչիւր առանձին դէպքում թոյլատրուի ժ. լ. մինիստրից:

2) Միջնակարգ դպրոցը նպատակ ունի տալ պատանիներին դաստիարակութիւն, և ըստ կարելոյն ամբողջացրած ընդհանուր միջին կրթութիւն և միևնոյն ժամանակ նախապատրաստում է բարձրագոյն դպրոցները մտնելու համար: Ընդ սմին միջն. դպր. առաջին երեք դասարանները պէտք է ունենան ամբողջացրած դասընթաց: Ծանօթութիւն. Աշակերտները, որոնք անցել են այնպիսի ստորագոյն դպրոցների դասընթացը, որոնք ըստ իրանց ծրագրի մօտենում են միջն. դպր. առաջին երեք դասարանների դասընթացին, կարող են մտնել IV դասարան, վերաստուգողական քննութիւնով միայն այն առարկաներից, որոնք չեն մտել այդ դպրոցների ծրագրերի մէջ, ինչպէս և՛ գլխաւոր առարկաներից:

3) Միջնակարգ դպրոցը ունի եօթ դասարան, իւրաքանչիւրում տարեկան դասընթացով:

4) Միջնակարգ դպրոցի առաջին երեք դասարանները պէտք է լինեն ընդհանուր և պարտադիր բոլոր աշա-

կերտների համար: Այդ դասարաններում աւանդում են հետեւեալ առարկաները. կրօն, ռուսաց լեզու, հայրենի և ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, թուաբանութիւն, բնագիտութիւն, նոր լեզուներ, նկարչութիւն, գծագրութիւն և վայելչագրութիւն: Ծանօթութիւն. Միջ. դպր. առաջին երեք դասարանների դասընթացը աշտոնութեամբ անցած և այդ դպրոցում կրթութիւնը չը շարունակող աշակերտները ստանում են ստորագոյն կրթութիւնը աւարտած լինելու առանձին վկայական:

5) IV-րդ դասարանից սկսած միջ. դպրոցի աշակերտները բաժանւում են երկու խմբի. ոմանք ուսումնասիրում են բնագիտութեան և զրաֆիկ արուեստի լրացուցիչ դասընթացը, միւսները այդ առարկաների փոխարէն նոյն ժամերին ուսումնասիրում են լատին լեզուն: Թէ մէկ և թէ միւս խմբի աշակերտների համար ընդհանուր են հետեւեալ առարկաները. կրօն, ռուսաց լեզու՝ տրամաբանութեան հիմնական հասկացողութիւններով հանդերձ, հայրենի և ընդհանուր գրականութիւն, օրէնսգիտութիւն, հայրենագիտութիւն, ֆրանսերէն, գերմաներէն, մաթեմատիկա, ֆիզիկա, տիեզերագրութիւն, հայրենի և ընդհանուր պատմութիւն ու աշխարհագրութիւն և բնագիտութիւն:

6) Բոլոր համալսարանական քաղաքներում, ինչպէս և Վիլնայում, գրանց մէջ եղած միջնակ. դպրոցներից մէկն ու մէկը պէտք է ունենայ պարտադիր դասաւարտութիւն լատին և յոյն լեզուներից:

7) Յունարէնի իբրև ոչ պարտադիր առարկայի դասաւարտութիւնը թոյլատրելի է առանձին մշակուած ծրագրով և միւս միջնակ. դպրոցներում, նայած տնտեսական միջոցների դրութեան, բնակարանի չափերին և այդ լեզուն ուսանել ցանկացող աշակերտների թուին: Նոյն հիմունքներով թոյլատրելի է միջ. դպր. և անգլիերէնի դասաւանդութիւնը:

8) Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնուի կրթութեան երիտասարդութեան դաստիարակութեան և դպրոցական կարգապահութեան ընտելացման վրայ. միևնոյն ժամանակ պէտք է ուժեղացնել մարմնամարզութեան, զինուորական և ֆիզիկական վարժութիւնների դասաւանդումը, նաև պէտք է մտցնել շարժական խաղեր, դպրոցական ճանապարհորդութիւններ և զբօսանքներ, իսկ ուր հնարաւոր է՝ նմանապէս ձեռքի աշխատանք:

Հասունութեան վկայականները վերացում են: Աջողութեամբ միջ. դպրոցի դասընթացը անցնողները ստանում են միջին կրթութիւնը աւարտելու վկայական և օգտուում են բարձրագոյն դպրոցները մտնելու իրաւունքով հետեւեալ հիմունքներով.

Ա. Համալսարան մտնելու դէպքում. ա) երկու հին լեզուներն էլ ուսածները կարող են ընդունուել բոլոր ֆակուլտէտները առանց վերաստուգիչ քննութեան. բ) միայն լատիներէն ուսածները—պատմա-լեզուաբանական և աստուածաբանական (Դօրպատի համալս.) ֆակուլտէտները, լրացուցիչ քննութիւն տալով յունարէնից. գ) միայն լատիներէն ուսածներին, ինչպէս և բոլորովին հին լեզուները չուսածներին միւս ֆակուլտէտները ընդունելութիւնը կատարուելու է այն կանոններով, որոնք մշակուելու են համապատասխան ֆակուլտէտների կողմից և հաստատուելու ժ. լ. մինիստրից:

Բ. Բարձրագոյն մասնագիտական դպրոցներում ընդունելութիւնը կատարւում է այդ հիմնարկութիւնների կանոնադրութիւնների հիման վրայ:

10) Զինուորակոչութեան կանոնադրութեան մէջ եղած արտօնութիւնները ըստ կրթութեան ցանկալի է տալ առաջին երեք դասարաններին, ինչպէս և միջ. դպրամիջոց դասընթացը աւարտածներին (յօդ. 64, պ.պ. 2 և 1 Զին. կան.) և մինչև ծառայութեան կանոնադրութեան վերաքննութիւնը տալ վերջիններին առաջին դասակարգային աստիճանը այն կարգով, որ յոյց է տրուած ծառայութեան կանոն. III հ. 255-րդ ^այօդ., և այդ իմաստով փոխել այժմ նոյն կանոնադրութեան գործադրուող 298 յօդ-ը:

11) Արդիւնազործական և ամեն տեսակ տեխնիկական միջնակարգ դպրոցներում, որոնք ունեն և համակրթական դասընթաց, հեշտացնելու համար մի դպրոցից միւսը տեղափոխուելը, առաջին երեք դասարանների ծրագիրները ըստ կարելոյն պէտք է միացնուեն միջին համամակրթական դպրոցի նոյն դասարանների դասընթացի հետ:

12) Գոյութիւն ունեցող չորսդասարանեան պրօգիմնադիւանները վերածւում են ստորագոյն երեքդասարանեան դպրոցների (համ. 2, 4.), իսկ վեցդասարանեան պրօգիմ-

նազիւաները—եօթիդասարանեան կազմութիւն ունեցող միջնակարգ դպրոցների:

Անշուշտ նոր դպրոցը պահանջում է և նոր հոգւով դպրոցական գործողներ: Մասնաժողովը ի միջի այլոց զբաղուել է միջնակարգ դպրոցների և՛ դասատուների պատրաստութեան հարցով: Մասնաժողովի մեծամասնութիւնը ընդունեց Կազանի ուսումնական չրջանի հոգաբարձու Մ. Մ. Ալեքսէենկոյի զեկուցումը: Նա առաջարկում է միջոցներ ձեռք առնել դէպի մանկավարժական գործունէութիւնը բաւական թուով արժանաւոր և ընդունակ մարդիկ գրաւելու համար: Այդ նպատակով նա նախ և առաջ դնում է ուսուցիչների նիւթական կացութիւնը՝ բարւոքելու հարցը. ապա՝ համալսարանների ուսանողներին, որոնք մանկավարժական ասպարէզ կընտրեն, արդէն երկրորդ կուրսից պէտք է տրուին թոշակներ ոչ պակաս 400 ռուբլուց: Նոյնպիսի թոշակներ պէտք է տրուին 600—900 ռ. քանակութեամբ և թեկնածու—մանկավարժներին նրանց գործնականապէս նախապատրաստուելու ժամանակաընթացում: Վերջապէս, մանկավարժական գործունէութեան ընդհանուր պայմանները պէտք է ափսոսանքով փոխել, որ մանկավարժական ասպարէզը աւելի գրաւիչ, կենդանի դառնայ, բարձրացնի ուսուցչի եռանդը և վեհ հետաքրքրութիւն ներշնչի դէպի գործը: Մանկավարժութեան համար նախապատրաստելու նպատակով ուսումնական չրջանների կից, չրջանի հոգաբարձուի գլխաւոր վերահսկողութեամբ, առաջարկւում է բանալ մանկավարժական սեմինարներ, որոնք ղեկավարւում են առանձին վերատեսչի ձեռքով: Այդ սեմինարներում թեկնածու—մանկավարժները, որոնք արդէն համալսարանում ծանօթացել են տեսական մանկավարժական առարկաների հետ, մի տարուայ ընթացքում ստանում են գործնական պատրաստութիւն, հսկողութեամբ առանձին ղեկավարների, որոնք ընտրւում են զանազան դպրոցների դասատուներից: Այդ թեկնածու—մանկավարժները այցելում են զանազան դպրոցներ, թէ արական և թէ իգական, ներկայ են լինում դասերին, փոխարինում են ուսուցիչներին, տալիս են փորձնական դասեր եւ այլն:

Միջնակարգ դպրոցների վերս բերած նոր ծրագրից պարզ է, որ այժմ աւելի միջոց ունի պատանին ծանօթանալ բնական և հասարակական միջավայրերի հետ, քան առաջ. բնագիտութիւնը, հայրենագիտութիւնը, աշխարհագրութիւնը մի կողմից և ընդհանուր գրականութիւնը, օրէնսգիտութիւնը միւս կողմից կարող են բաւական ընդարձակել աշակերտների մտաւոր հո-

րիզոնը: Բայի այդ, դժուար չէ նկատել, որ քայլեր են արած նաև մերձեցնելու միջնակարգ դպրոցները ստորագոյն դպրոցների հետ: Այդ նորմուծութիւնների շնորհիւ միջին կրթութիւնը աւելի մատչելի է դառնում չքաւոր դասակարգերի համար, քան առաջ: Պարզենք այդ Մինչև այժմ ոչ մի կապ չը կար ոչ միայն միջնակարգ դպրոցների—գիմնազիաների և բէալական ուսումնարանների ծրագրների մէջ, այլ և միջնակարգ դպրոցի ստորին դասարանների և ստորագոյն տիպի դպրոցների դասաւանդութիւնների մէջ. գիւղական սկզբնական դպրոցը աւարտածը շատ դժուարութեամբ կարող էր մտնել միջնակարգ դպրոց առանց հիմնաւոր նախապատրաստութեան. քաղաքային ուսումնարանի երրորդ դասարանից չէր կարող աշակերտը փոխադրուել գիմնազիայի, օրինակ, չորրորդ դասարանը, որովհետև նա ոչ միայն նոր և հին լեզուներից, այլ և միւս առարկաներից պէտք է լուրջ պատրաստուէր: Այդպիսով գիւղացին կամ գաւառական քաղաքում ապրող չքաւոր ծնողը, եթէ ուզում էր շարունակել իր զաւակի ուսումը և միջին կրթութիւն տալ նրան, պէտք է կամ հէնց սկզբից ուղարկէր այն քաղաքները, ուր կան միջին դպրոցներ կամ պէտք է յետոյ ահազին գումարներ մսխէր նախապատրաստելու իր աղային՝ միջնակարգ դպրոցը մտնելու համար: Այժմ աւելի հեշտանում է հարցը. միջնակարգ դպրոցների առաջին երեք դասարանները իրանց դասընթացով այնքան մօտ են և ընդհանուր միւս ստորագոյն դպրոցներին, որ, օրինակ, գիւղական դպրոցը աւարտածը կարող է մտնել մերձաւոր գաւառական քաղաքային դպրոցի առաջին դասարաններից մէկը, ապա աւարտելով այդտեղի երրորդը, թեթեւ պատրաստութեամբ կարող է մտնել միջին զըպրոցի չորրորդ դասարանը: Մի խօսքով՝ անշրպեւտները դպրոցների մէջ վերացրուած են. մնում է որ պետութեան ծայրերում միջին դպրոցների մէջ՝ ներկայ ծրագիրներով անգամ համբերուող տեղական լեզուների դասատուութեան հարցը ևս ուշադրութեան առնուի:

Սուտ է, որ իբրև թէ հայը կամ վրացին կամ լեհը չեն ուզում պետական լեզուն ուսանել, դա զանազան Գրինգմուտների և Վէլիչկոնների տմարդի և չարամիտ զրպարտութիւններից մէկն է այլապէս հպատակների մասին: Պէտք է մոռաւորպէս կոյր լինել չը տեսնելու համար, որ ամենատգէտ հայ գիւղացին անգամ ամենից առաջ ձգտում է սովորել պետական լեզուն, որովհետև հէնց նա է ամենից շատ տուժում այդ լեզուն չիմանալուց. իսկ վաճառականը, ինտելիգէնտը հօ աշխատում են նոյն իսկ մոռանալ իրանց մայրենի լեզուն և իրանց ընտանիքի մէջ

խօսակցականը դարձնել ուսերէնը: Իրականութիւնը այդ է: Նոյն իսկ աւելին կ'ասենք. պարսկահայը անգամ իր դպրոցներում ինքնաբերաբար մտցրել է ուսաց լեզուի դաստաւութիւնը, որովհետև ոչ միայն ամեն ուսահպատակ հայի, այլ և հարևան երկիրներին հայերի հէնց անձնական շահերը պահանջում են ուսանել ուսաց լեզուն: Ուրեմն խօսք է կարող լինել, որ պետական լեզուն մի ամենաանհրաժեշտ պահանջ է բոլոր ուսահպատակների համար: Բայց դրանից բնաւ չի հետեւում, որ գերմաներէն կամ ֆրանսերէն սովորող աշակերտը մի վատ բան արած կը լինի, եթէ ուսանի և իր մայրենի լեզուն, որ նրան կապում է իր ծննդավայրի հետ, իր ցեղակիցների հետ: Ոչ միայն արդարութիւնը, մանկավարժական զիտութիւնը, այլ և հասարակական շահը պահանջում է, որ կրթուողը չը խորթանայ, չօտարանայ իր միջնավայրից, չարհամարհի և անտարբեր չը լինի դէպի իր ցեղակիցները: Մաքուր ազգասիրութիւնը՝ ոչինչ կապ չունի չօվինիզմի հետ, ինչպէս եւ անտարբերութիւնը՝ իսկական կօմօպօլիտիզմի հետ: Իսկ երբ մատաղ սերունդը դպրոցական նստարաններից սովորում է արհամարհել իր մայրենի լեզուն, երբ նա դժուարանում է այդ աստուածային շաղկապող գործիքով հասկանալ իր ցեղակիցների ցաւերը և ուրախութիւնները—նա դառնում է ակտուօտական բնազդից զուրկ մի էգօիստ, որի համար նշանակութիւն ունի միմիայն անձնական բարեկեցութիւնը և կեանքի վայելքները: Եւ նա սովորում է իր անտարբերութիւնը պօղել կեղծ կօմօպօլիտի դիմակի տակ, իսկապէս լինելով այն, ինչ ուռը բնորոշում է «ни Богу свѣта, ни чорту кочерга» խօսքերով:

Մասսան ամեն տեղ այնքան խաւար է և յետամնաց, որ պէտք է ձգտել աւելացնելու նրա մէջ կուլտուրական աշխատանք կատարողների թիւը, որովհետև վարձկան պաշտօնեաները, եթէ նոյն իսկ ցանկութիւն ունենան, շատ քիչ են թուով... Կուլտուրական աշխատանքի համար լաւ մշակներ են գաղափարական ինտելիգէնտները, որոնք պէտք է դպրոցից դուրս գան համակուած վեհ սիրով դէպի իրանց ցեղակիցները և ոչ անասնական եսապաշտութեամբ և մեծամիտ անտարբերութեամբ: Շատ ցաւալի երևոյթ է, երբ պարզ, բնական հակումները, որոնցից միայն կարող է շահուել ընդհանուր հայրենիքը—գտնում են թիւը և մոլորեցնող բացատրութիւններ զանազան նեղահայեաց և չարասիրտ գրչակների և «գործիչների» կողմից: Այդ ցաւալի թիւրիմացութիւններից մէկն էլ տեղական լեզուների անփառունակ դրութիւնն է ծայրերի միջնակարգ դպրոցներում, որ յոյս կայ վերացած տեսնել մօտ ապագայում:

Խօսելով ժողովրդի կըթուլեալ վրայ, չէ կարելի անտես առնել և նրա աշխարհայեցողութիւնը լայնացնող այլ գործօնների մասին: Գիրքը, լրագիրը, ժողովրդական դասախօսութիւնը, թատրոնը, թանգարանը—գրանք բոլորն էլ, մանաւանդ չափահասների համար, լուսաւորութեան մեծ աղբիւրներ են: Դժբախտաբար մեր կեանքում ընդարձակ ծաւալներ չեն ստացել այդ գործօնները, իսկ շատ դէպքերում նոյն իսկ մեծ խոչընդոտներ կան դրանց գործադրելու դէմ: Այդ ի նկատի ունենալով պէտք է ողջունել իւրաքանչիւր քայլ, որ թեթեւցնում է ժողովուրդը լուսաւորելու ջանքերը: Այդպէս յունուարի 28-ին Բարձրագոյն հաստատուած նոր կանոններով ժողովրդական ընթերցանութիւնների թոյլտուութեան համար այլ եւ հարկ չը կայ գիմել ուսում, չըջ. հոգաբարձուների հաստատութիւններին կամ որոշ դէպքերում նաեւ մինիստրին, այլ բաւական է ժողովրդական դպրոցների վերատեսուչների թոյլտուութիւնը: Բայց այդ, ժողովրդական ընթերցանութեան նիւթը անպատճառ չը պէտք է տպագրած լինի և միմիայն կարգացուի, այլ թոյլատրւում է նաեւ ձեռագրի ընթերցանութիւնը և բովանդակութեան բերանացի պատմելը: Ի հարկէ, այնուամենայնիւ շատ խոչընդոտներ են մնում չը վերացրած, բայց հէնց այդ խոչընդոտներն են, որոնք մեծ արժէք են դնում այն ջանքերին, որ այս կամ այն անհատը չի ինայում մի դրական գործ կատարած լինելու այն մասսայի համար, որ օրն ի բուն չարչարւում է, զրկանքներ կրում, մինչդեռ հասարակական կեանքի ստեղծած բոլոր վայելքները մնում են նրա համար անմատչելի: Իւրաքանչիւր բուրժուա, որ ունի արդարութեան մի նշոյլ անգամ իր սրտում, իւրաքանչիւր ինտելիգէնտ, որ չի կորցրել պարտաճանաչութեան ամենաթոյլ զաղափարն անգամ՝ բարոյապէս պարտաւոր է հոգալ ժողովրդական լուսաւորութեան մասին: Իսկ ինչ ենք տեսնում. գաւառներում մեր ինտելիգէնցիայի միակ ներկայացուցիչները՝ մի քանի գիւղական ուսուցիչներ եւ... տգէտ քահանաներ են. դրանք ոչ միայն չեն աշխատում, որ իրանց շրջապատողների համար մի մի ճրագներ դառնան, այլ իրանք եւ յաճախ մարած ճրագներ են, որոնց չի հետաքրքրում գիրքը, լրագիրը, ամսագիրը: Մեր քաղաքներում համախմբած ինտելիգէնցիան ոչ միայն ինքը չի հետաքրքրւում գրքով, լրագրով, ամսագրով, այլ չէ էլ զրդում հետաքրքրուել դրանով այն բազմաթիւ խաւար բանուորներին, որոնց հետ նա ամեն օր շփւում է զանազան գործարաններում և նաւթահանքերում: Մեր բուրժուան ոչ միայն ինքը չի հետաքրքրւում մայրենի գրականութեամբ, այլ խնայում է զոնէ մի լրա-

զիր, ամսագիր, գիրք ուղարկել այն գիւղը, որից նա ղուրս է եկել հէնց որ գրպանը բաւականաչափ տողել է: Եւ միթէ մեծ մխիթարութիւն կարող է լինել մի ամբողջ ազգի համար, որի միակ տարածուած լրագիրը հազիւ 2400 բաժանորդ ունի, իսկ միակ ամսագրի բաժանորդները թիւը հազիւ հասնում է 650-ի: Ի նկատի ունեցէք, որ արտասահմանի հայերն ևս ստանում են այդ հրատարակութիւնները: Բայց ընդունենք, որ այդ երանելի թուերին է հասել բաժանորդագրութիւնը հէնց միայն Ռուսաստանում. համեմատեցէք այդ ողորմելի թուերի հետ մի միլիօնից աւելի ռուսահայերի թիւը և հարց տուէք, ինչ մխիթարական բան կայ քառասուն տարուայ ընթացքում մոտաւոր առաջագիմութեան այդ ողբալի արտայայտութեան մէջ: Մտածելու բան է այդ, ինտելիգէնտ պարոններ...

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Յունիսի 4-ին հրատարակուած է Բարձրագոյն հրաման՝ նախնական ցեղգուրայից ազատ պարբերական հրատարակութիւններին տրուող նախազգուշութիւնների ոյժի վերջնական ժամանակամիջոցը հաստատելու մասին: 1) Ի լրումն յէնդուրական կանոնադրութեան 144-դ յօդուածի որոշել, առաջին նախազգուշութիւնը իր ոյժը պահպանում է մէկ տարի այն օրից, որ օրից պարբերական հրատարակութիւնը ստանում է այդ նախազգուշութիւնը, եթէ այդ ժամանակամիջոցում երկրորդ նախազգուշութիւն տրուած չը լինի: Եթէ մի տարուայ ընթացքում պարբերական հրատարակութիւնը երկու նախազգուշութիւն կը ստանայ, այն ժամանակ այդ նախազգուշութիւնները իրանց ոյժը պահպանում են երկու տարուայ ընթացքում երկրորդ նախազգուշութիւն տալու օրից: Եթէ այդ ժամանակամիջոցում երրորդ նախազգուշութիւն չը ստացուի, վերոյիշեալ ժամանակամիջոցները լրանալուց յետոյ պարբերական հրատարակութիւնը աղատուում է ստացած նախազգուշութիւններից, և դրանից յետոյ ստացուած նախազգուշութիւնը նորից առաջինն է համարւում: 2) 1-ին բաժանմունքի մէջ բացատրուած կանոնի ոյժը տարածել այն նախազգուշութիւնների վրայ, որոնք տրուած են պարբերական հրատարակութիւններին մինչև ներկայ օրէնդրութեան հաստատումը:

Հրատարակուած է ներքին գործերի մինիստրի հետեւեալ կարգադրութիւնը. «Պետական խորհրդի Բարձրագոյն հաստատուած կարծիքը տեղի ունենալուց յետոյ՝ նախնական յէնդուրայից ազատ պարբերական հրատարակութիւններին ղէնդու-

րայի և մամուլի վերաբերեալ կանոնադրութեան 144 յօդուածի հիման վրայ տրուած նախազգուշութիւնների ոյժի վերջնական ժամանակամիջոցը որոշելու մասին և ի նկատի ունենալով այդ որոշման ոյժի տարածելը այն հրատարակութիւնների վրայ, որոնք նախազգուշութիւն են ստացել մինչև ներկայ օրէնսդրութեան հաստատելը, ներքին գործերի մինիստրը որոշում է. ազատել «Биржевыя Вѣдомости», «Восходъ» և «Русскія Вѣдомости» լրագիրները և «Хозяинъ» թերթը նրանց տրուած երեք նախազգուշութիւններից:

Յունիսի 4-ին ներքին գործոց լուսաւորութեան և արդարադատութեան մինիստրները և սրբազնագոյն սենօղի օրերպրօլուրօրը, գրաքնն. և մամ. վերաբ. կանոնադր. 148 յօդ. ծանօթ. հիման վրայ, որոշեցին բոլորովին դադարեցնել Պետերբուրգում հրատարակուող «Жизнь» ամսագիրը:

«Правительственный Вѣстникъ»-ում տպուած է. «Ներկայ թուի մայիս ամսին, Բարձրագոյն բարեհաճութեամբ, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կից, մինիստր գեներալ-ադիւտանտ Վաննօլսկու նախազահութեամբ մի առանձին յանձնաժողով կազմուեց միջնակարգ դպրոցի բարեփոխութեան համար: Սկսելով իր գործունէութիւնը մայիսի 28-ին, յանձնաժողովը այժմ վերջացրել է հիմնական սկզբունքների մշակումը նոր հանրակրթական միջնակարգ դպրոցի համար, կազմել է դասացուցակները և ուսումնական ծրագրի կոնսպէկտը և մի և նոյն ժամանակ քննել է այն հարցը, թէ ինչ ձևով պէտք է դասաւանդման նոր ծրագիրները մտցնել գոյութիւն ունեցող արական գիմնագիտաներում, պրօպիմնագիտաներում և ընթացական դպրոցներում: Այնուհետև, ի նկատի ունենալով, որ ուսումնական գործի շահերի տեսակէտից անհրաժեշտ է որքան կարելի է շուտ վերակազմել միջնակարգ դպրոցը, յանձնաժողովը մշակել է մանրամասն ծրագիր, որի հիման վրայ արական միջնակարգ դպրոցների լիակատար վերակազմութիւնը պէտք է աւարտուի 1905 թուին: Յանձնաժողովի ենթադրածով, կառավարչական միջնակարգ դպրոցը պէտք է լինի միատեսակ, բոլորը մի տիպի, եօթնամեայ դասընթացով, առանց յունարէն լեզուի, լատիներէնը թողած միայն բարձրագոյն չորս դասարաններում և այն պայմանով, որ այդ լեզուին ուսումնասիրել չը ցանկացողները կարող են նրա փոխարէն անցնել լրացուցիչ դասընթացը բնական գիտութիւններից և գծագրական արուեստներից: Ընդհանուր տիպի միջնակարգ դպրոցում վերայրած յունարէնի և կրճա-

տուած լատիններէնի տեղ մտնում է քնական գիտութիւնների, օրէնսգիտութեան, երկու նոր լեզուների ու հայրենագիտութեան ուսուցումն և ոյժ է տրուում ուսանայ և ընդհանուր գրականութեան, պատմութեան և մաթեմատիկայի ուսուցման: Հիմնական սկզբունքներում ցոյց է տրուած, թէ ինչ ձևով և ինչ պայմաններով են ընդունուելու համալսարան և ուրիշ բարձրագոյն դպրոցներ այն անձինք, որոնք աւարտելու են միջնակարգ դպրոցը լատիններէնով և առանց նրան: Այնուհետև նոյն սկզբունքներում—1) ցոյց է տրուած, թէ ինչ կերպ են թոյլ տրուելու շեղումներ այդ ընդհանուր տիպից այն դպրոցների համար, որոնք պահպանուելու են քաղաքների, զեմստվոների, ընկերութիւնների, դասակարգերի և մասնաւոր անձանց միջոցներով կամ նպաստներով, և 2) մշակուած է ծրագիր միջնակարգ կլասսիկական դպրոցի համար, ուր պարտադիր կը լինեն յունարէն և լատիններէն լեզուները, և յայտնուած է յանձնաժողովի կարիքը, որ այդպիսի դպրոցներ պէտք է թողնել բոլոր համալսարանական քաղաքներում և Վիէո քաղաքում: Յանձնաժողովի աշխատանքների վերոյիշեալ արդիւնքները ենթարկուեցին Բարձրագոյն բարեհայեցողութեան և Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց լիովին հաւանութիւն տալ յանձնաժողովի յայտնած կարծիքներին, թէ անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել ուսանող մատաղ սերունդի դաստիարակութեան և այն բանի վրայ, որ նա սովորի դպրոցական կարգապահութեան, ոյժ տալ մարմնամարզութեան, զինուորական և ֆիզիկական վարժութիւնների ուսուցման, մտցնել չարժական խաղեր, դպրոցական զբօսանքներ ու ճանապարհորդութիւններ, իսկ որտեղ հնարաւոր կը լինի՝ նաև ձեռքի աշխատանք: Մի և նոյն ժամանակ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հաւանութիւն տալ զենեքալ-ադիւտանտ Վաննօվսկու կարծիքին՝ թէ վերոյիշեալ կլասսիկական գիմնազիաները պէտք է պահել միմիայն հետեւեալ հինգ քաղաքներում՝ Պետերբուրգում, Մոսկուայում, Կիեւում, Վարչավայում և Իւրիւպում, ամեն մէկում մի-մի հատ: Այնուհետև, Նորին Կայսերական Մեծութեան բարեհաճութեամբ, յանձնաժողովի վերոյիշեալ կարծիքները, ուսումնարանական շրջանների հոգաբարձուների միջոցով, յանձնուելու են մի քանի միջնակարգ դպրոցների մանկավարժական խորհուրդների և հոգաբարձական խորհուրդների քննութեան և սրբազան սինօդի օրէր-պրօկուրօրի, Ս. Պետերբուրգի և Լազօգայի միտրօպօլիտի և այն մինիստրների եղբակացութեան, որոնց իրաւասութեան տակ կան միջնակարգ դպրոցներ: Այդ

բոլոր անձանց և հաստատութիւնների կզրակայութիւնները առաջիկայ ձմեռային ամիսների ընթացքում կ'ենթարկուեն ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան քննութեան և այնուհետև գործին ընթացք կը արուի այն կարգով, որ որոշուած է յանձնաժողովի մշակած ծրագրով: Միջնակարգ դպրոցների այդ ծրագրուած աստիճանական վերակազմութիւնը սկսուելու է ստորին դասարաններից: Դասաւանդման փոփոխութիւնը պէտք է ամենից առաջ մտցնուի հին լեզուների մէջ այն հիման վրայ, որ այդ լեզուներից մէկը, յունարէնը, բոլորովին դուրս է գլուծւում ազագույն ընդհանուր տիպի միջնակարգ դպրոցի պարտադիր առարկաների մէջից, իսկ միւսի, լատիներէնի, վրայ այժմ այնքան չափազանց շատ ժամեր (43) են գործ դրուում, որ շատ ցանկալի է նրանց անյապաղ կրճատումը, որպէս զի ազատ ժամանակ մնայ ոյժ տալու համար մի քանի ուրիշ առարկաների դասաւանդման, որի անհրաժեշտութիւնը զգուծւում են ամենքը: Նկատի առնելով դպրոցների համար այժմեան անցողական ժամանակում ուսումնարան մոնոպոլիների և արգէն եղած աշակերտների շահերը և ուղելով խուսափել դպրոցական կազմակերպութիւնը յանկարծ տակն ու վրայ անելուց, յանձնաժողովը իր կողմից վերին աստիճանի ցանկալի և մանկավարժական տեսակէտից չափից վեր օգտակար է գտել՝ առաջիկայ բարեփոխութեան համար անհրաժեշտ նախապատրաստական ձեռնարկութիւններից մի քանիսը սկսել հէնց եկող 1901—1902 ուսումնական տարուանից, այն է՝ պէտք է գիմնադրաներում և պրօգրիմադիաներում վերացնել լատիներէնը առաջին երկու դասարաններում և յունարէնը՝ 3-րդ և 4-րդ դասարաններում, իսկ նրանց փոխարէն ոյժ տալ ռուսերէնին ու աշխարհագրութեան և մտցնել առաջին դասարանից պատմութիւն, միւսը լեզու, իսկ որտեղ տեղական պայմանները թոյլ են տալիս բնական գիտութիւններ նոյնպէս առաջին դասարանից: Երբ յանձնաժողովի այդ կարծիքները ամենահստատակօրէն զեկույունեցին Թագաւոր Կայսրին, Նորին Մեծութիւնը, այս յունիս ամսի 11-ին և 18-ին, Բարձրագոյն հրամայել բարեհաճեց, — իբրեւ ժամանակաւոր, մի տարով, կարգադրութիւն, ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան իրաւասութեան տակ գտնուած արական գիմնադիաներում և պրօգրիմադիաներում առաջիկայ 1901—1902 ուսումնական տարուանից վերացնել լատիներէնը առաջին երկու դասարաններում և յունարէնը 3-րդ և 4-րդ դասարաններում, նրանց փոխարէն ոյժ տալով ռուսերէնին ու աշխարհագրութեան, և մտցնել առաջին դասարանում պատմու-

Թիւն և մի նոր լեզու, իսկ որտեղ տեղական պայմանները թոյլ տան՝ նաև բնական գիտութիւններ, նոյնպէս առաջին դասարանից: Բէալական դպրոցների վերաբերմամբ փոփոխութիւններ մտցնել առաջին երկու դասարանների դասերի բաժանման մէջ. նոյնպիսի փոփոխութիւններ անել առաջիկայ 1901—1902 ուսումնական տարուայ սկզբից նաև այն գիմնադիւաներում, ուր միտք կայ պահել հին լեզուները: Մի և նոյն ժամանակ նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրի ամենահպատակային զեկուցման վրայ, յունիսի 11-ից, սեփական ձեռքով գրել. «Յոյս ունեմ, որ նոյնպէս լուրջ ուսադրութիւն կը դարձնուի նաեւ մեր մասաղ սերնդի կրօնա-բարոյական կրթութեան վրայ»:

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Տարուայ բերքը. — Վարկուտի վնասները. — Ղաղախի, Ախալքալաքի գաւառներ, Ախալցխա. — Մենք անլօր ենք մեր գիւղատնտեսութեան թշնամիների գէմ գաշտային մկներ. — Գաւառական քաղաքներ, Շուշու գործերը, թեմական զպլոցը. — Գերատնական ճանապարհորդութիւններ, Կարա-Մուրզայի կօնցէրտները. — Առաջարկութիւններ, Սանահին և Վարնակ գիւղերը. — Ժանտախտ. — Բամրակագործութիւնը Երևանեան նահանգում:

Ներկայ ամառը շատ խիստերից է իր տօթերով: Գիւղական աշխարհը, այնուամենայնիւ, հրապարակ է հանել իր բոլոր ոյժերը՝ գաշտային աշխատանքները վերջացնելու, մի ամբողջ տարուայ կեցութիւն ապահովելու համար: Որքան ոյժեր կարող կը լինի նա տնտեսել այդ կեցութեան համար: Այս հարցին մենք մասամբ պատասխանել ենք մայիսի տեսութեան մէջ: Այս տարի մի քանի անգամ փոխուեցան գիւղատնտեսների յոյսերը. դարունը սովորականից շատ շուտ սկսուեց և բերեց զեղեցիկ կանաչներ. բայց դրա հետ եկաւ և երկարատե եւրաշտ, որ շատ տեղերում, գլխաւորապէս, ի հարկէ, տափարակներում, վնասներ տուեց, յուսահատութիւն առաջ բերեց: Ապրիլի վերջերին երաշտութեան հետեւեց անձրևների չրջանը. նա էլ չափազանց երկարատե էր և արդէն վախ է պատճառում: Սակայն յունիսից սկսուեցին բարեկամ լոռ եղանակներ, եւ կան սաստիկ տօթեր և գիւղատնտեսութիւնը մտաւ իր կանոնաւոր գործունէութեան շրջանը: Ընդհանրապէս, բերքը այս տարի միջակ է համարուում:

Ասացինք ընդհանրապէս, որովհետեւ մասնաւոր տեղեր, այն էլ բազմաթիւ տեղեր, զրկուածների դրութեան մէջ են և ողբում են իրանց դժբախտութիւնը: Սովորականի պէս, մեր երկրի շատ տեղերը այցելեց գիւղատնտեսութեան ահռելի թըշնամիներից մէկը — կարկուտը: Ղաղախի գաւառը մեծամեծ վընասներ կրեց. պաշտօնական արձանագրութիւններով հաշուած է որ, օրինակ, Շամաղինի Ռերդ գիւղը 44,000 ռուբլու վնաս է ստացել, Կարմիր-Աղբիւր գիւղը 21,000, Նորաշէնը՝ 11,000.

Քարվանսարան և նրա շրջակայ մի քանի գիւղերը մօտ 15,000 ռուբլու վնաս են ստացել:—Մտածենք թէ ինչ են նշանակում այս ահագին թուանշանները մեր աղքատ գիւղերի համար և պարզ կը լինի թէ ինչ դրութեան մէջ պիտի ընկնեն այդ զոժբախտ գիւղերը առաջիկայ տարուայ ընթացքում:

Բայց աւելի սոսկալի էին հեղեղների և կարկուտի վնասները Թիֆլիսի նահանգում: Դարձեալ Ախալքալաքի զօրախոս գաւառից լսուեցին հեծեծանքների վաչիան գիւղը յունիսի 14-ին համարեա ամբողջապէս ուերուեց սարսափելի կարկուտից. քանդուեցին տներ, եղան մարդկային երկու զոհեր, բազմաթիւ անասուններ սպանուեցան: Դժբախտութիւնը այնքան մեծ էր, օգնութիւն հասցնելու գործը այնքան անյետաձգելի, որ երկրաշարժի պատճառով կազմուած Թիֆլիսի գլխաւոր կօմիտէտը հարկաւոր համարեց իր ձեռքում եղած դրամական միջոցներից մօտ 5 հազար ռուբլի յատկացնել վնասուածներին:

Ախալքալաքից յետոյ հերթը հասաւ Ախալցխային: Այդտեղ էլ, յուլիսի 4-ին, չը տեսնուած կարկուտ ևկաւ, որ մօտ 20 բոպէի ընթացքում ջարդեց ու ոչնչացրեց բուսականութիւնը և ձիւնի նման ծածկեց գետինը: Կարկուտը հարուածեց և Ախալցխայի շրջակայքում գտնուող 12 կամ աւել գիւղերը: Վնասները, ինչ խօսք, ահագին են. նրանք դեռ չեն որոշուած, բայց այժմից իսկ պարզ է, որ վնասուած աղգաբնակութիւնը օգնութեան կարօտ է:

Նոյնպիսի սաստիկ կարկուտ և հեղեղներ եղան Վրաստանի և ուրիշ կողմերում:

Ամեն տարի լաց ու կոծ կարկուտի պատճառով: Բայց այդ աւերիչ թշնամուց պաշտպանուելու համար ոչինչ չէ անում մեզանում: Լաց են լինում, քաղցած են մնում և յետոյ էլի մոռանում, մինչև որ էլի կը գայ թշնամին, էլի կ'ոչնչացնէ ամեն ինչ և էլի կը լացացնէ: Յայտնի է, որ կարկուտից պաշտպանուելու միջոցը ցանքսերի ապահովագրութիւնն է: Բայց այդ խելացի հնարը մեզանում ժողովրդականութիւն չէ գտնում: Մենք դեռ այնքան անպատրաստ ու անճար ժողովուրդ ենք, որ միայն լաց լինել գիտենք, իսկ օգնել մեր ցաւին մեր միջոցներով չենք կարողանում: Կարկուտի դէմ նոյն իսկ կռիւ էլ է մղուած լուսաւորուած երկիրներում: Ինչպէս յայտնի է, հնարուած են մի տեսակ թշնանօթներ, որոնց միջոցով կարելի է լինում ցրուել կարկտաբեր ամպերը: Այդ գործիքները արդէն գործադրուած են Կախէթի արքունի կալուածներում: Ե՞րբ պիտի նրանք ընդհանրանան...

Չը կան փորձուած մասնագէտներ, չը կան միջոց ունե-

ցող մարդիկ, որոնք կարողանան մտցնել մեր գիւղատնտեսութեան մէջ գիտութեան մշակած սկզբունքները: Թշնամիներ շատ ունի մեր գիւղատնտեսութիւնը, պէտք է կռուել նրանց դէմ, իսկ մենք կռուել չը գիտենք: Անցեալ անգամ մենք տեսանք, որ մորեկը, չնորհիւ այն հանգամանքի, որ նրա դէմ վաղօրօք միջոցներ ձեռք չաւանդեցան, վնասներ հասցրեց շատ տեղերի: Ահա մի ուրիշ թշնամի էլ—դաշտային մուկը, որ այս տարի ահազին վնասներ տուեց Շուշաւէր գիւղին. նրանց կոտորելու համար ոչինչ չարուեց, ժողովուրդը չը գիտէ անգամ կարելի է կոտորել նրանց և ինչպէս է կարելի: Չը կան մասնագէտների խրատներ, ցուցմունքներ. վարով ու վաստակով ապրող մեր գիւղացին չունի առաջնորդ ու ղեկավար: Ո՛չ գրքեր են տպուած, ո՛չ փորձով են ցոյց տալիս: Էլ ինչպէս կռուեն թշնամիների դէմ:

Աւելացնենք այս բոլորի վրայ և այն, որ տաւարի ժանտախտը շարունակուած է աւերումներ գործել շատ կողմերում, օրինակ՝ Շիրակում, Ախալքալաքի գաւառում, Ղարաբաղում: Այս հիւանդութիւնը ուղղակի անկյանելի դրութեան մէջ է դրել մեր երկրագործներին: Ահա թէ որքան ցաւեր կան մեր տնտեսական կեանքի մէջ: Էլ չենք խօսում խաղողի հիւանդութիւնների մասին, որոնք նոյնպէս տարածուած են և մեծ վնասներ են հասցրել, օրինակ, Գանձակին:

*
* *

Դիմելով մեր գաւառական քաղաքների կեանքին, մենք տեսնում ենք սովորական անկարողութեան հետ նաև գործունէութեան նշոյլներ: Ալէքսանդրօպօլը ստացաւ միջնակարգ առևտրական դպրոց բաց անելու իրաւունք. Ախալցխայում հիւանդանոց է հիմնուած. Երևանը ամեն ջանք թափում է առատ և մաքուր ջուր ունենալու. կարևոր հարցը լուծելու համար: Սրանք լուր բաներ են: Բայց տեսէք, օրինակի համար, Շուշին: Թէ՛ որքան այդ քաղաքը զգայուն ու ինքնաճանաչ է, երևում է հէնց մի փաստից: Մօտ մի ամիս է, զրում է թղթակիցը, զօրանոցի արտաքնոցը հոսում է քաղաքի գլխուրդ փողոցներից մէկով և ոչ սքի չէ անհանգստացնում այդ խայտառակ իրողութիւնը. չուչեցին միայն քիթը բռնում է և անցնում այդ գարշահոտ դետակով: Եւ մի քաղաք է դա, որ ունի ինքնավարութիւն, որ տարեկան տասնեակ հազարներ է ստանում բնակիչներին իր բարեկարգութեան համար:

Երջանիկ քաղաք...

*
* *

Նոյն երջանիկ Շուշում թեմական դպրոցի մէջ խոտվութիւնները հասան ծայրայեղութեան, խայտառակութեան: Մենք չենք ուզում նկարագրել այդ խայտառակութիւնները, ոչ էլ միտք ունենք բացատրելու թէ ով է արդարն ու մեղաւորը: Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ դպրոցի զրութիւնը կարող է վտանգուել: Ահա այս հանգամանքի վրայ ենք ուզում կանգ առնել: Մենք հարցնում ենք. ի՞նչ իրաւունքով են շուշեցիները վտանգում դպրոցի գոյութիւնը: Եւ միթէ Շուշում չը կան մի հինգ-տասը հասկացողներ, որոնք կարողանան ըմբռնել գործերի զրութիւնը, ժամանակի հանգամանքներն ու վերջ տան այդ մլասակար, սպանիչ խառնակութիւններին: Շուշում այժմ կայ առաջնորդ, բայց նա, ըստ երևոյթին, շատ քիչ է մտածում թէ ինչ պատասխանատուութիւն կայ իր վրայ և կարողութիւն չունի մի բան անելու: Կան և ժողովրդից ընտրուած հոգաբարձուներ, բայց դրանք, ինչպէս երևում է, այլ ևս չեն կարող լինել սառնասիրտ, չեն կարող ըմբռնել իրանց կոչումը, որովհետև իրանց անձնական պատուի հարց են դարձրել այժմեան զրութեան պահպանութիւնը: Մնում է որ ժողովրդի հասկացող մասը—եթէ միայն կայ—չը թողնէ, որ իրերի զրութիւնը ողբալի վախճան ստանայ:

Միայն մի միջոց է մնում դպրոցը զուր վնասներից ազատելու համար. այժման վարչութիւնը պիտի հեռանայ, պիտի քաշուի ասպարէզից: Սա մի մեծ պարտականութիւն է, որ ամենից առաջ կը փրկէ հէնց հեռացողների պատիւը: Հոգաբարձութիւն, ուսուցչական խումբ, ամենքը պիտի տեղի տան այն սկզբունքին, թէ չը պէտք է կործանել մի դպրոց, ուր հարիւրաւոր աղքատ երեխաներ են սովորում: Անձնաւորութիւնները այժմեան ժամանակ մեզ չեն կարող հետաքրքրել, քանի որ կայ ամենագլխաւոր հանգամանքը—գործը:

Եւ գործը պահանջում է, որ շուշեցին մտածէ, լաւ մտածէ ու քանի ուշ չէ, կատարէ իր պարտականութիւնը, եթէ չէ ուզում տխուր հռչակ աւելացնել իր առանց այդ էլ ոչ-փայլուն անուան վրայ:

*
**

Ամառնային սեզոնի հետ սկսուեցին դերասանական ճանապարհորդութիւնները մեր գաւառներում: Սա մի շատ լաւ, օգտակար սովորութիւն է, որ գնալով աւելի և աւելի հաստատ հիմքեր է բռնում: Հայ դերասանը հասկանում է թէ ինչ կըրթական առաւելութիւն ունի կատարելու մեր ժողովրդի մէջ, որ այնքան զրկուած է, այնքան աննպաստ հանգամանքների

մէջ է ապրում մեր գաւառական խուլ, յետամնաց անկիւններում:

Այս տարի Բագուի գերասանական խումբը երկար ճանապարհորդութիւններ կատարեց. բաժանուած երկու մասերի, նա եղաւ Նոր-Նախիջևանում, Արմաւիրում, Բաթումում, Աստրախանում, Երևանում, այժմ էլ ներկայացումներ տալիս է Շուշում: Ամեն տեղ, բնականաբար, նա զարթեցնում է հետաքրքրութիւն դէպի մայրենի բնւոյ, տալիս է գեղարուեստական ճաշակ: Սա մի ծառայութիւն է, որի արժէքը ուրանալ չէ կարելի. և երբ մենք տեսնում ենք, որ այդ գերասանները հասնում են նոյն իսկ այնպիսի խուլ անկիւններ, ինչպէս են Իդդիբն ու Կալուսանը, ուր տալիս են ներկայացումներ, մենք միայն ուրախանալ կարող ենք: Այն կարճ ժամանակամիջոցները, երբ գաւառական բնւոյի վրայ երևում են մեր գերասանները, կարելի է համարել տօներ:

Ցանկալի էր, որ մեր գերասանների մէջ աւելի լաւ կազմակերպուէր գաւառական բնւոյին ծառայելու գործը: Մենք կարծում ենք, որ մինչև այժմ գերասանական ճանապարհորդութիւնները կրել են պատահական բնուորութիւն, առանց նախապատրաստութեան, առանց գաւառի կեանքին և հանգամանքներին յարմարեցրած ծրագրի: Պէտք է աշխատել, որ գաւառական փոքր ի շատէ նշանաւոր կենտրոնները հերթով տեսնեն կանոնաւոր խմբեր, որոշ բէպերտուարով. պէտք է մասնաւոր դարկ տալ ժողովրդական ներկայացումներին, որոնք, ինչպէս շատ փորձեր ցոյց են տուել, մեծ աջողութիւն կարող են ունենալ, եթէ գերասանները լաւ պատրաստուեն, նուիրուեն գաղափարին:

Չենք կարող չը յիշատակել այստեղ և գաւառներում տարածուող երգեցողութիւնը: Այս ասպարէզում գործող մինչև այժմ մի հատ եռանդոտ ձեռնարկող է երևան եկել մեզանում— պ. Կարա-Մուրզան: Նա տարածել է հայկական երգերը, որքան կարողացել է՝ ժողովրդականացրել է հասկացողութիւն ներդաշնակութեան, կանոնաւոր երգեցողութեան մասին: Դա էլ մեծ ծառայութիւն է: Եւ այդ պատճառով պ. Կարա-Մուրզան մեր գաւառներում միշտ ցանկալի հիւր է եղել: Այս ամառ նա կօնցէրաներ տունեց Շուշում և Շամախում ու արժանացաւ համակրանքի, շնորհակալութիւնների: Բարի գործը մեղանում անհետ չէ կորչում...

*
* *

Անկարելի է ամառնային ամիսների տեսութիւնն անել, չը

յիշատակելով մի խրոնիկական չարիք, որ գաւառական կեանքի մեծ ցաւերից մէկն է կազմում և որի գէմ կռուելն էլ ահադին ջանքեր է պահանջում: Դա աւագակութիւնն է:

Կովկասեան աւագակութիւնների մասին շատ վաղուց են խօսում, վիճում. շատերը փորձեցին հասկանալ այդ երեւոյթի իսկական պատճառները, առաջարկեցին զանազան միջոցներ նրան արմատախիլ անելու համար: Մենք այստեղ չենք մտնի այդ դատողութիւնների, վէճերի մէջ: Չարիքը շարունակւում է. ահա ինչ պատկեր է տալիս «НОВОЕ ОБОЗР.» լրագրի թղթակիցը Սանահնից:

Հինգ հոգուց բաղկացած մի աւագակային խումբ է երեւան գալիս Սանահին գիւղի շրջակայքում. խմբի գլխաւորն է հռչակուած աւագակ Աստան-աղան, իսկ նրա օգնականն է ոչ պակաս յայտնի Համիդ փամբակեցին. ֆնայածնեցի երկուսը — Սուլէյման և Մահմադ, քաջ երիտասարդներ են, իսկ հինգերորդը զինուած չէ և կատարում է զինակրի և ծառայի պաշտօն:

Լուր առնելով աւագակախմբի երեալու մասին, Սանահին գիւղում կազմւում է մի փոքրիկ խումբ լաւ հրաքան արծաւոկող, քաջասիրտ զիւղացիներից և գնում է աւագակների ճանապարհը կտրելու: Բայց զիւղացիները զինուած են հին, գայլախազի ժանգոտած հրաքաններով, մինչդեռ աւագակները ունեն վերջին տեսակի արագաձիգ հրաքաններ: Չը նայած զէնքերի անհաւասարութեան, սանահնեցիները կրակ են սկսում աւագակների դէմ. նրանք անպատճառ ձեռք կը գցէին աւաւակներին, եթէ սրանք չը գտնէին Յարութիւն Մուրադեան անունով մի զիւղացու, որ անտառի ծայրում խոտ էր հնձում: Վերցնելով նրան գերի, աւագակները ստիպում են, որ նա ուղեցոյց դառնայ, միևնոյն ժամանակ սպառնում են հալածող զիւղացիներին, որ իրանք կը սպանեն Մուրադեանին, եթէ զիւղացիները չը դադարեցնեն հրաքանաձգութիւնը: Եւ հալածողները գերի վերցրած զիւղացուն վտանգի չենթարկելու համար, ստիպուած են լինում այդպէս էլ անել:

Վրայ է հասնում տեղային ոստիկանական մասի կառավարիչ Պապեանց և սկսում է եռանդուն միջոցներ գործ դնել աւագակախումբը ոչնչացնելու համար. բայց նա ձեռքի տակ ունի միայն երեք ձիաւոր ոստիկաններ և ստիպուած է դարձեալ զիւղացիների օգնութեան դիմել. կազմում է մի քանի խմբեր, ուղարկում է այս ու այն կողմեր: Վարնակ գիւղի բնակիչներից կազմուած խումբը լուսաբային շրջապատում է աւագակներին և կատաղի հրաքանաձգութիւնից յետոյ խլում է աւագակների ևօթը ձիերը: Աւագակները ջրում են, դարձեալ նը-

րանք վտանգի մէջ են, հալածողների ձեռքը պիտի ընկնեն, բայց այստեղ էլ նրանց օգնում է այն հանգամանքը, որ գիւղացիները լաւ զէնքեր չունեն. նրանց վառօդն ու գնդակները սպառւում են, իսկ աւազակները օգուտ են քաղում այդ հանգամանքից, բեռնում են իրանց խուրջիները գերի վերցրած Յարութիւնի վրայ ու ոտով հեռանում են այդտեղից:

Այդ և հետեւեալ օրը Սանահնի և Վարնայի քաջ հայ գիւղացիները մի քանի անգամ էլ հանդիպում են աւազակախմբին, հրացանածղուծիւն են սկսում, բայց ամեն անգամ աւազակներին ազատում էր այն, որ գիւղացիների վառօդը չուտ հատնում էր: Պ. Պապեանց այս ու այն կողմ է ընկնում, ամեն հնար եղած միջոցները գործ է դնում, բայց չէ կարողանում ոչնչացնել աւազակախումբը: Օձուն գիւղի մօտ նա դարձեալ փորձում է կտրել աւազակների ճանապարհը, բայց դարձեալ անաջող. ամբողջ գիւղում միայն երեք հատ ժանկոտած հրացաններ կային և չը գտնուէր մի հատ կտրիճ մարդ: Աւազակները սպանեցին պատահած մի հայի և հեռացան այդ տեղերից:

Գերի վերցրած Յարութիւն Մուրադեանը գործ դրեց խորամանկութիւն և այդպիսով աղատեց իր կեանքը: Նա զիտմամբ վայր ընկաւ մի ժայռից և այնպէս ձևացրեց թէ մեռել է. աւազակները թողին նրան ու հեռացան: Վերադառնալով տուն, Մուրադեանը պատմեց, որ աւազակները հիացած էին սանահնեցիների և վարնակեցիների քաջութեան վրայ և խօսք տուին այլ եւ չը վերադառնալ այս կողմերը:

Ներկայ գէպքը շատ լաւ ցոյց է տալիս, թէ տեղական խաղաղ ազգաբնակչութիւնը որպիսի մեծ աջողութեամբ կարող կը լինէր կռուել աւազակների դէմ, եթէ ունենար զէնք: Վերջին ժամանակներում Սանահնի և Վարնակի մէջ կարելի էր զրտնել մի քանի բերդան հրացաններ, բայց ոստիկանութիւնը խելց այդ կատարելագործուած զէնքերը:

Բայց այսպիսի խոշոր աւազակութիւններից, որոնք, ինչպէս տեսնում էք, կատարեալ ճակատամարտներ են առաջացնում այս ու այն կողմերում, շատ զարգացած են և մանր գողութիւնները: Գիւղացու անասուններն ու ապրանքը պաշտպանելը շատ դժուարացել է, որովհետեւ մանր գողերը բազմացել են ամեն տեղ:

*
* *

Կ. Պօլսում ժանտախտ է երևացել: Սոսկալի հիւանդութիւնը մօտ է մեր սահմաններին: Արդէն թիֆլիսում կարգադրութիւն է արուած մաքուր պահել տներն ու բակերը: Ի՞նչ են

անում մեր գաւառները Պէտք է պատրաստուել անողոր թշնամու դէմ դուրս գալու համար։ Աստուած տայ, որ սարսափելի հիւրը երբէք չը մտնէ մեր սահմանները, բայց երբ վտանգը մօտ է, երբ հաւանականութիւն կայ, թէ կարող է ժանտախտը մեզ էլ այցելել, չէ կարելի անտարբեր ու անհոգ մնալ։ Թող աւելորդ լինեն մեր պատրաստութիւնները, բայց հաղար անգամ լաւ է աւելորդ պատրաստութիւններ աւսած լինել, քան թէ յանկարծակի դալ, ոչինչ չունենալ տանը այն միջոցին, երբ ներս է մտնում անողոր թշնամին։

Ա.

Բամբակագործութիւնը Երեւանեան նահանգում

Երեւանեան նահանգի արդիւնաբերութեան ամենաշահաւէտ ճիւղը համարւում է բամբակի մշակութիւնը, որը թէ արդիւնքի ու արժողութեան տեսակէտից և թէ արտահանութեան նշկատմամբ ներկայացնում է այնպիսի շահ և դիւրութիւն, որ բնականաբար պիտի յետ մղէր դիւղատնտեսական միւս բերքերը, եթէ մի երկու աննպաստ պայմաններ չը դժուարացնէին բամբակի մշակութեան գործը։

Երեւանեան նահանգի դաշտային մասերում, շնորհիւ կլիմայական նպաստող պայմանների, մշակւում են դիւղատնտեսական չորս գլխաւոր ճիւղեր. ցորեն, բրինձ, բամբակ և խաղող։ Միւս ճիւղերը. ծառապտուղներ, ծխախոտ, ձիթապտուղներ, շերամ, բանջարանոցի բերքեր և այլն զարգացած են շատ թոյլ չափով, բացառութիւն կազմում են Ագուլիսի և Մեղրիի շրջանները, այն էլ մասնաւորապէս շերամի նկատմամբ։

Վերև յիշած չորս ճիւղերից բրինձի մշակութիւնը պայմանաւորուած է մի շատ ծանր խնդրի հետ, որի պատճառով էլ, չը նայած իր շահաւէտութեան, համեմատաբար միւս բերքերից քիչ է տարածուած. ցորենի մշակութիւնը շահաւէտ չէ, նա չի արտահանւում և բերքը քիչ է. բամբակն ու խաղողը իսկապէս թէ կլիմայական պայմանների և թէ շահի տեսակէտից պիտի մրցէին միմեանց հետ, եթէ արտահանութեան նոյնաման պայմանների մէջ գտնուէին. բայց այդ պայմանները տարբեր են և ահա տեսնում ենք 1890 թուականի Երեւանեան նահանգում մինչդեռ խաղողի այգիները բռնել են 3,600 գեոսետին տարածութիւն, բամբակի ցանքերը հաշուած են եղել 26,065 գեոսետին։ Այսպիսի տարբերութիւնները անկասկած է, որ ունեն իրանց յայտնի պատճառները։ Եւ մենք կ'ուզէինք այդ պատճառների մասին մի քանի խօսք ասել։

Իւրաքանչիւր խալիվար տեղը, որը հաւատար է 2 դեպե-տինից մի փոքր աւելի տարածութեան, միջին բերք ունեցող տարին տալիս է ցորեն 180 պուդ, բամբակ 32 պուդ (մաքրածը), խաղող 600 պուդ, իսկ չալթուկ կամ չը մաքրած բրինձ 450 պուդ: Յորենի պուդը միջակ դնահատութեամբ արժէ 50 կոպ., բամբակը 7 ա. 50 կոպ., խաղողը 40 կոպ. և չալթուկը 70 կ.: Վերածելով դրամի կը տեսնենք, որ մի խալիվար տեղից ստացուած ցորենը արժէ $180 \times 50 = 90$ ուռլի, բամբակը 32×7 ա. $50 = 240$ ա., խաղողը $600 \times 40 = 240$ ա. և չալթուկը $450 \times 70 = 315$ ուռլի: Ինչպէս տեսնում ենք, նոյն տարածութեան տեղից ստացուած բերքերի արժէքների մէջ կան մեծ տարբերութիւններ: Այսպէս մինչդեռ ցորենը արժէ ընդամենը 90 ա., բամբակն ու խաղողը 240 ա., յանկարծ չալթուկը արժէ 315 ա., ուրեմն ինչո՞ւ չը ցանել չալթուկ կամ նոյն իսկ չը մշակել բամբակ ու խաղող, այլ ահազին տարածութիւններ յատկացնել ցորենի, մինչդեռ նրա արժէքը շատ քիչ է միւսների համեմատութեամբ:

Ամենամեծ արժէք ունեցող չալթուկը պահանջում է ջրի ամենամեծ քանակութիւն, մի բան, որի կարիքը առանց այն էլ մեր նահանգում շատ մեծ է. չալթուկը սերմանելու օրից մինչև քաղելու օրերը պիտի ծածկուած լինեն ջրով, այլ խօսքով նրա խոր ածուները միջով մի կողմից ջուրը առատութեամբ պիտի թափուի միւս կողմից դուրս գնայ, այլապէս նա կը չորանայ, կը թափուի: Ուրեմն չալթուկ ցանելու համար անհրաժեշտ է մշտական և առատ ջուր, որից զուրկ են մեր նահանգի շատ տեղերը, և այս է պատճառը, որ չալթուկը համեմատաբար քիչ է ցանւում. և եթէ ցանւում է, այն էլ գետաբերաններում, առուների սկզբներում և Ղարաաու կոչուած աղբիւրների շուրջը: Չալթուկի մշակութեամբ յայտնի է Շարուրը, Նախիջևանի մի երկու տեղեր, Էջմիածնի դաւառում Ձէյվա գիւղը և Երևանի դաւառում՝ Աղլաշ գիւղը, որովհետև յիշեալ տեղերը ջրով առատ են:

Չալթուկից յետոյ բամբակի ցանքերը և խաղողի այգիները պահանջում են աւելի, այն է տարէն 5, 6, 8, նոյն իսկ 10 անգամ ջուր, նայած կլիմային և հողի յատկութեան: Ի հարկէ կան բացառութիւններ. օրինակ կան այգիներ, որոնք շատ քիչ ջուր են պահանջում: Իսկ ցորենը ամենից քիչ ջրի կարիք ունեցող բոյն է և այս է ամենագլխաւոր պատճառը, որ չը նայած իր արժէքի փոքր չափին, մեր նահանգի գաղտային այն մասերում, որտեղ ջուրը քիչ է, բաւական ցորեն է մշակւում: Եւ ինչ անի գիւղացին, եթէ այգի գցի կամ բամբակ ցանի ջրից սակաւ տեղերում և եթէ տարին էլ չորային անցնի, կը կորցնի

ամբողջ աշխատանքը, մինչդեռ ցորենն ցանկելով որոշ չափով ապահովուած է: Պէտք է ի նկատի ունեցած և այն հանգամանքը, որ ցորենը դաշտային մասերում սերմանում է աշնան և հրնձում է յուլիսին, այն է մինչև ամենախիստ շոքերը, մինչդեռ չալթուկն ու բամբակը ցանում են գարնան վերջին ամիսներին և հասնում սեպտեմբեր-հոկտեմբերին:

Ուրեմն դաշտային մասերում մշակուող չորս գլխաւոր բերքերից երկուսը—չալթուկը և ցորենը, ընդունելով որպէս բացառիկ պայմանների մէջ աճող բոյսեր՝ մէկը ջրի անսահման, իսկ միւսը աննշան պահանջներով, մնում են երկու ճիւղեր. բամբակ և խաղող, որոնք իրանց բնութիւնով համապատասխանում են մեր նահանգի չափաւոր ջուր ունեցող դաշտային մասերին:

Նոյն պայմանները սիրող և նոյն արժէքը ունեցող բերքերից բամբակը խաղողից 10—15 անգամ մեծ տարածութիւն է է բուսում, ինչպէս տեսանք: Ահա ինչու:

Խաղողը չի արտահանւում, այլ մեծ մասամբ սպառւում է տեղն ու տեղը: Թուրք ժողովուրդը խմիչքներ չէ պատրաստում, նոյն իսկ չէ ծախում խմիչքներ պատրաստողին իր բերքը, այլ նրա այգու խաղողը ծախւում է միմիայն ուտելու համար. հայերը թէպէտ պատրաստում են գինի և օղի քաշում, բայց գինեգործութիւնը կատարւում է նահապետական ձևով, ստացւում է վատ գինի և շատ աննշան մասը միայն ուղարկւում է Թիֆլիս, իսկ օղեղործութիւնն էլ չէ զարդանում չնորհիւ ակօցիղային ծանր հարկերի: Այդ բոլորի վրայ աւելացրէք կանոնաւոր ճանապարհների և հեղուկներ տեղափոխելու յարմարութիւնների բացակայութիւնը, այն ժամանակ հասկանալի կը լինի այն անփոյթ վերաբերմունքը դէպի խաղողի այգիները, որ նկատւում է մեր ժողովրդի—մանաւանդ թուրք ժողովրդի մէջ: Եւ իսկպէս մեր գիւղացի ժողովուրդը հոգ չը տանելով խաղողի յատկութեան վրայ, ոյժ է տալիս քանակութիւնը աւելացնելուն, շուտ-շուտ փորելով և ջրելով այգին, որով ստացւում են հատիկները մեծ, բայց լաւ գինիներ պատրաստելու համար անպէտք և ջրալի խաղող. դրանով այգետէրը նպատակ է այգիների անժամանակ ուժասպառ լինելուն և ծերանալուն:

Բամբակն է միակ գիւղատնտեսական ճիւղը, որին սրտով կպած մշակում է մեր ժողովուրդը: Ինչու, սրովհետեւ բամբակը արտահանւում է, նրա վերջին թելը դրամի է փոխւում: Ռուսաստանում բամբակի պահանջ կայ:

Ահա այն գլխաւոր պատճառը, որ այդքան մեծ տարա-

ծութիւնն են բռնում բամբակի ցանքերը: Սակայն մի կողմ թողած այն տարածութիւնը, որոնք մասամբ ջրի սակաւութեամբ և մասամբ էլ վերջին տարիների հացահատիկների անբերրութեան պատճառով անհրաժեշտօրէն պարապեցրած են ցորենի ցանքերով, մնացեալ ամբողջ տարածութիւնը բռնուած կը լինէր բացառապէս բամբակի ցանքերով, եթէ մեծ չափեր չընդունէր չոռ կոչուած հիւանդութիւնը:

Մեր նահանգում մշակուած է երկու տեսակ բամբակ, ամերիկական սերմի և տեղական կամ «ղարաղօղա»: Ամերիկականը ունի մեծ առաւելութիւններ զարաղօղայի համեմատութեամբ. բերքը աւելի է 10 նոյն իսկ 150/0, թելի յատկութիւնը իր նրբութեամբ և երկարութեամբ անհամեմատ բարձր է և գինը աւել արժէ զարաղօղայից պուդին 1 ռ. 50 կ. իսկ քաղը հեշտ: Այն է մինչդեռ զարաղօղայի կօկօնները պէտք է քաղել և փռել արեգակի տակ՝ բացուեն, որ նոր բամբակը կարելի լինի դուրս քաշել. ամերիկականը բացուած է հէնց կօկօնի վրայ և դիւրութեամբ հաւաքուած: Ահա այս էր պատճառը, որ վերջին 15 տարիներում ամերիկական տեսակի բամբակը արագ կերպով տարածուելով յետ քշեց զարաղօղան, մասնաւորապէս բանին նպաստեց 1888—1900 թ. մի քանի բամբակ գնող ֆիրմաների բերած և ժողովրդին բաժանած ամերիկական սերմը:

Ամերիկական տեսակի ծաղկման հետ գոյութիւն է առնում «չոռ» կոչուած հիւանդութիւնը, որ տեղական բնաւորութիւն կրելով հանդերձ տարածուած է բացառապէս ամերիկականի վրայ, իսկ զարաղօղան ազատ է մնում այս հիւանդութիւնից: Հիւանդութիւնը սկսւում է բոյսի ծաղկման շրջանում. սովորական աչքով անտեսանելի միջատներ տարածուելով բոյսի տերևների վրայ հիւթը ծծում, տերևները դեղնացնում ու չորացնում են, զրանից յետոյ կօկօն չէ կազմուած, իսկ կազմուածը լինում է թոյլ և նուազ, այնպէս որ «չոռով» հիւանդացած բամբակի ցանքը յաճախ կորցնում է 40—50 նոյն իսկ աւելի տոկոսը. հասկանալի է թէ ինչ մեծ չարիք է չոռ կոչուած հիւանդութիւնը բամբակի մշակութեան համար:

Այդ հիւանդութիւնը աւելի զարգանում է չորային տարիներում և գիտութեան մէջ դեռ ևս անյայտ է նաև նրա բերքչկելու միջոցը: Միայն վերջին տարիներում մասնագէտների ձեռքով ուսումնասիրուած է այդ հիւանդութիւնը՝ ունենալով դործնական հետեանքներ:

1897—98 թ. Երևանում հիմնուել է փորձնական ագարակ հսկողութեամբ ալրօնօմ Կանդուբալեանի, որ ունի մի քանի օգնականներ նահանգի զանազան կողմերում: Ուշագրութեան

առնելով այդ աւերիչ հիւանդութիւնը, պ. Կանդուրաւեան իր օգնականների միջոցով բժշկութեան փորձեր արեց զանազան տեղերում և զանազան միջոցներով և հասաւ լաւ հետեանքի։ Բժշկութեան այն սրստեմը, որ գործադրուում է խաղողի վազերը օրդիւմից ծծումբով բժշկելու վերաբերմամբ, այն է փութսով ծծմբափոշիի սկսկումը հիւանդ բոյսերի վրայ՝ միանգամայն օգտակար գտնուեց նաև բամբակը չոփից բժշկելու վերաբերմամբ և փորձը ցոյց տուեց, որ մի քանի անգամ ծծումբ սրսկելով ոչ միայն հիւանդութիւնը անհետանում է, այլ և ազդում է բամբակի բերքի քանակութեան վրայ, այսպէս 100 քառ. սաժէն տեղից ծծմբով սրսկած բամբակը երկու երկու քաղեկի տուեց 50 ֆունտ կորիզով բամբակ, մինչդեռ ծծումբ չը սրսկած տեղը տուեց միայն 30 ֆունտ։ Փորձով այսպիսի հետեանքի հասնելուց յետոյ պէտք էր ունենալ զաւանդուած փորձերը շարունակող պաշտօնեաներ և պէտք էր ժողովրդին ծծումբ մատակարարել, որպէսզի ժողովուրդը ժամանակի ընթացքում անձամբ տեսնելով և հնաւորութիւն ունենալով ինքն էլ հետեւէր բժշկելու այդ սրստեմին, մինչդեռ անցեալ տարուանից այստեղի ագարակի կազմը դեռ փոքրացաւ։

Այդ հիւանդութեան պատճառով վերջին տարիներում զարաղօզա տեղական բամբակը, որ շատ քիչ էր մշակուում, նորից սկսեց մշակութեան մէջ մտնել շնորհիւ այն համագամների, որ նա կնթակայ չէ չոփին, չը նայած այն պակասութիւններին, որոնց մենք առաջ բերեցինք։ Այնպէս որ այս տարի մեծ քանակութեամբ զարաղօզա ստացուեց։

Բացի այդ երկար տարիներ հետեւելով բամբակի մշակութեան և արդիւնաբերութեան խնդիրներին, մենք նկատեցինք, որ բամբակի մշակութիւնը այլ եւ չէ ընդարձակուում։ Այսպէս, օրինակ, 1800 թ. մեր նահանգը արդիւնաբերել է 506,380 պուդ բամբակ *), իսկ մեր հաւաքած տեղեկութիւններով **) 1898 թուին եղել է 430,000 պուդ. իսկ 1899 թ. 320,000 պուդ. եւ թէ ի նկատի առնենք, որ 1890 թիւը եղել է միջակից լաւ տարի, 1898-ը միջակ, իսկ 1899-թիւը վատ, պէտք է ընդունել որ այժմ էլ արդիւնաբերած բամբակի քանակութիւնը նոյն է, ինչ որ 10 տարի առաջ։ Ահա այս հանգամանքը նոյնպէս մենք կարծում ենք որ պիտի վերադրել չոս հիւանդութեան հասցրած

*) Ցիւս Памятная книжка Эриванской губ. на 1892 г.

**) Բամբակը ամբողջապէս կապում ճանապարհում է Երևանից, որը և տալիս է մեզ հնարաւորութիւն հաւաքելու տեղեկութիւնները ճշտօրէն։

մեաներին: Եւ որովհետեւ այժմ բամբակը իր արտահանութեամբ կաղմում է մեր նահանգի հարստութեան ամենամեծ աղբիւրը, ուստի Կովկասի Գիւղատնտեսական Ընկերութիւնը առանձին խնամք և լուրջ ուշադրութիւն պիտի դարձնի այդ խնդրի վրայ:

Բամբակի արտահանութիւնը հասնում է երկու-երեք միլիօնի, մանաւանդ գների թանգ տարիներում, իսկ այս անցեալ տարի մի բացառիկ դարի էր բամբակի գների բարձրութեան կողմից: Ամերիկական տեսակի բամբակը սովորաբար ծախուում է 7—50-ից մինչև 8, 8 ու. 50 կոպ. մինչդեռ այս տարի բարձրացաւ մի չը լսուած գնի, այն է 11 ու. պուդը, բայց յոշնուարից յետոյ գինը միանգամից կտրուեց և մինչև այժմ էլ 9 ուրուլուց չի բարձրանում: Գների այսպիսի փոփոխութիւնը շատ դանդաղացրեց բամբակի արտահանութեան գործը. մինչև այժմ մնում է չը ծախուած բաւականին քանակութեամբ բամբակ, շատերը բամբակ դնողներից դադարեցրել էին առնել, օրինակ 8—9000 հակ բամբակ դնող Պոզնանսկին այս տարի դնեց միմիայն 850 հակ:

Ի նկատի ունենալով տարին, բամբակի բերքը պիտի հաշուել մօտ 400,000 պուդ, մինչդեռ մինչև այժմ արտահանուած բամբակը շատ քիչ է դեռ ևս: Այս տարի վաճառականները գնել են բամբակ 19, 550 հակ: Հակը հաշուելով $12\frac{1}{2}$ պուդ, ուրեմն մինչև այժմ արտահանուել է 244,375 պուդ: Հետևապէս մնում է դեռ ևս մեծ քանակութեամբ չը ծախուած բամբակ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բիսմարկի արձանի բացումը Բերլինում.—Անձնաւորութեան դերը պատմութեան մէջ.—Գերմանիայի միութիւնը.—«Երկաթի և արեան» քաղաքականութիւն.—Բիսմարկի ներքին քաղաքականութիւնը.—Բանկային կրթութիւնը.—Հիմնարկամտութիւն կամ գրինդերութիւն:

Բերլինում մեծ հանգէտով յունիսի 16-ին բացուեց Բիսմարկի գոռոզ և վիթխարի արձանը, որի վրայ գրուած է. «Առաջին կանցլէրին—գերմանական ազգը»:

Բիսմարկի մէջ մենք տեսնում ենք անձի, անհատի կատարած գերը պատմութեան և առհասարակ մարդկային հասարակութիւնների զարգացման մէջ: Անկասկած Բիսմարկը ինքը չը ստեղծեց այն պայմանները, որոնցից նա տաղանդ ունեցաւ աջող կերպով օգտուել՝ պատմականապէս հասունացած որոշ ծրագիրներ իրագործելու համար. սակայն նրա անհատական յատկութիւններից, նրա մտաւոր և հոգեկան կարողութիւնից էր կախուած այս կամ այն քայլը սնել, այս կամ այն կօմբինացիան կամ գործունէութեան ամբողջ ծրագիր ստեղծելը:

Քաղաքականութեան մէջ նա շահը, դրական գործը միշտ գերազատում էր «վերացական» բարոյականութիւնից: Մտքի կոբոլի հետ նա միացնում էր վազրի խտտասրտութիւն: Իր դրած նորատակին հասնելու համար ամեն միջոց լաւ էր համարում, միայն թէ այդ միջոցները նրան հասցնէին կէտ նպատակին, միայն թէ իրականանար նրա Գերմանական Կայսրութիւն ստեղծելու տենչը: Գերմանիայի միութիւնը՝ գերմանացի բանաստեղծների և մտածողների ցնորքն էր, ժողովրդի անսրոշ ցանկութիւնը, և Բիսմարկը այն անձնաւորութիւնն էր, որ կարողացաւ իրականացնել այդ ազգային զաղափարները, սակայն ոչ «դեղեցիկ ճառերով, այլ երկաթով և արիւնով»:

«Երկաթի» կանցլէրը ունէր տաղանդ ըմբռնելու իր ժամանակուայ քաղաքական երևոյթների բնական ընթացքը, նա հանձարեղ կերպով կարողացաւ օգտուել հանգամանքներից և որոշ

ուղղութիւն տալ այն նաւին, որի ղեկավարութիւնը ճակատագիրը նրա ձեռքն էր յանձնել: Բիսմարկը նմանում էր մի հանճարեղ շահ-մատիստի: Արտաքին և ներքին քաղաքական հանգամանքները մի շահմատային տախտակ էր, օտար պետութիւնները և Գերմանական Դաշնակցութեան անդամ-իշխանութիւնները—հակառակորդի շահմատային ֆիգուրներ (քարեր) էին, իսկ Պրուսիան իր ղինուորական զօրութեամբ նրա սեփական քարերն էին: Եւ ահա քայլ առ քայլ նա դիպլոմատիկական խաղեր էր անում որոշ ծրագրով, մինչև որ յաղթեց հակառակորդներին և Գերմանիայի քաղաքական միութիւնը իրագործեց: Գուժ, մարդասիրութիւն և արդարութիւնը միայն նրա կոշտ արհամարհանքին էին արժանանում: Թող Գերմանիան լինի հզօր, անկախ, թէկուզ դրա համար հարկաւոր լինի ոչընչացնել, ջնջել աշխարհի երեսից բոլոր մանր-մունր ազգութիւնները, թէկուզ դրա համար հարկաւոր լինի ջարթել անմեղ Դանիային, թափել արիւնակից Աւստրիայի արիւնը, զոհել Լեհաստանը՝ շահելու համար Ռուսաստանի բարեկամութիւնը, թէկուզ դրա համար հարկաւոր լինէր խորամանկութեամբ նախ հիպնոզի ենթարկել, քնացնել Ֆրանսիան, և ապա յարմար վայրկեանում յարձակուել նրա վրայ և գետին տապալել: Այդ է նրա բռնած ընթացքը արտաքին քաղաքականութեան մէջ: Իսկ ներքին կեանքում նա միշտ յետադիմական կուսակցութեան կողմն է եղել, սակայն դարձեալ իմացել է ժամանակին այս կամ այն գիջումները տնել, եթէ այդ անհրաժեշտ է եղել միապետական սկզբունքը աւելի ամրացնելու համար: Ներքին կեանքի մէջ ևս նա չը գիտէր «սանտիմենտալ» գաղափարներ: Ճիշտ է, նա մօտեցաւ գերմանական ազգային-սօցիալիստ Լասսալի հետ և տուաւ Գերմանիային ընդհանուր ընտրողական սկզբունք, մտցրեց չորրորդ դասակարգի (բանուորների) ղրութիւնը նիւթապէս բարւոքող մի քանի օրէնքներ, բայց այդ պետական կոչուած սօցիալիզմը նրան հարկաւոր էր՝ միապետութիւնը աւելի ժողովրդական դարձնելու համար: Նա չէր կարծում, որ չորրորդ դասակարգի ձգտումների մէջ կան նաև քաղաքական նպատակներ. իսկ երբ եօթանասնական թուականներին նա համոզուեց, որ սօցիալ-դէմօկրատները ունեն նաև քաղաքական որոշ պահանջներ—սկսեց հալածել, ճնշել այդ կուսակցութիւնը:

«Երկաթի» կանյիլէրի բոլոր բացասական կողմերը ժամանակը մոռացնել տուեց և գերմանական ազգի ահագին մեծամասնութիւնը իր երախտադարտութիւնը յայտնեց այն մեծ պատմական դերի համար, որ Բիսմարկը կատարեց գերմանա-

կան կայսրութիւնը ստեղծելու գործում: Երբ Գերմանիայի ներքին կեանքից վերացուեցան մանր-մունր իշխանների, հերցոգների և թագաւորների երկպառակութիւնները, քաղաքական միութեան մէջ գերմանացին ստացաւ յագուրդ իր ազգայնական ձգտումներին և իբրեւ անկախ մի ազգ իր ոյժը դարձրեց ներքին հասարակական կարգերի բարւոքման վրայ:

Այդ ներքին կեանքի կարգերը թէև այժմ էլ դեռ չատ հեռու են իդէալական լինելուց, բայց այնու ամենայնիւ նրանք օրինակելի են շատ կողմերով, նոյն իսկ հանրապետական Ֆրանսիայի համար: Միապետական Գերմանիան ահա 20 տարի է, օրինակ, որ մտցրել է աշխատանքի հաշմանդամների ապահովագրութիւնը, բանուորական կենսաթոշակներ և այլն, մինչդեռ հանրապետական Ֆրանսիայում դեռ տաք վիճաբանութեան առարկայ է Վալդէկ-Բուսսօյի առաջարկած օրինագիծը բանուորական կենսաթոշակի վերաբերեալ:

Միւս կողմից ճշտապահ և օրինապահ գերմանացին ևս իր բօրսային, բանկային և ակցիոներական գործերում գտնուում է դեռ այն դրութեան մէջ, որ խարկովի բանկային հերոսները կարող են մխիթարուել, որ միայն իրանք չեն խուզում միամիտ ոչխարներին... Դրէզդէնի և Լէյպցիգի բանկային «կրախը», որ հետեանք էր ակցիոներական կազմակերպութեան ներկայ կարգերին, միայն կարող է դառնալ մի նոր ապացոյց մայիսեան համարում մեր ասածներին (Ներք. Տես.): Կապիտալը ազգութիւն չի ճանաչում. նա ոչ միայն ձգտում է այնտեղ, ուր աւելի շահ կայ, այլ և գործում է նման միջոցներով: Միայն առևտուրը և արդիւնագործութիւնը չէ գոհացնում շուտ հարստանալու տենչով վարակուած բուրժուազիան, այլ նա ձգտում է բօրսային խաղերով, շինծու հիմունքների վրայ դրած նոր գործերով կողոպտել միամիտ մարդկանց: Հիմնարկում են ուռած վերուած ձեռնարկութիւններ, որոչ բանկերի աջակցութեամբ ժողովրդի մէջ տարածում այդ անամէջ ձեռնարկութիւնների ակցիաները, ապա բօրսայում զանազան «եզներ», «արջեր», «նապաստակներ» *) և այլ խժուոյներ առաջացնում են աժիօտաժ և խաղի մէջ գցում միամիտ «ոչխարներին», դրանց բուրդը խուզում ու բաց թողնում: Օրէնքը դեռ չէ միջամտում այդ օր ցերեկով կատարուող աւազակութիւնների մէջ, և մի խումբ՝ իրար հետ ազգականական և այլ շահերով կապուած կապիտալիստներ, իրանց արբանեակներով և պնակալէզներով՝ լաւ աշխատանքներ են անում: Բայց մեր ինտելիգէնտներից շատերը

*) Բօրսային սպեկուլեանտների տեսակները որոշող տերմիններ:

այնքան բնական են համարում այդ երևոյթը, որ մեզ կ'ասեն՝ չէ որ այդ խաղերի, կազմակերպութիւնների համար ևս ժամանակ, աշխատութիւն է գործ դնւում, ուրեմն դրանց ստացած օգուտները աշխատանքի վարձատրութիւն է... Բայց եթէ այդպէս է, ազարտ թղթախաղն էլ, որի նպատակն է դիմացինի գրպանի պարունակութիւնը տեղափոխել սեփական գրպանը— նոյնպէս ազնիւ աշխատանք է, որովհետեւ թուղթ խաղացողները ժամանակ, եռանդ և մտաւոր լարուածութիւն են բանեցնում... Սակայն ազնւութեան մասին առհասարակ դիպլոմատները և սպեկուլեանտները այլ կարծիք ունեն, քան սովորական մահկանայնոնները, իզուր չէր և Բիսմարկը իրան «ազնիւ մակլէր» անուանում: Մեր մակլէրները կատարեալ իրաւունք ունեն իրանց ևս «ազնիւ» համարել...

Լ. Ս.

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Գ Լ Ի Ա Յ Ի Ց

Լօնդօն, 19/2 յուլիսի 1901 թ.:

Համաշխարհային շուկայում Միացեալ-Նահանգների և Գերմանիայի երևան գալը իրանց արդիւնագործութեան յաղթանդամ ծաւալներով, միւս կողմից քայքայիչ պատերազմի անվերջ ձգձգուելը, վերջերս առիթ է տալիս շատերին խօսելու կամ գրելու Անգլիայի տնտեսական և քաղաքական անկման մասին: Այդ բոլորը՝ մինչ այդ անվրդով և ինքնավստահ Ջօն-Բուլին սկսեց անհանգիստ և յոռատեա գարձնել, և նա նոյնպէս սկսեց անխնայ կերպով քննադատել իւր պակասութիւնները և որոնել չարիքի արմատը:

Ո՞րտեղ է թագնուած վերջինս, առայժմ դժուար է ասել. ոմանք գտնում են որ կառավարութիւնը բաւականաչափ չէ հովանաւորում երկրի արդիւնագործութիւնը, ինչպէս միւս մրցակից երկիրներում, ոմանք գտնում են արդի կրթութեան գործը—մասնաւորապէս տեխնիկական կրթութիւնը—միանգամայն հնացած և անհամապատասխան ժամանակիս պահանջներին և վերջապէս ոմանք յուստեաներից, չափազանցութիւնների մէջ ընկնելով, կարծում են որ անգլիացին հասած լինելով իր ցեղական-կուլտուրական զարգացման գագաթնակէտին, այժմ այլ ևս չէ ծաղկում և չէ կարողանում զիմադրել իր մրցակից աւելի երիտաւարդ ազգերին. դարերի ընթացքում արեւն ու քրտինքով զիպած հարստութիւնը նրանք թեք մակարդակի վրայ են գտնում, և յայտարարում Անգլիայի անխուսափելի կորուստը, եթէ չուտափոյթ միջոցներ ձեռք չառնուին, որովհետեւ, առում են նրանք, Անգլիան այժմ ապրում է միայն իւր զիպած կապիտալի հաշուին, որը յաւիտեան չէ կարող տնել: Սակայն բոլորը յարձակում են անգլիացու լնածին պահպանողականութեան և զանգազաշարժութեան վրայ.—մի մեղադրանք, որ օտարներին համար առաջի անգամից տարօրինակ է թւում. սա-

կայն իրողութիւնը այն է, որ անգլիացին աւելի քիչ է աշխատում հասկանալու և յարմարուելու օտար շուկաներում իշխող տեղական բոլոր պանհանջներին—ինչպէս օրինակ—տեղացիների լեզուին, ճաշակին և այլն—քան այդ անում է ամերիկացին կամ գերմանացին. նա սովոր է տեսնել օտարներին իրան յարմարուելիս. իսկ ինքը իւր սովորութիւններից առհասարակ շատ դժուարութեամբ է բաժանւում: Բացի դրանից, անգլիական գործարանները աւելի դանդաղ են կատարում պատուէրները—քան ամերիկական կամ նոյն իսկ գերմանական գործարանները *): —Բայց մի կողմ թողած այդ բոլորը—դեռ հարց է, ճիշտ է որ Անգլիան անկման մէջ է:

Այս տարուայ Contemporary Review-ի մայիս և յունիս համարների մէջ լոյս տեսան երկու յօդուածներ—այդ նշանաւոր և հետաքրքիր հարցի վերաբերեալ—որոնց հետ ծանօթանալ, կարծում ենք, աւելիո՞ղ չէր լինի և հայ ընթերցող հասարակութեան համար: Առաջի յօդուածում «Անգլիայի քաղաքական և տնտեսական անկումը» վերնագրով—(մայիս) հեղինակը, առաջ բերելով մի շարք վիճակագրական թուեր Անգլիայի արդիւնագործութեան համարեալ բոլոր խաւերից (վերջին 30 տարուայ շրջանում), միշտ գալիս է նոյն օրհասական եզրակացութեան. որ Անգլիան գլորւում է դէպի անդունդ: Երկրորդ յօդուածը—(յունիս) առաջինի քննադատութիւնն է: Մի կողմ թողնելով այս բանակոռի մանրամասնութիւնները, առաջ բերենք այդ յօդուածներից միայն մի քանի թուեր, որոնք թերեւ կարելիու թիւն տան ընթերցողին ինքնուրոյն կերպով մի փոքրիկ դադափար կազմելու այդ հարցի մասին:

Հողային արդիւնագործութիւնը.

Վերջին 25 տարուայ ընթացքում (1873—1897). վարելահողերի տարածութիւնը իջել է—տեղի տալով արօտատեղերի աճման. սակայն վերջիններիս աճման—համապատասխան չէ բազմացել անասունների թիւը: Այդպէս.

Վարելահողերը իջել են կամ բացացել.

Միացեալ Թագաւորութեան մէջ . . . 1873—1897 22,80/0
(Անգլիան, Ուէլսը, Շոտլանդիան
և Իրլանդիան

*) Այս տարի Լօնդօնի քաղաքային երկաթուղիների վարչութիւնը ստիպուեց պատուիրել շոգեկառքեր Նմերիկայում, որովհետեւ անգլիացի դործարանները յանձն չառան կատարելու պատուէրը պահանջած ժամանակամիջոցում:

Ֆրանսիայում » » —5,8³/₀
 Գերմանիայում (1887—1897) [+10⁰/₀]

Անասունների թիւը եղել կամ անել է.

	Տաւարը.	Ոչխարը.	Խոզը.	Ընդամենը.
Անդ.	+ 8,5 ⁰ / ₀	—10 ⁰ / ₀	+ 3,3 ⁰ / ₀	+ 1,8 ⁰ / ₀
Ֆր.	+ 15,5 ⁰ / ₀	—17,3 ⁰ / ₀	+ 9 ⁰ / ₀	+ 7,2 ⁰ / ₀
Գեր.	+ 17,2 ⁰ / ₀	—56,5 ⁰ / ₀	+ 100 ⁰ / ₀	+ 69,7 ⁰ / ₀

Գիւղատնտեսական միջերջների մուտքը (խզ, ձու, պանիր, միս—և այլն)—գնալով նոյնպէս աճել է. այսպէս 1888-ից մինչև 1899 միջին թուով մուտք է գործել 50,813,648. ֆ. ստերլինգ. արժողութեան միջերջներ—մինչև 1899 թուին այդ դու-մարը բարձրացել է մինչև 77.632,425 ֆ. ստերլինգի: Սակայն նայենք մեղալի հակառակ երևւոյ.

Ներմուծած ցորենի, ալիւրի եւ ուրիշ

հացահատիկների չափսը եղել է.

Իսկ արժողութիւնը.

1869 թ. 45,205,828 cwt (=մօտ 3 պուղ)	23,308,697 ֆ. ստերլ.
1899 » 98,506,017 »	32,983,691 » »

Աճում. 53,300,189=118⁰/₀ միայն 9,674,994=41,5⁰/₀

Յորենի գինը Անգլիայում 1869-ին եղել է միջին թուով 48 շիլլինգ 2 փենս մի քուօրթէրը (=30 ֆունտ), իսկ 1899-ին եղել է միջին թուով 22¹/₂ շիլլ., որպիսով անգլիական ժողո-վրդի համար խնայուել է մօտ 36,000,000 ֆունտ ստ. (հաշուե-լով տարեկան սպառումը մօտ 32 միլիօն քուօրթէր): 1888-ից մինչև 1898-ը միայն ի նկատի առնելով—երևում է, որ ներմու-ծուած հացահատիկների և այլն չափը աճել է 30⁰/₀-ով—մինչ-դեռ արժողութիւնը միայն 23 ⁰/₀-ով:

Ընդհանրապէս ուսումնասիրութիւններից երևում է. 1) որ թէև Գերմանիայի կամ Միացեալ-Նահանգների առևտուրը դեռ չատցած է Անգլիայի առևտուրի ծաւալից, այնուամենայնիւ նրանք վերջին 20 տարում զգալի կերպով ազդել են վերջինի վրայ—որը այդ ժամանակից այլ ևս այնպէս արագութեամբ չէ աճում —ինչպէս առաջ, ա. ի. մինչև 80-ական թուականները:

2) Որ Անգլիայի առևտուրը, չը նայած դրան՝ անկման մէջ չէ—և դեռ աճում է: Համեմատելով այդ երեք երկիրների մասնաւոր առևտուրը իրար հետ, երևում է և այն—թէ ինչպէս նրանցից մէկի իջնելը կամ բարձրանալը ընդհանրապէս առաջ է բերում և միւսների ընկնելը կամ բարձրանալը—ուրիշ խօս-քերով—երևում է ինչպէս—մի երկրի առևտուրի ծաղկումը կամ

անկումը պատճառում է միւս երկրների առևտուրի ծաղկում կամ անկում—որից փոխադարձաբար, ինքն էլ կախում ունի:

Եթէ թուելը յոյց են տալիս, որ Անգլիա ներմուծում է աւելի, քան Անգլիայից արտահանում է—դժուար է ենթադրել—որ այդ նրա անկման նշանն է. որովհետև ներմուծուող արժողութիւնների մէջ մտնում են և կօծնեանների հանքերից մայր երկիրը բերուած ոսկիները, ազամանդները և այլն և անգլիայիների օտարներին մատուցած ծառայութիւնների վարձքերը (իրանց նաւերով, կամ անձնական ծառայութիւններով), օտար երկիրներում արդիւնադործութեան մէջ չբերած կամ փոխ տուած զրամագլուխների տոկոսները և այլն: Վերջին 7 տարիների ընթացքում—Գերմանիա ներմուծուող արժողութիւնները դերազանցել են արտահանուողներից միջին թուով տարեկան 600 միլիոն ուղլով. սակայն կարելի է ասել—որ Գերմանիան անկման մէջ է եղել այդ ժամանակամիջոցում:

Գալով մասնաւորապէս արտահանուող ապրանքներին—առաջ բերենք երեք մրցակից երկիրների 20 տարուայ արդիւնագործութիւնից մի քանի հետաքրքիր թուեր:

Անգլիան արտահանել է. Գերման. արտահանել է. Միացեալ-Նահ. արտ.
Զբեղեն ապրանք.

1880—75,5 միլ. ֆ. ստ.	5,25 միլ. ֆ. ստ.	2 միլ. ֆ. ստ.
1900—70 » » »	13,25 » » »	5 » » »

Բուրդի ապրանք.

1880—20,5 միլ. ֆ. ստ.	10 միլ. ֆ. ստ.	—
1900—22,0 » » »	13 » » »	—

Կտաւեղեն եւ կանեփի ապրանք.

1880—9,5 միլ. ֆ. ստ.	—	—
1900—9,0 » » »	1	—

Կաւեղեն ապրանք.

1880—3,25 միլ. ֆ. ստ.	5,0 միլ. ֆ. ստ.	1,5 միլ. ֆ. ստ.
1900—4,0 » » »	5,5 » » »	5,5 » » »

Նրկաք եւ պողպատ.

1880—33,25 միլ. ֆ. ստ.	4,75 միլ. ֆ. ստ.	1,75 միլ. ֆ. ստ.
1900—38,5 » » »	18,5 » » »	19,0 » » »

Շոգեմեքենաներ եւ ուրիշ մեքենաներ կամ գործիքներ.

1880— 9,25 միլ. ֆ. ստ.	2,25 միլ. ֆ. ստ.	1,25 միլ. ֆ. ստ.
1900—19,5 » » »	4,25 » » »	7,5 » » »

Ընդհանուր զումար.

1880—151,25 միլ. ֆ. ստ.	27,25 միլ. ֆ. ստ.	6,5 միլ. ֆ. ստ.
1900—163,0 » » »	55,5 » » »	37,0 » » »

Այս աղիւսակից երևում է, որ Միացեալ-Նահանգների կամ Գերմանիայի արտահանութիւնը տեղ-տեղ հսկայական քայլերով է աճում (գլխաւորապէս մեքենաների և առհասարակ երկաթեղէնի արտահանումը)—բայց և այնպէս Անգլիայի արտահանումը ոչ թէ անկման մէջ չէ (բացի չթեղէն և կտաւեղէն ապրանքների մէջ, որոնց անկումը մասամբ պատճառել է Գերմանիայի և Միաց.-Նահ. նոյն ապրանքների արտահանումի ծաղկելը), այլ և ընդհանուր առմամբ դեռ աճում է:

Ն.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բիւրակն, հանդէս ազգային, գիտական, գրական եւ քաղաքական», Կ. Պօլիս, 1901, № 1—20: Կ. Պօլսի հայոց մամուլի մէջ սովորական է տեսնել զարմանալի կերպարանափոխութիւններ. այսօրուայ քաղաքական ամենօրեայ լրագիրը, մէկ էլ տեսաք, վաղը դարձաւ կամ կրօնական, կամ մանկավարժական կամ զուտ գիտական, գրական մի շարաթաթերթ, երկշարաթաթերթ, մինչև իսկ ամսաթերթ: Այս վիճակին է ենթարկուել և «Բիւրակնը»: Մի քանի ժամանակ առաջ դա մի շարաթաթերթ էր, նուիրուած գրել-խաւորապէս ազգագրութեան. իսկ այսօր հայ-բողոքական համայնքի օրգան է դարձել: Այս կողմից նոր «Բիւրակն»-ը հետաքրքրական է. տեսնենք ինչպէս են հանդէս գալիս մեր բողոքական եղբայրակիցները գրական ասպարէզում: Բայց նախ մի քանի խօսք կրօնապէս բաժանուած հայ համայնքների լատով մամուլի մասին:

Մենք կրօնական ազգ ենք, տիրացու ազգ. երկար ժամանակ միմեանց միս ենք կրծել՝ լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական դաւանութիւնների մէջ եղած դաւանութիւնների պատճառով: Այժմ թէև մի քիչ խեղճ ենք եկել թէև ընդունում ենք որ լաւ հայ կաթող է լինել նաև բողոքականը, կաթոլիկը, բայց և այնպէս, հին արիւնը դեռ վաղում է մեր երակներում, ուստի և զանազան դաւանութիւնների կրօնական համայնք-

ները շատ սիրում են առանձնանալ, հարկաւոր դէպքում հին թըշնամութիւնն ու անհամբերողութիւնը ցոյց տալ միմեանց դէմ: Իսկապէս մենք դեռ երգում ենք Պէշիկթաշլեանի «Եղբայր եմք» երգը. իսկապէս այդ զաղափարը դեռ մեզանում մեծ մասամբ մի վերացական ձև է և կեանքի մէջ շատ թոյլ, համարեա աննկատելի գործադրութիւն է գտնում: Վերջնենք հէնց պարբերական մամուլը: Ձեռք խօսում կրօնական մամուլի մասին. բայց երբ մի լրագիր կամ շարաթաթերթ կրում է «ազգային, գիտական, գրական և քաղաքական» վերնագիրը, պէտք էր սպասել որ նրա մէջ հաւասարապէս տեղ պիտի գտնէին թէ՛ լուսաւորչականը, թէ՛ բողոքականը և թէ՛ կաթոլիկը, որովհետև չը կայ բողոքական կամ լուսաւորչական գիտութիւն, չը կայ բողոքական կամ լուսաւորչական ազգութիւն. դրանք ընդհանուր են, դրանք ասպարէշներ են, ուր հանդէս են գալիս ոչ թէ այս կամ այն դաւանութիւնը, այս կամ այն եկեղեցական կազմակերպութիւնը, այլ ամբողջ ազգը, ինչ կրօնական տարրերից էլ կազմուած լինի նա: Բայց մեզանում այդպէս չէ: Մեր իւրաքանչիւր կրօնական համայնք աշխատում է ունենալ իր լատով օրգանը. մեզանում խօսք է լինում հայ-կաթոլիկ գրականութեան մասին (ոչ կրօնական), կարծես դա մի առանձին, անջատուած գրականութիւն է, նոյն ազգին չէ պատ-

կանում և կարծես մի Հ. Ալիշանի, մի Պ. Աղամեանի զրուածքները չեն պատկանում հասարակագէտ թէ՛ լուսաւորչականին և թէ՛ բողոքականին, որքան պատկանում են կաթողիկոսներին: Այս առանձնացումը, այս կղզիացումը մի այնպիսի չէ-զոք, համայնական ասպարէզում, ինչպիսին է գրականութիւնը, մի շատ զօրաւոր փաստ է, որ ցոյց է տալիս թէ որքան մենք դեռ թոյլ ու ողորմելի ազգային գաղափար ունենք: Երևոյթը անհասկանալի կը լինէր, եթէ մենք նկատի չունենայինք, որ այդ բոլորը առաջ է գալիս շատ նեղ, շատ սահմանափակ ըմբռնողութիւնից: Անջատումը մի տխուր, անխուսափելի անհրաժեշտութիւն է. նրան ստեղծողը, զարգացնողը զարձեռլ նոյն հին հանգամանքն է, այն, որ մենք տիրացու ազգ ենք: Վ. Պօլսի լրագիրները աւելի նեղ կրօնական են, քան զրական-հասարակական: Ընդհանուր, առաջադիմական թեմաներ չը կան. դուք տեսնում էք այնտեղ եկեղեցական այս կամ այն տօնի բացատրութիւնը, տեսնում էք որ ամեն ինչ—լուր, յօդուած, դատողութիւն, փաստ, պտոյտ է գալիս կըղերականութեան շուրջը: Թող չը լինի հայ տէրտէրը, վարդապետը կամ եպիսկոպոսը, և Վ. Պօլսի հայ լրագրի մէջ դուք համարեա ոչինչ ազգային, բուն հայկական նիւթ չէք գտնիւ—եւ որովհետեւ չէ կարելի հարկադրել բողոքականին որ նա հետաքրքրուի այնպիսի կրօնական գրուածքներով, որոնք հետաքրքրական են դիցուք լուսաւորչականի համար, ուստի ծագում է անհրաժեշտութիւն որ բողոքականն էլ իր լրագիրն ունենայ, թէև աշխարհիկ լրագիրը, որովհետեւ նա էլ նոյն նեղ ու սահմանափակ հասկացողութիւնների տէր հայն է, նոյն տիրացուն է և ուզում է իմանալ թէ ինչ են գրում իր պատուելի, իր կրօնական

հայեացքների մասին:

Հիմա դառնանք «Բիւրական»-ին: Նրա զլխաւոր ղեկավարն է Բօրեւոր-Վօլէջի պրօֆէսոր Յ. ձէճիգեան. աշխատակիցների թւում էլ պատահում ենք «պրօֆէսոր» անուն կրողների: Բայց ի՞նչ է այս շարաթաթերթը: Ձմիւռնիայում 1839 թուից բողոքականները հրատարակում էին «Շտեմարան պիտանի գիտելեաց» անունով հանդէսը: Վերնագիրը շատ գեղեցիկ կերպով բնորոշում էր թէ ինչ տիպի պարբերական հրատարակութիւն է դա: Մի շտեմարան, որ կարելի էր գտնել այն ամենը, ինչ բողոքական քարոզիչը կարեւոր էր համարում տալ ընթերցողին. մի քիչ աստղաբաշխութիւն, քիչ կենդանաբանութիւն, քիչ բարոյական պատմութիւն, աշխարհագրութիւն. մէկ էլ տեսանք մի զուարճալիք, մի ուռակ, մի աղօթք. մի խօսքով ամեն բանից մի մի կտոր: Այս տեսակ մի շտեմարան էր և Վենետիկի ճագմավէպը իր հրատարակութեան առաջին տարիներում: Այսպիսի մի շտեմարան է և «Բիւրական»-ը: Թերթում էք այդ շարաթերթը: Գտնում էք բնագիտական յօդուածներ, անցած դարերի հումառօտ տեսութիւններ և յանկարծ՝ «Աղօթքի ժամելը», «Մատուցոյ անձնատրութիւնը», կամ ուրիշ կրօնական մտածողութիւններ. մէջէմէջ ձեր ստջև են գալիս մի վէպիկ, մի բարեպաշտական, հոգեշահ պատմութիւն, մի ճառ. Վիկտորիա թագուհու մահուան առիթով, մի ուղերձ՝ հօլլանդական Վիլհելմինա թագուհու ամուսնութեան առիթով և այլ այդպիսի պիտանի և անպիտան դիտելիքներ: Ընդհանուր առմամբ, պրօֆէսորների այդ շարաթաթերթը մի միսիթարական երևոյթ է կազմում. նա միայն ցոյց է տալիս որ հայը նոյն իսկ դիտութեան, զրականութեան ասպարէզում էլ չէ կարող չը լինել աղանդաւոր, եկեղեցական այս կամ այն

գոյն կրող մի անհատ Ընդհանուր հարցերի վերաբերմամբ շարաթաթերթում տիրում է նոյն պոլսական մթնոլորտը: Այսպէս, օրինակ, մի ամերիկացի օրիորդ հարց է բարձրացրել թէ արդեօք «նորավէպ» բառը համապատասխանում է «nouvelle» բառին թէ՞ ոչ: Այս հարցը երկնային մի մանանայ էր Կ. Պօլսի զրական Սահարայի համար. տանի կողմից սկսեցին դատողութիւններ տեղադրել, խնդիրը դուրս եկաւ «Բիրակն»-ի էջերից, գրուեց բոլոր լրագիրների ուղարկութիւնը: Սմիսներ են անցել, ահադին քանակութեամբ յօդաւոճներ են գրուել, բայց հարցը այսօր էլ օրուայ հրատապ հարցն է: Ահա ինչով են զբաղված Կ. Պօլսի գրագէտները...

Մեր հերակացութիւնը «Բիրակն»-ի մասին. նա կարող է շատ լաւ գտնացնել բողոքական հային, ինչպէս, օրինակ, մի «Բիւզանդիոն» գտնացնում է լուսաւորչականին: Բայց միմիայն «հայ» անունով բաւականացողին նա չէ կարող զոհացնել: Ընդհակառակն, տխուր մտածողութիւններ միայն կարող է պատճառել: Առանց աստուածաբանութեան և ոչ մի քայլի Տէ՛ր Աստուած. բայց մենք արդէն քսաներորդ դարումն ենք...

«Вѣстникъ Европы», մայիս, յունիս: Եր ճանապարհորդական նկարագրութիւններով բաւական չափանի անուն վաստակած Եւգենի Մարկով սկսել է տպագրել «Ռուսաց Հայաստան» վերնագրով աշխատութիւնը, որ այս երկու զրբի մէջ դեռ չէ վերջացած: Հեղինակը ճանապարհորդութիւն է կատարել Քիֆլիսից Դիլիշանի վրայով դէպի Երևան, Եջմիածին, Անի և նկարագրում է իր տպաւորութիւնները: Միշտ մի առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում օտար, չը նախապաշարած մարդու աչքերով թիւնը մեր

երկրին: Թէ ինչ կարծիք ունենք մենք ինքներա մեր մասին, թէ ինչ ենք մենք իրիւ ազգ, իրիւ կուլտուրական առաջադիմութեան հետևող մի հասարակութիւն, թէ որքան ենք առաջացել և առհասարակ առաջանում ենք արդեօք,—սրանք հետաքրքրական հարցեր են և այս հարցերի անաշառ լուսարանութիւնը մենք կարող ենք գտնել այն մարդկանց վկայութիւնների մէջ, որոնք գալիս են հեռուից, տեսնում են մեզ, մեր տունը, մեր նիստ ու կացը և հաղորդում են իրանց տպաւորութիւնը: Պ. Մարկով բաւական ուշադիր և բարեխիղճ ուզեոր է. հայերի վերաբերմամբ առանձին, աչքի ընկնող նախապաշարմունք մենք չենք նկատում նրա գրութիւնների մէջ, իսկ սա, վերջին տարիներս ռուսաց մամուլի մի չափանի մասի բռնած թշնամական դիրքի տեսակէտից, մի շատ գնահատելի չափութիւն է: Հետաքրքրութեամբ է կարդացում պ. Մարկովի ճանապարհորդութիւնը. նա գրում է կենդանի լեզուով, չէ ծանրաբեռնուած աւելորդ նկարագրութիւններով. ամփոփ ուղեորական նկարագրութեան մէջ գրում է այն ամենը, ինչ ճանապարհորդի համար հետաքրքրութիւն է ներկայացնում: Տեղ-տեղ պ. Մարկովի նկարագրութիւնները յուսահատական տպարութիւն է թողնում: Այսպէս է, օրինակ, Սևանի լճի ափին գտնուող Զիբուլու հալ գիւղի նկարագրութիւնը: «Տներ չեն, այլ ինչ-որ այրեր վայրենի քարերից, առանց պատուհանների, մի հատիկ դռնով. հող է կտուրը տափակ սապատողի կամ թեք բլրակի նման. անասունները պահում են նոյնպիսի մութ գոմերում, ինչպէս և մարդիկ. աշխատել այնտեղ չէ կարելի, տեսնել մի բան չէ կարելի,—կատարեալ զաղանային որջ անձրևից և ցրտից պաշտպանուելու համար: Այդտեղ էլ, կտուրների վրայ,

կալերն են. անկարգ կոչտերով թափուած են զարին, ցորենը, չոր խոտի խորձերի նման: Խրճթի մօտ ամբարի տարօրինակ բուրդեր, որոնք դրսից ծեփուած են չորացած թրիքով և ցխով, որպէս զի այն գարշահոտ վառելիքը չը փչանայ անձերից և ցրիւ չը գայ տաքից: Այս սև բուրդերը շատ ինքնատիպ և միևնույն ժամանակ շատ վատեցուցիչ տեսք են տալիս այստեղի հայ գիւղերին: Խրճթի մէջ—նոյն ցեխը, ամեն մի յարմարութեան, մարդկային պահանջների նոյն կատարեալ բացակայութիւնը: Վառարանի տեղ-մի ահագին կաւ է սափոր հողի մէջ, (երևի թոնիր), որը լաւ տաքացնում են, չեսոյ տանտիրուհին ճարպիկութեամբ կը ծեփէ նրա տաքացրած պատերը ցորենի խմորով և մի վայրկեանից չեսոյ այդ պատերից պոկում է ահագին, փափուկ, թղթի թերթի պէս բարակ լավաշը, որ Վովկասի բնակիչների համար ոչ միայն հաց է, այլ և ափսէ, և՛ անձեռոցիկ, և՛ փաթաթելու թուղթ: Բնակարանի շուրջը—ոչ մի հատ թուփ, ո՛չ մի հատ ծառ. չը կան բակեր, բանջարանոցներ: Մարդկային անկարողութեան և ստորացման տխուր, ողորմելի տպավորութիւն: Այստեղ հայերը և հայուհիները թուրքերի նման են հագնւում. կանաչ գէմքի և դլխի ներքեի մասը փաթաթում են աղուխներով, իսկ ոմանք ծածկում են նոյն իսկ ամբողջ գէմքը. հագնում են նոյն խայտաբղէտ արխալուղները, գոգնոցները, շալվարները, ունին բազմաթիւ հիւսած ծամեր և նոյնպէս պատառոտուն ու կեղտոտ են, ինչպէս թրքուհիները կամ բօշա կանայք: Ահա ինչ տեսակ իրականութիւն է տիրում մեր նոյն իսկ այնպիսի անկիւններում, որոնց չէ կարելի խալ ու մոռացուած անուանել, որքան գտնւում են բանուկ, մեծ ճանապարհների վրայ: Այս նկա-

րագրութիւնը ցայց է տալիս որ մեր գիւղացին դեռ չէ դուրս եկել կեցութեան այն շրջանից, որ տեսել ու նկարագրել է Քսենոֆօնը մեզանից 2 հազար տարի առաջ: Բայց եօրբ, վերջապէս եօրբ պիտի դուրս գայ...

Պ. Մարկով ուշադրութեամբ է վերաբերում դէպի իր տեսած տեղերի պատմական անցեալը: Նա պատմում է Երևանի, Եջմիածնի, այլ և այլ վանքերի անունների հետ կապուած աւանդութիւնները և պատմական եղելութիւնները: Ձենք կարող չը խոստովանել որ նա բարեխղճութեամբ է ուսումնասիրել այդ բոլորը: Պատմական տեղեկութիւնների մասին մենք կը խօսենք ուրիշ անգամ, երբ վերջանայ ճանապարհորդութեան տպագրութիւնը: Բայց այստեղ չենք կարող մատնացոյց չանել մի օխալ: Համարեա բոլոր ռուս ճանապարհորդները, Սևան վանքի անունը բացատրելու համար, փոխանակ «Սևան», գրում են «Սև վանք»: Պ. Մարկովն էլ այդպէս է անում. բայց դա սխալ է. Սևանը երբեք Սև վանք չէ կոչուել և այդ անունը այդպէս բացատրելը լիշեցնում է մեր հին լեզուադէտներին, որոնք հաւատացնում էին թէ «կատու» բառը կազմուած է «կա ի տուն» բառերից...

«Исторический Вѣстникъ», չունիս: Անցեալ տարուանից Եջմիածնի միաբաններից մէկը, Խաչիկ վարդապետ Դադեան, օկոսեց իր հաշտով պեղումներ կատարել Վաղարշապատի շրջականներում և հողի տակից երևան հանեց մի ամբողջ հին եկեղեցի, «Ձուարթնոց» անունով: Հնագիտական մի նշանաւոր գիւտ է դա. բոլոր հետաքրքրուողները գրեցին այդ մասին, մանաւանդ շատ խօսեցին ռուսաց մամուլի մէջ: Այս ամսագրի մէջ մի ոմն պ. Տկաչեւ Նոյնպէս խօսում է Ձուարթնոց եկեղե-

ցու աւերակների մասին մի փոքրիկ յօդուածում, որի վերնագիրն է «Նոր գտնուած տաճար և Ս. Գրիգորի մասունքները», երբ նկարագրում են մի հնագիտական նշանաւոր չիշատակարան, այդ և՛ հասկանալի է, և՛ բնական: Բայց Զուարթնոց եկեղեցիու վերաբերմամբ նկատուած է և մի բան, որի մասին չենք կարող երկու խօսք չասել: Աւերակները դեռ նոր են բացուել, նրանց դեռ պէտք է ենթարկել մանրամասն ուսումնասիրութեան: Բայց այժմեանից, ձեռաց, առանց երկար ու բարակ որոնելու, արդէն վճիռներ են կալացնում. ասում են թէ այդ եկեղեցին շինուած է հեթանոսական կռատան տեղը, թէ նրա սրահների տակ են պահուել Գրիգոր Լուսաւորչի մասունքները, որոնցից գտնուել են այժմ կողերը, ուսի ոսկորները: Վա՛ն հաստատ, գրական փաստեր՝ այդ բոլորը ապացուցանելու համար: Ոչ, Հիմնում են Աղաթանգեղոսի վրայ, որի հեղինակութիւնը խիստ կասկածների է ենթարկուած, հիմնում են Յովհաննէս կաթողիկոսի պատմադրութեան վրայ, որ գրուած է IX դարում. վկայ են կանչում Մովսէս Վաղականտուացուն, որ VII դարի գրող է: Գրիգոր Լուսաւորչից ժամանակով այդքան հեռու պատմիչների հաղորդած տեղեկութիւնները առնուազն կարելի է ընդունել իբրև աւանդութիւններ, իսկ իւրաքանչիւր աւանդութիւն դեռ պատմութիւն չէ. պէտք է նրան ուսումնասիրել, զտել, ճշմարտութիւն դարձնել և ասպա միայն հաղորդել աշխարհին: Խաչիկ վարդապետը կարող է շատ լաւ պեղումներ կատարել, բայց դարերի մթութեան մէջ կորած հարցերի լուծման մէջ միանգամայն անձեռնհաս լինել: Սակայն նա իւրաքանչիւր իրան դիմողին իբրև հաստատուն փաստեր հաղորդում է իր ենթադրութիւնները, որոնք և տարածուած են մամուլի մի-

ջոցով: Թէ որքան նրան լսողները կարողանում են ճիշտ ըմբռնել պատմական անցքերը, երևում է հէնց նրանից որ պ. Տկաչեվ ասում է թէ Զուարթնոց եկեղեցին շինողը «Հայոց Թագաւոր Ներսէս Երրորդն» էր, մինչդեռ այդպիսի Թագաւոր հայերը երբէք չեն ունեցել: Ուզում ենք ասել, որ գիտեր անելը հեշտ բան չէ. պէտք է վերին աստիճանի զգուշութեամբ և լրջութեամբ վերաբերուել ամեն մի գիտի. տառը չափել, մի կտրել—այս պահանջը մանաւանդ պատմութեան վերաբերմամբ պիտի գործադրել:

—
„Բիւզանդիոնում“ Սեդրակեան եպ.-ի մասին, ի միջի այլոց, տպուած է հետևեալը. «Մայիս 14 թ. Տփլիսիէ մեզ յրկուած յօդուած մը երկարօրէն կը խօսի Աստրախանի Առաջնորդին դէմ: Բայց մենք յրական կամ պատահական օգուտ մը չենք տեսնել, այսպիսի լոկ վիճաբանական գրութեան մը հրատարակումէն, մանաւանդ որ իրողութիւն մը չկալ մէջտեղ, քանի որ կատարուած ընտրութիւնն Ատրպատականում ոչնչացեր է ընտրելոյն հրաժարումովը...»

«Հնար չէ անտեսել Սեդրակեան Եպ.-ին բռնած դիրքին կարևորութիւնն Արևելեան Հայ Վղերին մէջ: Իր բոլոր պակասութիւններով հանդերձ, մարդը վարչական ձիրքեր ունի և եթէ օրուան քաղաքականութեան չարմարիլ կը ցուցանէ, իր մտադրած եկեղեցական բարեփոխներն ալ այնքան կարևոր են որ թերևս իրեն ներուի այդքան քաղաքագիտութիւն կամ կենցաղագիտութիւն մը: Վերջապէս, Տփլիսի Առաջնորդ Սուրէնեանց Արքեպիսկոպոսին պէս պարապ մարդ չէ: Եռլի նոր Առաջնորդ Գառնակերեան Եպ.-ին պէս ալ դատարկուող մը չէ: Եջմիածնի մէջ մնացած միւս Եպիսկոպոսներուն պէս մինչև իրիկուն քնացող, կամ սամաւարներու

շուրջն յօրանջող մ'ալ չէ: Թէ՛ գըլ-
խի, թէ՛ գըլի տէր մարդ է Արիս-
տակէս Սրբազան, և իր կարծիքնե-
րուն, իր գաղափարներուն քաջու-
թիւնն ալ ունի, որովհետեւ յաճախ
հրապարակ կ'իջնէ մէջմէկ գիրքով
և իր նախասիրած դատը կ'պաշտ-
պանէ, կամ իր գտած զեղծումները
կ'նշանակէ: Եջմիածինն ալ՝ կ'յա-
ւինք ըսել՝ ի վաղուց անտի այնքան
վշտառիթ բոյն մը դարձած անձնա-
կան, կուսակցական, փառասիրական
մեքենայութիւններու որ եպիսկո-
պոս մը չենք կրնար դատապարտել՝
Եջմիածնի մարդոց հետ նոյնանալ
չուզելուն համար: Այ՛ որ ունի ինքն
Ս. Հայրապետն ևս բաւական ժամա-
նակէ ի վեր հեռու կ'մնայ Եջմիած-
նէ, չախորժելով տեղւոյն բարոյա-
կան—ընկերական մեղկացուցիչ վը-
հատեցուցիչ միջավայրէն:

»Ժամանակաւ Արիստակէս Եպս.—ի
դէմ գրեցինք, Արեւելքի մէջ,
երբ Մակար Վաթողիկոսին դէմ կը-
մեքենայէր: Բայց անկէ ի վեր
մարդը Վաթողիկոսի պաշտօնն ըմ-
բռնելու կերպին վրայ ա'յնպիսի
ուշադրաւ յաւանութիւններ ըրաւ,
»եկեղեցական բարեկարգութեան«
համար այնպիսի առողջ գաղափար-
ներ յայտնեց այնքան կորովի լե-
զուաւ որ արդի Ս. Հայրապետին թոյլ
և յուսահատ վարչութենէն ետքը,
շատ հաւանական է որ Հայ. Եկեղե-
ցին պէտք ունենայ Աստուծոյն
Առաջնորդին հովուութեան՝ մաք-
րելու համար այն Ազգասաց ախոռ-
ներն որք օրէ օր կ'ապականեն
Մայր-Աթոռ: Գաղափարի տէր, և

իր գաղափարը գործադրելու քաջու-
թիւնն ունեցող, վարչապետ, գործի
մարդ Վաթողիկոսի մը պէտքն հա-
ւանօրէն ա'լ աւելի զգալի պիտի ըլ-
լայ երբ կարգը դա՛ն նոր ընտրու-
թեան մը, և, համակրինք Արիստա-
կէս Եպս. Աղբակեանին թէ ոչ,
կամաւ կոյր պէտք է ըլլանք հիմա-
կույ չտեսնելու համար թէ աչա ա-
մեն ձիրքերով Արիստակէս Եպս.—էն
աւելի օժտեալ եկեղեցական մը զը-
ժուարաւ պիտի գտնէ Եջմիածնի
Ընտրողական ժողովը: Ինչպէս գի-
տէք, Արիստակէս Սրբազան Ամուս-
նական մի օրինակ և վճռական Օ-
րէնքի մը հաստատման կուսակից
է, և Ամուսնալուծումն ալ կ'ընդունի,
չար և նման Բիւզանդիոնի մէջ
պարզուած տեսութեան: Արիստակէս
Եպս. նաև քահանայութիւնը բարձ-
րացնելու և քահանաներուն որոշ
թողակ կապելու գաղափարն ընդու-
նած է, ճիշտ ինչպէս պաշտպանուե-
ցաւ Բիւզանդիոնի մէջ: Վեր-
ջապէս, Արիստակէս Սրբազան մեծ
կարեօրութիւն կուտայ կարգ, կա-
նոն, կարգադրութիւն մտցնելու
Հայ Եկեղեցին մէջ, և իր վրայօք Ռու-
սահայ եկեղեցականներուն բանե-
ցուցած լեզուէն ալ կ'հասկնանք
թէ ինքնզինք յարգել տալ զիտէ:
Առասիկ Վաթողիկոսութեան ընտրե-
լի մը որ կ'ներկայանայ որոշ ծրա-
գրով մը, և բնաւ չզարմանանք ե-
թէ եկեղեցական խնդիրներու մէջ
բոլոր յառաջադիմականք ա'յսպիսի
եկեղեցականի մը կաթողիկոսացման
փափաքին օր մը:

(»Բիւզ.« թ. 1416).

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

«ՌՈՒԶԱՆԻ» ԲՆՆԱԴԱՏՈՒՔԻԱՆ ԱՈՒԹՈՎ.

Թոյլ տուէք, խնդրեմ, երկու խօսք ասել նկատմամբ իմ «Ռուզան» գրամի այն քննադատութեան, որ լոյս տեսաւ «Մուրճի» ներկայ տարուայ մարտի համարում Լ. ստորագրութեամբ:

Իմ երկի քննութեան մատչելուց առաջ՝ պ. Լ. թուում է թէ՛ ինչ ու ինչ է հարկաւոր հեղինակին պատմական գրամու գրելու համար, որից յայտնւում է այն՝ որ հարկաւոր է «ձեռքի տակ ունենալ ատառ և լաւ ուսումնասիրուած նիւթ»: Եւ որովհետեւ գրա փոխարէն «մենք ձեռքի տակ ունենք հատ ու կտոր տեղեկութիւններ թղթի վրայ, իսկ մեր աչքի առաջ՝ հին կեանքի թողած խղճուկ հետքեր», ինչպէս, օրինակ, աւերակների մնացորդներ և այլն, ուրեմն «սէտք է ահագին ջանք, երկար տարիների ուսումնասիրութիւն՝ այդ թղթի կտորներին, աւերակներին մի գեղարուեստական գրուածքի մէջ շունչ ու կենդանութիւն հաղորդելու համար: Առանց այդպիսի նախապատրաստութեան չէ կարող ստեղծուել որ և է պատմական երկ. որովհետեւ իւրաքանչիւր պատմական գրուածքի (վէպի կամ դրամայի) մեջ ամենից առաջ եւ ամենից շատ պէտք է լինի պատմական նշանակութիւնը. չր կայ այդ նշանակութիւնը եւ պատմական երկը կը ներկայացնէ մի ողորմելի կեղծիք», ասում է նա:

Բայց միթէ այդպէս է:—Որ ամեն մի գրուածքի համար «առատ և լաւ ուսումնասիրուած նիւթը» անհրաժեշտ է, այդ ոչ ոք չի հերքել: Բայց թէ «ահագին ջանք և տարիների ուսումնասիրութիւն գործ դնելով միայն կարելի է թղթի կտորներին ու աւերակներին շունչ ու կենդանութիւն հաղորդել», այդ եւս արդէն նորութիւն եմ համարում: Որովհետեւ մինչև այժմ յայտնի էր, որ «թղթի կտորին ու աւերակներին» շունչ ու կենդանութիւն տալու համար գեղարուեստագէտին հարկաւոր է ոչ թէ գիտնականի կամ հնախոյզի վայել «ահագին ջանք կամ երկար

տարիների ուսումնասիրութիւն», այլ բանաստեղծական յափըտակութիւն, վառ երեակայութիւն, ստեղծագործող ոյժ և, այդ ամենի հետ միասին՝ մարդկային հոգւոյ խորքը թափանցելու կարողութիւն: Ապա թէ ոչ «ահագին ջանքը և երկար տարիների ուսումնասիրութիւնը», առ առաւելն, կարող են թղթի կըտորի հաղորդած մի տեղեկութիւնը դարձնել երկու, կամ աւելի չորս քարերի վրայ աւելացնել ճիգեբորդը. բայց խօսեցնել թղթին, վերաշինել աւերակը, յարուցանել նրա մէջ ապրող ու զգացող մարդիկ, անկարող են:

Փալով քննադատ Լ.-ի այն առարկութեան, թէ «պատմական զրուածքի (վէպի կամ դրամայի) մէջ ամենից առաջ և ամենից շատ պէտք է լինի պատմական ճշմարտութիւն», կ'ասեմ որ այդ ևս սխալ է. որովհետեւ քերթողական արհեստի ամենատարրական օրէնքն այն է, որ բանաստեղծը իր զրուածքների մէջ առաջին տեղը տայ ոչ թէ պատմական, այլ իդէալական ճշմարտութեանը և նրա կոչումը լինի ոչ թէ հաստատել ճշմարտութիւնը, այլ ցոյց տալ այն:

Եւ անհ հէնց այս օրէնքը անտես առնելն է եղել պատճառ, որ պ. Լ. փոխանակ «Ռուզանը» իբրեւ դրամա, այսինքն բանաստեղծական գրուածք քննելու, քննում է իբրեւ պատմութիւն: Այդ պատճառով էլ մի երկար քաղուածք է առաջ բերում Կիրակոս պատմագրից՝ ապացուցանելու համար, որ իմ պիէսի հերոսներից մինը—Հասան-Ջալալը հռչակուած է եղել բարեպաշտութեամբ և ոչ քաջութեամբ. թէ նա միայն աստուածասէր և քահանայասէր մի մարդ էր և ոչ պատերազմող. թէ նրա կինը, մայրը բոլորն էլ կրօնամոլներ էին և թէ, վերջապէս, այդ ճրգնաւորների ընտանիքը կարող էր նիւթ տալ մի հոգեւոր ներքողի և ոչ թէ այնպիսի դադափարների, որոնք մտցրուած են «Ռուզան» դրամայի մէջ և այլն, և այլն:

Թէպէտ այդ առարկութիւնները կապ չունեն իմ դրամի ներքին իմաստի հետ, այսուամենայնիւ, ես կամենում եմ շեղուել խնդրից մի փոքր՝ բացատրելու համար թէ ինչպէս պ. Լ. սխալ է հասկանում նոյնիսկ պատմական ճշմարտութիւնը, որի անունով խօսում է:

Հայոց պատմական կեանքն ուսումնասիրողը պէտք է ուսումնասիրէ նաև այդ կեանքի մասին գրող մարդկանց հոգեբանութիւնը, որպէսզի ըստ այնմ կարողանայ որոշել նրանց զրուածքի արժէքը: Արդ, եթէ Կիրակոսը իր նկարագրի մէջ Ջալալին դուրս է բերել մի ճգնաւոր, մի թէ այդ նշանակում է թէ իրօք նա ճգնաւոր էր: Իբրեւ եկեղեցու մի բարեպաշտ վարդապետ, Կիրակոսը, իր ժամանակակից հոգեւորականների նման,

մարդու ամենամեծ արժանիքը համարել է բարեպաշտութիւնը, ուստի այդ արժանիքն էլ յատկացրել է Ջալալին, կամենալով նրան աւելի «մեծ» ներկայացնել ընթերցողի աչքում: Բայց Ջալալի, իրօք, պատերազմող լինելու վկայութիւնը հէնց ինքն է տալիս իր պատմութեան մէջ, յիշելով թաթարների՝ այդ իշխանի հետ կապած հաշտութեան պայմանները, որոնցից մինն էր՝ «ամ ամի երթալ զինի նոցա ի գործ պատերազմի»: Եթէ Ջալալը ճգնաւորի մէկն էր, հապա ինչո՞ւ պիտի ունենար այնքան զօրութիւն, որ դեռ թաթարներին էլ օգնէր պատերազմի մէջ: Բացի դրանից յայտնի է որ Ջալալը յաճախ գտնուում էր ճակատամարտերում իր մօրեղբայրների՝ Ջաքարէի և Իւանէի հետ, ինչպէս էր Խուշախների կամ Կովկասայիների կողմը և այլն: Վերջապէս ինքը, Ջալալը երբէք չէ կամենում որ իրան համարեն ճգնաւոր: Գանձասարի իր շինած եկեղեցու արձանագրութեան մէջ նա իրան անուանում է «իմֆնակալ բարձր եւ մեծ արցախական աշխարհի եւ թագաւոր ի յոգնասահման նահանգի»: Նրա կին Մամըանը՝ Վաճառու եկեղեցու արձանագրութեան մէջ իրան անուանում է «Թագուհի ամուսին Ջալալ Դօլին և թոռն Բաղայ թագաւորի»: Իսկ Ջալալի աղջիկ Մինախաթունը մի արձանագրութեան մէջ կոչում է իրան՝ «Դուստր իմֆնակալ իշխանաց իշխան Ջալալայ» կայն:

Այս մեծակոչ անուանումները, կարծեմ, բուսական բնորոշում են Ջալալեաններին և ապացուցանում որ նրանց ընտանիքը շատ հեռու է եղել «ճգնաւորների ընտանիք» լինելու կամ համարուելու մտքից:

Նոյն իսկ Ջալալի մեծածախ եկեղեցի կառուցանելը չէ ապացուցանում նրա քաջութիւնից զուրկ լինելը. նախ՝ այն պատճառով որ նա եկեղեցին կառուցել է իր հօր Վախտանգ իշխանի ցանկութեան ու կտակի համաձայն, և երկրորդ՝ որ մեր թագաւորներից և իշխաններից չատերը միշտ մի ձեռքում ունեցել են սուր և միւսում՝ խաչ: Դրանցից չատերն են վանքեր ու եկեղեցիներ կառուցել և, միննոյն ժամանակ, մեծամեծ պատերազմներ մղել թշնամիների դէմ:

Այս շեղումը խնդրից եւս արի նրա համար որ ցոյց տամ թէ պ. Լ. քննական աչքով չէ նայում նոյնիսկ պատմական փաստերի վրայ, ապա թէ ոչ, սա, մինչև անգամ, աւելորդ էր. որովհետեւ, ինչպէս ասացի, եւս պատմութիւն չեմ գրել, այլ դրամա, որ, ի հարկէ, պատմութիւն չէ, այլ բանաստեղծութիւն: Հետեւապէս, եթէ Ջալալը, Ռուզանը, կամ դրանց շրջապատողները հերոսներ էլ չը լինէին, եւ դարձեալ իրաւունք ունէի իմ դրամայի մէջ, իբրեւ դիւցազներգական (էպիկ) գրուածքի մէջ,

ստեղծել նրանցից իմ ցանկացած մարդիկը, կամ նրանց գործու-
թեանը տալ այն գոյնն ու հոգին, ինչ որ պահանջում էր
իմ դրամայի գաղափարը:

Այս առիթով կարևոր եմ համարում առաջ բերել այստեղ
Ռուսաց գրականութեան փայլուն աստղերից մէկի՝ Բեկինսկու
կարծիքները պատմական դրամայի վերաբերմամբ:

Խօսելով «Московский Наблюдатель»-ում տպուած Կու-
կօլիկինի պատմական մի դրամայի վերաբերեալ Շեվչուկի
կրիտիկայի մասին և առաջ բերելով վերջինի այս խօսքե-
րը. «Կարծեմ պատմութիւնն ինքն է ծրագրում թատերա-
գրի ճանապարհը, ինքն է առաջ բերում գլխաւոր դէպքերը,
ինքն է կարգադրում գործողութիւնները», Բեկինսկին բացա-
կանչում է՝ «Այս ինչ է. չեմ խաբում ինձ իմ աչքերը... Ինչ-
պէս. ուրեմն ինքը, պատմութիւն է տալիս արուեստգէտին
դրամատիք գրուածքի ծրագիրը, իսկ իրան, բանաստեղծին,
մնում է միայն չեղծանել (պատմութիւնը), հաւատարիմ մնալ
նրան և գուշակել որեւէ բան, որ ծածկել է ժամանակը
կամ տարեգրութիւնը... Այդպէս ուրեմն, ես գրում եմ պատ-
մական դրամա, նա գրում է, դուք գրում էք, նրանք
գրում են, և մենք բոլորս, որքան էլ շատոր լինենք, ակա-
մայ գրում ենք միեւնոյն բանը: Ո՞րտեղ է մնում ուրեմն
քերթողի ազատութիւնը, նրա ոգևորութիւնը, նրա ստեղ-
ծագործութիւնը... Խոստովանում եմ, հրաշալի բեցէպտ է
պատմական դրամաներ գրելու համար: Զարմանում եմ թէ ինչ-
պէս Шевырев-ի այս յօդուածից յետոյ լոյս չընկան մի քանի
տասնեակ պատմական դրամաներ»:

Ապա ծաղրելով կրտիկոսի երկարաբան առարկութիւնները
այս նիւթի նկատմամբ, Բեկինսկին աւերայնում է. — «Իսկ մենք,
մեր կողմից այն կարծիքին ենք եղել միշտ թէ՛ բանաստեղծը չի
կարող եւ չի պիտի լինի պատմութեան ստուկը. որովհետեւ, թէ
մէկ և միւս դէպքում, նա կը դառնար միայն արագրող, ընդօ-
րինակող և ոչ թէ ստեղծագործող: Աչքը լոյս այն բանաստեղծին,
որի վէպի կամ դրամայի հերոսը բոլորովին նման պիտի լինի
պատմութեան այն հերոսին, որին նա գուրս է բերել իր քեր-
թուածում: Այդ կարող է և պատահել, բայց միայն այն դէպ-
քում, երբ բանաստեղծը ինքնուրոյն կերպով գուշակել է պատ-
մական անձի որպիսին լինելը. երբ նրա երեակայութիւնը ա-
ղատօրէն յարմարուել է իսկականին: Բայց այդ էլ կը լինի պա-
տահմունք և ոչ թէ հաշուով արած բան. յաջողութիւն և ոչ թէ
մտադրութիւն: Բանաստեղծը կարգում է քրոնիկներ ու պատ-
մութիւն, ստուգում է, համադրում է, ընտանկնում է ընտրած

ժամանակի և անձինքների հետ: Ուսումնասիրելը անհրաժեշտ է նրան. բայց այդ ուսումնասիրութիւնը չէ կազմում ստեղծագործութեան ակտը: Բանաստեղծը պտրում է պատմական անձը, կանչում է նրան իր մօտ. բայց չէ տեսնում (որովհետև պատմութեան մէջ եղածը իր ցանկացածը չէ), մինչև որ նա (այդ ցանկացածը) ինքը չէ գալիս, անկոչ, անսպաս, բանաստեղծական սրբազան յափշտակութեան վայրկենին. գուցէ, այն ժամանակ, երբ նա արդէն ձգել է և՛ պատմութիւնը, և՛ քրոնիկոնները... Մինեոյնը պատահում է և քերթուածի ծրագրի, ընթացքի և նրա բոլոր յօրինուածի հետ:

«Քերթողին պէտք են միայն մի քանի վայրկեաններ հերոսի կեանքից, միայն մի քանի գծեր նրա ժամանակից: Նա իրաւունք ունի բաց թողնել շատ բան, թող սալ անկարելու անխրոնիզմներ, իրաւունք ունի խանգարել պատմութեան փաստական նմանութիւնը, որովհետև նրան հարկաւոր է գերակայական (իդէալական) նմանութիւն:

«Առէք երեք, չորս ընտիր պատմագիրներ, որոնք խօսում են այս կամ այն ժամանակի կամ պատմական անձի մասին և կը տեսնէք, որ այդ ժամանակը կամ անձը դրանցից ամեն մէկի դրուածքում զանազանւում է որոշ, հակասական ստուերագծերով: Կը նշանակէ, պատմութեան մէջ էլ կայ ստեղծագործութիւն. կը նշանակէ պատմագիրն էլ իր համար իդէալ է ստեղծում: Քրոնիկոնները լինում են միատեսակ, բայց դրանց համեմատ կազմուած իդէալները՝ զանազան:

«Երբեմն արուեստողէտը (մանաւանդ երբ նրա տաղանդը ենթակայական—սուբեկտիւ) է, ունի կատարեալ իրաւունք եղծանել պատմութիւնը իր պատմական դրամայի մէջ, առնելով այն (պատմութիւնը) միայն իբրև չրջանակ իր գաղափարի համար: Շիլլէրի Փիլիպպոսն ու Դօն-Կարոլոսը ոչնչով նման չեն պատմական Փիլիպպոսին և Դօն-Կարոլոսին (ինչպէս և Շեքսպիրի Համլէտը՝ պատմական Համլէտին), բայց լինելով անհաւատարիմ պատմական նմանութեան, նրանք վերին աստիճան հաւասարիմ են մարդկային հոգու, մարդկային սրտի յաւիտեական նմանութեանը, հաւասարիմ են բանաստեղծական նմանութեանը, որովհետև հնարովի կամ մտացածին չեն, այլ ինքնագոյ»:

Առաջ բերելով յայտնի կրիտիկոսի այդ կարծիքները պատմական դրամայի վերաբերմամբ, կարծեմ, ինձ այլ ևս ոչինչ չէ մնում աւելացնել՝ համոզելու համար «Թուզանի» քննադատ պ. Լ.-ին, որ ես իմ դրամայում ուղիղ ճանապարհն եմ ընտրել՝ քերթողական արհեստի օրէնքներին և նրա յաւիտեական ճշմարտութեանը հաւատարիմ մնալու համար:

Մնացած ոչ-հիմնական կէտերի վերաբերմամբ աւելորդ եւ համարում խօսել:

ՄՈՒՐԱՑԱՆ

Ե Ր Կ Ո Ւ Խ Ս Օ Ս Ք

Իմ քննադատական ակնարկի այն խօսքերը, թէ «Խւրաքանչիւր պատմական գրուածքի մէջ ամենից առաջ և ամենից շատ պէտք է լինի պատմական ճշմարտութիւն», փրկութեան խարիսխ են դարձել պ. Մուրացանի համար և նա, կամենալով հաստատել, թէ ես չեմ կարողանում զանազանել պատմութիւնը վէպից կամ դրամայից, գիմում է Բէլլինսկու օգնութեան ու երկար քաղուածքներ է անում նրա մի յօդուածից:

Առժամանակ թողնենք իմ խօսքերը և Բէլլինսկուն: Ես հաստատել էի, որ «Ռուզանի» մէջ չը կայ պատմական ճշմարտութիւն, ես դուրս էի բերել, որ այդ պիէսի գործող անձինքները չինձու են, գոյութիւն չեն ունեցել այնպէս, ինչպէս ներկայացրուած են գրուածքի մէջ. և պ. Մուրացանն ոչինչ չունի իմ այս ասածների դէմ, նա, ուրեմն, լուռ խոստովանում է, որ այդպէս է: Սա ամենագլխաւորն է, և մենք այսպէս էլ կ'արձանագրենք.—մի դրամա, որ կոչուած է պատմական, բայց որի մէջ չը կայ պատմութիւն:

Ինչո՞ւ է այսպէս: Որովհետեւ պ. Մուրացանը գիտէ, որ ինքը գիտնական չէ, հնախոյզ չէ, այլ քերթող, իսկ քերթողին տրուած է ամեն տեսակ ազատութիւն: Այդ պատճառով էլ նա նեղութիւն չէ քաշել ուսումնասիրել պատմութիւնը, ժամանակը, անցքերը. հարկաւոր է եղել կարկատել մի հայկական «Օրլէանի կոյս» և այդ դերը նա փաթաթել է մի հասարակ աղջկայ վզին: Եւ ահա ամեն ինչ լրացած է: Դուք իրաւունք չունէք ասելու. պարոն, ձեր Ռուզանը չէ ունեցել հերոսուհու հանգամանքներ, թէև դուք ցոյց էք տալիս, թէ որտեղից էք վերցրել այդ Ռուզանին, բայց նայեցէք տեսէք, որ նա պատմութեան մէջ միայն մի անուն է, երբէք չէ մտածել հայրենիքի ազատութեան մասին, այլ սուս ու փուս թաթարի կին է դարձել և տասնեակ տարիներ տանում էր այդ իր վիճակը առանց որ և է անյարմարութիւն զգալու:

Ինչպէս ասէք դուք այդպիսի բան, քանի որ պ. Մուրա-

յանը աղատ է, կարող է վարուել պատմութեան փաստերի հետ ինչպէս կամենում է: Բէլինսկին ասել է, թէ քերթողը աղատ է և պ. Մուրացանը կարծում է, որ եթէ նա վաղը մի դրամայի կամ վէպի մէջ Յուդային կամ Ներոնին դուրս բերէ հրեշտակներ, ոչ ոք իրաւունք չի ունենայ դրա դէմ խօսելու: Ազատութիւն...

Որ վիպագրողը կամ թատերագրողը վայելում է յայտնի ազատութիւն,—դա ինքն ըստ ինքեան հասկանալի է: Ձը գիտեմ՝ պ. Մուրացանը իրօք այդքան միամիտ է, թէ ընթերցողներին է միամիտ կարծում, այնպէս բացատրելով իմ խօսքերը, իբր թէ ես պահանջել եմ նրանից, որ «Ռուզանը» լինի պատմութիւն և ոչ քերթուածք: Հէնց նրա բերած կտորի մէջ իմ խօսքերը—«ամենից առաջ և ամենից շատ»—ցոյց են տալիս, որ ես պատմական երկասիրութիւնից ուրիշ բաներ էլ եմ պահանջում: Ընթերցողը կարող է նորից նայել իմ յօդուածին, որ տպուած է «Մուրճի» № 3-ի մէջ և կը տեսնէ, որ ճիշտ չէ պ. Մուրացանի ասածը, թէ ես «Ռուզանը» քննել եմ իբրև պատմութիւն և ոչ իբրև բանաստեղծական գրութիւն: Ես մինչև անգամ ասել եմ, որ «Ռուզանը» մի յայտնի աստիճանի հետաքրքրութիւն կարող է ներկայացնել նաև իբրև ոչ-պատմական պիէս, «եթէ դէն գցուեն շինծու շատախօսութիւնները, թղթից և փայտից չինած քաջերը, կեղծ գրութիւնները, տրագիքական սնհամ բացականչութիւնները, որոնք միայն ծիծաղ են յարուցանում, մի խօսքով՝ եթէ ամբողջ պիէսը մի լաւ, հիմնաւոր կրճատման երթարկուէր» («Մուրճ», եր. 200): Նշանակում է սա, թէ ես իբրև պատմութիւն եմ քննել «Ռուզանը»...

Գանք այժմ Բէլինսկուն: Ռուս նշանաւոր կրիտիկոսը չէ կարող պ. Մուրացանի պաշտպանը դառնալ. նա խօսում է աղատ ստեղծագործութեան մասին. նա ասում է, թէ «բանաստեղծը չէ կարող պատմութեան ստորուրդ դառնալ, ինչպէս չէ կարող եւ չը պիտի իրական կեանքի ստուղղ դառնայ: (Ինչու այս ընդգծած նախադասութիւնը բաց է թողել պ. Մուրացանը իր թարգմանութեան մէջ—չեմ հասկանում): Այստեղ ամեն ինչ շատ պարզ է և հասկանալի: Եթէ բանաստեղծը չը պիտի ընդօրինակէ կեանքը, դա դեռ չէ նշանակում թէ նա ուրեմն և չը պիտի ուսումնասիրէ մարդկանց, սրանց միջնախայրը, սրանց կենցաղը, կեանքի հանգամանքները: Հէնց այդպիսի ուսումնասիրութիւն աւելորդ է համարել պ. Մուրացանը:

Պէտք է նկատել և այն, որ Բէլինսկին զրոււմ էր վալտէր Սկօտտի պատմական վէպերի ժամանակ, մի ժամանակ, երբ

տիրում էր բոմանտիզմը, երբ դեռ նոր-նոր էին երևում բէա-
լական ուղղութեան նշանները: Բէլլինսկու ժամանակից հայ-
եացքները փոխուեցան, ինքը, Բէլլինսկին էլ, փոխեց իր հայեացք-
ները: Ինչպէս իրական կեանքից վերցրած, նոյնպէս և պատ-
մական անցեալը պատկերացնող վէպերի մէջ պահանջուում է
մտցնել իրական ճշմարտութիւն, կեանքի զօկումնատներ: Փլո-
բէրը իր փոքրիկ «Սալամբո» վէպի համար որքան երկար ու-
սումնասիրում է կարթագինացիների կեանքը, որպիսի բարե-
խղճութեամբ այդ հին կեանքը դարձնում է վէպի նիւթ: Պէտք
է ասել, որ նոյն այդ «Սալամբո» մէջ գեղարուեստը և պատ-
մական ճշմարտութիւնը մի գեղեցիկ հիւսուածք են կազմում:

Վերջրէք վերջին պատմական երկը, որ այնքան հրճուանք
պատճառեց աշխարհի չորս կողմում: Ես խօսում եմ Սենկեվիչի
«Quo vadis» վէպի մասին: Ինչով է այդ վէպը այնքան գրաւիչ:
—Նրանով, որ բանաստեղծական խոշոր տաղանդը կարողա-
ցել է միանալ պատմական ճշմարտութեան հետ և պատկերա-
ցնել մեր առջև հռոմէական կեանքը: Ներքոն դուրս է բերուած
ճիշտ այնպէս, ինչպէս նկարել են Տակիտոսը, Սվետոնիոսը,
Կասսիսը և ուրիշ պատմագիրներ: Վէպի ամենագեղեցիկ տի-
պերից մէկը—Պետրոնիոսը կատարելապէս պատմական անձ-
նաւորութիւն է: Առանձին-առանձին անհատներին իրանց պատ-
մական դերի մէջ դուրս բերելը դեռ դժուար չէ, բայց ահա
Սենկեվիչը նկարագրում է հռոմէական ամբոխը, հռոմայեցի կա-
նանց ճիշտ այնպէս, ինչպէս վկայում են պատմագիրները:

Ահա ինչ է ասում մեր օրերի ուղղութիւնը: Բանաստեղծը
ունի, այո, աղատութիւն. բայց այդ աղատութիւնը պատմա-
կան իրողութիւնները ոտնատակ տալու մէջ չէ, քամածին, ար-
հեստական պատմութիւն ստեղծելու մէջ չէ: Ո՛չ, ստեղծագոր-
ծութեան աղատութիւն, սա հասկանալի է, մի ստեղծագործու-
թեան, որ ներդաշնակ համաշխարհութիւն է դնում կեանքի փաս-
տերի և երեակայութեան մէջ, որ բնական է, որ մշակում է
կեանքի արտադրութիւնները և ոչ թէ ազատ է համարում ի-
րան ամեն տեսակ կեղծիքների մէջ: Պատմական երկի հիմ-
քը չէ կարող չը լինել պատմական ճշմարտութիւնը, ինչպէս
իրական կեանքի պատկերը պիտի հիմնուած լինի իրականու-
թեան վրայ: Շիլլէրի «Օրլէանի կոյսը» եղել է և իրականու-
թեան մէջ. թէև բանաստեղծը զարդարել է նրան իր հանճա-
րով, բայց փաստը փաստ է մնում. Շիլլէրը մի հասարակ գեղ-
ջուկ աղջկանից չէր նկարել այդ պատկերը, այլ պատմական
ժաննա դ'Արկից:

Տարրական ճշմարտութիւններ են սրանք: Մեզանում է

միայն, որ քերթողական ազատութիւնը պատրուակ է ընդունուած ամեն մի կամայականութեան համար:

Ձեռ կարող չարձանագրել պ. Մուրացանի և մի այլ մտորութիւնը: Ես մանրամասն խօսել էի Ջալալ իշխանի մասին, որպէս զի ցոյց տամ, թէ պ. Մուրացանը ոգևորուելու ոչ մի առիթ չունէր, որ Ջալալը աւելի ճգնաւոր էր, քան քաջամարտիկ պատերազմող: «Ռուզանի» հեղինակն ինձ ասում է, թէ Կիրակոս պատմագիրը, «իւր ժամանակակից հոգևորականների նման, մարդու ամենամեծ արժանիքը համարել է բարեպաշտութիւնը, ուստի այդ արժանիքն էլ յատկացրել է Ջալալին, կամենալով նրան աւելի «մեծ» ներկայացնել ընթերցողի աչքում»: Ծակ փիլիսոփայութիւնները մի կողմ թողնենք: Իմ բերած փաստը սա է եղել. Կիրակոս պատմագիրը, չռայելով Ջալալին ամեն տեսակ բարեպաշտական ածականներ, ոչ մի տեղ չէ անուանում նրան քաջ, հզօր կռուող: Բայց նոյն Կիրակոսը նոյն իսկ այդ տեղերում Աւագ իշխանին տալիս է քաջութիւն, անվախութիւն ցոյց տուող անուններ: Ուրեմն Կիրակոսը գիտէր քաջին քաջ անուննել, բարեպաշտին բարեպաշտ:

Պ. Մուրացանը, այսպիսի հանգամանքում էլ իր գլուխը ազատ հրատարակելու փոխարէն լաւ կ'անէր, եթէ կարդար պատմութիւնը, ուշադրութեամբ կարդար...

Լ.

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

- Բզմիր.** Գրատուն Գ.—Ապառիկ չէ ուղարկում: Ձեզ 20%
Գէջրլու. Յ. Գ.—Մուրճ» ուղարկում է գիւղի հասարակութեան. պէտք է հնարաւորութիւն տալ որ օգտուին բոլոր ցանկացողները:
Սախալին. Քաղէոս Մարգարեան.—Ձեր 5 ռուբլով ուղարկում է «Մուրճ» Սախալինի հալոց գրադարանին:
Հադրուք. «Մուրճ» ուղարկում է գիւղական հասարակութեան: Մի՞թէ դժուար է որ տանուէրը աչնպէս կարգադրի որ յարմարութիւն ունենան օգտուել բոլոր ընթերցողները: Ջարմանալի է որ մի աղալիսի թեթև հարց անգամ չեն կարողանում սեփական ուժերով կանոնաւորել մեր գիւղացիները:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» յունիսի համարում մտել են ի միջի այլոց հետեւեալ վրիպակները.

Երես	Տող	Տպուած է	պէտք է լինի
51	35	Աստուծ	Աստուծ
52	8	արշին քարաշէն	արշին բարձրութեամբ քարաշէն
54	9	գիւղերում	տեղերում
»	6	ուր մնաց մինչև	ուր և մնաց: Մինչև
»	26	1890	1899
»	39	ուսումնասիրելու	իրագործելու
59	19	եղաւ	եղան
61	28	շատ	շուտ

«Մուրճի» այս համարում.

211	35	Սկզբնական կրթութեանը	Սկզբնական դպրոցները կրթութեան
213	34	Բօղս	Բէղդ

Հրատարակիչ Եւ Ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍԻՆՆԻԿԵԱՆ

Հազարեան ձեմարանից

Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Լ Ե Ձ Ո Ւ Ա Ց

Սարգիս արեւիսկոպոս Հասան-Ջալալեանցի դրամագլխի հաշիւը
1900 ամի:

Մ Ո Ւ Տ Ք	0/0-արեր արժեթղթ. Առձեռն դրամ.		
	ռուբլի.	առբ.	կոպ.
Մնում էր առ 1 յունուարի 1900 թ. .	78,050	835	91
1900 ամի ընթացքում ստացուած . .	3,200	3,188	5
	81,250	3,973	96

Ծ Ա Ի Ք			
Վճարուած է գնուած 0/0-արեր թղթե-			
րի գին 3,246 ռուբ. 11 կոպ. և 1888			
ու 1889 թ.թ. դրամագլխի հաշիւները			
տպագրելու համար 37 ռ. 20 կ. ընդամենը — —			
Առ 1-ն յունուարի 1901 թ. առձեռն		3,183	31
պատրաստ կայ	81,250	790	65

Ծանօթութիւն. Դրամագլուխը գտնուած է Մոսկուայի Նա-
հանգական գոնձարանում և պիտի աճէ, 1883 թուից սկսած,
125 տարուան ընթացքում, մինչև 12 միլիոն գումարը, այնու-
հետև պիտի գործադրուի նուիրատուի անունով դպրոցներ հիմ-
նելու և թոշակաւորներ պահելու համար:

Մամուլի տակ է եւ մինչեւ սեպտեմբերի վերջը լոյս կը տեսնի
Վ. Փափագեանի

«Է Մ Մ Ա» վէպը

350—400 մեծադիր երես:

Վաղորդը բաժանորդ գրուելու համար ճանապ.՝ ծախքով 1 ռ. —
Լոյս տեսնելուց յետոյ կը լինի » 1 » 25 կ.

Բազում բաժանորդ կարելի է գրուել Ս. Օհանջանեանի
մօտ—Магазинъ бывшій Петросянъ, կամ Ի. Մելիքեանի մօտ—
Фотография «Рембрантъ» торговля. Բալախանիում.—պ. Իշխան
Միրզաբէկեանի մօտ. А. Меликовъ и Ко. Բիբի-էյբաթում.—պ.
Արշակ Տէր-Յովհաննիսեանի մօտ Бр. Набатовымъ. Շուշում
պ. Ղազար Տէր-Ղազարեանի մօտ. Թիֆլիսում.—պ. Արշակ Մեհ-
րաբեանի մօտ՝ «Տարաղ» շաքաթաթերթի խմբագրատանը:

Պետերբուրգի գրաքննչից ստացուած, մամուլի տակ է եւ յունիս
ամսի վերջերին լոյս կը տեսնի Մոսկուայում ձեռնարկուած

ՊՂՏԱԿԸ

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

(Շքեղ տպագրութիւն, 450—500 մեծագիր երկս)

ԽՄԲԸԳՐՈՒԹԵԼՄԲ Վ. ՓԵՓԵԶԵՆԻ

Ժողովածուն նուիրուած է Գրիգոր Զանգեակի յիշատակին: Ար-
ղիւնքի 2/3 մասը յատկացուած է հայ օրերին, իսկ 1/3 մասը աւելա-
ւանցող գրողներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մասն I. Հ. Ղ. Աւիշան նամակ (Ֆաբրիկէ):—Յովհան-
նիսեան՝ «Մենք գնում էինք...» (բան.):—Ա. Իսահակեան՝ Սիրող
երգը:—Ա. Մատուրեան՝ բանաստեղծութիւններ:—Վ. Փափաղեան՝
Աւետաց երկրում:—Ա. Իսահակեան՝ «Ախ, մեր սիրտը...» (բան.):—
Ա. Ահարոնեան՝ Դարձր:—Յովհաննէս Թումանեան՝ Պօֆտու
Մուշան:—Գ. Բաշինջաղեան՝ Բարեբարներ:—Ա. Մատուրեան՝
Վայնաւորի օրագրից (բան.):—Ս. Հախումեան՝ Հնդկաստանի հեկե-
կանքներ:—Ս. Ինչ՝ «Ինչ երգեմ...» (բան.):—Ա. Նազարեան՝ Բեկոր-
ներ:—Պ. Պաշեան՝ Հինգերորդ գինագիծ:—Յով. Տէր-Միրաքեան՝
Անցած-գնացած օրերից:—Ա. Բաշինջաղեան՝ Սրտեստի էջեր:—Գ.
Զուրաբ՝ Երազ:—Բ. Պատկանեան՝ Փոստուխի Սաղը (անտիպ):—Ս.
Նալբանդեանի՝ մի նամակ:—Վ. Փափաղեան՝ Ըմբոստ երգեր:

Մասն II. Հ. Ղ. Ա. Ջառեան՝ Հայոց ծագումը և նախապատմական
ընթացք:—Վ. Սոսէնեան՝ Հայ ճարտարապետութեան տեղը գեղարուես-
տի պատմութեան մէջ:—Ե. Շահաղիզ՝ Հայոց վանքերը և նրանց դերը
հայ կեանքում:—Վ. Բասմաջեան՝ Զուրթից եկեղեցու պեղումները:
—Գ. Խատիսեան՝ Հայոց լեզուն և նրա բարձրանքը:—Ա. Նազար-
եան՝ Հայոց սովորութեան—իրաւունքի ուսումնասիրութեան նշանակու-
թիւնը և մէթոդը:—Ս. Բերբերեան՝ Գրական ակնարկներ (Սմբատ
Շահապի):—Բժ. Ա. Բուդուղեան՝ Բժշկի խոհերից:—Իւրիշ Վեսե-
լովսկի՝ Արեւմտեան Եւրոպայի ազգեցութիւնը ռուսահայ գրականութեան
վրայ:—Գր. Վանցեան՝ Մեր ստիլիստները և մեր լեզուն:—Բ. Խանա-
ղատեան՝ Փոքր-Սարան և շինուելիք երկաթուղիները:

Վաղորօք բաժանորդ գրուողները գործակալների մօտ՝ կը
վճարեն 1 ՌՈՒԲԼԻ, ճանապարհածախսով՝ 1 ռ. 50 կ., լոյս
տեսնելուց յետոյ կ'արժենայ 1 ռ. 50 կ. եւ ճանապարհածախ-
սով՝ 2 ՌՈՒԲԼԻ:—Բաժանորդագրութիւն ընդունում է մինչեւ
յունիս 1-ը: Կարելի է գրուել հետեւեալ տեղերում:—Մոսկվա.
պ.պ. Բ. Արուշանեան, Գ. Պատրսեան, Լ. Նազարեան:—Տոս-
տով. Գրավաճառանոց «Издатель» եւ պ. Մ. Բերբերեան:—
Նոր-Նախիջեւան՝ պ.պ. Եր. Շահաղիզ եւ Գ. Զուրաբ:—
Բագու՝ Մարդասիր. ընկեր. գրադարան՝ պ. Լ. Մանուէլեան
եւ գրավաճառ. Սամսոն Յարութիւնեան:—Բալախանի՝
«Նէֆտ» ընկերութեան պրօմիսլա, պ. Բալասի Գարրիէլեան:—
Թիֆլիս՝ Կետրոն. գրավաճառանոցի եւ «Տարազի» խմբագրա-
տուն:—Գանձակ՝ Օր. Հ. Նաբաթեան եւ պ. Յ. Մելիք-Բեգլա-
րեան:—Թաւրիզ՝ Դկտր. Կ. Փաշայեան: 2—2

Լ ը յ ս ե ս ա լ

Ա Լ Է Գ Ս Ա Ն Դ Ր Ծ Ա Տ Ո Ւ Ր Ե Ա Ն Ի

ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ

առիթմիկներ:

Գրքի երեսը զարգարուած է նկարիչ Վ. Սուրէնեանցի նկարով:

Գինն է 50 կոպէկ

Դիմել հեղինակին՝ Москва, Садовая-Каретная, меб.
ком. Носальскаго, Ал. Цатуряну. 3—2

«Մուրճի» խմբագրատանը, «Թիֆլիսի Կենտրոնական» և
«Գուտտէնբերգ» գրափաճառանոցներում ծախուում է
նոգէ էջէգարայի՝

„Մ Ա Ր Ի Ա Ն Ա“

դրաման, Թարգ. Արսէն Կրասիլնիկեանի:

Գինն է 1 Ռուբլի

Հրատարակութեան վաճառման արդիւնքը յատկացուած է
«Եղբայրական օգնութեան»:

3—2

Ն Ո Ր Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

Գ Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ո Յ Ո Ւ Մ

վաճառում են ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբոմներ,
ատլասներ և այլ տեսակ հրատարակութիւններ: Վենետիկում,
Վիեննայում, Կ. Պօլսում և Զմրուհիայում տպուած գրքերից
ցանկացողներին կարող ենք ուղարկել: Գումարով գնողներին
զիջումն կը լինի:

Գրափաճառանոցը ընդունում է վաճառելու համար
գրքեր:

Գրափաճառանոցի հետ դործ ունեցողները պէտք է դիմեն՝

Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ», Галустану.
3—2

**ՄՈՒՐՃ՝ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ԵՒ ԹԻՖԼԻՉԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ**

ԽԱՆԻՈՒՄ ԵՆ

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ՝ Այց Թիւրքաց Հայաստանին	
Թիֆլիզ, 1890 թ. (սպա-	
ռուած) գինն է 60 կ.	
» » Ժողովրդի կրթութեան գոր-	
ծը մեզանում, 1892 թ. դ. 20 »	
» » Հին ցաւ (հրապարակախո-	
սական խոհեր), 1900 թ. դ. 30 »	
» » Լ ԿՈՒՍԻԿԵԱՆԻ՝ Մայրենի խօսք	
(ընթերց. ձեռնարկ) 1900 թ. 70 »	

Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Տարեկան գինն է 10 Քրանկ:

Դիմել Rédaction du «Bazmaveb» St. Lazare Venise.

Բ Ա Ն Ա Ս Է Ր

Հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական
եւ ֆննական

Կը հրատարակուի երեք ամիսը մի անգամ, տարեկան չորս
գիրք, տնօրինութեամբ Կ. Հ. Բասմաճեանի:

Տարեկան գինն է 20 Ֆր.—8 ռուբլի:

Դիմել. Basmadjian, 112. B. d Rochechouart. Paris

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառուում են հետևեալ հայերէն գրքերը.

Երիցեան Աղ., Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիս, գ. 1 ա.:

» Սխալ հաշիւ, կոմեդիա 4 գործող. լուսանկարով.
Թիֆլ. գ. 50 կ.:

Զարբանալեան Հ. Գար., Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և
մատենագրութեան յարեմուտս, Վենետիկ, գ. 1
ա. 50 կ.:

Զաքարեան Թադ. բժ., Ամուսնական առողջապահութիւն, Թիֆլ.
գ. 20 կ.:

Զելինսկի Ս., ա. Հաւ 13 նկարով—5 կ., բ. Պտուղ չորացնելը 16
նկարով—5 կ., գ. Պատուաստ 10 նկարով—5 կ., դ.
Ջորի—3 կ., ե. Գետնանուշ բ. տպ. նկարներով—4 կ.:

Զեյրունցի, Զէյթունի անցեալէն և ներկայէն ա. մասն, Վիեննա
գ. 1 ա. 50 կ.:

Էմին Մկր., Մովսէս Խորենացի և հին հայկական վէպ. Թիֆլ.
գ. 50.:

» Մովսէս Խորենացին և Հայոց հին վէպերը, քննու-
թիւն, Թիֆլ. գ. 25 կ.:

Թադեոսեան Քրիստ., Բանաստեղծութիւններ, հեղինակի պատ-
կերով և կենսագրականով, Մոսկուա. գ. 20 կ.:

Թադիադեանց Մեսր., Յօրհաս Թանկայ Թադիադեանց, Թիֆլ.
գ. 40 կ.:

Թառայեան Սեդր., Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, Թիֆլ.
գ. 40 կ.:

» Հնտանիքի կեանքը (նկատողութիւններ), Թիֆլ. 20 կ.:

Թառլանեան Թորոս., Սրտի խօսքեր, բանաստեղծութիւններ,
Մոսկ. գ. 30 կ.:

Թարխանեան Աղ., Թատրոն, պատկերազարդ գրական և թատե-
րական հանդէս, տարեկան երկու գիրք, 1893 թուից
սկսած, իւրաքանչիւր գիրքը 2 ա.

Թումանեան Արե., Արեւցող և տաք սէր, իրական կեանքից,
Բագու, գ. 40 կ.:

Թումանեան Յար., ա. Խօլեր վօդովիլ 1 արար.—10 կ., բ. Ա-
մուրին—20 կ., գ. Հանաք ու դանակ—30 կ., դ.
Բանաստեղծութիւններ—50 կ., ե. Մելիք-Բէգլար
պատմ. պօէմա—10 կ., զ. Մելիք-Իւսուֆ պատմ.
պօէմա—20 կ.:

Թումանեան Յովհ. Բանաստեղծութիւններ, Մոսկ. գ. 35 կ.:

Թոփչեան Ե., Իսլամ պատմական պատկերազարդ տեսութիւն,
Թիֆլ. գ. 30 կ.:

Թօխմախեան Ա., Մասիս լեռների հարաւային ստորոտներ,
Թիֆլ. գ. 30 կ.:

Ժամագիրք Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, գ. տպ. Վաղարշապատ գ. 2 ռ.:

Ժամագիրք Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Կ. Պօլիս. գ. 2 ռ.:

Ժողովածու զանազան հետաքրքրական նիւթերի, Մոսկ. գ. 1 ռ.:

Իւզբաւեան Գ., Հացի բզէզը և նրան կոտորելու միջոցները,
Մոսկ. գ. 40 կ.:

Լալայեան Եր., Ազգագրական պատկերազարդ հանդէս, տարեկան երկու գիրք, 1896 թուից սկսած, իւրաքանչիւր գիրք 2 ռ.:

» Զանգեզուրի գաւառ ա. հատ. Սիսիան—80 կ., բ. հատ. Զանգեզուր—50 կ.:

» Գանձակի գաւառ ա. հատ.—80 կ., բ. հատ.—80 կ.:

Լեռնեց, Բանաստեղծութիւններ, Պետր. գ. 60 կ.:

» Ազատ ժամեր, Թիֆլ. գ. 30 կ.:

Լեօ, Ախտահանութիւն, Բազու. գ. 40 կ.:

» Հայկական տպագրութիւն ա. հատ. Թիֆլ. գ. 1 ռ. 50 կ.:

Լիսիցեան Վարդան, Հայկական նշանագրեր ձեռագործի համար,
Թիֆլ. գ. 30 կ.:

Լումայ, Գարօի ընտանիքը, վէպ Թիֆլիսի կեանքից, Թիֆլ. գ. 60 կ.:

Լ. Ա., Սաքօ, պօէմա, Շուշի, գ. 50 կ.:

Խալաբեան Բ., Սասմայ փահլաններ կամ Դաւիթ և Մհեր,
Վաղարշապատ գ. 40 կ.:

Խալաբեան Բ., Տասնիններորդ դարի կտակը, Թիֆլիս. գ. 15 կ.:

Խալաբեան Գր., Ղազար Փարպեցի և գործք նորին, պատմական և գրական քննութիւն, Մոսկ. գ. 1 ռ. 50 կ.:

» Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների, Մոսկ. գ. 50 կ.:

Խաչան Տաթևաչի., Տնգլբազ և զուռնա-տաթևա, Բազու. գ. 40 կ.:

Խասիսեան Գաբր., Մանկավարժական խորհրդածութիւններ, ա. մասն. Թիֆլ. գ. 60 կ.:

Խասիսեան Մ., Փեսայ որսողներ, վէպ, Թիֆլիս. գ. 50 կ.:

» Նոր ճանապարհի վրայ, վէպիկ, Պետեր. գ. 1 ռ.:

Խնկոյեան Աթաբէկ., Բանաստեղծական փորձեր, Աղէքս. գ. 12 կ.:

Խորխոռունի., Ախալքալաքեցու վէրքերը, Թիֆլ. գ. 20 կ.:

- Խրիսեան Հայրիկ., Գիտութիւն վերջին չաքաթ խաչի. հառ և կո-
րուսելոյ յիմարութիւն գ. տպ., ս. էջմ. գ. 30 կ.:
- » Պապիկ և Թոռնիկ, ժողովրդի թոռնիկների համար
դ. տպ., ս. էջմ. գ. 60 կ.:
- » Մարգարիտ արքայութեան երկնից, ս. էջմ. գ. 30 կ.:
- » Ժամանակ և խորհուրդ իւր, բ. տպ., Թիֆլ. գ. 15 կ.:
- Մատուցեան Ալ., Երեսուն և հինգ տարի. Սմբ. Շահագիգեանի
յօրելեանի առթիւ, Մոսկ. գ. 30 կ.:
- Մերեմ, Երկունք թ. դարու, Թիֆլիս. գ. 1 ռ.:
- » Թէոդորոս Ռշտունի, Թիֆլ. գ. 1 ռ.:
- » Թորոս Լեոնի, Թիֆլ. գ. 1 ռ.:
- Կալիկենց Սոսիմ., Լաքաթա, Ֆարս-վօղըվիլ 1 արար. Թիֆլ.
գ. 25 կ.:
- Կամենից, Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, Վենե-
տիկ, գ. 1 ռ. 50 կ.:
- Կուսկեան Կ. Եւ Սարգսեան Լ. Մայրենի խօսք, ընթերց. ձեռ-
նարկ. Մոսկուա, գ. 70 կ.:
- Կարապետ վարդապետ, Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթու-
ղիկոսի խոստովանութիւն, Վաղարշապատ գ. 15 կ.:
- Կոստանեան Կար., Ստեփաննոս Օրպէլեանի ողբ ի ս. Կաթու-
ղիկէն, Թիֆլ. գ. 50 կ.:
- » Ս. Լուսաւորչի աջը, Վաղարշապատ, գ. 15 կ.:
- Կոստանեան Յովհ., Շիրակի լեզենդաներից և ժողովրդական
կեանքից, Աղէքս. գ. 30 կ.:
- Կիւմիւլեխանցի Ման. վարդ. Պատմութիւն անցից անցելոց
Սկանայ վանուց, Վաղարշապատ. գ. 20 կ.:
- Կրպէ., Կարս քաղաք, Մոսկ. գ. 60 կ.:
- 1901 Ս. Էջմիածնի տաան և վեցերորդ դարադարձը, Թիֆլ.
գ. 25 կ.:
- Հ. Ս. Շէլլուի սպանութիւնները, Թիֆլ. գ. 50 կ.:
- Հայկունի Ս., Թագաւոր Լուսիկ և Սեփա հովիկ, Վղրշ. գ. 25 կ.:
- Հիւրմիւլեան Եղ. վարդ., Առձեռն բանաստեղծութիւն, Վենե-
տիկ. գ. 75 կ.:
- Ձայնագրեալ ժամագիրք., Վղրշ. կազմով գ. 4 ռ.:
- Ղուկասեան Հ., Եղիշէի պատմութիւնը Վարդանի և Հայոց պա-
տերազմի համար, աշխարհարար, Թիֆլ. գ. 60 կ.:
- » Բողոքականութիւնը Կովկասու Հայոց մէջ, Թիֆլ. գ.
50 կ.:
- Ճաղարեկեան Յակ., Վահան Մամիկոնեան ըստ Ղազար Փար-
պեցեոյ, Թիֆլ. գ. 40 կ.:
- Բանահիւսութեան տեսութիւն, Թիֆլ. գ. 60 կ.:
- Հարստութեան աւետարան, Շուշի, գ. 40 կ.:

Ճանիկեան Յովս., Դժոխք ա հատ. 40 կ., բ. հատ. 30 կ.,
Ճուղուրեան Յար. քան., Մոռացուած աշխարհ ա. գիրք 60 կ.,
բ. գիրք 50 կ. գ. գիրք 40 կ.,

Աղա ս. Սարգիսը և Մալաք տատի հաւատը, Թիֆլ. գ. 15 կ.:

Մալխասեան Յովհ., Երգում, վէպ, Թիֆլ. գ. 40 կ.:

» Պատանեկան յուշեր, Թիֆլ. գ. 15 կ.:

» Հօրոտ-Մօրոտ, պատկերներ իրական կեանքից, Թիֆլ. գ. 30 կ.:

» Հայ գեղջուկի ալբոմը ա. մասն դաշտային գործիչներ, Թիֆլ. գ. 40 կ.:

Մադաթեան Վ., Կըռթ-կըռթ, վոդևիլ 1 արարուածով, բ. տպ. Թիֆլ. գ. 25 կ.:

Մալխասեան Սո., Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան, Վիեննա, գ. 50 կ.:

Մադքանֆ. Վասն Հայրապետի ազգիս, ս. էջմ. գ. 50 կ.:

Մամբրէի Վերծանողի ճառ, Վենետիկ, գ. 75 կ.:

Մանդակունի Գր. քան., Ոսկի աքաղաղ էֆիմէրտէ-երազագիրք, բ. տպ. Թիֆլ. գ. 2 ա. 70 կ., կազմով 2 ա. 85 կ.:

Մանդինեան Սեդ., Մանկավարժական տարակուսանքներ մեր մէջ, Թիֆլիս, գ. 50 կ.:

Մանկունի., Այրիվանք կամ Գեղարդայ վանք, Վաղարշապատ, գ. 10.:

Մանուկեան Լեւոն., Տիգրանուհի, դրամա 5 արար., Թիֆլ. գ. 50 կ.:

» Բանաստեղծութիւններ և պօէմաներ, Բագու, գ. 50 կ.:

» Դոկտոր Երուանդ Բոշայեանց Բագու, գ. 50 կ.:

Մաեսոց, Յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս. բ. տպ. Վաղարշ. գ. 2 ա.:

Մասթոսեան Յակ., Խորհուրդը հաւատացելոց, Կ. Պօլիս, չքեղ կազմով 1 ա. 35 կ.:

Մասինեան Կար., Հայկի, Թիֆլ. գ. 20 կ.:

Մարադեան Տան. քան., Յիսուսի Գրիստոսի երկրաւոր կեանքը և վարդապետութիւնը, Բագու, գ. 1 ա.:

» Կանանց խնդրի առթիւ, Թիֆլ. գ. 40 կ.:

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. Օտարաբաղադրացիներին ուղարկւում է և վերադիր վճարով, եթէ պատուիրած գրքերի արժէքի $\frac{1}{3}$ կանխիկ է ուղարկւում: Գրքերի վերաբերեալ հարցերին պատասխան է տրւում, եթէ դրա համար մարկա է ուղարկւում:

Ա Ջ Գ

Գալ համարից «Մ ու ը» ուղարկուե-
լու է անցեալ տարուայ միմիայն այն
բաժանորդներին, որոնք լրացրած կը
լինեն, բաժանորդագինի մնացորդը (Ռ ու
սաստան 5 ռ., տրտասահման 6 ռ.):

Այն բաժանորդները, որոնք գրուել
են մաս-մաս վճարելու պայմանով՝ թո՛ղ
բարեհաճեն ուղարկել իրանց վրայ մը-
նացած ապառիկները:

ժողովրդի կրթական ալլ զործոններ. — ժողովրդական
բնթերցանութիւնների վերաբերեալ նոր կարգադրու-
թիւն. — Ռուսահայերի մասուր տաճարութեան մի-
ջակը. — Պարբերական հրատարակութիւնների նախա-
դրուածքն վերջնական ժամանակամիջոցը. — «ВН-
ЗН» ամսագրի դադարեցումը. — «Прав. Вѣстн.» հաղոյ-
դադրութիւնը միջնակ, դպր. բարեփոխութեան մասին:
Լ. Եւսեմ Եարզանց

211

21. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿՅԱՆՔ, հարուստ բերքը. — Կարկուտի վնաս-
ները. — Ղաղախի, Ախալքալաքի դառառներ. Ախալցխա.
— Մենք անցոր ենք մեր զիւղտանտեսութեան թշնամի-
ների զէմ. դաշտալին միներ. — Գուառական քաղաքներ.
Նուշու զործերը. թեմական զարոյցը. — Կերասանական
ճանադարհորդութիւններ. Կարա-Մուրզալի կոնցլերո-
ները. — Աաղակութիւններ. Սանահին և Վարնակ զիւ-
ղերը. — Ժանտախա. Ա. — Բամբակադործութիւնը Ե-
րևանեան նահանգում: Ա.

227

22. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բիւմարկի արձանի բացումը Եւր-
լինում. — Սնանաորութեան զերը սլատմութեան մէջ. —
Կերմանիայի միութիւնը. — Երկաթի և արեան՝ քաղա-
քականութիւն. — Բիւմարկի ներքին քաղաքականութիւ-
նը. — Բանկալին կրակներ. — Հիմարկամուլութիւն կամ
զրինդերութիւն Լ. Ա.

240

23. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՅ, նամակ Լճնդօնից Ն.

243

24. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ,

249

25. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

255

26. ԵՐԿՈՒ ԽՍՒՅ, Լ.

260

27. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ,

264

28. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ,

265

29. ՅԱԻԵԼՈՒԱՅ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ» ղԼալ. Լ. Տօլստօի, թարգ.

Տ. Յովնանիսեանի. 161—208

ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ր Ի

Խմբագրության անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԸ

Ռուսաստանում տարեկան 10 անգամ. Առաստախմբում՝ 12 անգամ.

„ Էքս տարին 6 „ „ 7 „

„ 1 ամսուան 1 „ „ 1 „ 50 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը Երևանեան հրապարակ, տ. Խարաղանի:

Կայսրության այլ քաղաքից պէտք է գրուել՝ Тифлис, въ редакцію журнала „Мурч“.

Առաստախմբից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourteh“.

Հասցեն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ գեղեղելու համար պէժք է վճարել

Մի Երևա բանող չափաքարութեան համար . 15 ա.

1/2 „ „ „ „ . 8 „

1/4 „ „ „ „ . 4 „

ԱՊԱՌԻՆ կամ ԶՐԻ ոչ ոքի չէ ուղարկում «Մուրճ»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը խնդրում է չօդաւածագիրներէից՝ գրել պարզ և թերթի միայն մի Երևաի վրայ:

2. Չընդունուած մեծ չօդաւածները պահուած են խմբագրատանը 6 ամիս իսկ փոքր չօդաւածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնուում: Ձեռագիրը չեա ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհամատնով:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած չօդաւածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև չափորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պոստային գրասենեակի հաւաստագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չի չանձնուած զանդատաւորին: